

ԵՓՐԱՏԻՑ ՌԻՈ ԴԵ ԼԱ ՊԼԱՏԱ

ինքնակենսագրություն

ԳԵՎՈՐԳ ՍԱՐԱՖՅԱՆԻ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱ

ՀԱՅՈՑ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅԱՆ ԹԱՆԳԱՐԱՆ–ԻՆՍՏԻՏՈՒՏ

ԵՓՐԱՏԻՑ ՌԻՈ ԴԵ ԼԱ ՊԼԱՏԱ

ԻՆՔՆԱԿԵՆՍԱԳՐՈՒԹՅՈՒՆ

ԳԵՎՈՐԳ ՍԱՐԱՖՅԱՆԻ

А II
87008

ՀՀ ԳԱԱ «ԳԻՏՈՒԹՅՈՒՆ» ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ

ԵՐԵՎԱՆ – 2002

929; 947.925 Սարաֆյան

ՀՏԴ 941 (479.25)
ԳՄԴ 63.3 (2Հ)
Ե 987

Խմբագիր՝ պատմական գիտությունների դոկտոր
Լ.Ա.Բաբսեղյան

Իսպաներենից թարգմանեց **Ֆելիքս Սայադյանը**

Ե 987 Եվրատից Ռիո դե լա Պլատա. Ինքնակենսագրություն Գեորգ Սարաֆյանի – Երևան, ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատ., 2002, 272 էջ

Գիրքը նվիրված է արգենտինահայ նշանավոր հասարակական-մշակութային գործիչ, հայրենանվեր բարերար Գեորգ Սարաֆյանի կյանքին ու գործունեությանը:

Նախատեսվում է ընթերցող լայն շրջանների համար:

Ե 0503020913
703 (02) – 2002 ԳՄԴ 63.3 (2Հ)

ISBN 5 – 8080 – 0017 – 3

© ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատարակչություն, 2002

ԽՄԲԱԳՐԻ ԿՈՂՄԻՑ

Հայ ընթերցողի սեղանին է դրվում արգենտինահայ համայնքի նշանավոր գործիչներից մեկի՝ Գևորգ Սարաֆյանի ինքնակենսագրությունը, որը լույս է տեսել 1998 թվականին Բուենոս Այրեսում՝ իսպաներեն լեզվով:

Գ. Սարաֆյանի կենսագրությունը բացառություն չի կազմում: Այն կրկնում է Մեծ եղեռնը վերապրած հազարավոր հայերի կենսագրությունը:

Հեռանալով Հայրենիքից, նա ևս շատերի նման հայտնվեց օվկիանոսի մյուս կողմում: Պայքարեց, մաքառեց հանուն իր և իր ընտանիքի, հարյուրավոր հայրենակիցների գոյությունը պահպանելու համար:

Իննսունամյա Սարաֆյանը այսօր հպարտ է, որ հայ է: Ապրում է ու ապրեցնում իր ողջ գերդաստանը հայերի կյանքով:

Պատահական չէ, որ դեռևս 1960 թվականին «Հայ Կեդրոն» ամսագրի սեպտեմբերյան համարի խմբագրական հոդվածում նրա մասին գրվել է. «Նրա համար Ազգը եղել է և մնում է լինել Եկեղեցին Հայկական, իսկ Ընտանիքը նրա մեջ եղած սրբազան խորանն է, որի խնկաբույր մթնոլորտի մեջ ապրելով վեց սիրասուն զավակների ծնունդ տվեց և նրանց հետ միասին նույն երկյուղածությամբ իր հայրենի Աստծուն պաշտել է իր Մայրենի Լեզվով»:

Ժամանակակիցներից մեկը (տես՝ Սոկրատ Թերզյանի «Սլաքներ և դեմքեր» գրքի երկրորդ հատորը, որը լույս է տեսել Բուենոս Այրեսում 1967 թվականին) բնութագրելով Գևորգ Սարաֆյանին գրել է. «Հայ մշակույթը նրա համար սրբության սրբոց է, Հայաստանյաց եկեղեցին՝ հավատի հանգանակը, հայ դպրոցը՝ Սելևկոսի սուրը, հայ տառերը՝ Մաշտոցի մսուրը, հայ մայրը՝ հայության կենդանի ոգին, հայ ժողովուրդը՝ Շահ Աբբասի փոխադրած քարերը և ինքն էլ՝ այս բոլորի ջերմաչափը... Գևորգ Սարաֆյանը նմանվում է մի գետի, որը ջրում է բոլոր պարտեզները: Նրան կարելի է նմանեցնել մի մշակի, որը ցանում է, քաղում է և բերքը հրամցնում է ... ազգին»:

Մինչև Մեծ եղեռնը ծնված հայ մարդկանց կենսագրություններում ընդհանրություններ շատ կան, սակայն ամենացավալի ընդհանրությունը դարի առաջին ցեղասպանությունն է և նրա հետևանքները:

Հրաշքով փրկվածներից մեկն է Գևորգ Սարաֆյանը, որը կյանքի մի նոր ճանապարհ բացելով հեռավոր Արգենտինայում, այսօր էլ չի պատկերացնում հային առանց իր Հայրենիքի:

Գ. Սարաֆյանի «Եփրատից Ռիո դե Լա Պլատա» գիրքը արդեն մեկ հարյուր տարվա պատմություն ունեցող արգենտինահայ համայնքի տարեգրությունն է: Գ Սարաֆյանի հուշագրությունը կարևոր սկզբնաղբյուր է հայկական սփյուռքի պատմության ուսումնասիրման համար: Այն ուսանելի է նաև երիտասարդ սփյուռքահայերի համար, որոնց հեղինակը փոխանցում է հայկականության ոգին, հայ լինելու պատիվն ու պատասխանատվությունը:

Գ. Սարաֆյանը չի պատկերացնում իրեն առանց Մայր Հայրենիքի: Նա իր տնտեսած միջոցների հաշվին Արագածոտնի մարզի Նոր Եդեսիա ավանում որպես հավերժության ու հավատարմության խորհրդանիշ կառուցեց մի եկեղեցի, որը կրում է հայրենի Եդեսիա քաղաքի կենտրոնում վեր խոյացած, այժմ փլատակների վերածված Աստվածածին անունը:

Ընթերցողների սեղանին դրվող Գ. Սարաֆյանի իններորդ գիրքը վերջինը չէ: Նա չնայած իր տարիքին, աշխատում է երիտասարդական ավյունով:

Նրա կյանքը նման է լեռն ի վեր բարձրացող կածանի, որով քայլում է Տեր Զորը տեսած երբեմնի պատանին, քայլում է դեպի լեռն իր վեր խոյացող ճանապարհներով, հեռավոր Արարատի գագաթը մշտապես տեսնելու բաղձանքով:

Լավրենտի Բարսեղյան

ՆԱԽԱԲԱՆ

Հայաստանի և Սփյուռքի մտավորականների հետ ունեցած իմ բազմաթիվ հանդիպումների ժամանակ ինձ համառորեն հորդորում էին, որ ես, իբրև մեր գաղթօջախը հիմնադրող վաղեմի բնակիչներից մեկը, ի գիտություն ապագա սերունդների, գրեմ իմ կյանքի հուշերը:

Միշտ հետաձգում էի այդ գործը, քանի որ ինձ համար ցավալի էր վերհիշել և գրի առնել հատկապես մանկությանս և պատանեկությանս տարիները, որոնք անցան ողբերգական մի ժամանակաշրջանում՝ Առաջին համաշխարհային պատերազմի տարիներին, երբ Օսմանյան կառավարությունը կազմակերպեց իր տիրապետության տակ ապրող Արևմտյան Հայաստանի խաղաղ բնակչության ցեղասպանությունը:

Ինձ պես շատ վերապրողներ օթևան փնտրեցին ազատ երկրներում, ինչպիսին է Արգենտինան, որը մեզ ասպնջականեց մեծահոգությամբ և որտեղ հայի ավանդական աշխատասիրության և ազնվության շնորհիվ, կարողացանք սպիացնել մեր արնածոր վերքերը, նորոգել մեր կյանքն ու կենցաղը, վերաշինել մեր օջախները, ավերված եկեղեցիներն ու դպրոցները՝ ձգտելով օգտակար լինել համայնքին և այն երկրին, որը մեզ սատար կանգնեց:

Երկար մտորելուց հետո ըմբռնեցի, որ անհրաժեշտ է ջանք չխնայել և փաստերով ներկայացնել իմ ապրումներն ու անցած ուղին՝ վկայություն թողնելով որդիներիս, թոռներիս և ապագա սերունդներին, որպեսզի իմանան, թե ովքեր էին իրենց պապերը, ինչու նրանք ստիպված եղան թողնել իրենց վաղնջական Հայրենիքը և ինչու պատսպարվեցին այս ափերում՝ հանգրվանելով նոր հորիզոններում:

Կարծում եմ, որ իմ կենսագրության հավաստի տվյալները կհամապատասխանեն Սփյուռքի հայ համայնքների ապագա պատմաբանների պահանջներին՝ թեկուզ դույզն ինչ չափով օգտակար տեղեկություններ տրամադրելու իմաստով:

Բնագրի շարադրանքի գործին իրենց արդյունավետ ընդպաստը բերեցին իմ բարեկամ Կարապետ Լևոն Հասասյանը և

համակարգչային ձևավորումը կատարած սիրելի թոռնուհիս՝ Մարիանա Ռոսա Քեշիշյանը, որոնց հղում եմ իմ ջերմագին շնորհակալություններն ու նրանց՝ երջանիկ ապագայի իմ մաղթանքները:

Գևորգ Սարաֆյան

Իմ մանկությունը

Ծնվել եմ 1911 թվականի հունվարի 15-ին, Ուրֆայում՝ (Եդեսիա) Հայկական բարձրավանդակի հարավում գտնվող հնագույն մի քաղաքում, որը, հավանաբար, հիմնադրված է եղել հայ թագավոր Տիգրան Մեծի կողմից: Մշտական հայ բնակչություն ունեցող այդ քաղաքը կառավարել են հայ թագավորները: IV դարից սկսած, այստեղ հաջորդաբար իշխեցին հռոմեացիները, բյուզանդացիները և արաբները: Ուրֆան ճանաչվել էր որպես հին քաղաքակրթության այդ շրջանում Ալեքսանդրիային, Աթենքին և Հռոմին հավասար մշակութային կենտրոն: Վերջապես, 1637 թվականին, Ուրֆան ընկավ Օսմանյան տիրապետության տակ:

Հայոց գրերի հիմնադիր Մեսրոպ Մաշտոցն իր աշակերտների հետ միասին ուղևորվեց Ամիդ և Եդեսիա, ապա Սամոսատ: Եդեսիայում նա ապրելու էր ստեղծագործական մեծ վերելք՝ համոզվելով իր ստեղծած այբուբենի կենսունակության մեջ: Իսկապես, դա տեղի ունեցավ իմ հարազատ քաղաքում, որտեղ աստվածային ոգեշնչումով ստեղծվեց, կարգավորվեց և անվանում տրվեց հայոց լեզվի յուրաքանչյուր հնչյունին համապատասխան տառին, այնպես, ինչպես վկայում է նրա աշակերտ Կորյունն իր «Վարք Մաշտոցի» գրքում:

Սարաֆյանների ընտանիքը բաղկացած էր անվանի ոսկերիչներից և ոսկեղենի վաճառականներից, որոնք նաև դրամափոխման մի հաստատություն ունեին (այն ժամանակ դեռևս բանկեր չկային և դրամափոխները կատարում էին բանկիրի գործառնություն): Մեր տոհմական ազգանունը, ի դեպ, հուշում է այդ զբաղմունքի մասին (sarraf-դրամափոխ, բանկիր): Շատ հարուստ են եղել, սակայն, ընտանիքի համարյա բոլոր անդամները զոհվեցին 1896 թվականին թուրքերի իրագործած սարսափելի ջարդերի ընթացքում, երբ վերջիններս այրեցին քաղաքի եկեղեցին, ուր հայերը թաքնվել էին՝ խուժանի հարձակումներից պաշտպանվելու համար: Հարություն հայրս՝ կըրտսերն իր եղբայրների մեջ, փրկվեց մի տիկնոջ շնորհիվ:

Այս կոտորածի ժամանակ հայ ընտանիքների ունեց-

վածքները թալանվեցին թուրքերի կողմից, և հայրս ստիպված էր աշխատել և միաժամանակ սովորել՝ մտավոր կրթություն ստանալու համար: Նա կատարում էր հայ համայնքի կառավարչի պարտականությունները և երիտասարդ հասակում ամուսնացավ ավանդական և շատ հարուստ, մեծ կալվածքների տեր մի ընտանիքի ժառանգորդուհու՝ Վարդեր Սաղաթելյանի հետ: Նրանց ընտանիքը տիրում էր ամբողջ ագարակների, այնպես որ նվիրվել էր գյուղատնտեսությանը:

Դժբախտաբար, 1896 թվականի նույն կոտորածների ժամանակ և չնայած քաղաքի կառավարման գործում հորս ունեցած կարևոր դիրքին, թուրքերը թալանել էին նրա տունը և սպանել բոլոր տղամարդկանց:

Այնուամենայնիվ, մերոնք կարողացան փրկել որոշ բաներ. մի ագարակ, որը հայրս հետագայում տնօրինեց այնպիսի հոգատարությամբ, որ նրան հնարավորություն տվեց ժամանակի ընթացքում վերակառուցել տները և լավ դիրք ձեռք բերել ընտանիքի համար: Թուրքերը հարձակվել էին նաև մայրական կողմից պապիս ընտանիքի վրա: Մայրս՝ մանկահասակ մի աղջիկ, նստած էր եղել իր պապի ծնկներին և նետվել էր մի կողմ այն ժամանակ, երբ ծերունու գլուխը կտրել էին:

Ծննդյանս պահին մեր ընտանիքը բաղկացած էր չորս մարդուց՝ Հարություն հայրս, մայրս՝ Վարդերը, քույրս՝ Ռեբեկան և Պողոս եղբայրս (Պաբլո):

Սարաֆյանների տունը նմանվում էր մշակութային կենտրոնի: Ունեինք մի մեծ գրադարան և բաժանորդությամբ ստանում էինք բոլոր հայերեն թերթերը, ընտանեկան մի ավանդույթ, որ շարունակվում է ներկայումս: Հորս հորեղբորորդին, որին անվանում էինք հորեղբայր Հայրապետ, համայնքի դպրոցում երկրորդ հերթի ուսուցիչ էր: Մարդիկ ասում էին. «Ինչու՞ այցելենք Սարաֆյանների տուն, երբ այնտեղ բոլորը կարդալով են զբաղված և չկա մեկը, որի հետ զրուցես»:

Մայրս սովորել էր հյուսիսամերիկյան միսիոներուհի տիկին Շատտինգի՝ մի շատ սիրված կնոջ մոտ, որն անձնվիրաբար խնամում էր 1896 թվականի կոտորածից որբացած երեխաներին: Իմ Հայրապետ հորեղբայրը նույնպես որբ է եղել՝

իր կյանքը նվիրելով համայնքին, նա Հայկական հարցի ճանաչված նախանձախնդիրներից մեկն էր և այդ պատճառով արտաքսվեց Լիբիա՝ թուրքական մի հեռավոր ծայրամաս:

1908 թվականին, երբ Օսմանյան կայսրությունում հաստատվեց սահմանադրական միապետություն, բոլոր քաղաքական բանտարկյալներին ներում շնորհվեց: Այսպիսով, նա կարողացավ վերադառնալ և նվիրվել մանկավարժի իր գործունեությանը:

Կառավարման սահմանադրական նոր համակարգը բնականոն կյանք էր խոստանում հայերի և ուրիշ ազգային փոքրամասնությունների՝ հույների, հրեաների, սիրիացիների և մյուսների համար, որոնք ապրում էին Օսմանյան կայսրության տիրապետության տակ:

Եդեսիայում աշխուժացավ մշակութային կյանքը: Կառուցվեցին վարժարաններ, լիցեյներ և եռանավ Սուրբ Աստվածածին մեծաքանչ եկեղեցին:

Հիշում եմ, որ մի առավոտ դուրս պրծա մորս ձեռքից՝ եկեղեցի գնալու համար, այն պահին, երբ ծխական քահանան անցնում էր մեր դռան առջևով: Մայրս նրան ասաց. «Խնդրում եմ, տղայիս տարեք ձեզ հետ պատարագի և հանձնեք նրան իր հորը, որը վարչությունում է»:

Հիշում եմ եկեղեցին՝ պատկերներով, ինձ համար այնքան խորհրդավոր մեծ լամպերով ու ճրագներով, որոնց լույսի ներքո կատարվում էր մի հոյակապ ծիսակատարություն: Մեծ երկյուղածություն ներշնչող այդ պատկերները միշտ մտապահվեցին մեջս: Եկեղեցու միջոցով համայնքին ծառայելու կոչումը ես զգացել եմ այն ժամանակներից:

Մանկությունից մնացած հաճելի հիշողություններն ինձ ոգեշնչում են նույնիսկ այսօր, իմ գրական գործունեության մեջ: Եդեսիայում կային զանազան տաճարներ և մի վանք՝ քաղաքի շրջակայքում: Ասորիները նույնպես ունեին իրենց եկեղեցիները: Սուրբ Գևորգը ուխտագնացության հռչակավոր կենտրոն էր՝ իր հրաշալիքներով հանդերձ: Խոսելու հետ կապված դժվարություններ ունեցող երեխաների ծնողները նրանց բերում էին այնտեղ՝ բուժվելու: Ակնկալվում էր, որ երբ քահանան հան-

դիսավոր աղոթքներ կարդալով՝ եկեղեցու բանալին հպի երեխաների շուրթերին, նրանք կսկսեն խոսել:

Քաղաքում կային նաև հայ կաթոլիկական և բողոքական ոչ մարդաշատ համայնքներ:

Իմ սկզբնական կրթությունը

Երեք տարեկան հասակում սկսեցի հաճախել վարժարան: Այն շատ ժամանակակից էր, նախակրթարան և երկրորդական ուսումնաշրջաններ՝ երկու սեռերի համար, որ գործում էին եկեղեցու տարածքի ներսում, մի ընդարձակ հողակտորի վրա: Եկեղեցու գործերը հմտորեն ղեկավարում էին համայնքի հեղինակավոր մարդիկ:

Հոգևորականության գլխավորն էր Արտավազդ վարդապետ Կալենդերյանը, որն ուսումն ավարտել էր Արմաշի հռչակավոր դպրեվանքում, որտեղ և որակավորվել էր ապագա արքեպիսկոպոս Գարեգին Խաչատրյանը (Հարավային Ամերիկայի թեմի առաջին թեմակալը, որն օրհնեց Բուենոս Այրեսի մեր Սուրբ Գրիգոր Լուսավորիչ եկեղեցին): Վարդապետ Կալենդերյանը մեծ մղումներ տվեց վարժարաններին և հայերի մշակութային և մարզական կյանքի վերածննդին:

Դեռ մանկուց ինձ դուր էր գալիս արտասանելը, որ կատարում էի ջանախնդրությամբ: Հիշում եմ իմ մի ելույթից հետո մեծահասակների և Արտավազդ վարդապետի շնորհավորանքները, որից հետո վերջինս ինձ իր գիրկն առավ և համբուրեց: Դեռ այսօր էլ հիշում եմ այդ բանաստեղծությունը, որ այդքան հաջողություն բերեց ինձ: Այդ բանաստեղծությունը հետագայում սովորեցրեցի իմ որդիներին և թոռներին: Ամենակրտսեր թոռնուհիս այն արտասանեց վերջերս՝ Հայաստանից ժամանած փոքրիկ դերասանների մի պատվիրակության առաջ: Սակայն, ունեցա նաև դժվարություններ: Մի անգամ այցելեցինք մեր ազգականներից մեկին և նրա տանը, ճաշկերույթի ժամանակ, ինձ բարձրացրեցին՝ արտասանելու համար: Այստեղ բախտս չբերեց, ցած ընկա և գլուխս վիրավորեցի, որից մնա-

ցած սպին մինչև այժմ էլ հիշեցնում է այդ միջադեպը: Այն ժամանակներում չկար առաջին բուժօգնություն, բուժում էին սափրիչները և նրանց մոտ էլ ինձ տարան՝ վերքը «եփելու» համար (հայերեն «եփել» նշանակում է նաև «պատրաստել» և «բուժել»): Նստած վարսավիրանոցում՝ սպասում էի, որ ինձ օգնություն կցուցաբերեն և նկատեցի, որ մի թասի մեջ ջուր էին եռացնում, որ օգտագործում էին վարսավիրները՝ սափրելուց առաջ շփումների համար: Ես վախեցա, կարծելով, որ բուժելու համար գլուխս կխցկեն այդ եռացող ջրի մեջ: Սակայն, վերջապես ամեն ինչ լավ ավարտվեց. յոդ քսեցին վերքին և ես վախը հետևում թողած՝ վերադարձա տուն:

Երբ սկսվեց Առաջին համաշխարհային պատերազմը

Մեր կյանքը խաղաղ էր անցնում այդ տարիներին: Սակայն, դժբախտաբար, սկսվեց Առաջին համաշխարհային պատերազմը: Հայերը ինքնավարության էին ձգտում դեռևս 1914 թվականից առաջ՝ Թուրքիայից, հայկական վեց վիլայեթներում բարեփոխումներ կատարելու միջոցով, որ պետք է իրականացնեին եվրոպական խոշոր տերությունները: Ամեն ինչ վճռված էր: Նշանակվել էին երկու բարձրաստիճան եվրոպական կոմիսարներ՝ Հոֆֆը և Վեստենենկը՝ գործնականում վերահսկելու բարեփոխումների իրագործումը, որը կբարելավեր հայ բնակչության կյանքը:

Սակայն Առաջին համաշխարհային պատերազմի ժամանակ ամեն ինչ պարզ դարձավ և Թուրքիան դաշնակցեց Գերմանիային՝ ընդդեմ այն երկրների, որոնք խոստացել էին մեզ օգնել: Թուրքական կառավարությունը դաժան միջոցների դիմեց՝ հայ բնակչությանը ոչնչացնելու համար, կարծելով, որ այսպիսով կխուսափի Հայկական հարցի արդար լուծումից: XX դարի առաջին Ցեղասպանությունը գործի էր դրվում նորանոր զանգվածային ջարդերի և տեղահանությունների ձևով: Առաջին քարավանները գալիս էին Անատոլիայից: Էրզրումից,

Թուրքական կառավարության կողմից Ռաքքա քաղաքում, Եփրատ գետի ափին, աքսորված եղեսիացի մի խումբ երևելիներ ցեղասպանության սկզբին: Առաջին շարքում, նստածներ, աջից ձախ. երկրորդը, հայրս՝ Հարությունն Սարաֆյան (1915 թ.):

Սեբաստիայից և շատ ուրիշ քաղաքներից, աքսորյալները ոտքով անցնում էին Եդեսիայով դեպի Արաբիայի անապատները՝ կտրել-անցնելով Եփրատ գետը: Տեր Զորի համակենտրոնացման ճամբարը ամենասարսափելի վայրն էր: Տեղահանվածների շարասյունները (ծերեր, կանայք և երեխաներ), որոնց հաջողվում էր հասնել մինչև այնտեղ, մահանում էին ծարավից և քաղցից, հեղձուցիչ շոգից և լքվածությունից, քանի որ չկային ոչ աջակցություն, ոչ էլ գոյության միջոցներ:

Եդեսիայի հերոսական դիմադրությունը

Տեսնելով այս տխուր տեսարանը, Եդեսիայի հայերը համախմբվեցին և փորձեցին պաշտպանվել՝ թուրքական պետության ցեղասպանության արյունոտ ծրագրին չենթարկվելու նպատակով: Անխուսափելի մահվան առջև նրանք նախընտրեցին բարիկադներ բարձրացնել և պայքարել իրենց կյանքը փրկելու համար:

Թուրքերն ամենից առաջ ձերբակալեցին քաղաքի ամենահայտնի մարդկանց և նրանց աքսորեցին Ռաքքա, Եփրատ գետի ափը: Հենց այս է պատճառը, որ այս գիրքը վերնագրել եմ՝ «Եփրատից Ռիո դե լա Պլատա»: Ռաքքան մի հնամենի քաղաք էր, որն իր խամրելու ժամանակներից ծածկված էր անապատի ավազներով: Այնտեղ աքսորվեցին մեր քաղաքի 18 անվանի գլխավորներ, որոնց մեջ և իմ Հարություն հայրը:

Մի քանի օր անց, նրանց ընտանիքները հանդիպման թույլտվություն ստացան, որովհետև դեռ չէր սկսվել Եդեսիայի հայերի տեղահանությունը: Մենք ևս մեկնեցինք Ռաքքա: Ավելի ուշ զինվորական հասակի երիտասարդների հերթն էլ հասավ, նրանք անհապաղ սպանվեցին, Կուդեմայի շրջանում, թուրք ջարդարարների ձեռքով: Դրանից հետո դիմադրությունն անխուսափելի էր: Լավ կազմակերպված Եդեսիայի հայերը հերոսական ճակատ կազմեցին՝ թուրքերին դիմադրելով համարյա քառասուն օր և հույս ունենալով, որ դաշնակիցներից օգնություն կստանան, բայց այդ տեղի չունեցավ: Դրա փոխա-

րեն, հայտնվեցին թուրքական կանոնավոր բանակի 10 հազար զինվորներ՝ գերմանական թնդանոթներով զինված, քաղաքը ռմբակոծելու համար: Նրանք այրեցին ամեն ինչ՝ ոչնչացնելով բնակչությանը: Եդեսիայից քարավաններ դուրս չեկան, որովհետև հայերը նախընտրում էին պատվով մեռնել՝ կռվելով խրամատների վրա: Շատ քչերը փրկվեցին՝ թաքնվելով հարևան գյուղերի արաբների մոտ, որոնք նրանց պատսպարեցին թուրքերից: Այս փրկարար հյուրընկալությունը պահպանվեց մինչև պատերազմի վերջը, երբ երեխաները վերադարձվեցին իրենց ազգականներին, իսկ ծնողազուրկ որբերին վստահեցին հյուսիսամերիկյան Near East Relief միսիոներական կազմակերպությանը:

Եդեսիայի անկումից հետո 18 անվանի մարդկանց, որոնց մեկուսացրել էին Ռաքքայում, բանտ նստեցրին: Մի գիշեր, երբ աղոթում էինք հորս փրկության համար, լսեցինք կրակոցներ. մեր հայրերի սպանության կրակոցներն էին: Հաջորդ օրը երեխաներով վազեցինք բանտ՝ նրանց մասին տեղեկություններ ստանալու: Թուրք ոստիկանները մեզ վրա ծիծաղեցին, ասելով, որ անգլիական ինքնաթիռները եկել և նրանց տարել են: Մենք վերադարձանք լաց լինելով. գիտեինք, թե ինչ վախճան են ունեցել:

Ռաքքան մի վայր էր, որտեղ գալիս էին պատմական Հայաստանի վեց շրջաններից աքսորված հայերի քարավանները: Հորս ընկերների այրիները և որբերը որոշ աքսորյալների հետ խառնված՝ խուսափեցին հետապնդումներից, ձգտելով կորցնել իրենց հետքը և այսպիսով, ազատվել Տեր Զորի անապատներ ուղարկվելուց: Կյանքը շատ դժվար էր այդ ժամանակներում:

Մայրս նախապես իր հետ վերցրել էր որոշ քանակությամբ ոսկե դրամներ՝ պայուսակով: Դրանցով մի կերպ գոյատևեցինք՝ սպասելով այս ամենի ավարտին: Այդքան հայերի մեջ, որոնք անցնում էին այդտեղով, կային ապագան գուշակող մարդիկ և առանց խաբեության: Մի գուշակության համեմատ, հայելի էր տեղադրվում, այնպես, որ նրանում չպետք է արտացոլվեր որևէ անձնավորության պատկեր, ոչ էլ շարժման մեջ

գտնվող առարկա: Հարկավոր էր, որ սեանսի մասնակիցը լարված ուշադրությամբ, անքթիթ նաեր հայելուն, իսկ այդ ժամանակ, երբ մեկ ուրիշը յոթ անգամ արտասանում էր Դավիթ Մարգարեի թիվ 14 սաղմոսը, հայելին մթագնում էր: Եթե ոգեմիջնորդը կարողանում էր հայելու մեջ ինչ-որ բան նշմարել, ապա դրա մեջ կրկին լույս էր հայտնվում: Տան բոլոր բնակիչներն այդ փորձել էին, և ես՝ նույնպես: Բայց ոչ մեկին չէր հաջողվում այդ, բացի իմ ավագ քույր Ռեբեկայից: Նրան հաջողվեց: Երբ լույսը երևաց հայելու մեջ, մայրս խնդրեց, որ գար Դավիթ Մարգարեն:

– Մայրիկ, եկավ մի մարդ՝ կաշվե զգեստով, - ասաց նա, - Այժմ ի՞նչ ասեմ նրան:

– Խնդրիր նրան, որ քեզ ասի, թե որտե՞ղ է իմ տագրը (Ռեբեկան մտովի հաղորդում է խնդրանքը):

– Մայրիկ, մահացած մի մարդ բերեցին:

– Այդ դեպքում խնդրիր նրան՝ ասի, թե որտե՞ղ է իմ եղբայրը, քո քեռի Դանիելը:

– Մայրիկ, բերեցին ոտքից գլուխ արաբական ձևով հագնված մի մարդ: Միայն աչքերն են երևում: Եվ այստեղ տեսիլքը չքացավ, որքան հիշում եմ:

Որպես կալվածատեր, իմ քեռի Դանիել Սաղաթելյանը ուներ շատ ախոռներ և արաբական զգեստներ, որ հագնում էր գյուղաբնակ արաբներին այցելելու համար: Երբ ընկճվել էր Եդեսիայի դիմադրությունը, նա, երկու ընկերների հետ միասին, բեդվինների նման հագնված, ձի նստած, խոսելով և աղմկելով իրար մեջ՝ հաջողել էին անցնել քաղաքի դարպասով՝ բթացնելով թուրքական ժանդարմերիայի զգոնությունը և գնալով այն բնակավայրը, որտեղ ապրում էին իրենց արաբ ընկերները: Քեռիս և իր ընկերները թաքնվել էին նրանց մոտ: Այսպես կարողացան փրկել իրենց կյանքը: Ավելի հուսալի անվտանգության համար հետագայում նրանց տարան մի քոչվոր ցեղի մոտ, որը, բարեբախտաբար, չէր ենթարկվում Թուրքիայի կառավարությանը՝ պատկանելով արաբների հնագույն Անեզե տոհմին, որոնց անգլիական հանրահայտ հետախույզ Լոուրենսը ապըստամբության էր պատրաստել թուրքերի դեմ: Հայելու տեսիլ-

քից երեք, թե չորս ամիս անց, երբ այդ ցեղն անցնում էր Ռաքքայի մոտով, քեռիս շտապեց մեզ այցելել: Մեր համեստ տան դուռը թակեցին և քույրս դուրս եկավ տեսնելու, թե ով է այցելուն: Վերադարձավ՝ վախեցած բղավելով. «Մայրիկ, սա այն մարդն է, որ տեսա հայելու մեջ»: Իմ քեռի Դանիելն էր:

Հանդիպման բերկրանքից հետո քեռիս մայրիկիս խորհուրդ տվեց, որ հնար գտնի քաղաքից դուրս գալու՝ X գյուղակը գնալու համար, և ինքն էլ Ուրֆայի (Եդեսիա) ճանապարհին, որտեղով անցնելու էր, կգտներ մեզ:

Մի քանի ամիս անց, Ուրֆայից մի մարդ եկավ՝ գտնելու իր ազգականներին: Նրանց չհանդիպեց և վերադարձավ: Այդ ժամանակ նրան խնդրեցինք, որ մեզ իր հետ տանի մինչև իր ճանապարհի վրա գտնվող X գյուղակը: Շատ խնդրելուց հետո, մեզ հաջողվեց ստանալ նրա համաձայնությունը: Իմ եղբայր Սուրենը և քույր Եղիսաբեթը, երկուսն էլ ինձանից տարիքով փոքր, մահացել էին Ռաքքայում, որովհետև չկարողացան բուժվել բժիշկների և դեղորայքի բացակայության պատճառով: Մենք, որ կենդանի մնացինք (իմ մայր Վարդերը, իմ քույր Ռեբեկան, իմ եղբայր Պողոսը և ես), պատճառն այն էր, որ գնացինք այդ գյուղի ուղղությամբ՝ պարոնի սայլակով, որ խոստացել էր մեզ տանել: Այնտեղից կանչել տվեցինք իմ քեռուն, որն եկավ հաջորդ օրը՝ մի քանի ձիերով մեզ տեղափոխելու համար: Մենք մեկնեցինք այդ գյուղերից մեկի ուղղությամբ, որ վաղ ժամանակներում պատկանելիս էր եղել իմ պապերին:

Հազիվ էինք մի քանի կիլոմետր գնացել, երբ հեռվից ճանապարհի վրա հայտնվեցին զինված երեք ձիավորներ, որոնք հանկարծ կանգնեցին, կարգի գցեցին իրենց լծասարքերը, հետո խորհրդակցեցին և բաժանվեցին: Մեկը մի կողմ գնաց, երկրորդը՝ մեկ այլ, իսկ երրորդը՝ ճիշտ մեր ուղղությամբ, կարծես մեր վրա հարձակվելու համար: Մոտենալուն պես, քեռիս նրան ճանաչեց և գնաց ընդառաջ, որովհետև գիտեր լեզուն և մորուք էր պահում, ինչպես արաբները: Այն ժամանակ, երբ զրուցում էր ձիավորի հետ, մեզ պատվիրեց, որ առաջ գնանք: Նրանք հանդիպեցին, բարևեցին և վերջապես անարգել շարունակեցինք մեր ճանապարհը: Այսպես կարողացանք հասնել մեր

վերջին հանգրվանը, մեր ընտանիքի հին գործընկեր արաբների գյուղը: Այնտեղ մեզ ընդունեցին համաձայն այդ ազնիվ մարդկանց ավանդույթների:

Մեր երկար մնալու ընթացքում մնացինք նրանց պաշտպանության ներքո և վայելեցինք իրենց հյուրասիրությունը: Մեզ տվեցին մի համեստ տուն և բերեցին մի քանի ուլեր, ոչխարներ և մի բեռնակիր կենդանի, որ ծառայում էր մեզ տեղափոխման համար: Արաբները գյուղի մարդիկ էին, հասարակ, ուշադիր և առանց շատ ուսումի, սակայն՝ բարի սրտով: Միաժամանակ ճշմարտությունը պարտավորեցնում է ասելու, որ մեր ավագները նույնպես միշտ լավ էին վերաբերվել նրանց նկատմամբ:

Անցան տարիներ և մենք փրկվեցինք մեր հարևանների օգնությամբ՝ ապրելով նրանց նման: Հագնում էինք անթև երկար նույն ներքնաշապիկները, ինչ իրենք, կիլոմետրեր և կիլոմետրեր քայլում էինք բոբիկ՝ թուրքական ժանդարմերիայի հետապնդումներից խուսափելու համար: Ձմեռները անցկացնում էինք սարերում՝ սևամազ այծի բրդյա թաղիքով պատած անջրանցիկ վրանների տակ:

Հիշում եմ այդ խոնավ և անհրապույր ձմեռները: Հավաքվում էինք վրանների շրջակայքի փշերի մոտ, վայրի կենդանիներից մեզ պաշտպանելու նպատակով և փորում փոսեր՝ անձրևաջրերն ամբարելու համար: Խմելու ջուրը չէր բավականացնում և շատ ամայի վայրերում հավաքվում էր կենարար հեղուկը, չնայած մատղաշ բուսականությունը մակերևույթին էր, այնուհանդերձ, գտնում էինք այն խմելու ձևը: Սարերում ինձ շատ էին վախեցնում փոքորիկները և զորեղ որոտները: Խաղում էինք երեխաների հետ: Նրանցից սովորեցի արաբերեն լեզուն, որով վարժ խոսում եմ՝ մինչև օրս:

Թուրքական կառավարության կողմից հետապնդվող քրիստոնյա հայերի և մեզ հովանավորող մուսուլման արաբների միջև կար փոխադարձ ջերմ համակրանք: Հարկ եղած դեպքում ներկայանում էինք նրանց անուններով և ապրում, ինչպես եղբայրներ: Հիշում եմ՝ մի գիշեր խաղում էինք մեր գյուղակի մոտակա բլուրում, երբ թունավոր կարիճը խայթեց ոտքս՝ սուր

Հ 8 7 0 2 8

ցավ պատճառելով ինձ: Վախում էի՝ թույնից մահանալու վտանգից ահաբեկված, սակայն նրանք ինձ փրկեցին: Ինձ սայլակ նստեցրին և տարան հարևան գյուղակը, որտեղ կար մի բարեպաշտ շեյխ (մահմեդական կրոնավոր), որը բուժել գիտեր: Հասանք մի վրանի մոտ, որի առջևում մեծ կրակ էր վառվում: Հենց նոր էր նա մեզ ընդունել, երբ սկսեց աղոթել և բարձրացրեց իմ ոտքը՝ թույնը արտածելու համար: Վերադարձա քայլելով: Նրանք ինձ փրկեցին:

Հիշում եմ մի այլ փրկություն, այս անգամ՝ Եփրատ գետում, մի անուն, որը շատ սիրելի է և միաժամանակ շատ վըշտալի, այն ժամանակաշրջանում, քանի դեռ ապրում էինք Ռաքքայում: Թուրքերը շատ հայերի սպանեցին և գցեցին այս ջրառատ գետը, որը գալիս է Հայկական բարձրավանդակից: Հիվանդացել էի դեզինտերիայով, գրեթե մահվան դուռն էի հասել՝ մեր ապաստանած գյուղակում բժշկական օգնության բացակայության պատճառով: Մայրիկս անհույս տարավ ինձ գետի մոտ, որից հեռացել էինք մի քանի կիլոմետր վարարումների պատճառով: Կային ձիերով և սայլակներով մարդիկ, որոնք եկել էին գետից խմելու ջուր տանելու: Չնայած ցրտին, բարձրանալով մի ավանակի վրա, գնացի այդ ջուր տանողների հետ և լողացա Եփրատի ջրերում: Ոտքով վերադարձա տուն, արդեն բուժվել էի: Սրանք իսկական հրաշքներ են, որ առանց բժշկի և դեղամիջոցների փրկեցին իմ կյանքը մանուկ հասակում:

Մի քանի տարի անց վերադարձանք ավելի նստակյաց կյանքի: Որքանով որ գյուղատնտեսական աշխատանքների ասպարեզում իր հմտությամբ և փորձով իմ քեռի Դանիելը ճանաչված էր ողջ շրջանում, մի թուրք հողատիրոջ կողմից նշանակվեց գյուղերի կառավարիչ: Այդ պատճառով տևական սովի ընթացքում դժվարություններ չկրեցինք: Տանը միշտ ունենում էինք ցորեն կամ եգիպտացորեն:

Հաստատվեցինք Տել-Աբիադի գյուղակում, Ային Արուսի մոտ, որտեղ գործում էին ողջ շրջանը սպասարկող մեծ ալրաղացներ: Ալրաղացը հավաքույթի և լուրերի փոխանակման մի վայր էր: Այն ժամանակ, երբ ցորենը աղացվում էր, հավաքվածները մեկնաբանում էին արտաքին աշխարհի լուրերը: Այդ-

պես, մենք տեղեկացանք, որ Թուրքիան պատերազմը տանուլ է տվել, որ դաշնակիցները անգլիական գնդապետ Ալենբիի բանակի հետ գրավել են Պաղեստինը՝ հայ լեգեոներների օգնությամբ: Լուռ սպասում էինք նախատեսվող ավարտին:

Մի քանի օր անց, մեր գյուղակի մոտ երկաթգծի կայարանի մոտակայքում, առաջին անգամ տեսանք մի ինքնաթիռ՝ թռչելիս: 1918 թվականն էր: Բոլորս դուրս վազեցինք նայելու: Շատերը կարծում էին, որ դա թռչունի մի տեսակ է, բնության արարած: Մի քանի ժամ անց, ինքնաթիռն ընկնելու լուրն եկավ: Բոլոր երեխաներով վազեցինք դեպքի վայրի ուղղությամբ: Ինքնաթիռից ոչ հեռու, գետնին անշարժ ընկած էր բրիտանական օդաչուն:

Պատերազմի ավարտը և անգլիական զինագրավումը

Մի քանի օր անց անգլիական բանակը եկավ շրջանը զինագրավելու: Մեզ ուղարկեցին ինքնաթիռներ, որոնք օդից գցում էին խտացրած կաթ և անգլիական արտադրության Swift տեսակի մսի պահածոներ՝ մինչև որ կբացահայտվեին մեզ համար այն ժամանակ անհայտ և հեռավոր արգենտինական մսամթերքների արտադրատեսակները: Բոլորը գրկաբաց էին ընդունում բրիտանացիներին:

Մի որոշ ժամանակ անց, զինվորական մի մեքենա մեզ Եդեսիա (Ուրֆա) տարավ: Հրաժեշտ տվեցինք տեղացի արաբներին, որոնց օգնությամբ փրկվել էինք պատերազմի և ցեղասպանության արհավիրքներից: Հայ վերապրողներս վերադարձանք մեր հարազատ, կիսավեր դարձած քաղաքը, որ այժմ զինագրավված էր անգլիացիների կողմից: 1915 թվականի Եդեսիայի հերոսական դիմադրության ընթացքում թուրքական ռմբակոծությունները, փաստորեն, ավերել էին մեր ողջ թաղամասը: Տները, դպրոցները և եկեղեցիները փլատակների էին վերածվել:

Վեր հառնեց հայի նախաձեռնող ոգին, որին ներհա-

տուկ է յուրաքանչյուր դժբախտություն ամոքել աշխատանքով՝ կառուցելով և վերակառուցելով: Նույնը կատարեցինք Եդեսիայում: Այն ամենն, ինչ կործանվել էր թուրքերի կողմից, վերակառուցվեց հայերի միջոցով: Վերականգնեցինք համայնքային կյանքը. ոտքի կանգնեցրինք վարժարանները, կարգի բերեցինք եկեղեցին, կազմեցինք մի երգչախումբ, փնտրեցինք քահանաների, քանի որ մեր հոգևորականությանը տանջամահ անելով սպանել էին թուրքերը:

Ինչպես մեր քաղաքի, այնպես էլ այլ բնակավայրերի վերապրողները, որտեղ դեռ չէին զինագրավել դաշնակիցները, կենտրոնանում էին Եդեսիայում: Մարդիկ էին գալիս նաև Միացյալ Նահանգներից, Ֆրանսիայից և Եվրոպայի այլ երկրներից՝ իրենց ազգականներին փնտրելու համար: Ոմանց հաջողվում էր հասնել իրենց նպատակին և վերադառնում էին, իսկ մյուսները՝ մնում ապրելու Ուրֆայում:

Քաղաքի հայկական դպրոցական հաստատություններն ավերված էին, ուստի շարունակեցի իմ ուսումը ֆրանսիական Դոմինիկյան հայրերի վարժարանում, որտեղ ձեռք բերեցի հայերենին հավասար տրվող ֆրանսերենի իմացություն: Հետո վերակառուցեցին հայ առաքելական ծխական դպրոցը և բողոքականներինը՝ նույնպես: Թվում էր, կյանքը կամաց-կամաց բնականոն հունի մեջ էր ընկնում: Նրանք, ովքեր խանութներ ունեին, սկսեցին աշխատել:

Թուրքերը արհեստավորների կարիք էին զգում: Իրենց կյանքի կերպը թալանն էր, որ հետևում էր յուրաքանչյուր հետապնդմանն ու ջարդին: Բռնագրավել էին հայերի ունեցվածքն ու սեփականությունը: Մեր տունը նույնպես ամբողջովին թալանվել և ավերվել էր:

Չնայած ցեղասպանությանը, հայերս վերադարձանք հաղթանակած: Հայաստանը համարվում էր Անգլիայի և Ֆրանսիայի «կրտսեր դաշնակիցը»: Մեր կամավորները մասնակցել էին Պաղեստինի և Կովկասի ճակատներում տարած հաղթանակներին: Հիշում եմ Արարայի հռչակավոր ճակատամարտը սուրբ երկրի նվաճման ժամանակ, երբ «Արևելյան Լեգիոնի» կազմի մեջ մտած հայ կամավորները անասելի քաջու-

թյամբ էին կռվել: Մենք ազատ էինք զգում և մեր ճակատագրի տերն էինք: Վերականգնում էինք մեր կալվածքները: Թուրքերը խուսափում էին հայ համայնքի հետ ընդհարումներից. գիտեին, որ ուժեղ ենք, լավ կազմակերպված և, որ անգլիական հրամանատարության ղեկավարները մեզ օգնում են օրինական հիմունքներով: Անգլիացիներն իսկապես, մեզ օգնեցին բավականին լավ կազմակերպված ձևով, սակայն դժբախտաբար, հաստատված կարգուկանոնը երկար չտևեց: Դաշնակիցները փոփոխությունների դիմեցին. անգլիացիները մնացին Իրաքում, Պաղեստինում, իսկ ֆրանսիացիները՝ Սիրիան, Լիբանանը և Կիլիկիան («հնագույն փոքրիկ Հայաստան» Միջերկրական ծովի ափին) վերահսկելու լիազորությամբ, իրավասություն, որը տարածվում էր նաև մեզ վրա:

Ֆրանսիան լքում է Կիլիկիան

Թուրքիայում քեմալական շարժման հետևանքով կառավարության փոփոխումից հետո, ֆրանսիական կառավարությունը, որ ներկայացնում էր Ֆրանկլին Բուիյոն, 1920 թվականին թուրքերի հետ կնքեց մի աննպաստ պայմանագիր: Անտեսելով Հայաստանին տված խոստումները և այս շրջանում հայ կամավորների հերոսական գործունեությունը, Ֆրանսիան ողջ Կիլիկիան թողեց թուրքերի ձեռքերին՝ լքելով իր «կրտսեր դաշնակցին»: Մեր ողջ ժողովուրդը, որ պայքարում էր այդ տարածքների համար, բոլորս, որ հավատում էինք ազնվասիրտ Ֆրասիային, լքվեցինք նրա այդ անարդար քաղաքականության հետևանքով, որը նոր չարիքներ պատճառեց հայ ժողովրդին:

Ֆրանսիայի պատճառած այս նոր աղետը հայերին պետք է մղեր հերոսական ինքնապաշտպանության: Մեր ժողովուրդը Հաճընն, Այնթապ, Մարաշ և Զեյթուն քաղաքների մեջ ցույց տվեց հերոսական դիմադրություն թուրքերի դեմ՝ կրելով մարդկային և նյութական մեծ վնասներ, կարողացավ անցնել Սիրիայի սահմանները և ազատվել:

Եդեսիան արդեն ուներ 1915 թվականի փորձը, երբ նրա հայ բնակչությունը միավորվեց թուրքական բանակի դեմ՝ կազմակերպվելով և կռվին նախապատրաստվելով 40 օրվա ընթացքում: Այս անգամ նույնպես համախմբվեցին բոլոր հայ վերապրողները, և շատ եկվոր երիտասարդներ՝ Միացյալ Նահանգներից և այլ երկրներից, որոնք որպես կամավորներ կռվել էին պատերազմի ընթացքում, ապա վերադարձել: Նրանց հրամանատարության ներքո հայերը ևս համալրվեցին և բարիկադներ բարձրացրեցին: Երբ առաջին օրը թուրքերը փորձեցին ներխուժել քաղաքի հայկական հատվածը, հայերը նրանց ետ մղեցին և հորդաները չկարողացան անցնել: Հանդիպելով կազմակերպված դիմադրության, թուրքերը սպիտակ դրոշ բարձրացրած, եկան բանակցելու՝ ասելով, թե «Մենք ոչինչ չունենք ձեր դեմ, մեր պայքարը Ֆրանսիայի դեմ է»: Ֆրանսիացիները մի ջոկատ ունեին Եդեսիայում, որը նույնպես ստացել էր նահանջելու հրաման: Հայերը նրանց զգուշացրել էին, որ չգնան սարով ձգվող ճանապարհով և, որ ավելի օգտակար կլիներ գնալ հարթ ուղիով, որովհետև գիտեին, որ նրանց դեմ ինչ-որ բան է պատրաստվում: Ֆրանսիացիները անտեսեցին խորհուրդը՝ պատճառաբանելով, որ թուրքերի հետ արդեն ստորագրվել է իրենց նահանջի համաձայնագիրը: Սակայն կատարվեց այն, ինչ կանխատեսում էին հայերը. ջոկատի վեց հարյուր զինվորներ իրենց ողջ հանդերձանքով ընկան թուրքերի պատրաստած դարանը, երբ մի կիրճով անցնում էին դեպի Եդեսիա: Նրանց ոչնչացրեցին գլխովին՝ այդպես բավարարելով իրենց ատելությունը և ֆանատիզմը: Իմանալով, որ հայերը լավ պատրաստված և զինված են, թուրքերն առայժմ չհանդգնեցին հարձակվել բնակչության վրա:

Այդ ժամանակ քաղաքում էր գտնվում բժիշկ Բեշլյանը: Քանի որ պատերազմի ընթացքում թուրքական բանակը ապահովված չէր բավարար քանակությամբ բժիշկներով, Կոստանդնուպոլսի հայ բժիշկ ուսանողներին պատրաստել և ուղարկել էին ճակատ՝ նախապես տալով զինվորական աստիճաններ: Մեր գոտու թուրք հրամանատարը այս բժշկի ընկերն էր: Այսպիսով, երկուսն էլ համաձայնության եկան, որպեսզի հայերը

քաղաքում կամաց-կամաց վերադառնան իրենց նորմալ կյանքին: Սակայն թուրքերը որոշել էին, որ հայերը ամպայման պետք է լքեն քաղաքը: Թուրքերը անասելի ծանր պայմանների մեջ դրեցին հայ բնակչությանը: Վերջապես, հայերը ստիպված եղան հեռանալ՝ թողնելով իրենց ունեցվածքը, անցնել Սիրիա և Լիբանան, թեև ոմանք զոհվեցին առանձին բախումների ժամանակ:

Ճանապարհ դեպի ազատություն

Եդեսիայից հայ բնակչության վերապրող բեկորների դուրս գալուց առաջ ես հազիվ 11 տարեկան էի: Մայրս ասաց. «Այստեղ անվտանգություն չկա, փնտրենք որևէ միջոց քեզ Սիրիա կամ Լիբանան ուղարկելու համար, այնտեղ կառավարում են ֆրանսիացիները և հայերը օգտվում են լիակատար ազատությունից»: Այնտեղ էր հաստատվել իմ քեռի Դանիելը, որ մեզ փրկել էր պատերազմի ժամանակ: Նա աշխատում էր հյուսիսամերիկյան մի ընկերությունում:

Այդ ժամանակ Եդեսիայում կար միայն մեկ բեռնատար ավտոմեքենա, որ պատկանել էր թուրքերի ոչնչացրած ֆրանսիական ջոկատին: Այդ բեռնատարը վարում էր նշված ջոկատի աֆրիկացի զինվորներից մեկը, որ փրկվել էր սպանվելուց և այժմ Սիրիայից ապրանքներ էր տեղափոխում: Իսկ ավտոմեքենան պատկանում էր մի թուրք առևտրականի, որին ճանաչում էր քրոջս ամուսին Դանիել Յուսուֆյանը: Նա ամուսնացել էր Ռեբեկայի հետ՝ 1919 թվականին: Դանիելը նրան՝ այդ առևտրականին, խնդրել էր, որ ինձ Հալեպ տանի: Բեռնատար մեքենայով, մեն-մենակ և այդ տարիքին, ինձ նույնպես ուղարկեցին տարբեր հայերի հետ, որոնք նույնպես փրկվել էին:

Երբ փորձում էինք կտրել-անցնել սիրիա-թուրքական սահմանը, շրջապատվեցինք թուրքական ժանդարմերիայի կողմից, որ նշանառության տակ էր առել մեզ՝ հարկադրելու, որ կանգ առնենք: Նրանց հետ բանակցելուց հետո եկանք համաձայնության, որ մեզ բաց կթողնեն՝ յուրաքանչյուրիս համար

մեկական ոսկի վճարելուց հետո: Այսպես կարողացանք մուտք գործել սիրիական տարածք: Անցանք Ռաքքայով, որ հագեցած էր այնքան տխուր հիշողություններով, կտրեցինք-անցանք Եփրատը և հասանք Հալեպ: Իմ քեռի Դանիել Սաղաքելյանը ամուրի էր. չուներ ընտանիք և չկար մեկը, որի մոտ կարող էր ինձ թողնել: Այդ պատճառով նա ինձ տարավ հյուսիսամերիկյան Near East Relief որբանոցը, մի հաստատություն, որ պատսպարում էր պատերազմից որբացած երեխաներին: Սակայն ես կնախընտրեի, որ Միացյալ Նահանգները կանխած լինեին պատերազմի հետևանքով Հայոց ցեղասպանությունը, և ոչ թե հայտնվեին հետո՝ օգնություն հրամցնելու և որերին խնամելու համար:

Հալեպ եկա 1922 թվականին: Քաղաքը ղեկավարում էր ֆրանսիական մի բարձրաստիճան զինվորական, որի բանակը զինագրավել էր Սիրիայի և Լիբանանի ողջ տարածքը: Այստեղ հայերս ազատ էինք: Կիլիկիայից եկած գաղթականները կարգավորում էին իրենց կյանքն ու կենցաղը՝ արաբ ժողովրդի հյուրընկալության շնորհիվ: Երկու տարի մնացի որբանոցում, մինչև եկան մայրս և քույրս՝ փեսայիս հետ, 1924 թվականին, երբ թուրքերը բոլոր հայերին պարտադրեցին դուրս գալ Եդեսիայից:

Իմ եղբայրը նույնպես գտնվում էր նույն որբանոցում, սակայն մեծերի խմբում. նրանք աշխատում էին և չէին հաճախում դպրոց: Սովորել էր ավտոմեխանիկի մասնագիտություն, ինչպես ուրիշները՝ դերձակի, կոշկակարի և այլն... Նա եկել էր մենակ, ինձանից առաջ, մի քանի ուղտապանների հետ: Ճանապարհին մազ մնաց, որ նրան ձերբակալեր թուրքական ոստիկանությունը, կասկածելով, որ կարող է հայ լինել: Քանի որ եղբայրս արաբերեն գիտեր, նրանց ասել էր. - «Ես արաբ եմ և գնում եմ Հալեպ՝ միանալու իմ ընտանիքին»: Նրան հարցնում են, թե ինչ աչքի ընկնող հատկանշական բան կա այդ քաղաքի մեծ հրապարակում, նա պատասխանում է՝ հիշելով ուրիշ տղաների հետ խոսակցությունների ժամանակ լսածը. «Մի մեծ ժամացույց»: Սակայն թուրք ոստիկանները շարունակում էին կասկածել: Այստեղ եղբորս օգնել էր պատահականությունը: Երբ

Ձախից աջ. Դանիել Սաղաթելյան, Գևորգ և Պողոս Սարաֆյաններ (Near East Relief-ի որբանոցի համազգեստներով) և Վարդեր Ս. դր Սարաֆյան, Հալեպ, 1924 թ.

նա երեխա էր, բժշկական անհրաժեշտությունից ելնելով՝ նրան թլպատել էին: Օգտագործելով այս հանգամանքը եղբայրս նրանց ցույց էր տվել փաստացի ապացույցը՝ ասելով. «Նայեք, ես մուսուլման եմ»: Թուրքերը համոզվել էին և նրան թույլ տվել անցնել սահմանը:

Երբ ընդունվեցի Near East Relief-ի որբանոց, այն ղեկավարում էին հայ կառավարիչները՝ Միացյալ Նահանգներից ուղարկված փողերով: Հաստատության ամենալավ ժամանակներն էին: Քանի որ դպրոցական հասակ ունեինք, գնում էինք Հալեպի հայ համայնքի լավագույն Հայկազյան վարժարանը՝ կրելով մեր հաստատության համազգեստը: Նույն վարժարանն էին հաճախում համայնքի ավելի ունևոր ընտանիքների բոլոր երեխաները:

Հիշում եմ առաջին օրը, երբ ինձ տարան վարժարան՝ քննություն հանձնելու: Ես բավականաչափ սովորել էի Եդեսիայում, սակայն դա կանոնավոր՝ տարբեր առարկաների, լեզուների ուսուցում չէր: Թեև որոշ առարկաների մեջ առաջադիմություն ցույց տվեցի, սակայն ընդհանուր պատրաստականությունս հաշվի առնելով, ինձ ցուցակագրեցին չորրորդ դասարան: Եկա, ներս մտա դասարան, ինձ ներկայացրեցին ուսուցչին և ես նստեցի: Ֆրանսերենի դաս էր: Այդ պահին ուսուցիչ Աճեմյանը հարցրեց «սիրել» բայի հարակատար դերբայը: Անմիջապես ձեռք բարձրացրեցի և սկսեցի վարժ կերպով խոնարհել: Իմ բոլոր նոր դասընկերները սկսեցին նայել և իրար հարցնել, թե ով է այս անծանոթը: Իմ գիտելիքների շնորհիվ տպավորություն թողեցի և որպես հարգանքի նշան, ինձ ծաղրամականուն չկպցրեցին:

Չեմ պարծենում՝ ճշմարտությունն այն է, որ դասարանում միշտ առաջինն էի բոլոր տարիների ընթացքում, մինչև դասընթացի ավարտը: Պարապում էի համառորեն, ինձ դուր էր գալիս ամեն ինչ սովորելը: Օրինակ, ինձ անգիր անել էին տալիս որևէ բանաստեղծության երկու տուն, իսկ ես հաջորդ օրն արդեն գիտեի երեքը, մինչդեռ մյուսները չէին հասցնում սովորել առաջինը: Ուրիշ առարկաների դեպքում ևս պատկերը նույնն էր:

Հայկազյան վարժարանի VI դասարանի աշակերտները Ճենքիե այգիներում դաշտային զվարճանքի ժամանակ, Հալեպ, 1925 թ.: Չորրորդ շարք. կանգնած, ձախից աջ. Քերովբե Օժտունի, Կարապետ Եկավյան, Հակոբ Ֆերեշետյան, Մարգիս Թովմաջանյան, Մուրեն Գոքորյան և Մարգիս Մահակյան: Երրորդ շարք, կանգնած ձախից աջ. Արմենակ Թևեքելյան, Հրաչյա Կալենյան, ուսուցիչ Հովհաննես Արուսյան, ուսուցիչ Կարապետ Ուլուբեյան, Բյուզանդ Գրիգորյան: Երկրորդ շարք. նստած, ձախից աջ. Խաչատուր Հակոբյան, տնօրենուհի Հրանուշ Թաղթաջյան (իգական բաժին), տնօրեն Մարգիս Շիշմանյան (արական բաժին), Փիլիպոս Դերձակյան, Համազասպ Հեքիմյան և Վազգեն Մուրադյան: Առաջին շարք. նստած, ձախից աջ. Կարո Փոլադյան և իր փոքր եղբայրը, Ստեփան Փիլավջյան, Գևորգ Մարաֆյան, Անդրանիկ Մահտեսյան և Մարգիս Մեքյան:

Մի անգամ մի փոքրիկ միջադեպ ունեցա երաժշտության ուսուցիչ, հայտնի երգահան Բարսեղ Կանաչյանի հետ, որը հայկական երաժշտության անմահ հայր Կոմիտասի աշակերտն էր եղել: Կանաչյանը շատ լավ էր դասավանդում և մեզ առաջադրանքներ էր տալիս՝ պարապելու համար: Կողքիս նստող դասընկերոջս՝ մի բարեհոգի տղայի հետ, որը երբեմն օգտվում էր ինձանից, թույլ տվեցինք միևնույն սխալը: Իհարկե, նա արտագրել էր ինձանից, ինչպես անում էր ֆրանսերենի և այլ առարկաների դեպքում: Սակայն, որքանով որ նա ջութակի դասերի էր հաճախում Կանաչյանի մոտ, ուսուցիչը կարծեց, որ ես եմ արտագրել նրանից: Այդ պահին ես զայրացա, ոտքի կանգնեցի և ասացի. «Ուսուցիչ, ես չեմ արտագրել, կարող եք համոզված լինել: Մինչև այսօր շատ կարևորություն չէի տալիս երաժշտությանը, սակայն խոստանում եմ, որ հաջորդ անգամ տասը կստանամ»: Եվ հասա նրան, ինչին ձգտում էի. տարեվերջին տասը ստացա: Սիրով եմ հիշում մեր դասարանի դասղեկ Կարապետ Ուլուբյանին: Փայլուն ուսուցիչ էր, որը մասն էր կազմում Սանասարյան հաստատության ուսուցչական մարմնի: Նա պատասխանատու դաստիարակ էր. մեր մասին հոգ էր տանում ինչպես հայր, հատկապես այն երեխաների նկատմամբ, որոնք եկել էին որբանոցից: Հայերենը դասավանդում էր առանձնահատուկ խանդով: Նա շատ պահանջկոտ էր: Նրան եմ պարտական, որ սովորեցի գրել անսխալ ուղղագրությամբ և գեղեցիկ տառատեսակներով:

Որբանոցում հյուր էինք ընդունում տարբեր անձնավորությունների, նրանց մեջ նաև Հայաստանի երբեմնի կառավարության վարչապետ Համո Օհանջանյանին, գրող և հրապարակախոս Վահան Թեքեյանին: Մի օր հավաքեցին մեզ՝ հաստատության արական և օրիորդաց բաժինների բոլոր երեխաներին. այցելելու էր մեծ գրող Երվանդ Օտյանը: Թատերականացված մի ծրագիր էր պատրաստվել և երգերից ու արտասանություններից հետո, մեր հյուրը բեմ բարձրացավ խոսելու:

Նա ասաց. «Սիրելի որբեր, ես գալիս եմ Տեր Զորից և այնտեղի հրաշքով վերապրողներից եմ, այն վայրի, որտեղ կոտորածի ենթարկեցին ձեր ծնողներից շատերին...»: Նա չկա-

ողացավ շարունակել և ընդհատեց իր խոսքն արցունքների և հեկեկոցների մեջ:

Այս սրտառուչ դեպքը ավելի տպավորիչ է պատկերվել որբանոցի և վարժարանի իմ ընկերներից մեկի՝ Անդրանիկ Ծառուկյանի «Մանկություն չունեցող մարդիկ» ծավալուն վեպում: Ես մեկն էի այն մարդկանցից, որոնք իրոք «մանկություն չունեցան»: Այս միջադեպը ներկայացվեց իսպաներեն թարգմանված իմ «Հայաստանն իր արձակի միջով» գրքում: Ինչպես նշեցի, Հալեպում մնացի այնքան ժամանակ, մինչև բոլոր հայերին պարտադրեցին Եդեսիայից հեռանալ քարավաններով կամ գնացքներով:

Ուրֆայից 50 կմ հեռավորության վրա անցնում էր մի գնացք, որն ուղևորներ էր փոխադրում Կոստանդնուպոլիս-Բաղդադ երթուղով: Դրանից օգտվեցին Ուրֆայի վերջին հայերը՝ Սիրիա տեղափոխվելու համար: Որբանոցում մի հայրենակից ընկեր ունեի՝ Երվանդ Անտոնյանը, որ հետագայում արտագաղթեց Ուրուգվայ: Մի օր նա ինձ ասաց. «Այսօր Ուրֆայից գնացք է գալու, գնանք տեսնենք, միգուցե քո մայրը գա, կամ մի որևէ ծանոթ»: Երկուսս էլ բավական լավ հարգված էինք հաստատությունում. առանց թույլտվություն խնդրելու՝ գնացինք կայարան, սպասելով գնացքի ժամանելուն: Բայց գնացքը եկավ ուշացած և այն էլ՝ առանց որևէ ծանոթի:

Երբ վերադարձանք որբանոց, արդեն բոլորը ճաշարանում էին և իմ տեղը դատարկ էր: Նկատել էին, որ բացակա եմ: Իսկ ընկերոջս հարևանը ստացել էր նրա բաժին կերակուրը և այսպիսով, նրա բացակայությունը չէր նշվել: Միակը ես էի, և չհապաղեցին ինձ կարգի հրավիրել: Հաջորդ օրը տնօրեն Զարեհ Փափազյանն ինձ կանչեց իր առանձնասենյակ և հարցրեց թե ինչու՞ էի բացակայել ընթրիքին, ու՞ր էի գնացել, ինչու՞ և այլն... Նրան պատասխանեցի, որ գնացել էի մենակ, երկաթուղային կայարան՝ հուսալով, որ մայրիկս Հալեպ կգա:

Նա կշտամբեց ինձ, որ բացակայել եմ առանց թույլտրվության և խախտել կարգուկանոնը: Նրանք ովքեր դուրս էին գալիս առանց թույլտվության, պատժի էին ենթարկվում. պատժվողը քավում էր իր մեղքը ֆիզիկական ծանր աշխա-

տանքով, ասենք, պետք է ավազի պարկեր տեղափոխեր գիմնազիայի շինհրապարակ: Քանի որ ջանասեր երեխա էի, սիրված և հարգված՝ նույնիսկ տնօրենի կողմից, նա տատանվում էր այդ պատիժն ինձ տալ: Սակայն, ուրիշ հնար չկար, կարգը կարգ է: Չհակաճառեցի և ոչ էլ ասացի, թե ընկերոջս հետ եմ գնացել: Բայց երևում է, ընկերներս պատմել էին նրան ճըշմարտությունը, այն, որ մենակ չեմ գնացել, իսկ ես փոգրոգություն համարեցի հայտնել ուղեկցող ընկերոջս մասին: Տնօրենը գնահատեց այդ. կանչեց, մի գեղեցիկ խորհուրդ տվեց և ազատեց պատժից:

Կյանքը Հալեպում

Սիրիայում հայ մշակութային կյանքը շարունակ ծաղկում էր ապրում: Մանկավարժական կազմը բաղկացած էր Այնթափի, Էրզրումի Սանասարյան կրթական հաստատության, Խարբերդի և Զմյուռնիայի դպրոցների նշանավոր ուսուցիչներից, որոնք Մեծ եղեռնից հետո տարագրվել էին Հալեպ: Մշակութային շարժումը շատ աշխույժ էր: Գործում էին թատերական խմբակներ, երգչախմբեր, կազմակերպվում համերգներ: Հայ եկեղեցին ևս ամրապնդվում էր. Մեծի Տանն Կիլիկիո Կաթողիկոս Նորին Սուրբ Օծություն Սահակ Խաբայանը՝ արդեն շատ ծեր, աքսորից հետո ի մի էր բերում իր հոտը Հալեպում: Բոլոր օրերին պատարագներ էին մատուցվում եկեղեցիներում, իսկ երեկոները կազմակերպվում էին հոգևոր և մշակութային միջոցառումներ: Հայերը նորից սկսել էին ժպտալ մեծ ողբերգությունից հետո: Մարդիկ ոտքի էին կանգնում աշխատանքով:

Հալեպը Սիրիայի ծաղկած քաղաքներից մեկն էր, որի բնակիչները մեծ մասամբ մուսուլման արաբներ և քրիստոնյաներ էին: Թուրքական կառավարությունը, չնայած տեղացի քրիստոնյաներին հետապնդելուն, նրանց աքսորել էր: Սրանց հովանու ներքո փրկվել էին պատերազմից առաջ գործող հայկական հաստատությունները: Անձեռնմխելի էր մնացել դպրո-

Սարաֆյան եղբայրներ՝ Պողոսը, Ռեբեկան և Գևորգը:
Արգենտինա (1985 թ.)

ցի գրադարանը: Ազատ ժամերս հատկացնում էի ընթերցանությանը, ներառյալ շաբաթ և կիրակի օրերը: Այնտեղ, ինչպես Եդեսիայի մեր տանը, կային ժամանակի ազդեցիկ թերթերի հավաքածուներ, որոնց շնորհիվ կարողացա ծանոթանալ ինչպես Արևելյան, այնպես էլ Արևմտյան Հայաստանի հանրահայտ մեր բանաստեղծներին և գրողներին: Ընթերցանության նկատմամբ ունեցած բուռն հակումն ինձ հնարավորություն տվեց ճանաչել Ղազարոս Աղայանին, Ավետիս Ահարոնյանին, Ավետիք Իսահակյանին և մեր արևմտահայ ստեղծագործողներից Մկրտիչ Պեշիկթաշլյանին, Պետրոս Դուրյանին, Գրիգոր Զոհրապին, Միսաք Մեծարենցին, Դանիել Վարուժանին, Սիամանթոյին և այլոց: Կարդալով այս թերթերը, նաև հասկացա, որ մեր երկու հատվածների գրական շրջանների միջև արդեն ծավալվել էր ազգային-մշակութային փոխադարձ ներթափանցման հետամտող մի շարժում, մանավանդ, լեզվական մերձեցման բնագավառում, որ, ավաղ, ընդհատեց Առաջին համաշխարհային պատերազմը:

Իմ՝ Սիրիա գալուց համարյա երկու տարի հետո, Ուրֆայից եկավ մայրս, քրոջս՝ Սուրենից հղիացած Ռեբեկայի և նրա երկու տարեկան Հովսեփ որդու հետ: Նրանց չէր ուղեկցել իմ փեսա Դանիելը՝ հաջողակ մի առևտրական, որին թուրքերը մեղադրել էին մի հայ դեղագործի մահվան մեջ, մինչդեռ իրականում նրան սպանել էին իրենք՝ թուրքերը, և այդ պատճառով նա բանտարկվել էր՝ դատապարտվելով ցմահ բանտարկության: Այս բոլորը թուրքերի ծրագիրն էր՝ հայ բնակչությանը վախեցնելու համար և պարտադրելու նրան քաղաքից դուրս գալ: Որոշ ազդեցիկ անձանց միջամտության շնորհիվ, իր ողջ սեփականությունը զոհաբերելու գնով, փեսաս ազատվեց բանտից և հաջողեց մեկնել Հալեպ՝ միանալով իր ընտանիքին:

1924 թվականին հյուսիսամերիկյան միսիան Հալեպում փակեց իր բարեգործական հաստատությունները՝ որբանոցներն ու մանկատները: Այն որբերը, որ ազգականներ չունեին, մեծ խմբերով ուղարկվեցին Ֆրանսիա և այլ վայրեր՝ հողագործական շրջաններում աշխատելու համար: Ֆրանսիական շատ քաղաքներում մինչև այսօր էլ կան հայկական համայնքներ՝

Հալեպի Հայկազյան ազգային վարժարանի շրջանավարտները, 1925 թ.: Նախավերջին շարքում աջից ձախ, սուաջինը. Գեորգ Մարուքիյան: Նստածներ. ուսուցչուհի Թախթաջյան, տնօրեն Մարգիս Շիշմանյան և ուսուցիչ Կարապետ Ոլուբեյան:

Գևորգ Մարաֆյանը Հայկազյան վարժարանի իր մի խումբ մտերիմ աշակերտների հետ, Հալեպ, 1925 թ.: Առաջին շարք, կանգնած. ձախից աջ. Կարապետ Փոլսոյան.Հրաչյա Կալենյան , Փիլիպոս Դերձակյան: Երկրորդ շարք. կանգնած. Համազասպ Հեքիմյան և Գևորգ Մարաֆյան: Երրորդ շարք, նստած, ձախից աջ. Հակոբ Քյուրքչյան, ուսուցիչ Հովհաննես Արուսյան և Մարգիս Թովմաջանյան:

կազմված այս տղաների սերունդներից:

Պողոսին և ինձ հանձնեցին մայրիկիս, որն արդեն գտնվում էր Հալեպում: Ավագ եղբայրս շուտով ուղարկվեց Արգենտինա, իսկ ես մնացի իմ ընտանիքի հետ և կարողացա հետևել ամբողջական դասընթացներին՝ մինչև ավարտելս:

. Պողոսը նամակներ էր ուղարկում Արգենտինայից: Առաջին տարիներին նա շատ դժվարությունների մեջ ընկավ: Մեծ ջանքեր էր գործադրում այնտեղ դիմանալու համար, այնպես որ, եթե փող ունենար, կվերադառնար: Բախտ որոնեց տարբեր աշխատանքներում և վերջում գտավ իր մասնագիտությունը հետևյալ ձևով. հայտարարություն տվեց, որում ասում էր, թե մեխանիկ է և գիտի ֆրանսերեն խոսել: Նրան կանչեցին մի մեխանիկական արհեստանոց. տերը ֆրանսացի էր և հայտնեց եղբորս, որ լեզուն կարևոր չէ և, որ կցանկանա տեսնել այն, ինչ կարող է անել: Ստուգելու համար աշխատանք տվեցին, որ նա կատարեց հաջողությամբ և ընդունվեց: Այսպես եղբայրս ձեռք բերեց կայուն աշխատանք բարձր աշխատավարձով՝ ապահովելով իր տեղը օտար երկնքի տակ:

Այդ ժամանակ մենք ապրում էինք քրոջս հետ՝ Հալեպի բավական հարմար մի բնակարանում: Բարձր գնահատականներով կարողացա ավարտել որբանոցից դուրս՝ Հայկազյան վարժարանի ամբողջական դասընթացը: Միշտ եղա դասարանի առաջինը, մեզ դասավանդում էին ճարտասանություն ևս, որի շնորհիվ սովորեցի լավ արտասանել: Դասընթացի ավարտին, հազար դպրոցականների մեջ, գեղարվեստական արտասանության մրցույթի ժամանակ, առաջինը դուրս եկա՝ արտասանելով Ավետիս Ահարոնյանի տաս էջանոց «Ուխտավորը»: Ինձ՝ պատանուս, շատ էին վստահում տնօրեն Սարգիս Շիշմանյանը և ուսուցիչները, հատկապես՝ ֆրանսերենի ուսուցչուհի Զ. Խաչբերունին (քույրը Հովհաննես Խան Մասեհյանի՝ Շեքսպիրի ստեղծագործությունների հանրաճանաչ թարգմանչի, որն այդ ժամանակ Պարսկաստանի դեսպանն էր Անգլիայում): Ուսուցչուհի Խաչբերունին շատ կրթված մի անձնավորություն էր, սովորել էր Շվեյցարիայում և տեսնելով իմ ընդունակությունն ու հնարավորությունները, փորձեց ինձ համար

կրթաթոշակ գտնել, որպեսզի շարունակեմ իմ ուսումը Լոզանի համալսարանում: Այդ պատճառով սպասեցի մի քանի ամիս, սակայն ժամանակն անցնում էր և հարկավոր էր մի որևէ գործով զբաղվել:

Մեր դպրոցի նախկին տնօրեն Ադուր Լևոնյանը՝ Այնթափ քաղաքի դիմադրության հայտնի հերոսը, ինձնով նույնպես զբաղվեց, փորձելով ձեռք բերել ինչ-որ կրթաթոշակ Միացյալ Նահանգներում: Այս փորձերից ոչ մեկը արդյունք չունեցավ: Շատ սպասելուց հետո, որոշեցի սովորել մի որևէ արհեստ, որովհետև մտածում էի գնալ Արգենտինա: Գնացի մեխանիկական մի արհեստանոց՝ մեկ շաբաթում խառատի մասնագիտություն սովորելու, սակայն ինձ ցախ կոտրելու էին ուղարկում՝ կրակ վառելու համար: Տիրոջն ասացի, որ ես եկել եմ մասնագիտություն սովորելու և, որ բավական կրթություն ունեմ: Որոշեցի այլևս այնտեղ չգնալ և թողեցի այդ աշխատանքը:

Մեր հարևան պարոն Յենիկոմշյանն ինձ տարավ Հալեպի համայնքում մի հայտնի կարի արհեստանոց: Հիշում եմ, թե ինչպես առաջին օրը կապեցին ծալած միջնամատս՝ մատնոցի գործածությանն ինձ վարժեցնելու նպատակով: Այնտեղ աշխատեցի մեկ շաբաթ: Շաբաթ օրը ինձ ուղարկեցին մի պատվիրատուի տուն՝ կոստյումն իրեն հանձնելու: Տարա կոստյումը և ինձ տվեցին մի քառորդ մեջիդիե (թուրքական դրամական միավոր) թեյադրամ: Համաձայն ավանդույթի, առաջին շահույթը պետք է տրվի եկեղեցուն: Կիրակի օրը այս դրամը տարա Սուրբ Աստվածածին եկեղեցի: Դրա շնորհիվ Աստված ինձ հնարավորություն տվեց պահպանել առողջությունս՝ ապրուստի միջոց վաստակելու համար:

Փեսաս և այլ համաերկրացիներ ժամանակավոր առևտրական հաստատություններ հիմնեցին «Արևելյան էքսպրես»-ի սահմանակից կայարանի մոտ, Արաբ-Փունար տեղանքում, սիրիական տարածքի ներսում: Առևտուր էին անում գնացքի ուղևորների և սահմանի մյուս կողմի մերձակա գյուղերի բնակիչների հետ: Մի օր, փեսաս եկավ տուն և ինձ ասաց, որ իր գործընկերը հիվանդացել է, իսկ ծառայողը՝ հեռացել:

Գևորգ Սարաֆյանն Արաբ-Փունարում, ձախից աջ. երրորդը. երկու ծանոթների հետ՝ սահմանի մի խանութում (1926 թ.):

Նա ինձ խնդրեց, որ օգնեմ իրեն:

Այսպես, նա ինձ քաշեց գործի մեջ և տարավ աշխատելու սահմանամերձ իր խանութում, որտեղ վաճառում էինք Ֆրանսիայից ներմուծած ամենալավ ապրանքները, ինչպես օծանելիքներ, շոկոլադներ, այնպես էլ զանազան տեսակի արտադրանքներ:

Կայարանի ղեկավարի բարյացակամության շնորհիվ ուղևորներին թույլատրվում էր անցնել սահմանը և գնումներ անել: Կամաց-կամաց ստեղծվեց առևտրականների մի խումբ՝ հիմնականում ծագումով Ուրֆայի հայերից, որոնք այս բնակավայրը դարձրին բարգավաճ մի քաղաք: Խանութում կարողացա օգտագործել դպրոցում ձեռք բերած գիտելիքներս: Շուտով սովորեցի առքուվաճառքի գաղտնիքները:

Մի անգամ փեսայիս գործընկերը նորից հիվանդացավ: Իսկ փեսաս շատ քիչ էր գալիս խանութ, որովհետև զբաղված էր ցորեն և այլ հատիկային կուլտուրաներ գնելով: Երբ ընկերները նրան հարցնում էին, թե ինչու է մենակ թողնում ինձ՝ անփորձ պատանուս, նա պատասխանում էր, որ այդ անում է, որպեսզի փորձ ձեռք բերեմ: Այսպես սովորեցի տիրապետել առևտրին, օրվա դրամը հաշվել, լավ սպասարկել հաճախորդներին և պատրաստել պատվերները՝ Հալեպից ապրանք բերելու համար: Փեսայիս այնքան էր դուր եկել աշխատելու իմ ոճը, որ ցանկանում էր մի խանութ բացել բացառապես ինձ համար: Այդ ժամանակ ես հազիվ 16 տարեկան էի:

Երբեմն-երբեմն վերադառնում էինք Հալեպ՝ մեր ընտանիքին հանդիպելու և ընկերների հետ մի կարճ ժամանակ անցկացնելու համար: Բոլոր դժվարություններով հանդերձ՝ վատ կյանք չէինք վարում Արաբ-Փունարում: Իմ տարիքի բավական տղաներ կային: Բոլորս էլ քնում էինք բաց օդում, որովհետև շատ քիչ էր անձրևում: Արթնանալուն պես շտապում էինք մոտակա լիճը՝ լողալու:

Այնուհետև, սկսում էինք աշխատել: Առողջ կյանք էինք վարում՝ շփվելով բնության հետ: Առավոտյան սնվում էինք կաթով և թարմ կաթնաշոռով, իսկ նախաճաշին և ճաշին կերակրվում էինք այն ուտեստներով, որ պատրաստում էր մեր

գործընկեր Հովհաննես Մելքոնյանը:

Եկավ նախատեսված այն պահը, երբ փեսաս մի խանութ պետք է առանձնացներ ինձ համար, սակայն այս մտահղացումը բախվեց մայրիկիս որոշման հետ: Նա միշտ ցանկացավ հեռանալ այս երկրամասից, ուր տեղի էին ունեցել հետապնդումներ, խոշտանգումներ, զանգվածային ջարդեր և որոնց պատճառով կորցրել էր իր պապերին, ծնողներին և ամուսնուն: Այդ մտադրությամբ էր, որ Արգենտինա էր ուղարկել իմ եղբայր Պողոսին: Այդ երկրում արդեն հաստատվել էր մորս ազգական Խեզալյանների ընտանիքը: Նրանք Ադանայում էին, երբ Կիլիկիան հանձնվեց թուրքերին, իսկ 1921 թվականին ամբողջ ընտանիքով գաղթել էին Բուենոս Այրես: Եղբայրս նրանց տանն էր մնում և նրանց միջոցով էլ ճանաչեցինք Արգենտինան: Մայրս որոշում կայացրեց. «Մենք նույնպես գնում ենք այնտեղ»:

Դեպի Արգենտինա

Մեկ անգամ արդեն հաստատ որոշելով, որ պետք է մեկնենք Արգենտինա, մայրս և ես արեցինք, ինչ անհրաժեշտ էր՝ անձնագրեր ձեռք բերելու և տոմսեր գնելու համար:

Ճանապարհորդությունը պետք է կատարվեր երկու փուլով. նախ երկաթգծով պետք է մեկնեինք Հալեպից Բեյրութ: Մեկնեցինք 1927 թվականի մայիսի 19-ին: Մտերիմ ընկերներս եկան կայարան՝ մեզ հրաժեշտ տալու: Ճանապարհորդության ժամանակ երեկոյան սկսեց ցրտել, եղանակի հետ թուլացավ գնացքի քարշի համակարգը. անիվները շատ դանդաղ էին առաջ տանում: Բեյրութ ժամանեցինք լուսաբացին՝ կտրելանցնելով Լիբանանի սարերը:

Տեղավորվեցինք բավական հարմարավետ մի հյուրանոցում, որի տերը մեր հայ ընկերներից էր և այնտեղ սպասեցինք մի շաբաթ, մինչև որ եկավ « Provence » նավը: Շոգենավերը, որ նավարկելով անցնում են Միջերկրական ծովը, պետք է շատ բարձր և մեծ լինեն, որպեսզի դիմանան այնպիսի փոթո-

ռիկների, որպիսիք վրա տվեցին մեզ ճանապարհորդության ժամանակ: Բեյրութի նավահանգիստը բավականաչափ խորություն չունի այնպիսի մեծ նավերի համար, ինչպես «Provence »-ն է: Այդ պատճառով մեզ նավ մոտեցրին փոքրիկ նավակներով: Մենք ծանոթ էինք ծովային հսկիչին և նա կարողացավ մեզ տեղավորել երկրորդ կարգի մի նավախցիկում, թեև մեր տոմսերը երրորդ կարգի էին: Այսպես կարողացանք լավ սպասարկմամբ հարմարավետ ճանապարհորդել:

Առաջին օրերը նավարկությունը լավ ընթացավ, սակայն երբ մոտեցանք իտալական ափերին, մի սարսափելի փոթորիկ մոլեգնեց: Նավն այնպես էր ճոճվում աջ նավակողից ձախ նավակող, նավախելից նավաքիթ, որ ոչ մեկը չկարողացավ դուրս գալ իր խցից՝ ոչ շարքային անձնակազմը, և ոչ էլ ղեկավար կազմը: Ողջ այդ ընթացքում միայն փակված էինք, անհանգստացած և վախեցած: Բարեբախտաբար, մի հայ, որ եկել էր Հյուսիսային Ամերիկայից և վերադառնում էր մեզ հետ, բավական փորձված էր այս ճանապարհորդության մեջ. նա մեզ հանգստացրեց և հուսադրեց, ասելով, որ «Այս տեղերում միշտ փոթորիկ է լինում, ոչինչ չի լինի, այսօր ժամը 6-ին ամեն ինչ կխաղաղվի»: Իսկապես, Սիցիլիա կղզին անցնելիս ծովը հանդարտվեց, և այսպիսով, կարողացանք հանգիստ հասնել Մարսել: Ֆրանսիական այս կարևոր նավահանգստում մնացինք վեց օր:

Նորից ստուգեցին ուղևորների փաստաթղթերն ու անձնագրերը: Հայերը կարող էին Արգենտինայում ապաստանել որպես գաղթական, միայն թե ունենային մի որևէ արհեստ կամ մասնագիտություն: Իմ փաստաթղթերում ներկայացված էի որպես դերձակ, ուրիշները՝ մեխանիկներ և կոշկակարներ: Այն ժամանակ, երբ սպասում էինք մեկնելու օրվան, հիշեցի, որ Մարսելում է գտնվում դպրոցական ընկերս և օգտվեցի առիթից՝ նրան տեսնելու համար: Գիտեի, որ աշխատում էր «De La Paix» փողոցի դեղատանը: Փնտրեցի դիմելով մարդկանց և վերջապես, ինձ ցույց տվեցին տեղը: Գնացի քայլելով և որքան մեծ եղավ իմ զարմանքը, երբ տեսա, որ «De La Paix» փողոցը պատված էր փայտյա սալիկներով, սակայն պինդ փայտից՝

քառակուսի կտորներով: Զարմացած ինքս ինձ հարցնում էի, թե այս ի՞նչ է: Ինձ համար դա ամբողջովին նորույթ էր: Ասֆալտապատ փողոցը՝ հասկացանք, բայց փայտի՞ց:

Վերջապես, հանդիպեցի ընկերոջս, որն աշխատում էր այդ դեղատանը որպես վաճառող: Գոհ էր: Զրուցեցինք և վերհիշեցինք այն տարիները, որ անցկացրել էինք միասին: Դրանից հետո մայրիկիս հետ գնացինք եղեսիացի մեր մի հայրենակցի տուն: Այստեղ եկան նաև մեր ուրիշ հայրենակիցներ՝ մեզ տեսնելու: Զրուցեցինք անցած-գնացած բուռն իրադարձությունների մասին: Շոշափեցինք նաև Արգենտինայում մեր՝ առաջիկայում բնակություն հաստատելու հարցը: Մեզ առաջարկեցին դիմել Բուենոս Այրեսում գտնվող պարոն Միհրան Օշինին, որին իրենք ճանաչում էին: Նրանք բոլորն էլ աշխատում էին շաքարի գործարանում: Զարմանում էին, թե ինչու լավագույն որակի ապրանքը առաքվում է արտասահման, մինչդեռ երկրում օգտագործում են ցածրորակ արտադրանք: Բայց և հասկանում էին, որ նպատակը ավելի շատ տարադրամ ձեռք բերելն է: Այդ ժամանակ ևս, ինչպես միշտ, լավագույն որակը նախատեսվում էր արտասահմանի համար:

Այնուհետև, այցելեցինք եկեղեցիներ և թանգարաններ: Որքանով գիտեի լեզուն, հեշտությամբ էինք գտնում դրանց տեղերը: Ամենավատը հյուրանոցն էր, վատից վատը: Մեզ քնեցնում էին ծղոտե ներքնակների վրա: Այդ հինգ կամ վեց օրերը անցկացրինք շատ վատ, ոչ հարմարավետ պայմաններում, մինչև որ նավը եկավ՝ մեզ Արգենտինա տեղափոխելու համար: Նավը բեռնելու օրը տեսանք, որ մեր սիրիացի ճանապարհորդ ընկերները գնել են մետաքսե մեծ վզնոցներ՝ օգտագործելու որպես շարֆ, որովհետև, նրանցից ոմանք, որ եղել էին Արգենտինայում, ասում էին, որ այնտեղ դրանք շատ տարածված են ժողովրդի մեջ՝ օդի խոնավությունից պաշտպանվելու համար: Ես նույնպես գնեցի այդպիսի մի վզնոց և մի գամակ, որպեսզի մայրիկս հանգստանար նավի տախտակամածի վրա, նաև մի սրինգ՝ ճանապարհորդության ընթացքում զվարճանալու համար: Սրինգն ինձ հիշեցնում էր իմ երբեմնի դպրոցական ժամանակները, երբ մասնակցում էի դպրոցի փողային նվա-

գախմբի պարապմունքներին:

Մեզ նստեցրին մի նավ, որն ըստ երևույթին, նախկինում եղել էր բեռնատար և ապա՝ ձևափոխվել մարդատարի: Այն պատկանում էր իտալական անձնակազմով ֆրանսիական մի ընկերության: Մեզ, ինչպես անասունների, տեղավորեցին նավամբարում, որը ձևափոխված էր ննջասենյակի՝ զորանոցային մահճակալների դասավորությամբ: Տղամարդիկ և կանայք քնում էին առանձնացված: Մեզ պարտադրում էին ողջ օրը մնալ տախտակամածի վրա: Այդ ընթացքում նավամբարը կարգի էին բերում, մաքրում, իսկ երեկոյան, ընթրիքից հետո, իջնում էինք ներքև՝ քնելու: Որևէ մեկից չէինք կարող դժգոհել. մեզ այդպիսի դժվարությունների և նեղությունների էինք պարտադրել ինքներս՝ իբրև հատուցում այստեղ գալու մեր մտադրության:

Իրականում, վտարանդի չէինք, այլ գաղթական: Մեր ապրած սարսափներից փրկվելու համար ամեն բան կարելի էր տանել: Եվ այսպես, թեթևանում էին այն նեղությունները, որ կրեցինք ճանապարհորդության ընթացքում: Նոր ճանապարհները մոռացնել են տալիս առօրեական դժվարությունները: Մենք հեռացանք Մարսելից և արդեն ճիշտ Ատլանտյան օվկիանոսում էինք գտնվում:

Այս նավարկության մասին պատմելու շատ բան առանձնապես չկա: Օրերը խաղաղ էին անցնում և ոչ մի դժվարություն կամ խանգարող որևէ բան չկար: Առավոտվանից հայացքներս հառում էինք ծովին և երկնքին, իսկ գիշերը գնում էինք քնելու: Տախտակամածից հետևում էինք ձկների սուրացող վտառներին, որոնցից երբեմն-երբեմն ջրից դուրս էին ցատկում շատ աշխույժ ձկները: Մեր ուշադրությունը գրավեց այն, թե ինչպես են որոշ վտառներ ուղեկցում նավին: Երբեմն հանդիպում էինք այլ նավի և նրա հետ փոխանակում շչակների ազդանշաններ: Այդ օրերին նավի խորտակման մի տեսարան սարքվեց. մենք զգուշացված չէինք և ճիշտն ասած, կարգին վախեցանք: Տագնապ հնչեցրին և մարդիկ հավաքվեցին տախտակամածի վրա՝ շտապ տեղավորվելու արդեն պատրաստված նավակներում: Հետո մեզ ասացին, որ դա ցուցադրական

փորձ էր՝ պատրաստ լինելու այն դեպքին, եթե իրականում ինչ-որ բան տեղի կունենար:

Հասարակածը հատելը նշեցինք վաղեմի հանդեսով՝ նավը տոնական տեսք էր ստացել՝ դիմակավորված և պարող մարդկանց խմբերով: Անեկդոտի նման մի հետաքրքիր միջադեպ պատահեց, որ պետք է հիշեմ: Ուտելիքը մատուցվում էր երկու հերթով՝ նավի մեծ սալոն-ռեստորանում: Հայերին, արաբներին, հույներին և հրեաներին ընթրիք էին տալիս մի հերթով, իսկ եվրոպացիներին՝ մեկ այլ: Մեր հերթի ժամանակ կերակուրն առատ էր, մատուցվում էր գինի, միջավայրն էլ հաճելի էր, սակայն ճաշացուցակը մեր սրտով չէր: Հաճախ էին մատուցում կերակրատեսակներ՝ պատրաստված չորացած ձողաձկից՝ կարտոֆիլով և մակարոնով, որը մեզ դուր չէր գալիս: Ձանձրացել էինք մի տեսակ պարտադիր դարձած այդ միօրինակությունից: Մի օր հավաքվեցինք բոլորս և որոշեցինք հացադուլ հայտարարել: Հաջորդ օրը, երբ սպասավորները սկսեցին մատուցել, բոլորս միաբերան արաբերեն արտասանեցինք «Allahu» և միաժամանակ, վերադարձրեցինք ուտեստները: Եկան մեզ հարցնելու, թե ինչ կցանկանայինք ուտել: Խնդիրն այն էր, թե ինչպես պետք է բացատրվել նրանց հետ, քանի որ բոլորը իտալացիներ էին և մեզանից ոչ մեկը չգիտեր այդ լեզուն: Ես գիտեի ֆրանսերեն, մեկ ուրիշը, որը հրեա էր, խոսում էր իսպաներեն: Նրա հետ միասին խնդրեցի, որ խոսենք ղեկավարների հետ: Ի վերջո, քանի որ նրանք չգիտեին ոչ ֆրանսերեն, ոչ էլ իսպաներեն, դիմեցինք նավի բժշկին, որը ֆրանսիացի էր: Նրա հետ կարողացա հաղորդակցվել և բացատրել խնդիրը. «Բժիշկ, ընդհանրապես դժգոհություն չունենք, սակայն այս ճաշացուցակը մեզ դուր չի գալիս: Սովոր չենք ձուկը պատրաստել այնպես, ինչպես դուք՝ կարտոֆիլի ու բրնձի հետ: Խնդրում ենք նկատի ունենալ, որ մեզ դուր կգար միայն զուտ բրինձը, որպես փլավ, իսկ կարտոֆիլը՝ առանձին եփած կամ կերակուրի մեջ»: Մենք համաձայնության եկանք և հաջորդ օրը կերակուրը պատրաստեցին ըստ մեր պատվերի: Իտալական մակարոնը հավանել էինք, և իրենք էլ այլևս մեզ չմատուցեցին ոչ ձողաձուկ, ոչ էլ որևէ ձկնատեսակ:

Ամերիկայի երկրներում

Տասնչորս օր ճանապարհորդելուց հետո առաջին միջակա կայանն եղավ Ռիո դե Ժանեյրոն (Բրազիլիա), ահռելի մի նավահանգիստ, որը մեր համակ ուշադրությունը գրավեց: «Pan de Azucar» ժայռը իշխում էր հսկայական ծովախորշը: Գիշերը անցկացրինք նավի վրա, որովհետև մեզ թույլ չտվեցին քաղաքին ծանոթանալու համար ափ իջնել: Երբ մթնեց, հանկարծ վառվեց անվերջ կիլոմետրեր և կիլոմետրեր փռված ողջ էլեկտրական համակարգը: Դա շատ տպավորիչ էր ինձ համար, որովհետև մենք եկել էինք մի երկրից, որտեղ դեռ ամենուրեք ապրում էին նավթի լամպերի կամ մոմերի աղոտ լույսի տակ: Ինքս ինձ հայցնում էի, թե ինչ օգուտ կա ծովի վրա լույսն այդքան շռայլելուց: Դա, իրոք, ցնցող տպավորություն էր թողնում, մանավանդ, երբ հիշում էի, որ Բեյրութում կամ Հալեպում ամերիկյան գործակալությունները հազիվհազ էին լուսավորվում, որի աղբյուրը, ինչպես կինոթատրոններում, էլեկտրական էներգիա արտադրող սարքավորումներն էին:

Մեկնեցինք հաջորդ օրը և մտանք Սանթոսի նավահանգիստ՝ Մոնտեվիդեո ափ ելնելու համար: Ոմանք այստեղ իջան նավից, իսկ նավում մնացած ուղևորներս, այս անգամ ևս, զրկվեցինք քաղաքին ծանոթանալու հնարավորությունից: Շարունակեցինք ճանապարհորդությունը և հաջորդ օրը վաղ առավոտյան մտանք Բուենոս Այրեսի նավահանգիստ:

Վերջապես, ժամանեցինք Արգենտինա, ավետյաց երկիր, որին շատ էինք ցանկանում ճանաչել տանջալի անհանգստությամբ:

1927 թվականի հունիսի 21-ն էր: Ձմեռ էր սկսվում այս կիսագնդում, իսկ մենք գալիս էինք հյուսիսի գարունից: Առավոտյան վեր կենալուն պես հանկարծակի հայտնվեցինք մշուշի մեջ կորած մի մեծ քաղաքում: Մանր անձև էր տեղում և ցուրտ էր: Ամեն ինչ հակառակ էր Բուենոս Այրեսի անվան հետ կապված մեր պատկերացումներին: Կարծում էինք, թե կհանդիպենք լույսերի մեջ ողողված մի մեծ քաղաքի: «Սրա՞ համար եկանք այստեղ, - մտածեցի ես, - երանի թե աչքերս տրախոմա-

յով հիվանդ լինեին և մեզ հետ ուղարկեին Բեյրութ»: Այդ ժամանակ, բոլոր նրանք, ովքեր գալիս էին Փոքր Ասիայից, պարտավոր էին ստուգում անցնել, որովհետև տրախոման վարակիչ հիվանդություն է: Եկածներից ոմանք տառապում էին այս հիվանդությամբ: Արգենտինան նրանց չէր ընդունում, և հետ էր ուղարկում իրենց հայրենի երկրները:

Միգրացիայի ծառայության աշխատակիցները նավ բարձրացան՝ բոլոր ուղևորներին ստուգելու համար: Ես առողջ էի, մայրս՝ նույնպես: Մեր բոլոր փաստաթղթերը կարգին էին, այնպես որ, կարողացանք կամաց-կամաց իջնել: Նավամատույցում մեզ սպասում էին իմ եղբայր Պողոսն ու մորս մորաքրոջ որդին՝ Խոսե Խեգալյանը, որոնք մեզ ջերմորեն դիմավորեցին: Քիչ կապոցներ ունեինք: Տարել էինք մի քանի հագուստներ, մահճակալի ծածկոցներ, որ օգտագործում էինք քնելիս և ձեռքի մի ճամպրուկ: Պարոն Խոսեն «Ֆորդ» մեքենայով մեզ տարավ իր քույր Թերեզայի տուն, որը գտնվում էր Բոնպլանդ փողոցի վրա, որտեղ ապրում էր նաև իմ եղբայրը՝ մի փոքրիկ սենյակում: Մեքենան սլացավ այն ճանապարհով, որ անցնում է Պալերմոյի պուրակներով, մեզ ցուցադրելով, որ Բուենոս Այրեսն ունի տեսարժան և հոյակապ վայրեր: Այսպես, մերոնց հաջողվեց փոխել քաղաքից ստացած մեր ոչ բարենպաստ տպավորությունը:

Առաջին գիշերը անցկացրեցինք այս շատ հաճելի, սիրալիր և հյուրասեր ընտանիքի հետ: Հատկապես ջերմ էր մորս մորաքրոջ աղջիկ Թերեզան: Հաջորդ օրը պետք է ջանայինք վարձել մի բնակարան Արգենտինայում՝ մեր նոր կյանքը սկսելու համար:

Եղել էր այնպես, որ Խեգալյանի քրոջ ամուսինը՝ շատ ընդունակ մի մարդ, որ աշխատում էր Սանիտարական աշխատանքային կազմակերպությունում, որպես որմնադիր, Գոդոյ Կրոս փողոցի թիվ 1800-ում կառուցել էր մի տուն և այդ տարածքում իր տրամադրության տակ ուներ մի սենյակ: Գնացինք տեսնելու և վարձեցինք՝ ամիսը 30 պեսոյով: Սենյակը շատ մեծ չէր և լուսավորվում էր միայն մեկ լամպիկով: Բացի դրանից, տարածքում կառուցել էին փայտից մի փոքրիկ սենյակ՝ որպես խոհանոց, որի համար գնեցինք պրիմուս տիպի հայտնի նավ-

թավառ: Այդ սարքով մայրս կերակուր էր պատրաստում: Սենյակը կահավորելու համար եղբորս հետ միասին գնեցինք երեք երկաթե մահճակալ, փայտյա սեղան՝ երեք աթոռներով և մի պահարան, այն ամենը, ինչը կազմում էր Սարաֆյան ընտանիքի ողջ գույքը: Չեռք բերեցինք նաև անհրաժեշտ կահ-կարասի՝ խոհանոցի համար: Չնայած սենյակը մեծ չէր, հավաքույթներ էինք կազմակերպում մեր հայրենակիցների հետ և 1927 թվականի սեպտեմբերի 18-ին հիմնեցինք Եդեսիայի հայրենակցական միությունը: Ուրիշ շատ երիտասարդներ էին պատսպարվել Հարավային Ամերիկայում և աշխատանք էին փնտրում՝ իրենց ընտանիքներն այստեղ բերելու ակնկալությամբ: Եդեսիայի հայերին հետևելով, ուրիշ քաղաքների հայերը նույնպես միավորվեցին և հիմնեցին իրենց հայրենակցական միությունները, օրինակ Հաճընի, Մարաշի և այլն, այնպես որ, կազմվեցին ավելի քան վաթսուն հաստատություններ: Դա միակ ձևն էր՝ սովորույթներ ու գիտելիքներ ունեցող մարդկանց միավորելու համար: Բացի դրանից, պատրաստում էինք թատերական ներկայացումներ, կազմակերպում հավաքույթներ և խնջույքներ:

Աշխատանքի որոնումներ

Եղբայրս արդեն աշխատանք ուներ՝ որպես ավտոմեխանիկ վաստակում էր օրական վեցից յոթ պեսո, որն այն ժամանակ լավ աշխատավարձ էր: Ես լավ չէի տիրապետում ոչ մի մասնագիտության, պատրաստվում էի գնալ համալսարան և այդ մտորումներով էլ եկա Արգենտինա:

Քանի որ գիտեի ֆրանսերեն, կարծում էի, որ այս լեզվի միջոցով կկարողանամ աշխատանք ձեռք բերել մի որևէ ֆրանսիական ձեռնարկությունում կամ Միտլանդ երկաթգծում: Սակայն, իսպաներեն չիմանալուս պատճառով, այնուամենայնիվ, ինձ չվերցրեցին: Անցան մի քանի ամիսներ, հարկավոր էր աշխատել, ես չէի ուզում բեռ լինել: Պարոն Խեգալյանի հետ գնացինք Օնսեյի առևտրական թաղամաս, որ վերջերս դարձել էր մեծածախ առևտրի կենտրոն: Այդ ժամանակ Օնսեն ընդգրկում

էր Տուկուման 2400 և Ասկուենագա 500 փողոցները: Վերջերս որոշ շենքեր կառուցվել էին Լարեա և Տուկուման փողոցներում: Ասկուենագա 500-ում շատ էին խանութները և հարկավոր էր շրջադարձ Լավաժե 2400, որտեղ հրեաները կառուցեցին սինագոգ և որոշ շենքեր սկսեցին վարձել: Ինչպես երևում է, Օնսեն զբաղեցնում էր այնքան տարածք, որն ընդգրկում էր չորս փողոց (մոտ մեկ հեկտար): Այս գոտում տեղավորվել էին երկու հայ մեծածախ առևտրականներ. մեկը Գրիգոր Կառավարյանն էր, իսկ մյուսը՝ Սարիկոյումջյան եղբայրները, Տուկուման 2491-ում: Պարոն Խեգալյանի հետ ես ներկայացա վերջիններիս՝ աշխատանքի ընդունվելու խնդրանքով, սակայն, որքանով որ նրանք իրենց գործը վերջերս էին սկսել և, ինքս էլ դեռ լավ չգիտեի խոսել իսպաներեն, ինձ չվերցրեցին և խնդրեցին, որ ներկայանամ ավելի ուշ: Նույն բանը տեղի ունեցավ Կառավարյանի հետ: Այդ տարիներին ներգաղթածներին տրվում էր մունիցիպալ թույլտվություն, որ կոչվում էր «Cisa», և դրա համար ամսական վճարվում էր հինգ պեսո: Այդ թույլտվությունը իրավունք էր վերապահում փողոցներում ապրանքներ վաճառել որպես շրջիկ առևտրական: Օգտագործելով այս բարենպաստ պահը, պարոն Խեգալյանը, որ սկսել էր այս ձևով, առաջարկեց նույնն անել և գնել որոշ ապրանքներ՝ վաճառելու համար: Ինձ հետ էր նաև մի ուրիշ տղա՝ Վարդգես Գուլահյան անունով, նույնպես ծագումով Եդեսիայից, որն ունեցել էր համարյա նույն ճակատագիրը, ինչ ես: Մեր հայրերը միասին տարագրվել էին Ռաքքա, որտեղ և սպանվել էին, մենք միասին նույնպես եղել էինք Հալեպի որբանոցում: Նա, ինչպես շատ ուրիշ երիտասարդներ, եկել էր Արգենտինա աշխատանք փնտրելու և մայրիկին ու եղբայրներին իր մոտ բերելու համար: Խեգալյանը գնեց հարյուր պեսոյի ապրանք, որ բաժանեցինք երկու հավասար մասերի: Դուրս եկանք փողոց՝ ձեռքներիս մեկական ճամպրուկ: Ես ապրում էի Գոդոյ Կրուս փողոցում, որտեղից Նիսետո Վեգա թեքվելով, երևում են երկաթուղու գծերը: Այդտեղից հոսում էր Մալդոնադո գետակը, որտեղ այժմ Խուան Բ. Խուստո պողոտան է: Նախ՝ ինքս փորձելու համար գնացի այդ ազատ վայրը և բարձրաձայն սկսե-

ցի գովաբանել իմ ապրանքը՝ տեսնելու, թե ինչպես է հնչում. այս դրության մեջ ձայնս ինձ օտարոտի և կարեկցանքի արժանի թվաց և ես չկարողացա զսպել արցունքներս: Այսպես շարունակեցի՝ անցնելով փողոցները: Հանդիպեցի մի քանի կանանց, որ մայթին զրուցում էին: Մոտեցա և նրանց առաջարկեցի իմ ապրանքները: Նրանցից մեկը յուրատեսակ մի կապ ընտրեց գուլպաների համար և հարցրեց գինը: Ասացի վաթսունհինգ սենտավո, և նա այդքանը վճարեց: Գուլպայի կապը ինձ վրա նստել էր վաթսուն սենտավո: Այս առաջին գործարքից վաստակեցի հինգ սենտավո և դա սկիզբն էր, որ ինձ հաջողություն էր բերելու Արգենտինայում:

Այդ ամիսներին, որ անցկացրեցի աշխատանք փնտրելով, նույնպես շատ ջանք թափեցի լեզուն սովորելու համար: Կիրակի օրերը առավոտյան գնում էի Սանտա Ֆե պողոտայի վրա մի դպրոց՝ Ֆալուչո հրապարակի մոտ, որտեղ բարեգործական ընկերության կանայք, երկրի նախագահի տիկին Դոնա Ռեգինա Պաչինի դե Ալվեարի նախագահությամբ, ուսուցանում էին հատուկ դասընթացներ չափահասների համար՝ իսպաներեն, ֆրանսերեն և անգլերեն լեզուներով: Ես իսպաներեն չգիտեի, անմիջապես ներկայացա ֆրանսերենի դասին, խոսեցի ուսուցչուհու հետ, որն ինձ ասաց. «Ինչու՞ եք եկել այստեղ, եթե արդեն գիտեք ֆրանսերեն», և ես նրան պատասխանեցի. «Եկել եմ որպեսզի ինձ իսպաներենը սովորեցնեք ֆրանսերենի միջոցով, խնդրում եմ»: Ուսուցչուհին՝ Ժոզեֆինա Ասեվեդո Սոխոն, սիրալիր համաձայնեց: Նա ինձ հանձնեց դասագիրք, տետրեր և խորհուրդ տվեց, որ թարգմանություն կատարեմ ֆրանսերենից իսպաներեն և հանձնարարեց լրագրեր ընթերցել՝ բառակազմի գործածության համար:

Համայնքի հասարակական հավաքույթներից մեկում ճանաչեցի ուսուցիչ Նարսիսո Բինայանին, Լա Պլատայի համալսարանի դասախոս, որը սիրալիր գտնվեց՝ զբաղվելու լեզվի իմ ուսուցմամբ: Նա ինձ ներկայացրեց իսպաներենի մի ուսուցչուհու, որից ամենօրյա դասեր վերցրեցի, մինչև որ կարողացա լեզուն ճիշտ սովորել, որը հենց սկզբից էլ ինձ շատ օգտակար եղավ իմ առևտրական գործունեության մեջ: Հաճա-

Սարի վաճառատան ներսը: Աջից ձախ, վաճառասեղանի հետևում. Հայկազ Սարի Գույումջյան, Գևորգ Սարաֆյան (վաճառահանման ղեկավար), Մանուկ Սարի Գույումջյան, Հակոբ Գարուսաշյան, Գևորգ Արաջյան (Բուենոս Այրես, 1929 թ.):

խորդներն ինձ շատ էին սիրում, որովհետև լավ էի հագնվում, մայրս շատ ուշադրություն էր դարձնում իմ արտաքինին. հագնում էի շատ մաքուր կոստյում և վերնաշապիկ: Ես շատ էի տարբերվում ուրիշ վաճառողներից:

Կամաց-կամաց ձեռք բերեցի հաճախորդներ և կարգավորեցի իմ երթուղիները. մի օր գնում էի մի թաղամասով, մյուս օրը՝ մեկ այլ: Աշխատանքը կարգավորված էր. վաստակում էի բավական լավ: Կեսօրին վերադառնում էի տուն՝ նախաճաշելու: Մարդիկ ինձ սպասում էին. գիտեին, թե որ օրն եմ իրենց այցելելու և ինձ հատուկ պատվերներ էին տալիս, որ ձգտում էի կատարել: Վաճառքը կատարվում էր կանխիկ:

Ապրում էի եղբորս և մայրիկիս հետ: Այն ամենը, ինչ վաստակում էինք Պողոսը և ես, հանձնում էինք մայրիկին: Մեզ հաջողվեց հավաքել մի քիչ պեսո, որից հետո հաշիվ բաց արեցինք Իտալիայի հրապարակում գտնվող «Իտալիա» բանկում: Այդ ամիսներին միշտ զուսպ ապրելով, ձգտում էինք ավելացնել մեր բանկային հաշիվը:

Արդեն երկու տարվա ընթացքում կազմավորվեցին մեր կայուն հաճախորդները: Գնում էի Օնսեի թաղամասի և Կանինգ փողոցի մեծածախ ապրանքների վաճառողներից: Պարոն Հայկազ Սարիկուլումջյանը, որից բազմիցս ապրանքներ էի գնել, ցանկացավ, որ ես միանամ իրեն: Մի օր նա ուղղակի ինձ հարցրեց, թե կցանկանամ արդյոք իր հետ աշխատել: Նրան ասացի, որ աշխատում եմ և վատ չեմ վաստակում: Ապա հարցրեցի, թե որքան ինձ կվարձատրեր: Վերջում եկանք համաձայնության: Ինձ պետք է տար 120 պեսո և 1% իմ վաճառքի համար, որպես վաճառող: Այսպես կվաստակեի մոտ 160 պեսո, որը քիչ էր իմ արդեն ունեցած վաստակից:

Սակայն, խորհեցի և հաշվի առա, որ փողոցային շրջիկ վաճառողն ապագա չունի: Անհրաժեշտ էր, որ աշխատանքի տեղավորվեի: Բայց որևէ թաղամասի փոքրիկ կրպակում աշխատելու փոխարեն, ավելի լավ էր սկսել որպես մեծաքանակ ապրանքների վաճառատան աշխատակից, որտեղ շատ հնարավորություններ կլինեին ապագայում: Իրականում այդպես էլ եղավ: 1928–1930 թվականներին սկսեցի աշխատել Սարիի

վաճառատանը:

Հաճախորդներն ինձ համակրում էին, ցանկանում, որ ես սպասարկեմ իրենց: Արդեն 19 տարեկան՝ ունեի իմ երիտասարդական խանդը և ձեռք բերած ընդունակությունները: Ինձ հաջողվեց արժանանալ գործարանատերերի, ներմուծողների և իրենց միջնորդների համակրանքին: Ձգտում էի հասնել ավելի հիմնավորված գների՝ շատ և էժան վաճառելու համար: Պարոն Սարին ինձ թողնում էր ինքնուրույն գործել. այսպես սովորեցի, թե որտեղ ավելի հարմար կլիներ գնել՝ շահավետ վաճառքի համար, որը ձեռնատու կլիներ հենց հաճախորդներին: Մեր ընտանիքի խնայողության դրամարկղում արդեն ունեինք 7800 պեսո, որը հավաքել էինք երեք տարում:

Առևտրական և բրդի ճարտարարվեստի ոլորտում

Որոշեցի հաստատվել իմ հաշվին՝ բացելով իմ սեփական մեծաքանակ ապրանքների առևտուրը Օնսեի կարևոր շրջանում: Անցել էր ավելի քան երկու տարի այն օրվանից, ինչ աշխատում էի պարոն Սարիի ձեռնարկությունում և իմ աշխատավարձը հասնում էր 180 պեսոյի: Նա ինձ առաջարկեց աշխատավարձս հասցնել 200 պեսոյի՝ ինձ պահելու համար, սակայն, ես արդեն որոշել էի բաց անել իմ սեփական գործը:

Զուգադիպեց այնպես, որ այդ պահին Լառեա փողոցի 500-ում մի պարոն կառուցում էր երկու խանութ: Ինձ հաջողվեց այդ շենքերից մեկը վարձել 180 դոլարով, որը շատ մեծ գումար էր, եթե նկատի առնենք տեղի փոքր տարածությունը: Տեղադրեցինք վաճառասեղան, դարակներ և ես գնեցի իմ առաջին ապրանքները: Միակ արտաքին հայտարարությունը վկայում էր ցուցափեղկից. «Այստեղ ավելի էժան է»: Հետագայում ավելացրեցինք. «Վաճառատուն Խորխէ- այստեղ ավելի էժան է»:

Երբ բացեցի խանութը, հրավիրեցի եղբորս, որպեսզի գար՝ աշխատելու ինձ հետ: Նա շատ հավատ չուներ առևտրի

նկատմամբ, ասում էր, որ ամսական վաստակում է բավականաչափ լավ, իսկ գործի մեջ չկար վստահություն: Նրան համոզեցի՝ թող փորձի անձամբ:

Ինքնուրույն աշխատելուց առաջ գնացի տեսնելու պարոն Հայկազ Սարիին և, լինելով լուրջ և ուղղամիտ անձնավորություն, նրան տեղեկացրեցի, որ պիտի հաստատվեմ մոտակա Լառեա փողոցի վրա: Աշխատանքը թողնելուց հետո պարոն Սարին շարունակում էր ինձ բարձր գնահատել: Սկզբնական շրջանում ունեցանք մրցակցություն, սակայն ինքն ընդունում էր, որ ես իր հետ աշխատել էի հավատարմորեն և, որ այդ տարիներին առաջ եմ տարել նրա առևտրական գործը:

Մայրս նույնպես գալիս էր մեր առաջին գործատեղը՝ գանձումի և առհասարակ, հսկողության հարցերով զբաղվելու համար: Մի մարդ վարձեցինք և սկսեցինք աշխատել: Բարեբախտաբար, Աստված մեզ օգնեց, կարողացանք առաջ գնալ՝ անկեղծորեն և վստահութեամբ, միշտ լավագույն ձևով, սպասարկելով մարդկանց: Առևտրում նույնպես կարելի է դրամ շահել՝ պատվավոր կերպով և ազնվորեն գործելով: Այդ մոտեցման շնորհիվ ստեղծեցինք համախոհների մի ընտիր խավ՝ ամբողջ երկրի տարածքում ամենուրեք արժանանալով նաև մատակարարների գնահատականին և վստահությանը:

Այսպիսով, կարողացանք կազմակերպել Օնսեի մեծածախ ապրանքների առևտրական կենտրոնի ամենակարևոր ձեռնարկություններից մեկը՝ Սարաֆյան եղբայրների «Եդեսիա» վաճառատունը, որին ժամանակի ընթացքում միացան իմ որդիներ՝ Գևորգ Հարությունը, Պողոս Միհրանը և Անտոնիո Սիմեոնը, ինչպես նաև Պողոս Թեոդորոն ու Ռուբեն Դանիելը՝ իմ եղբայր Պողոսի որդիները:

Հնարավորություն ունեցա հիմնելու և ղեկավարելու բրդի մի մանածագործարան՝ կազմելով բաժնետիրական ընկերություն ծանոթ արգենտինացի և իտալացի գործընկերների հետ: Այդ ձեռնարկությունում գործեցի 25 տարի, վաճառեցի իմ բաժնետոմսերը և հեռացա: Վերադարձա՝ մի նոր խթան տալու «Եդեսիա» վաճառատանը, ուժեղացնելով մեր գործունեությունը, շնորհիվ մեր ընտանեկան միավորված ջանքերի: Մեզ հա-

«Եդեսիա» առևտրական կենտրոնն իր նոր շենքում, Օնսեի թաղամասում: Ձախից աջ. Սարգիս Կոմշոյան, Հովսեփ Յուսեֆյան, Տիգրան Արտրյան, Գրիգոր Սեսմեսյան, Պողոս Սարաֆյան, Վարդգես Էտելիկյան, Մարտիրոս Գաբրիելյան, Ռոսա Մոկոսյան, Գասպար Սարգսյան, Մարիա Փոլադյան, Արսեն Բաբախանյան, Ռոսա Գևորգյան, Պեդրո Սուրենյան, Կառլոս Մումջյան, Խոսե Կալաֆատյան, Սուրեն Յուսեֆյան, Հակոբ Կուրյան և Գևորգ Սարաֆյան (1 հունիսի, 1948 թ.):

Ազատության գեներալ Սան Մարտինի տարելիցի առթիվ, հայ համայնքի մի պատվիրակություն ընդունվեց տիկին Եվա Պերոնի կողմից, որին հանձնվեց մի հուշանվեր՝ իր զլխավորած հիմնարկության աշխատանքի համար: Առաջին Տիկնոջը շրջապատում են, ձախից աջ. Նուբար Թադևոսյան, Արտուր Մարգսյան, Արմեն Բերգամալի, Ռամոն Սերեյիո, ֆինանսների նախարարը և Գևորգ Սարաֆյանը (1950 թ.):

ջողվեց հիմնել «Եդեսիա» մեծ առևտրական կենտրոնը Լառեա փողոցի վրա, իր բրդեղենի, բամբակեղենի, հյուսելու բրդաթելի և ուրիշ զանազան ապրանքների բաժիններով:

Գալանտերեայի բաժինը կազմավորվեց որպես առանձին՝ «Մերսերիլ» առևտրական բաժնետիրական ընկերություն անվամբ, որպես ընկերության անդամներ ներառելով երկու նախկին աշխատանքային ընկերներիս՝ Գևորգ Տուֆեքսյանին և Գևորգ Քեշիշյանին՝ իմ փեսա Ռուբենի հորը: Բացեցինք նաև գործվածքեղենի բաժին՝ իմ աներորդի Դանիել Յուսեֆյանի հետ, այն բանից հետո, երբ նա եկավ Արգենտինա՝ Երկրորդ համաշխարհային պատերազմի ավարտին: Մեր «Եդեսիա» ձեռնարկությունը, իբրև անձնվեր աշխատանքի հատուցում, որոշեց ֆիրմայի բաժնետեր դարձնել նախկին աշխատակիցներ՝ Մարտիրոս Գաբրիելյանին, Հակոբ Ղուլյանին և Պեդրո Սուրենյանին: «Եդեսիա»-ն եղավ առաջին մակնիշը, որ գրանցեցինք՝ մասնագիտանալով բրդյա գործվածքեղենի արտադրության մեջ: Եդեսիան (Ուրֆա) այն քաղաքի անվանումն է, որտեղ ծնվել էինք եղբայրս ու ես: Ցանկացանք այս ձևով պահպանել նրա հիշատակը և ցույց տալ, որ հայերն այնտեղ ապրել են, այդ քաղաքի հիմնադրումից ի վեր, դարերի ընթացքում, մինչև XX դարի առաջին Ցեղասպանությունը:

«Եդեսիա» մակնիշը, որպես հեղինակավոր կնիք, պահպանվեց և այժմ շատ հայտնի է ամբողջ երկրում: Ջերմ հարաբերությունը մեր հաճախորդների նկատմամբ հաղորդվեց ծնողներից որդիներին, որ սկիզբ է առել 1930 թվականից և փառք Աստծո, կշարունակվի երկար տարիներ՝ իմ տղաների և թոռների միջոցով, որոնց ներշնչվեց սեր աշխատանքի նկատմամբ՝ միշտ հարգված և արդար լինելով իրենց առևտրական հարաբերություններում:

Երբևէ չեմ փորձել աշխատել միայն ինձ համար և հանուն դրամ վաստակելու: Նախընտրել եմ վաստակել անհրաժեշտը՝ իմ աշխատանքի արդյունքի մի մասը հատկացնելով ինչպես մեր համայնքի, այնպես էլ արգենտինյան հասարակության բարեգործական նպատակներին ընդհանրապես: Այս առումով կցանկանայի անդրադառնալ մի դեպքի: Երբ տիկին

Հայտնի գծանկարիչ Խուան Դեյ Աքուան («Եդեսիա» բրդի ընկերության գովազդային խորհրդատու) նվիրում է իր աշխատանքներից մեկը Բարկեն Արքեպիսկոպոս Աբաղյանին: Ձախից աջ. Մարտիրոս Գաբրիելյան, արվեստագետը, Սրբազանը, Գևորգ և Պողոս Մարտիրոսյանները, Բուենոս Այրես, 1960 թ.:

Եվա Պերոնը նախագահում էր իր անունը կրող հիմնադրամը, բազմիցս ներկայանում էի նրան՝ հանձնելով երեխաների հագուստներ և բրդի մի զգալի քանակություն՝ հագուստ գործելու համար, որպեսզի նա ինքը դրանք բաժաներ: Մի անգամ տիկին Եվան ինձ հարցրեց. «Այդ ինչպե՞ս է, Սարաֆյան, ուրիշները գալիս են խնդրելու, իսկ Դուք գալիս եք հանձնելու համար»: Նրան պատասխանեցի. «Հարգելի տիկին, ես գաղթական եմ, պատերազմի որբ, այս երկիրն ինձ օգնեց ոտքի կանգնելու, այժմ էլ ես պետք է օգնեմ այս երկրի մարդկանց»:

Իմ առևտրական գործունեության մեջ մի իրողություն եմ ցանկանում հիշատակել: Անհրաժեշտություն զգացի գովազդել մեր ձեռնարկության առևտրական գործունեությունը՝ օգտագործելով գծագրական, ռադիո և հեռուստացույցային քարոզչության միջոցներ: Ինձ համագործակցում էր հայտնի նկարիչ Խուան Դելլ Աքան, որի հետ պատրաստեցինք մեծ մասշտաբների հասնող գովազդային արշավ, և որի շնորհիվ մեզ հաջողվեց ճանաչել տալ «Եդեսիա» մակնիշը երկրի բոլոր շրջաններում, միշտ հաստատելով մեր արտադրանքների բարձր որակը: Հիշում եմ, որ օգտագործում էինք տարբեր տեքստեր և նկարներ: Դրանցից մեկն ազդարարում էր. «Հարմարավետ օջախ ամբողջ երկրում «Եդեսիա» բրդերի հետ»: Ամռան ընթացքում նույնպես գովազդեցինք, այն ժամանակ, երբ մրցակիցներն այդ չէին անում: Օգտագործեցինք ակնարկող նկարներ և «Գարուն, ամառ գործում ենք ամբողջ տարին, որովհետև կա հարմար բուրդ յուրաքանչյուր եղանակին» նշանաբանը: Հրավիրում էինք որակյալ ջուլհակուհիների, որոնք փորձարկում էին ավելի նուրբ ու թեթև մեր բրդերը՝ ամառվա եղանակի համար նույնպես զգեստներ պատրաստելու նպատակով: Բոլոր այս մտքերը խտանում էին «Չորս եղանակների և բոլոր տարիքի մարդկանց համար, ...Գերազանց «Եդեսիա» բրդեր » նշանաբանի մեջ:

Այսպես, պահպանելով որակը, հետևելով մատչելի գներին և մեծ նվիրումի ու եռանդի շնորհիվ, մեզ հաջողվեց գերիշխել շուկայում:

Օնսեի մեծածախ առևտրականների միության նախագահ

Մեր գործարարական շրջանակում ինձ ընտրեցին Օնսեի մեծածախ առևտրականների միության նախագահ, որտեղ գործեցի շատ տարիներ՝ պահպանելով բարեկամությունը և ներդաշնակությունը տարբեր ազգությունների առևտրականների միջև, միաժամանակ պաշտպանելով ձեռնարկությունների և հաճախորդների ընդհանուր շահերը: Հիշում եմ, մի անգամ ինձ այցելեցին կառավարության կողմից, երբ որոշվել էր բանվորների աշխատավարձի բարձրացում, շատ առևտրականներ և գործարանատերեր համաձայն չէին և պետությունը ցանկանում էր իմանալ, թե ինչ մտքեր ունեմ ես այդ իմաստով, որպես մեծածախ առևտրականների միության նախագահ: Ես նրանց պատասխանեցի, որ աշխատավարձի բարձրացումը շատ ճիշտ է և շատ հետաքրքիր, քանի որ, եթե մի բանվոր շատ փող է ստանում, հնարավորություն կունենա շատ ծախսել, և այսպես կնպաստի ձեռնարկությունների մեծածախ և մանրածախ ապրանքների առևտրականներին:

Այդ ժամանակներում կառավարությունը մտադրություն ուներ ջնջել մեծածախ առևտրականների գործունեությունը, կարծելով, որ այս ձևով կկրճատվեն սպառողի ծախսերը: Նրանց բացատրեցի, որ այդ քայլը օգտակար չէր, և, որ այն որևէ շահույթ չի կարող բերել, քանի որ մեծածախ առևտրականը դա այն ձեռնարկուն է, ով իր մեծ գնումներով նպաստում է, որ գործարանատերը կապիտալ կուտակի և հնարավորություն է ստեղծում, որ նրա արտադրանքը սպառվի նաև երկրի ամենահեռավոր վայրերում:

Համայնքային կյանքը

Առաջին հայերը Արգենտինա են եկել XIX դարի երկրորդ կեսին: Մեր փոքրիկ համայնքը սկսել էր կազմավորվել Առաջին համաշխարհային պատերազմի ընթացքում: Կամա-

վորների տարբեր խմբեր մեկնեցին մարտնչելու հայրենիքի թշնամիների դեմ, պաշտպանելու իրենց օջախները, արդարություն պահանջելու սպանված ազգականների համար: Համայնքն իր վերջնական կազմավորմանը հասավ հետպատերազմյան շրջանում:

Կիլիկիայից ֆրանսիացիների հեռանալուց հետո, հայերի առաջին մեծ խմբաքանակը մեկնեց Սիրիա և Լիբանան: Արաբները մեզ շատ լավ ընդունեցին, մի կտոր հացն անգամ, որ ունենում էին, այն կիսում էին մեզ հետ, դա պատահական չէ, որ շնորհակալ հայերը դարձան այդ երկրների հավատարիմ քաղաքացիները: Ոմանք ձեռք բերեցին սիրիա-լիբանանյան անձնագրեր՝ ճանապարհորդելու հնարավորության համար: Ուրիշները ձգտեցին ունենալ նանսենյան անձնագրեր, նորվեգացի մեծ մարդասերի անունով, որն օգնեց փաստաթղթեր չունեցող ցանկացած ազգության բոլոր գաղթականներին: Նրան հաջողվեց հասնել այն բանին, որ Ազգերի լիգան գաղթականներին տար անձնագիր՝ ճանապարհորդել կարողանալու համար: Այսպիսով, ծնունդով Այնթափից, Մարաշից, Հաճընից, Զեյթունից, Կեսարիայից, Եդեսիայից և այլ վայրերից, շատ հայեր հնարավորություն ունեցան մեկնել Արգենտինա:

1922-1930 թթ. Արգենտինան մեծահոգաբար բացել էր իր դռները պատերազմի գաղթականների առջև և նրանց ընդունեց առանց որևէ պահանջի, միայն թե նրանք լինեին պարկեշտ մարդիկ և ունենային մի որևէ արհեստ:

Այդ ժամանակ Արգենտինայի հայ համայնքն արդեն նկատելիորեն բազմամարդ էր դարձել: 1922 թ. սեպտեմբերին, երբ Զմյուռնիան ընկավ թուրքերի հարվածների տակ, հայ գաղթական բեկորներն ապաստանեցին Հունաստանում, ապա նրանց մի նշանակալի մասն անցավ Արգենտինա: Յուրաքանչյուր նավ, որ նրանց բերում էր, ուներ մոտ հազար ուղևոր: Բուենոս Այրեսի քաղաքային հատակագիծը ընդարձակվում էր, վաճառվում էին մեծ հողամասեր: Այն հայերը, որ ծագումով նույն քաղաքից կամ գյուղից էին, համախմբվում և միասին գնում էին հողակտորներ՝ կենտրոնանալով նոր թաղամասերում, որպիսիք կազմավորվեցին Ֆլորեսում, Ֆլորեստայում, Պոմպեժա-

յում, Լինիերսում, Վալենտին Ալսինայում:

Ստեղծվեց մի ընկերություն՝ «Հայ գաղութային Կենտրոն» անվամբ, որտեղ հավաքվում էին բոլոր նրանք, ովքեր եկել էին այս երկիրը: Կենտրոնը չուներ սեփական նստավայր, վարձվել էր մի շենք՝ Սան Խուան պողոտայի թիվ 1500-ում: Այնտեղ մատուցվում էր պատարագ, կազմակերպվում էին հավաքույթներ:

Հայերը պատրաստվում էին հանգանակության միջոցով մի մեծ հողատարածք գնել՝ եկեղեցի կառուցելու համար, որը կլիներ համայնքի հավաքատեղին: Արգենտինա ոտք դնելուց հետո ամեն մեկի առաջին ձգտումն էր՝ ձեռք բերել աշխատանք, կառուցել կացարաններ և բոլորի ուժերով բարձրացնել մի եկեղեցի՝ իր խաչով, Նարեկացու Մատյանով և Սուրբ Աստվածաշնչով, որ բերել էին իրենց հետ, և նրա կողքին հիմնել մի դպրոց՝ հայոց լեզու և կրոն դասավանդելու համար:

Շուտով սկսվեց հանգանակությունը: Հողամասը գնվեց մեր համայնքի առաջին մեծ բարերար Երվանդ Խաչիկյանի նվիրաբերության շնորհիվ. նա պատերազմից առաջ երկիր եկած հայերից մեկն էր: Նրա տրամադրած գումարով գնվեցին առաջին հողամասերը Ասեվեդոյի 1300-ում (այժմ Արմենիա փողոց): Հանգանակությունը տնօրինող հանձնաժողովը ուժեղացրեց աշխատանքը՝ եկեղեցու կառուցումը սկսելու համար: 1930 թվականին հանձնաժողովը ձեռք բերեց պաշտոնական ճանաչում և կանոնադրության հաստատմամբ գրանցվեց որպես իրավաբանական անձ՝ «Հայաստանյայց եկեղեցու հոգաբարձություն» անվամբ: Այդ ժանամակ այն գլխավորում էր Իսրայել Արսլանը, շատ սիրված մի անձնավորություն: Նա եղավ համայնքային կյանքի կազմակերպիչներից մեկը՝ Փարիզում հմտացած մի ճարտարապետ, որն Արգենտինա էր եկել Առաջին համաշխարհային պատերազմից առաջ: Նա հետաքրքիր գաղափար առաջարկեց. եկեղեցին կանգնեցնելուց առաջ, մի մեծ դահլիճ կառուցել տոնակատարությունների համար և մի կից շենք էլ կողքին՝ հայերեն լեզվի ուսուցման վարժարանի նպատակով, հիմնավորելով, որ համայնքն արդեն շատ դրամ է ծախսում սրահներ վարձելով իր հասարակական գործունեու-

Բարերարներ Հրանտ և Նուզիկ Նիրոբյանների կողմից նվիրաբերված Մուրբ Գրիգոր Լուսավորչի տաճարի շենքի հանձնման արարողությունը:
Կանգնած, ձախից աջ. չորրորդ. Գեորգ Մարաֆյան. նստածներ, ձախից աջ. Հայր Մովսես Տեր Օհանեսյան. բարերարներ. արքեպիսկոպոս Գարեգին Խաչատուրյան. ճանաչված նոտար. Հայր Հավհաննես Ամիրենց և Արմեն Բերգամալի (1938 թ.):

թյան համար, և բացի դրանից, այդ շենքը հավելյալ միջոցների աղբյուր կլիներ դպրոցի ծախսերը հոգալու առումով:

Դահլիճի կառուցումը իրագործվեց ճարտարապետ Արսլանի անշահախնդիր ղեկավարությամբ և պատրաստված նախագծերի հիման վրա: Մեր հայրենակիցներից շատերը աշխատանքից հետո գալիս էին անձամբ մասնակցելու կառույցի աշխատանքներին: Որպես հաստատության մշակույթի նորաստեղծ հանձնախմբի ատենապետի, ինձ պատիվ արվեց հանդիսավոր կերպով բացել ընդարձակ «Հայ Կենտրոն» դահլիճը՝ 1932 թվականի մայիսի 25-ին, մի մեծ հանրային պարահանդեսով, որին հրավիրեցինք մեր շրջանի բոլոր հայկական, արգենտինյան և ուրիշ այլ օտար համայնքների ներկայացուցիչներին: Երջանիկ էինք, որ առիթ կունենանք նրանց ծանոթացնելու մեր դահլիճի հարմարություններին, որոնք նախատեսված էին տոնակատարությունների և թատերական ներկայացումների համար: Դահլիճը մեծ ընդունելություն գտավ: Այն վարձվում էր համարյա ամեն շաբաթ և կիրակի օրերը: Եկեղեցու կառուցման գործում բախտ ունեցանք շփվելու պարոն Հրանտ Նիքոբյանի հետ՝ մի այլ մեծ բարերար, որը եկել էր Հունաստանից: Նա իր անձնական միջոցներով կառուցեց (ճարտարապետ Արսլանի պատվավոր նախագահությամբ) և համայնքին նվիրեց Սուրբ Գրիգոր Լուսավորիչ Մայր տաճարը: Նշանավոր բարեգործը ցանկություն հայտնեց, որ հայ եկեղեցու հոգաբարձության կենտրոնական խորհուրդը պետք է կազմվի համայնքի բոլոր հատվածների ներկայացուցիչների հետ: Այս առաջարկն ընդունվեց ընդհանուր համաձայնությամբ:

Համայնքը կազմակերպված և պատրաստ էր հոգևոր առաջնորդ ունենալուն, որը պետք է գլխավորեր տեղի հոգևորական դասը, որին մաս էին կազմում առաջին հոգևոր հովիվ քահանա Բաղդասար Բարասաղյանը, քահանա Մովսես Տեր Օհանեսյանը և Հովհաննես ավագ քահանա Ամիրյանցը: Հայր Բարասաղյանը առաջին պատարագը մատուցել էր 1912 թվականի Զատիկին Հապեշյան ընտանիքի տանը Մալաբիա փողոց 1477-ում: Արարողության ընթացքում պարոններ Ի. Արսլանը, Ա. Բերգամալին և այլք հանդես եկան որպես դպիրներ:

Այսպես սկզբնավորվեց Արգենտինայի հայ առաքելական եկեղեցին: Նախ, մասնավոր մի տանը, հետո՝ Սան Խուան պողոտայում, վարձակալած մի դահլիճում, ավելի ուշ՝ համայնքի դպրոցի երրորդ հարկում, մինչև որ կառուցվեց Սուրբ Գրիգոր Լուսավորիչ տաճարը, որն օծվեց արքեպիսկոպոս Գարեգին Խաչատրյանի ձեռամբ 1938 թ. հունիսի 19-ին: Նա կաթողիկոսական առաջին պատվիրակն է Հարավային Ամերիկայում՝ ուղարկված Նորին Սուրբ Օծություն Ամենայն Հայոց Կաթողիկոս Խորեն Ա-ի կողմից:

1932 թ. երբ բացվեց դահլիճը, մինչև 1938 թ., երբ օծվեց տաճարը, ամենակարևոր կրոնական ծիսակատարությունները կատարվում էին մեծ դահլիճում, որտեղ մի հատուկ խորան պատրաստվում էր Ծննդյան և Զատկի պատարագների համար: Մնացած կիրակի օրերին պատարագը մատուցվում էր դպրոցի երրորդ հարկում, որտեղ և կատարվեց իմ ամուսնության արարողությունը:

Ինչպես կազմեցի իմ ընտանիքը

1936 թ. օգոստոսի 15-ին Տեր Հովհաննես Ամիրենցը օրհնեց իմ և օրիորդ Ռոսայի ամուսնությունը: Նա Անտոնյան Միհրանի և Մարիանի դուստրն էր, մի ճանաչված ընտանիքից: Նրա հայրը ծագումով Ակնեցի էր, մայրը՝ Կեսարիայից, որոնք Արգենտինա էին եկել 1912 թ.:

Աստված օրհնեց մեր օջախը՝ պարգևելով վեց զավակներ. Խորխէ Հարություն, Մարիա Ռոսա, Պաբլո Միհրան, Ալիսիա Քրիստինա Վարդեր, Էլսա և Անտոնիո Սիմեոն: Նրանք իրենց հերթին պարգևեցին մեզ տասներեք հոյակապ թոռներ, ինչպես իրենց հայրերը և պապերը, որոնք շարունակում են հայկական ընտանիքի օրինակելի ավանդույթները՝ երջանկացնելով մեր կյանքը:

Ռոսա Անտոնյան և Գեորգ Մարաֆյան. նշանվածներ. 1934 թ.:

Գևորգ Սարաֆյանի և Ռոսա Անտոնյանի հարսանյաց հանդեսի երեկոն Սավոյ հյուրանոցի դահլիճներում, 15 օգոստոսի, 1936 թ.:
Նստածներ, ձախից աջ. Հնազանդ Շալջյան, նորապսակներ Ռոսա և Գևորգ, Վարդուհի (Գևորգի մայրը), երկու կողմերում փոքրիկ ուղեկցող աղջնակներ՝ Անա Անտոնյան և Ալիսիա Շահինյան: Կանգնած, ձախից աջ. Մսրսելը Շահինյան, Իզաբել Ա. Շահինյան, Մսրիսանի Շ. Անտոնյան (Ռոսայի մայրը), Պաբլո Պողոս Սարաֆյան, Էլիսա Բ. Սարաֆյան, Միհրան Անտոնյան (Ռոսայի հայրը), Մելիք Գալաֆյան և Միգել Շալջյան:

Գևորգ և Ռոսա Մարաֆյաններն իրենց որդիների հետ, ձախից աջ, առաջին շարք. Ալիսիա Քրիստինա Վարդեր Մարաֆյան, Դիանա Գաբրիելյան և Գևորգ Հարությունն, Ռուբեն Վիկտոր Քեշիշյան և Էլսա, Միրթա Բեատրիս Ջերեջյան և Պաբլո Միհրան: Երկրորդ շարք. Կառլոս Բարսեղյան և Մարիա Ռոսա, Անտոնիո Սիմեոն և Միրթա Իսաբել Դրպաշյան (28 հունվարի 1998 թ.):

Ռոսա և Գևորգ Սարաֆյանները իրենց թոռների հետ: Ձախից աջ. Ռուսլբա Սարաֆյան, Գևորգ Ռուբեն Քեշիշյան, Պաուլա Միրբա և Ալեքս Սարաֆյան, Մարիանա Ռոսա Քեշիշյան, Կառլոս Արամ Բարսեղյան, Գևորգ Մարուիլոս և Գաբրիելա Վայոլեր Սարաֆյան, Գևորգ Սահակ Բարսեղյան, Դիեգո Միհրան Սարաֆյան, Մարիանո Կեսար Բարսեղյան և փոքրիկն Մարինա Լուսինե Սարաֆյան (29 հունվարի, 1998 թ.):

Հայ մշակութային հանձնախմբի ստեղծումը

1932 թ. տաճարի ձեռնադրումից առաջ, մենք՝ կազմելով շնորհալի և պատրաստված երիտասարդների մի խումբ, նպատակադրվեցինք հայերին ճանաչել տալ իրենց պատմությունը և մշակույթը, որպեսզի արգենտինյան հասարակական կարծիքը տեղեկանար, թե ովքեր ենք մենք և կարողանար մեզ տարբերել դահիճ թուրքերից, որոնց հետ մեզ հաճախ շփոթում էին:

Եկել էինք այս օրհնված երկիրը՝ փրկվելու Թուրքիայի չարագուշակ ուրվականից: Այլևս գտնվում էինք մի ազատ և անկախ երկրում և չէինք ուզում լսել այդ անունը: Երիտասարդ հասակից գրիչը նախընտրեցի սրից: Ցանկանում էի լուսաբանել, թե ինչի՞ համար է հայերի պայքարը, ինչու՞ պետք է տառապեինք ցեղասպանության աղետից և ինչու՞ ենք հայտնվել Արգենտինայում: Այս երկրում չկային և չկան թուրքեր. կան արաբներ, հույներ, հրեաներ, և հայեր, որոնց, սակայն, ընդհանուր անունով կոչում էին «թուրքեր», նկատի առնելով նրանց սերումը այն երկրներից, որոնք գտնվում էին Օսմանյան կայսրության տիրապետության տակ:

Այս գործի մեջ ինձ հետ ներգրավված երիտասարդների շրջանակում, պետք է հիշատակել Մարտիրոս Գաբրիելյանին, որ սովորել էր Երուսաղեմի Ս. Հակոբյանց վանքի ժառանգավորաց վարժարանում, Պիեր Վրթանեսյանին՝ Վենետիկի Սուրբ Ղազար կղզու Մխիթարյան միաբանությունից, մաեստրո Լևոն Վայդապետյանին՝ Երևանի երաժշտական կոնսերվատորիայի շրջանավարտ, Գևորգ Քեշիշյանին, որ ուսանել էր Մարաշի Քառասուն մանկանց վարժարանում: Ես, ինչպես ասել եմ, սովորել էի Հալեպի Հայկազյան վարժարանում: Մեր խմբին միացան Աղասի Բարսեղյանը, Գառնիկ Հյուսյանը, Աշոտ Արծրունին և ուրիշներ:

Մեր միությունն անվանեցինք «Հայ մշակութային հանձնախումբ»՝ դնելով հայ եկեղեցու հոգաբարձության կենտրոնական խորհրդի հովանավորության ներքո, որը Արգենտինայի Հանրապետությունում հայ համայնքի առաջատար ընկերությունն էր:

Կաթողիկոսական առաջին նվիրակ. Հարավային Ամերիկայի արքեպիսկոպոս Գարեգին Խաչատրյանը՝ հայ առաքելական եկեղեցու մշակութային առաջին հանձնախմբի հետ: Կանգնած, ձախից աջ. Արտաշես Բասմաջյան, Մարտիրոս Գաբրիելյան և Գառնիկ Հյուսյան:
Նստածներ. ձախից աջ. Գևորգ Քեշիշյան, Նորին սրբազնությունը և Գևորգ Մարաֆյան (հանձնախմբի ատենապետ) 1938 թ.:

Մաեստրո Վարդապետյանն 1929 թ. արդեն ստեղծել էր Սպենդիարյանի անվան երգչախումբը՝ հայուհյաց ընկերության հետ: 1932 թ. այս երգչախումբը կազմակերպել էր համերգ պարոն Իսրայել Արսլանի գլխավորությամբ, որին մասնակցեցի Սիամանթոյի «Մեսրոպ» պոեմի մի հատվածի արտասանությամբ: Համերգը կազմակերպվել էր հայր Կոմիտաս վարդապետի 60-ամյակի առիթով, և այդ նպատակով հավաքված դրամական միջոցները տրամադրվեցին Կոմիտասի ապաքինմանը, որն այդ ժամանակ գտնվում էր Փարիզի մի հիվանդանոցում: Այդ կապակցությամբ մաեստրո Վարդապետյանին ակնարկեցի, որ երգչախումբը վերանվանենք «Կոմիտաս», ի մեծարումն հայկական երաժշտության նահապետի: Եվ այսպես, երգչախումբը կնքվեց և շարունակում է գործել մինչև այսօր, շատ տարիներ անցնելուց հետո, մաեստրո Վարդապետյանի ղեկավարությամբ, մի մարդու, որն ամբողջությամբ նվիրվեց երգչախմբին, առանց նյութական ակնկալության, հանուն ազգային պատվախնդրության, իսկ ինքն ապրում էր շուկայի մի կրպակի իր համեստ առևտրով: Երգչախմբին նա հատկացնում էր շաբաթ և կիրակի օրերը ինչպես և շաբաթվա տարբեր երեկոները: Այդ ժամանակ ունեինք ընդամենը աղքատ երաժշտական պարագաներ և մեզ փրկեց այն, ինչ որ ինքն էր բերել և Ժառանգավորաց դպրոցից՝ Մարտիրոս Գաբրիելյանը:

«Կոմիտաս» երգչախումբը Վարդապետյանի ղեկավարությամբ ամբողջապես միացավ հայ մշակութային հանձնախմբի ձեռնարկումներին: Մարդկանց մեջ մի մեծ ոգևորություն էր առաջացել: Արսլանյան վարժարանի շրջանավարտներից և աշակերտներից բացի, նաև շատ ուրիշները, որ նախապես իրենց երկրներում առնչվել էին եգչախմբերի, կամ թատերական այլևայլ խմբակների՝ շուրջ 100 մարդ երգչախմբի փորձերին հաճախում էին շաբաթը երկու անգամ: Շաբաթ օրերը փորձ էր արվում հիմնական մասի հետ՝ այն անձանց, որոնք աշխատանքի պատճառով չէին կարողանում հաճախել պարապմունքներին: Իսկ նրանց, ովքեր չէին բացակայում ամսվա ընթացքում, ոգևորելու համար մատուցվում էր. կանանց՝ մեկական զույգ գուլպաներ, իսկ տղամարդկանց՝ փողկապ:

Մշակութային Հանձնախումբ

Հայ Եկեղեցու Հոգաբարձության

VI

Մեծ Համերգ

Երգեցողական և գործիքային

Շաբաթ, 16 սեպտեմբերի 1944թ.

Ժամը՝ 21.30-ին

«Հայ Կենտրոն» դահլիճ Ասեվեղո 1353

Ծ Ր Ա Գ Ի Ր

Առաջին բաժին

1.Բացման խոսք		արհ. Գ. Սարգսյան
2.Հայկական երգաչար, երկ N11 ա) Նանա բալիկ –թ) Կաքավիկ-զ) Հայ յարը	Ա. Տեր Ղևոնդյան	Նվագախումբ
3. Ղրիժյան Էաքիզմեր (արևելյան երգաչար, երկ N9) ա) Պարերգ-Ը) Լլեվիա-գ) Կենաց երգ-դ) Հայթարմա	Ա. Սպենդիարյան	Նվագախումբ
4. Ծամ-Թել (Շամիրամ առասպելից)	Ս. Մելիքյան	«Կոմիտաս» երգչախումբ
	Օրիորդ Ռ. Բերբերյանին պրոֆ. Ս. Դեբիրյանի կատարմամբ	
5. Առավոտուն քարի լուս	Կոմիտաս	«Կոմիտաս» երգչախումբ
6. Սիրեցի	Գ. Ալեքսան	արհ. Մ. Գաբրիելյան
7. Հին զանգը	Ռ. Կուբիկ	«Կոմիտաս» երգչախումբ
8. Արևելյան պար N1(դաշնամուրային մենակատար)	Ս. Բարխուդարյան	Օր. Մելիա Մինասյան
9. Բլբուլի թիտ	Սայաթ Նովա	Օրդ. Մ. Մինասյան
10. Սիփանի քաջերը	Կոմիտաս	«Կոմիտաս» երգչախումբ

Երկրորդ բաժին

11. Արի իմ սոխակ	Ա. Սպենդիարյան	Ջութակի սոլո նվագախմբի ուղեկցությամբ
12. I Անուշ-Նախերգանք (գեղ. արտասանություն) II Անուշ սիմֆոնիկ պոեմ Տիգրանյանի «Անուշ» ոպերայի թեմաների շուրջ, կազմումը և գործիքավորումը Հերման Լյուդվիգի	Հ. Թումանյան	Օրիորդ Բերբերյան
13. Ծիրանի ծառ	Կոմիտաս	«Կոմիտաս» երգչախումբ
14. I .Նոկտյուրն	Ա. Պարթևյան	Տենոր Ն. Նալբերյան
II. Հով արեք	Կոմիտաս	„ „ „ „ „
15. Գութանի երգը	Կոմիտաս	«Կոմիտաս» երգչախումբ
16. I. Սեռանա (խսպանական երգաստեղծ)	Ֆ. Բոնետ	Սոպրանո Սարի Նապարյան
II. Գարուն	Ավ. Կ. Մեռամենց	Դաշնամուրին Սառա Վասքես
III. «Ֆիգարոյի հարսանիքը» (չգիտեմ ինչ է, ինչ եմ անում)	Մոցարտ	
17. Մեղվա Կանչ	Ֆ. Բոնետ	«Կոմիտաս» երգչախումբ
18. Գոյվա եկան սեյերր	Ա. Տեր Ղևոնդյան	«Կոմիտաս» երգչախումբ և նվագախումբ

«Կոմիտաս» երգչախումբը ղեկավարում է պարոն Լևոն Վասպուրականյանի ղեկավարությամբ:
Դաշնամուրին ուղեկցում է տիկին Հ. Թեքիրյանը
Պրոֆեսոր Հերման Լյուդվիգը ղեկավարում է սիմֆոնիկ նվագախումբը:

Երգեցողական և գործիքային VI համերգի ծրագիր, որ ներկայացվեց առաջին անգամ Արգենտինայում, հայկական եկեղեցու հոգաբարձության մշակութային հանձնախմբի կողմից:

Մշակույթի հանձնախումբը և «Կոմիտաս» երգչախումբը իրենց մասնակցությունն էին բերում տարեկան մեծ տոնա կատարություններին, որը կազմակերպում էր հայ եկեղեցուն կից կանանց միությունը: Այս հասարակական իրադարձությունները, որոնք տեղի էին ունենում ընտիր հանդիսատեսի ներկայությամբ, ամենակարևորներն էին համայնքում: Պարերը սկսելուց առաջ փորձում էինք ներկայացնել գեղարվեստական ծրագիր: Այս ծրագիրը սովորաբար ներառում էր «Կոմիտաս» երգ չախմբի մասնակցությունը՝ հանդես էին գալիս մեներգիչներ կամ դաշնամուրի և ջութակի մենակատարներ: Բազմիցս մաս նակցել եմ այդ հանդեսներին՝ հղանալով մշակութային որոշակի թեմաներ, ինչպես նաև ուրիշ առիթներով՝ արտասանելով հայ մեծ գրողների բանաստեղծություններ, կամ հանդիսատեսին ծանոթացնելով նրանց ստեղծագործությանը:

Գեղարվեստական մասի և պարերի բաժնի միջև ընկած ընդմիջմանը տրամադրվում էր բուֆետ, որտեղ հանձնախմբի կանայք սրտառուչ սիրալիրությամբ կապում էին գոգնոցներ և սպասարկում ժողովրդին: Այս միջոցառումներով ձեռք էին բերվում նվիրատվություններ՝ հաստատության բարեգործական աշխատանքների համար:

Արքեպիսկոպոս Գարեգին Խաչատրյանի հետ միասին մշակութային հանձնախումբը որոշեց կիրակի օրերը «Կոմիտաս» երգչախմբի հետ հաճախակի այցելել այն բոլոր թաղամասերը, որտեղ արդեն կային եկեղեցիներ, մատուռներ և դըպրոցներ: Սուրբ պատարագից հետո, որ մատուցում էր արքեպիսկոպոսը երգչախմբի կատարմամբ, համեստորեն նախաճաշում էինք տեղական հանձնախմբի հետ: Երեկոյան կազմ ակերպվում էր մշակութային հանդես, որի մուտքն ազատ էր տարածքի բոլոր հայերի համար: Ծրագիրը հիմնականում բովանդակում էր երգչախմբի ելույթը. ներկայացվում էին ժողովրդական երգեր և այլ մեներգեր: Երգերը սովորաբար կատարում էին երգչախմբի անդամները, ինչպես նաև նրա տնօրեն Լևոն Վարդապետյանն ու տենոր Մարտիրոս Գաբրիելյանը: Ես մասնակցում էի ներկայացնող մի փոքրիկ ելույթով, կամ որևէ բանաստեղծություն էի արտասանում: Արքեպիսկոպոսը փա-

«Կոմիտաս» երգչախմբի 30-ամյակը. մաեստրո Լևոն Վարդապետյանի ղեկավարությամբ. դաշնամուրի մոտ՝ օրիորդ Դիանա Գարրիելյան, 12 սեպտեմբերի, 1959 թ.:

կում էր հանդեսն իր ուղերձով և մաղթանքներով: Տարբեր առիթներով ներկաներին խնդրվում էր մի գիրք նվիրել հա մայնքային կենտրոնական գրադարանին: Այն ստեղծել էինք 1933 թվականին՝ Արսլանյան վարժարանի առաջին հարկի դահլիճում: Այստեղ էինք հավաքում Սփյուռքից ստացված պարբերական հրատարակությունները, որոնց հավաքածուները ներկայացնում էինք հասարակությանը:

Հայ մշակութային հանձնախմբի գլխավոր ձեռնարկներից էին տարեկան ավանդական համերգները, որոնք կատարվում էին թարմացված երգացանկով: Մեր մեներգիչները, դաշնամուրի և ջութակի մենակատարները, հրամցնում էին հայ անվանի կոմպոզիտորների գործերը, որոնց ընտրյալ հասարակությունը սպասում էր անհամբերությամբ:

Վեցերորդ տարեկան համերգը եղավ ամենա արտակարգը: Դա 1944 թվականի սեպտեմբերի 16-ին էր, մի շաբաթ օր, երբ Հայ Կենտրոնի դահլիճում, առաջին անգամ հանդիսա կանների առջև ելույթ ունեցավ մի մեծ սիմֆոնիկ նվագախումբ՝ կազմված 24 երաժիշտներից, «Ուֆա-Ֆիլմեր» ստուդիաների նախկին տնօրեն պրոֆեսոր Հերման Լյուդվիգի գլխավորությամբ: Առաջին անգամ նրանք ներկայացրեցին Տիգրանյանի «Անուշ» օպերայի նախերգանքը Լուսինե Բերբերյանի կատարմամբ, որն ուղեկցվեց Թումանյանի ստեղծագործության հայերեն բնագրի, իսկ իսպաներենը՝ Գևորգ Սարաֆյանի համաժամանակյա արտասանությամբ, որ թարգմանել էի հատկապես այդ երեկոյի համար: Այդ նվագախումբը կատարեց նաև Ա. Սպենդիարյանի և Ա. Տեր-Ղևոնդյանի ստեղծագործություններից: Մաեստրո Վարդապետյանի ղեկավարությամբ «Կոմիտաս» երգչախումբը և իր մենակատարները կատարեցին իրենց երգացանկի ընտիր երգերը: Որպես համերգի վերջին զարդ, նվագախումբը և երգչախումբը միասին կատարեցին Տեր–Ղևոնդյանի մշակած հանրահայտ ժողովրդական «Կողբա ելան սելերը» երգը, որ արժանացավ ներկաների երկարատև ծափահարություններին:

Մշակութային հանձնախմբի կարևոր գործերից մեկը եղավ 1948 թ. հուլիսին Արգենտինայում, ընդ որում, առաջին

անգամ, հայկական երաժշտության յոթ ձայնապնակների ժողովածուի լույսընծայումը: Կատարումը բացառապես «Կոմիտաս» երգչախմբինն էր՝ մաեստրո Վարդապետյանի ղեկավարությամբ: Ձայնապնակներից մեկը ներկայացնում էր Հովհաննես Թումանյանի «Իմ երգը» մեներգը՝ Գուգեն Ալեմշահի երաժշտական մշակմամբ, որ կատարեց տենոր Մարտիրոս Գաբրիելյանը: Մյուս երեսին Թումանյանի «Անուշ» օպերայի «Կանչում է կրկին» նախերգանքի ընտիր մի հատվածի արտասանությունն էր իմ կատարմամբ. դաշնամուրով նվագակցում էր տիկին Համեստ Տեբիրյանը:

«Հայկական մշակութային ժամ» ռադիոհաղորդումը

Արգենտինացի մեր ընկերներին և ժողովրդին ընդհանրապես լայն չափերով մեզ ճանաչել տալու համար, ան հրաժեշտ էր, որ մենք՝ երիտասարդներս, երբ կազմակեր պում էինք համերգներ, կոնֆերանսներ, հեղինակային երեկո ներ, տարեդարձեր և մշակութային այլ միջոցառումներ, ձեռնար կեինք նաև հեռարձակվող հայկական ռադիոհաղորդումներ:

Արգենտինա գալուց ի վեր միշտ մտածում էի ստեղծել մշակութային ռադիոհաղորդում, որքանով որ այն ժամանակ ռադիոհաղորդումը զանգվածային հաղորդակցման իդեա լական միջոց էր՝ արգենտինյան հասարակական կարծիքի մի ընդարձակ մասին առնչվելու համար:

Հայ եկեղեցեու հոգաբարձության գլխավոր խորհրդի լիազորությամբ մեր մշակութային հանձնախումբը «Կոմիտաս» երգչախմբի հետ մեկտեղ, որը դարձավ մեր գործի ամուր հիմքը, 1936 թ. նոյեմբերի 1-ին Արգենտինայի ռադիոյով մի հաղորդում սկսեց համարյա մեկ ժամ տևողությամբ: Այն հեռարձակվում էր կիրակի օրերին՝ կեսօրից հետո, «Հայկական մշա կութային ժամ» անվամբ:

Ներածական մասը սկսվեց իմ բացման խոսքով, որով ներկայացրեցի ծրագրի նպատակը՝ համադրելով հայկական

COMISION CULTURAL ARMENIA

BUENOS AIRES

Primer Gran Concierto y Baile Familiar

A TOTAL BENEFICIO DE LA

Hora Cultural Armenia

de L. R. 2 RADIO ARGENTINA

ՀԱՅ ՄՇԱԿՈՅԹԱՅԻՆ ՑԱՆՑԱՆԽՈՒՄԲ

ԱՆԴՐԱՆԻԿ ՀԱՄԵՐԳ ԵՒ ԸՆՏԱՆԵԿԱՆ ՊԱՐԱՀԱՆԴԷՍ

Ի ՆՊԱՍՏ ՌԱՏԻՈՅԻ
ՀԱՅԱԿԱԿԱՆ ԺԱՄԻՆ

Imprenta Centro Armenio Acevedo 1563

1937 թվականի հուլիսի 10-ին «Հայ Կենտրոնի» դահլիճում տեղի ունեցած առաջին մեծ համերգի ծրագրի գլխավոր էջը:

երաժշտության բնութագրական արժեքները: Ներկա էր պարոն Արմեն Բերգամալին՝ հայ եկեղեցու հոգաբարձուների ատենապետը, որը շնորհավորեց մեր մշակութային հանձնախմբին այս նախաձեռնության համար և մեզ հաջողություններ մաղթեց: «Կոմիտաս» երգչախումբը կատարեց գեղարվեստական մի թարմացված ծրագիր՝ Լևոն Վարդապետյանի ղեկավարությամբ: Ես իսպաներեն բացատրություններ տվեցի ներկայացված թեմաների և հեղինակների մասին:

Որպես հայ մշակութային հանձնախմբի ատենապետ, ես հանձն առա գովազդային նյութեր գտնել՝ ծախսերը ծած կելու համար: Իմ առևտրական գործերից ազատ, շաբաթ օրերը հատկացնում էի հաջորդ օրվա ծրագրի պատրաստմանը: Մասնակցում էի երգչախմբի փորձերին՝ երգացանկը կազմելու և հաճախ էլ մնում էի նրանց հետ՝ երգելու համար: Կիրակի օրերը շուտ էի արթնանում, գրում էի տեքստերը և դրանց թարգմանությունները, հետո շտապում էի տաճար՝ պատարագից հետո երգչախմբի հետ միասին ռադիոկայան գնալու համար: Ծրագիր վարելն իմ պարտականությունն էր: Առաջին տարի ներին խոսքը նաև հայերեն էր, սակայն հետո արգելվեց բոլոր օտար լեզուների, այդ թվում և հայերենի օգտագործումը ռադիոյով:

«Կոմիտաս» երգչախմբից զատ ստեղծել էինք երաժշտական մի քառյակ՝ «Գողթան» անվամբ, ի պատիվ պատմական Հայաստանի Գողթն գավառի գուսանների: Այն ժամանակներում չկային միջոցներ և այժմյան բարերար պայմանները մեր մշակութային և ռադիոհաղորդման աշխատանքների համար: Քաղաքական հարաբերություններով պարտադրված՝ շփումներ չունեինք Հայաստանի հետ, որպեսզի այն տեղից ստանայինք համապատասխան օգնություն: Ձեռք էինք բերել հազիվ մի քանի ձայնասկավառակներ՝ ձայնագրված Սիրիայում և Ֆրանսիայում: Կարողանում էինք փորձեր կատարել միայն այն քչով, որը մեզ հասանելի էր: Մաեստրո Վարդապետյանը բերել էր մի քանի պարտիտուրաներ և երգեր Երևանի կոնսերվատորիայից և Մարտիրոսն էլ իր հերթին՝ մի քանի բան Երուսաղեմի Ժառանգավորաց վարժարանից: Մեծ

օգնություն էինք ստանում անվանի մտավորական Արշակ Չոպանյանից, որ բնակվում էր Փարիզում: Ինձ ուղարկում էր հայ բանաստեղծների լավագույն գործերը, որ նա թարգմանել էր ֆրանսերեն, նաև առանձին՝ «Վարդենիք Հայաստանի» երկհատոր ժողովածուն: Ուղարկել էր նաև Ժակ Մորգանի «Հայ ժողովրդի պատմություն» գիրքը, Մարսելի հայկական երգչախմբի ձայնասկավառակները սոպրանո Բլբուլյանի կատարմամբ և հայկական ներկայացուցչության կողմից հրատարակված հրապարակումները և զեկուցումները: Նա եղավ այդ ներկայացուցչության ատենադպիրը, որ պայքարում էր Հայկական հարցի համար Առաջին համաշխարհային պատերազմի ընթացքում՝ ներկայացնելով հայ ազգը դաշնակիցների առաջ՝ Պողոս Նուբար Փաշայի և Ավետիս Ահարոնյանի հետ միասին:

Ֆրանսերեն գրված իր գործերի համար Չոպանյանն արժանացավ Գոնկուրյան գրական մրցանակի: Շատ սիրված լինելով ժամանակի ֆրանսիական մտավորականության կողմից, Անատոլ Ֆրանսի, Անտուան Մեյեի, Պոլ Վերհարնի և այլ գրողների ու քաղաքական գործիչների մտերիմն էր: Ֆրանսերենին տիրապետելու շնորհիվ օգտագործում էի որպես աղբյուր հայ մշակույթի հիմնային թեմաների մասին այս արժեքավոր մատենագիտական հարստությունն իմ ելույթներում, անոտացիաներում և մեկնաբանություններում: Հիշարժան տարեթվերի առիթներով ես խոսում էի տարբեր միջոցառումներում, ռադիոյի ծրագրերով և մեծ մտածողների, դերասանների, գրողների հոբելյանների ժամանակ, և առանձնացնում այն անհատներին, որոնք պայքարել էին Հայաստանի ազատության համար: Առանձնահատուկ ձևով ամեն տարի նշում էինք Վարդանանց տոնը, ապրիլի 24-ը (ցեղասպանության օրը), ինչպես նաև «Հայ մշակույթի ամիսը» հոկտեմբերին և այլն... Այս ամենի վավերագիր վկայությունները, որ ջերմությամբ այժմ էլ պահպանում եմ իմ աշխատասենյակում, այն ժամանակ ծառայեցին մեր հայրենակիցներին և ռադիոունկնդիրներին, ինչպես և առհասարակ արգենտինյան մեծ հասարակությանը, մեր պատմությանն ու մշակույթին ծանոթացնելու համար: Այս

հասարակությունը մեզ ընդունում էր որպես եղբայրների և հետաքրքրվում քաղաքակրթությանը մեր տված արժեքներով և ներկայով:

Մեր ծրագիրը հաղորդվեց տարբեր ռադիոկայաններով ինչպիսիք էին «Լա վոս դել այրե» (La voz del Aire), «Ռադիո Միտրե» (Radio Mitre) և ուրիշներ: Հասարակության մեջ սկսում էինք ճանաչվել և մեր բախտը բերեց, որ տիկին Այմե Շահ պարոնյան դե Ռամոս Մեխիային դերասանական միջավայրում իր շփումների միջոցով հաջողվեց ձեռք բերել մի տարածք՝ քաղաքային ռադիոյում, որը հանձնվեց «Հայկական մշակութային ժամ»-ին: Տիկին Այմեն մեծ դերասանուհի էր, նկարչուհի և գրող, մի աստղ, որ իբրև պարուհի հանդես էր գալիս «Կոլոն» թատրոնում: Նա ծագումով Թբիլիսիի (Վրաստան) հայկական մի ընտանիքից էր և գաղթել էր Իտալիա, որտեղ կնքել էր մի պայմանագիր՝ մեր առաջնակարգ թատրոնում աշխատելու համար: Բուենոս Այրեսում նա ամուսնացել էր արգենտինյան ավանդական մի ընտանիքի զավակի՝ Ֆեդերիկո Ռամոս Մեխիայի հետ:

Մեզ թույլատրեցին կիրակի օրերը մեկ ժամ՝ 13-15-ը ընկած հատվածում, զբաղեցնել ռադիոալիքը՝ ըստ ռադիոկայանի հնարավորությունների: Դրանից առաջ մի հաջող փորձ էինք ունեցել, որին հավանություն տվեց պարոն Սաուսեն՝ ռադիոկայանի գեղարվեստական տնօրենը: Նա ասաց, որ չնայած լեզուն չի հասկանում, երաժշտությունը իրեն շատ հաճելի և հարազատ թվաց, իսկ «Կոմիտաս» երգչախումբը տպավորիչ է երգում: Այսպիսով, մենք ձեռք բերեցինք մի ամբողջական մշակութային ծրագիր, տևական ժամանակով և առանց առևտրական գովազդի:

Այդ ժամանակ քաղաքային ռադիոն հաղորդումները սփռում էր «Կոլոն» թատրոնի նկուղից: Այնտեղ մեզ արդեն ճանաչում էին: Աշխատակիցները մեզ շատ լավ էին ընդունում և շատ երջանիկ էինք, որ այնտեղ հաճախեցինք երկար տարիներ: Ավելի քան տասը տարի, առանց ընդհատման ղեկավարեցի «Հայկական մշակութային ժամ»-ը, մինչև այն պահը, երբ կառավարության մի որոշմամբ արգելվեցին օտար հանրու-

«Կոմիտաս» երգչախումբը մաեստրո Լևոն Վարդապետյանի ղեկավարությամբ՝ կատարելով 1960թվականի Զատկական Ճրագալույսի շաբաթօրյա արարողության հատվածներ 7-րդ ալիքի նկարահանող խցիկների առջև (այն ժամանակվա առաջին և միակ ալիքը): Գրական դիմաց Հարությունն Ծայրագույն Վարդապետ Մուշյանը, որը ժամերգությունը կարդաց արգանտինյան հեռուստատեսությամբ առաջին անգամ հայկական մի երգչախմբի հետ:

7-րդ ալիքի նկարահանող խցիկների առջև Գևորգ Մարաֆյանը հարցազրույց է տալիս հեռուստաալիքի լրագրողին, պատմում է հայ եկեղեցու մասին:

թյունների ռադիոհաղորդումները: Միակ իրադարձությունը, որ կարող էր մեզ համար հիշարժան լինել, այն էր, որ համաձայնություն ձեռք բերվեց մշակութային հանձնախմբի և «Կոմիտաս» երգչախմբի միջև: Միակ հեռուստատեսային ալիքը, որով հաղորդումներ էին տրվում, այդ ժամանակ, 7-րդ ալիքն էր, որը մեզ մի տարածք զիջեց՝ 1961 թ. Զատկի Հսկումի սուրբ պատարագը հաղորդելու համար: Դրա համար 7-րդ ալիքի շենքում մի հատուկ բեմ սարքվեց, որտեղ վարդապետ Հարություն Մուշյանը սուրբ պատարագ մատուցեց հայերեն, «Կոմի տաս» երգչախմբի հետ միասին:

Այն ժամանակ, երբ զանգերը ղողանջում էին, մի լրագրող մոտեցավ և ինձ հարցրեց, թե ի՞նչ է տոնվում: Նրան բացատրեցի, որ Զատկի Հսկումի տոնակատարությունն էր՝ հայկական ծիսակարգի համաձայն: Հետո, իր խնդրանքով նրան պատմեցի հայ առաքելական եկեղեցու պատմության մանրամասների, ինչպես և առաջին երեք Տիեզերական ժողովներին մեր եկեղեցու մասնակցության մասին, նրան բացատրեցի, թե ինչպես հայկական եկեղեցուն հաջողվեց վերապրել զրադաշտական պարսիկների, սելջուկների և օսմանյան թուրքերի բոլոր հալածանքների պայմաններում՝ պայքարելով տառապանքների մեջ, տալով մեծ զոհեր՝ քրիստոնեությունը Փոքր Ասիայի այդքան թշնամական միջավայրում պահպանելու համար:

Այս իրադարձությունը մեծ հաջողություն ունեցավ. առաջին անգամն էր, որ հայ եկեղեցու մասին հեռուս տատեսային հաղորդում էր արձակվում, ընդ որում, միակ ալիքով, որը վայելում էր մեծ ժողովրդականություն: Հետո շատ հայրե նակիցներ ինձ պատմում էին, որ հաղորդումը դիտել են մեծ ոգևորությամբ, ոմանք հուզմունքից լաց էին եղել՝ տեսնելով հայ կական սուրբ պատարագը՝ հեռարձակված Արգենտինայի հեռուստատեսային միակ ալիքով:

Իմ թատերական և հասարակական գործունեությունը

Փոքր հասակից արտասանելու հակում ունեի, մի բան, որ կատարում էի մեծ սիրով և արտահայտչականությամբ: Հետո կատարելագործվեցի դպրոցում, որտեղ մեզ տալիս էին գեղարվեստական ընթեցանության դասեր, կազմակերպվում մրցույթներ՝ տարբեր դասարանների միջև և ես, գրեթե միշտ, դուրս էի գալիս հաղթանակած: Դրա համար ավարտական հանդիսավոր միջոցառման ժամանակ, 1925 թվականին, ինձ վերապահվեց հաղթողի պատիվը՝ Հայկազյան վարժարանի հազար դպրոցականների մեջ:

Բացի դրանից, ես մասնակցեցի դպրոցական տարբեր ներկայացումների: Հազիվ 19 օր էր անցել իմ Արգենտինա գալուց, երբ իմ ընդունակություններին տեղյակ մարդիկ ինձ հրավիրեցին համագործակցել Հայկական Բարեգործական Ընդհանուր Միության հիմնադրման 21-րդ տարեդարձի տոնակատարման մշակութային ձեռնարկին, որի ժամանակ արտասանեցի Դանիել Վարուժանի «Կարմիր հողը» և որպես հուշարար մասնակցեցի «Մեր ղեկավարները» կատակերգության ներկայացմանը: Այս ներկայացումը տրվեց ֆեդերալ մայրաքաղաքում 1927 թվականի հուլիսի 21-ին, կիրակի օրը, 14. 30-ին՝ «Ֆորվերտս» դահլիճում, Ռինկոն փողոցի 1141-ում:

Երկու ամիս անց, 1927 թ. սեպտեմբերի 18-ին, երբ հիմնեցինք «Եդեսիա» (Ուրֆա) հայրենակցական միությունը՝ ինձ նման Արգենտինա գաղթած երիտասարդների մասնակցությամբ, սկսեցինք կազմակերպել թատերական ներկայացումներ: Ես կատարեցի Վաղինակ իշխանի գլխավոր հերոսի դերը Պետրոս Դուրյանի «Սև հողեր» պատմական ողբերգության մեջ: Մասնակցեցի նաև Հակոբ Պարոնյանի «Շողոքորթը» և «Մեծապատիվ մուրացկաններ» ներկայացումներում, ուր խաղում էի բժշկի և բանաստեղծի դերերը: Ես իրականացրել էի մեծ դրամատուրգի «Մեծապատիվ մուրացկանների» թատերականացումը, որի ձեռագիր լիբրետոն հետագայում օգտագործվեց Մոնտեվիդեոյի և Կորդոբայի գեղարվեստական ինքնա-

Հռչակավոր բեմադրիչ և դերասան Հովհաննես Զարիֆյանը՝ լուսանկարի կենտրոնում, երկու դերասանուհիների միջև, մի խումբ թատերասերներով շրջապատված: Վերջին շարքում, ձախից աջ՝ կանգնած երրորդը. Գեորգ Սարաֆյան: Բուենոս Այրես, 18 սեպտեմբեր, 1932 թ.:

գործ խմբերի ներկայացումներում:

«Եդեսիա» հայրենակցական միության մեր թատերական խումբը, բացի դրանից, կազմակերպեց մի հատուկ երեկույթ՝ ներկայացնելով հայր Հովհաննես Այմիրենցի «Մեծն Տրդատ և Ս. Գրիգոր Լուսավորիչ (Քրիստոնեության հաղթանակը) գործը (Սուրբ Գրիգոր Լուսավորչի կյանքը), որի հասույթները ամբողջությամբ նվիրվեցին հայկական տաճարի կառուցման հիմնադրամին:

1931 թ. Հոլիվուդից մեզ մոտ եկավ հայտնի դերասան և բեմադրիչ Լևոն Հարութը, որը հրավիրեց տեղական թատերասերներին՝ Լևոն Շանթի «Հին Աստվածներ» հիանալի գործը ներկայացնելու համար: Հարութն ինձ ընտրեց իբրև ճգնավորի դերակատար և այդ նպատակով ինձ «զարդարեցին» սփռված երկար մազերով, սպիտակ մեծ մորուքով, արհեստական երկար եղունգներ կպցրեցին ձեռքերիս և ոտքերիս մատներին, հագցրեցին ցնցոտիներ և ես ոտաբոբիկ խաղացի ունայնության հորի առջև: Ընդհանրապես, այս պրեմիերան Բուենոս Այրեսում հաջող անցավ:

Հաջորդ տարի մեզ մոտ ժամանեց հռչակավոր դերասան և բեմադրիչ Հովհաննես Զարիֆյանը, որն առաջարկեց համաշխարհային դասականների գործերից կազմված մի խաղացանկ: 1933 թ. նրա հետ խաղացի Համլետի բանաստեղծ ընկերոջ դերը՝ ըստ Շեքսպիրի համանուն գործի:

Բացի դրանից, ստեղծվեց թատերական մի խումբ՝ կազմված տեղացիներից, դերասան Կարո Խաչիկյանի գլխավորությամբ: Մեր թատերախումբը տարբեր ներկայացումներ տվեց համայնքի բազմազան տոնախմբություններին, մշակութային և հասարակական հավաքույթներին: Սովորաբար, ինձ վստահում էին գլխավոր դերերը աչքի ընկնող բեմադրություններում:

Զուգահեռաբար, մասնակցում էի հայրենասիրական բնույթի նշանավոր տարեթվերի հանդեսներին՝ արտասանելով մեծ գրողների բանաստեղծությունները, ակնարկելով այդ դեպքերի գրառումները՝ վայելելով հանդիսատեսի քաջալերող ծափահարությունները: 1930 թվականի օգոստոսի 10-ին՝ Պողոս

Մեծ դերասան և ռեժիսոր Հովհաննես Զարիֆյանը Համլետի դերում: Մակագրված է. «Սիրելի Գեորգ Սարաֆյանին. Համլետի բարեկամ - «դերասանին» բարեկամական հիշատակ: Բուենոս Այրես, 5 նոյեմբերի, 1933 թ.:

Նուբար Փաշայի (ՀԲԸՄ-ի հիմնադիր) մեծարման հա մայնքային ձեռնարկին, գրեցի և արտասանեցի բանաստեղծական մի դիմանկար, այդ օրերին մահացած քաղաքական մեծ գործչի և բարերարի պատվին:

Տարիների անցնելու հետ մեկտեղ ավելացավ իմ հանրային պատասխանատվությունը՝ մեծ մասշտաբի պարտա կանություններ ստանձնելու գործում, մանավանդ, երբ ինձ վի ճակվեց համակարգել և գլխավորել մշակութային հանձնախմբի գործունեությունը և հետո ամբողջացնել այն, որպես ատենադպիր և փոխատենապետ՝ երկար ժամանակ: Արգենտինայի հայկական եկեղեցու հոգաբարձության կենտրոնական խորհրդում ևս գործեցի արդյունավետ, որպես կրթական հանձնախմբի և համազգային տոնախմբությունների կենտրոնական հանձնախմբի ատենապետ: Այս պաշտոններում, և անձնական գլխավորությանբ, ինձ վիճակվեց կազմակերպել և նախագահել մեր համայնքի բոլոր նշանակալի ձեռնարկներին: Դրանցից մի քանիսը մանրամասն նկարագրում եմ ստորև, ընդսմին, լինելով նաև հիմնական բանախոս.

I – Գրող Արշակ Չոպանյանի գրական գործունեության 50-ամյա (1936 թ.) և 65-ամյա (1951 թ.) տարեդարձները:

II – Եդեսիայի հերոսապատումի 25-ամյա տարեդարձը (1940 թ.):

III – Հայ Մարմնակրթական Ընդհանուր Միության մասնաճյուղի 15-ամյա տարեդարձը (1942 թ.):

IV – Հայ գրերի գյուտի 1500-ամյա տարեդարձը (1941 թ.):

V – Հայ-ուրուգվայական գեղարվեստական երեկույթ ՍՈԴՐԵ - Մոնտեվիդեո (1947 թ.):

VI – Ավարայրի (Վարդանանց) ճակատամարտի 1500-ամյա տարեդարձը (1951 թ.):

VII – Արշակ Չոպանյանի հետմահու մեծարանքը (1954 թ.):

VIII – «Կոմիտաս» երգչախմբի 25-ամյա (1954 թ.) և 50-ամյա (1979 թ.) տարեդարձները:

Անվանի դերասան և բեմադրիչ Մանուել Մարությանի հոբելյանի կազմակերպական հանձնախմբի ատենապետ Գևորգ Մարաֆյանը՝ դերասանի հետ ողջագուրված: Աջ կողմում՝ արքեպիսկոպոս Բաբկեն Աբաղյանը, ձախ կողմում՝ Խաչատուր Սասունկյանը և Մահակ Բարսեղյանը (Հայ Կենտրոնի դահլիճ, 1959 թ.):

«Կոմիտաս» երգչախմբի 50-րդ տարեդարձը: Աջ կողմում՝ երգչախմբի հիմնադիր մաեստրո Լևոն Վարդապետյանը, ներկայիս տնօրեն պրոֆեսոր Մաքրուհի Էոլմեսեկյանի նվագակցությամբ, նրա կողքին Գևորգ Մարուքյանը՝ կազմակերպական հանձնախմբի ատենապետը և եպիսկոպոս Դավիթ Սահակյանը (6 նոյեմբերի, 1979 թ.):

Հայկական հրապարակի ապագա պաշտոնական բացման վայրը (Ֆիգուերոա Ալկոռուս և Վալենտին Ալսինա): Ձախից աջ՝ Եփրատ Բայրամյան, Գևորգ Մարաֆյան, Ռաուլ Բեղիկյան, Լազարո Ջիբիլյան, Կառլոս Մարգարյան և Գևորգ Կարամանուկյան (28 մայիսի, 1993 թ.):

Հայաստանի Հանրապետության ժամանակավոր հավատարմատար Արա Հակոբյանը և Գեորգ Մարաֆյանը հուշաքար են տնկում հայերի պատվին ստեղծված պուրակի բացման ժամանակ: Աջ կողմում՝ դոկտոր Գեորգ Տեր-Գրիգորյան (24 ապրիլի, 1995 թ.):

IX – Դերասան Մանուել Մարությանի 40 - ամյակի հոբելյանը (1959 թ.) :

X – Ամենայն Հայոց Կաթողիկոս Ն.U.O.S.S. Վազգեն Ա-ի հովվապետական առաջին (1960 թ.) և երկրորդ (1968 թ.) այցելությունները:

XI – 1915 թ. ցեղասպանության զոհերի հուշարձանի պաշտոնական բացումը (1961 թ.):

XII – Մեծ բանաստեղծ Սայաթ–Նովայի ծննդյան 250-ամյակը (1963 թ.):

XIII – Նվիրված 1915 թ. ցեղասպանության 50-ամյակին՝ Արտակարգ հանդիսություն, Սան Մարտինի կենտրոնական թատրոն(1965 թ.:

XIV - Զորավար Անդրանիկի ծննդյան 100-ամյակի նշումը (1965 թ.):

XV – Արմեն Բերգամալիի պատվին՝ հայկական եկեղեցու հոգաբարձության «Պատվավոր ատենապետ» նշանակման կապակցությամբ (1969 թ.):

XVI – Իսրայել Արսլանի պատվին, նրա կիսանդրու բացման առթիվ (1972 թ.):

XVII – Հովհաննես Դևեջյանի գրական հոբելյանը, Սան Մարտին կենտրոնական թատրոն (1973 թ.):

XVIII–1915թ. ցեղասպանության 60-րդ տարելիցի նշումը (1975 թ.):

XIX – Գրող Ավետիք Իսահակյանի 100-ամյակը (1975 թ.):

XX – Բանաստեղծ Վահան Թեքեյանի 100-ամյակը Բուենոս Այրեսում և Մոնտեվիդեոյում (1978 թ.):

XXI – Ծայրագույն վարդապետ արքեպիսկոպոս Հարություն Մուշյանի կրթա-մշակութային հոբելյանը (1982 թ.):

XXII – Մաեստրո Լևոն Վարդապետյանի մեծարումը (1988 թ.):

XXIII –Ուսուցչուհի Բրիսայի (Զեփյուռ) Քալաջյան-Քոփուշյանի մանկավարժական գործունեության 40-ամյակը (1997 թ.):

HOMENETMEN

al Señor

Jorge Sarafian

con motivo del

50° ANIVERSARIO DE LA INAUGURACION DEL CAMPO DE DEPORTES DE RAMOS MEJIA,

por su continuado espíritu homenetmenagan desde aquel momento histórico de 1946, indicando el camino a seguir de las futuras generaciones.

Ramos Mejia, 9 de Julio de 1996

Avak Armen Krikorian
SECRETARIO

Esteban Kaplanian
PRESIDENTE

Հայ Մարմնակրթական Ընդհանուր Միության (Հոմենընդմեն) կողմից Գեորգ Սարաֆյանին պատվոնշանի հանձնումը մարզահրապարակի 50-ամյակի կապակցությամբ (1996 թ.):

Իմ անցումը Հոմենընդմենով

Ինձ վիճակվեց նույնպես գործել որպես Հայ Մարմնակրթական Ընդհանուր Միության ատենապետ՝ երկու ժամանակաշրջանում (1940-1943 թթ.), երբ ընդառաջեցի հաս տատության. ամենահայտնի մարդկանց խնդրանքին: Նրանց հետ կազմեցի աշխատանքային խանդավառ մի խումբ՝ ընդար ձակելով հաստատության գործունեության ոլորտը: Այդ ժամանակաշրջանում քարտուղարությունը գոր ծում էր Հայ Կենտրոնի մի գրասենյակում, հայ մշակութային հանձ նախմբի հարևանությամբ, որին նախագահելը նույնպես մտնում էր իմ պարտականությունների մեջ: Մարզական վարժությունները կատարվում էին ակումբի շինություններում, որոնք իր ան դամների համար վարձել էր Բաքիրջյան ընկերությունը Օլի վոսում և, որը պետք է վերադարձվեր նրա սեփականատիրոջը:

Մեր առաջին մտահոգությունը եղավ հայթայթել Հայ Մարմնակրթական Ընդհանուր Միության համար մի նոր և ավելի ընդարձակ սեփական մարզահրապարակ: Անհրաժեշտ գումարներ հավաքելու համար, մեր վարչական կազմը 1942 թ. Նավասարդյան մարզական մրցահանդեսի ժամանակ որոշեց կիրակի օրը հրավիրել ընկերության բոլոր անդամներին Սուրբ Գրիգոր Լուսավորիչ տաճար՝ ներկա լինելու Հոմենընդմենի վախճանված հիմնադիրներին և գործընկերներին նվիրված՝ հոգեհանգստյան պատարագին: Մեր հանձնախումբը բոլոր գործընկերների և մի քանի հատուկ հրավիրյալների հետ միասին, խաստովանություն և հաղորդություն կատարեց:

Երբ արքեպիսկոպոս Գարեգին Խաչատրյանն ավարտեց կրոնական ծիսակատարությունը, ուղևորվեցինք մարզահրապարակ, մեր հայրենակիցների մի մեծ խումբ էր հավաքվել Նավասարդյան խաղերի տոնակատարությանը ներկա լինելու համար: Մեր վարչական կազմի կողմից հատուկ հրավիրյալ ներին մատուցվել էր մտերմիկ մի ճաշ: Սեղանն օրհնեց արքեպիսկոպոս Խաչատրյանը, ներկա էին հայ եկեղեցու հոգա բարձության ատենապետ Իսրայել Արսլանը, «Bakirgian» ընկերության ղեկավար Հակոբ Բաքիրջյանը և «Lancashire» տեքստիլ

ընկերությունից՝ Արթուր Սարգսյանը: Ճաշի ժամանակ պարոն Արսլանն ինձ հարցրեց.

- Սարաֆյան, ի՞նչ ես մտածում անել, երբ առանց մարզահրապարակի ենք մնացել: Ափսոս կլիներ, որ այսքան ոգևորություն արթնացնելուց հետո գործը կիսատ մնա:

- Մեր գլխավոր մտահոգությունն է՝ գտնել մի քանի բարերարներ, որպեսզի մեզ աջակցեն ստեղծելու անհրաժեշտ գումար՝ սեփական դաշտ գնելու համար,- պատասխանեցի ես,- դա կնպաստեր մեր մարզական գործունեության զարգացմանը:

Մեր խոսակցությունը շատ նպաստավոր տպավորություն թողեց ներկաների, մասնավորապես, պարոններ Բաքիրջյանի և Սարգսյանի վրա, որոնք շռայլորեն նվիրաբերեցին զգալի գումար, որով հետագայում, ուրիշ ներդրումների հետ միասին, հնարավոր եղավ գնել մի ամառանոցային հողա տարածք՝ Ռամոս Մեխիայում: Այն բազա դարձավ ժամանակակից մարզահամալիրի համար, մի բան, որ տեղչում էին գլուխ բերել հետագա վարչական հանձնախմբերը:

Ճիշտ 1996 թ. հոկտեմբերին նշվեց սեփական մարզահրապարակի բացման 50-ամյակը: Այդ առիթով հատուկ հրավիրվեցի վարչական կազմի կողմից և ես ելույթ ունեցա՝ վերհիշելով մեր վարչության դժվարին պահերի մանրամասները, այն, թե ինչպես հաջողվեց իրականացնել Հոմենընդմենի մեր եղբայրների ցանկությունները:

Կարծես վերապրելու մի գործողություն լիներ. նրանց կարդացի իմ այն ելույթը, որ ընթերցել էի 1942 թ.՝ Հոմենընդմենի մեր կազմակերպած գեղարվեստական մի մեծ հանդեսի կապակցությամբ՝ Հայ Կենտրոնի դահլիճում: Իմ խոսքերը մեծ ոգևորություն առաջացրեցին ներկաների մեջ: Մեծ հուզմունքով ստացա մեդալ և հիշարժան դիպլոմ:

Հայ առաքելական եկեղեցին Հարավային Ամերիկայում

Հարավային Ամերիկայում Նորին Սուրբ Օծություն Ամենայն Հայոց Կաթողիկոս Խորեն Ա-ի կողմից առաքված առաջին նվիրակը արքեպիսկոպոս Գարեգին Խաչատրյանն էր: Նա Արգենտինա ժամանեց 1938 թ. և բացառիկ գործու նեություն ծավալեց Արգենտինայի, Ուրուգվայի և Բրազիլիայի թեմերի կազմակերպման գործում: Բուենոս Այրեսում նա օծեց Սուրբ Գրիգոր Լուսավորիչ տաճարը, Ֆլորեսի եկեղեցին, Սուրբ Շուշանի (այժմ Վալենտին Ալսինայի Սուրբ Հակոբ եկեղեցի) և Լինիերսի Սուրբ Պողոս մատուռները:

Նա անվանի մտավորական էր, աստվածաբանության և փիլիսոփայության հմուտ գիտակ: Նրա քարոզները մեծ ուշադրությամբ էին լսվում ծխական համայնքում: Նա իրականացրեց մշակութային մի զգալի գործ. հայերեն հրատարակեց Նոր Կտակարանը և «Մատյան Ողբերգությունը»՝ հանրահայտ խորհրդապաշտ Սուրբ Գրիգոր Նարեկացու գլուխգործոցը, թարգմանված ժամանակակից հայերենով (աշխարհաբար): Նա հրատարակեց նաև «Արարատ» մշակութային հանդեսը և կրոնական թեմաներով այլ կարևոր գործեր:

1950 թ. նա ընտրվեց Կոստանդնուպոլսի պատրիարք և այդ պատճառով Հարավային Ամերիկայի հայկական գաղութները մնացին առանց կաթողիկոսական պատվիրակի, ուստի, խնդրեցինք Վեհափառին, որ մեզ ուղարկի մի նոր նվիրակ: Այդ օրերին մեզ այցելեց արքեպիսկոպոս Սիոն Մանուկյանը, որը մինչ այդ գործում էր Դետրոյտում (Միացյալ Նահանգներ): Բուենոս Այրես գալու կապակցությամբ հայ եկեղեցու հոգաբարձության վարչական կազմը նրա հետ հանդիպում կազմակերպեց, համայնքի ղեկավարները որոշեցին, որ նա հարմար անձնավորություն է այդ պաշտոնի համար: Նորին Սուրբ Օծությունը համաձայնեց մեր խնդրանքին և նրան նշանակեց որպես նվիրակ Բրազիլիայի, Ուրուգվայի և Արգենտինայի համայնքներում:

Այդ ժամանակ ես կատարում էի մշակութային հանձ-

Արգենտինայի Հայ առաքելական եկեղեցու Սուրբ Գրիգոր Լուսավորիչ Մայր տաճարը:



Արքեպիսկոպոս Գարեգին Խաչատրյանը հայ եկեղեցու հոգաբարձության մշակութային հանձնախմբի հետ և Արարատյան վարժարանի ավարտական սաները: Կենտրոնում՝ նստած, ձախից աջ. Գառնիկ Հոսյան, Աղասի Բարսեղյան, տնօրեն Վարդան Գևորգյան, հայր Հովհաննես Ամիրենց, Սրբազան Գ. Խաչատրյան, Իսրայել Արսլան, Գևորգ Ստեփանյան, Լևոն Վարդապետյան և Մարտիրոս Գաբրիելյան (1940 թ.):

նախմբի ատենապետի պարտականությունը: Տարիների հետ համայնքի կազմակերպական աշխատանքներում արդեն ձեռք էի բերել բավականաչափ փորձառություն: Պատեհություն ունեցա շատ մոտ լինել արքեպիսկոպոսին և նրան ընկերանալ, որպեսզի նա ճանաչի մեր համայնքի անվանի մարդկանց, օրինակ նախկին ատենապետ պարոն Բերգամալիին, որն այդ ժամանակ պաշտոն չէր զբաղեցնում: Այցելեցինք նաև պարոններ Հովհաննես Դիարբեքիրյանին, Գևորգ Չիննոզյանին և այլ անձանց ևս, խնդրելով նրանց համագործակցությունը և մասնակցությունը վարչական խորհրդի աշխատանքներին:

Բերգամալին տվեց իր համաձայնությունը, Դիարբե քիրյանը հանձնարարեց իր քարտուղարին՝ պարոն Էնրիկե Թահբաջյանին, Չիննոզյանն՝ իր ավագ որդի Վահեին: Նրանք բոլորը համաձայնվեցին անդամակցել վարչական կազմին՝ այն պայմանով, որ ես նույնպես նրանց միանայի: Նույն նպատակով զրուցեցինք մեր միջավայրի առավել ազդեցիկ կազմակերպությունների հետ, որոնք էլ իրենց հերթին նշանակեցին իրենց ներկայացուցիչներին ի դեմս Սահակ Բախչեջյանի (նախկին խորհրդի ատենապետ), Արսեն Մելիքյանի և Լևոն Տեր-Ավետիսյանի:

Այսպես կազմվեց վարչական կազմի թեկնածուների ցուցակը, որը ներկայացվեց ընդհանուր անդամական ժողովին 1951 թ. մայիսի 27-ին: Արձանագրվեց 779 ընտրողների ներկայությունը, որոնք էլ ընտրեցին հերթական վարչական կազմը՝ ամբողջ համայնքի համաձայնությամբ.

Ատենապետ՝	Արմեն Բերգամալի
Փոխատենապետ՝	Արթուր Սարգսյան
Ատենադպիր՝	Գևորգ Սարաֆյան
Փոխատենադպիր՝	Լևոն Տեր-Ավետիսյան
Գանձապահ՝	Հովհաննես Փանոսյան
Անդամներ.	Սահակ Բախչեջյան
	Վահե Չիննոզյան
	Արսեն Մելիքյան
Հաշվեքննիչ՝	Հենրի Թահբաջյան

Գևորգ Մարաֆյանը Հարավային Ամերիկայի հայ առաքելական եկեղեցու առաջնորդ և կրոնական գրքերի արգասավոր հեղինակ Սիոն արք. Մանուկյանի հետ զրուցելիս «Caras y Caretas» հանդեսում, մարտ 1953 թ.:

Իրականում դա գործողությունների նոր ժամանակաշրջանի սկիզբն էր մեր համայնքի կյանքում, որտեղ երկու տասնամյակների ընթացքում բոլորն աշխատեցին միակամ, համաձայնությամբ և ներդաշնակությամբ՝ Արմեն Բերգամալիի գլխավորությամբ: Հայ եկեղեցու հոգաբարձության վարչական կազմը Նորին Ս. Օծության նվիրակին՝ արքեպիսկոպոս Սիոն Մանուկյանին, ճանաչեց որպես իր պատվավոր նախագահը:

Ես նույնպես պատիվ ունեցա ընտրվելու այդ առանձ նահատուկ խորհրդում: Սկզբից գործեցի որպես ատենադպիր, հետագայում՝ երկար տարիների ընթացքում, որպես փոխատե նապետ: Ներդրեցի իմ ողջ հաստատակամությունը՝ կազմա կերպության ներսում առաջ տանելու կրթական և մշակութային գործերը: Համայնքը կարողացավ ավելի կուռ համախմբվել: Խորհրդի ներսում կազմվեցին տարբեր հանձնախմբեր՝ հաստատության յուրահատուկ աշխատանքները իրականացնելու համար:

Այն թաղամասերում, որտեղ կազմվեցին մեր հայ ռենակիցներից բաղկացած կարևոր խմբեր, ինչպես Ֆլորեսում, Բառակասում, Լինիերսում, Նուեվա Պոմպեժայում, Վիժա Սոլ դատիում, Լանուսում, Վալենտին Ալսինայում և այլուր, հայ գաղթականները մեծ զոհողություններով կառուցեցին մատուռ ներ և դպրոցներ, հատկապես Ֆլորեսում, որտեղ ճարտա ռապետ Իսրայել Արսլանը տարածքներ նվիրեց և օգնեց եկեղեցու կա ռուցմանը: Դրա հետ մեկտեղ, կառուցվեցին դպրոցական դա սասենյակներ: Այդ թաղամասի եկեղեցին կոչվեց Վարագա Սուրբ Խաչ, իսկ դպրոցը, հոգաբարձության որոշմամբ, ի պա տիվ պարոն Արսլանի, կոչվեց Արծրունի: Վալե ն տին Ալսի ն այում նույնպես կառուցվեց Սուրբ Շուշան մատուռը մեր առաջին բա - ռերարներից մեկի՝ Երվանդ Խաչիկյանի նվիրած տարածք ների վրա և մի դպրոց, որը կոչվեց Խաչիկյան, նվիրատուի ան վամբ: Հետո կառուցվեց մատուռ, որն ընդարձակվեց և ձևա փոխվեց Մուրեքյան ընտանիքի կողմից և կոչվեց Սուրբ Հակոբ՝ ի հի շատակ նրանց հոր: Այդ նույն շրջանում կա ռուցվեց ուսումնական մեկ այլ հաստատություն՝ Խրիմյան վար ժարանը: Լինիերսում մեր հայրենակիցները մատուռ կանգ նեցրին Սուրբ Պողոս

Սուրբ Գրիգոր Լուսավորիչ Տաճարի օծման 50-ամյա տարեդարձի հանդեսը: Գևորգ Սարաֆյանը կառում է արարողության մոմերից մեկը. Հայ Կենտրոն դահլիճ, 2 դեկտեմբերի, 1988 թ.

անունով և հիմնեցին Նուբարյան վարժարանը՝ Մարկոսյան ընտանիքի և բոլոր հարևանների օգնությամբ, 1936 թվականին:

Դպրոցներ էին գործում նաև Վիսենտե Լոպեսում, Լա Բոկայում, Խասե Ինխենիերոսում, իսկ Վիժա Սոլդատիում և նրա շրջակայքում՝ Սահակյան, Հայկազյան և Մեսրոպյան դպրոցները: Մայրաքաղաքի և մեծ Բուենոս Այրեսի շրջա պատում գործում էին 14 դպրոցներ, բոլոր այն վայրերում, որտեղ տեղավորվել էին հայ ընտանիքների խմբեր:

Այս դպրոցները գործում էին տեղական հանձնախմբերի խնամակալությամբ՝ միշտ գտնվելով պարբերաբար այնտեղ այցելող հայ եկեղեցու հոգաբարձության կրթական հանձնախմբի հսկողության տակ:

Համաձայն Արգենտինայի պետական կրթական ծրագրի կազմակերպեցինք մեր համայնքի դպրոցները

Մեր վարժարանները, ներառյալ Հայ Կենտրոնի Արսլանյան դպրոցը, հայերենի ուսուցման պարզ հաստատություններ էին: Աշակերտների մի մասը հաճախում էին առավոտյան, մյուսը՝ կեսօրից հետո, քանի որ պարտավոր էին գնալ պետական դպրոց: Իրականում, այս դպրոցներում բացակայում էին անհրաժեշտ հարմարությունները՝ ուսուցումը ընդարձակելու համար: Աշակերտը մնում էր երկու դպրոցների միջև և չէր յուրացնում գիտելիքները: Դասավանդվում էին հայերեն՝ կարդալ և գրել, կրոն և որոշ բաներ հայոց պատմությունից և աշխարհագրությունից:

Մեր կրթական հանձնախմբում, ուր ես նախագահում էի, վարչական կազմի և ուրիշ միությունների հետ մեկ տեղ, մտահոգված էինք, թե ինչ պետք է անել պայմանները բարելավելու համար և եկանք այն եզրակացության, որ անհրաժեշտ է միացնել մի քանի դպրոցներ՝ յուրաքանչյուր գոտում մեկ դպրոց կազմելու համար: Այդ կապակցությամբ անհրաժեշտ եղավ կառուցել նոր շենքեր բոլոր հարմարություններով, որ

Արսլանյան հաստատության ուսուցչական կազմի անդամները՝ հայ եկեղեցու հոգաբարձության ղեկավարների հետ: Նստածներ, ձախից աջ. Սարգիս Քեբեն, հաստատության տնօրենուհի, Հարությունն Ծայրագույն վարդապետ Մուշյան, արքեպիսկոպոս Բարկեն Աբաղյան, Արմեն Բերգամալի՝ հաստատության ատենապետ, Գևորգ Մարաֆյան կրթական հանձնախմբի ատենապետ և Լևոն Տեր-Ավետիսյան (1960 թ.):

Գևորգ Սարաֆյանը Իսրայել Արսլանի հիշատակին խոսելիս՝ նրա կիսանդրու բացման ժամանակ (1972 թ.):

պահանջում էր ժամանակակից դաստիարակությունը՝ և հաշ-վի առնելով պաշտոնական չափորոշիչները, որ առաջա դրվում էին պետական դպրոցներին: Առաջինն այդ համա կարգի մեջ մեզ հաջողվեց ներգրավել Արսլանյան հաստա տությունը, որն այժմ վերանվանված է Սուրբ Գրիգոր Լուսավորչի, իսկ Արսլանյան ազգանունը օգտագործվում է ողջ կրթական համակարգի համար:

Այդ նպատակով էլ սկսեցինք կառուցել Ասլանյան կենտրոնական վարժարանը: Կատարեցինք մեծ հա նգանակություն. գնվեցին զանազան հողատարածքներ, որտեղ կա ռուցեցինք շենքեր՝ անհրաժեշտ լսարանների, մանկապար տեզի և նախակրթարանի համար, մի ընդարձակ խոհանոց և մի մեծ ճաշարան, որը երկհերթ ուսուցմամբ դպրոցում աշա կերտներին ճաշելու հնարավորություն կտար: Ծրագիրը կրթու թյան նախարարության կողմից արդեն հավանության էր արժանացել:

Մենք վարձեցինք ավտոբուսներ՝ դպրոցականներին բնակավայրերից փոխադրելու համար: Ճաշի ժամին կանանց հանձնախմբի անդամները և զանազան մայրեր ու տատիկներ հատկապես գալիս էին երեխաներին սպասարկելու և հսկելու: Մեծ հաջողություն ունեցանք և դրա հետ միասին աշակեր տության քանակն ավելացավ: Համարյա միաժամանակ, փակ վեցին Խաչիկյան, Մամիկոնյան, Կիլիկյան և Լուսինյան դպրոցները՝ այդ շրջանների աշակերտներին Խրիմյան կրթարանում կենտրոնացնելու համար, որը հիմնված էր և ղեկավարում էր «Արմենիա» մշակութային ընկերակցությունը, որը միաժա մանակ հայկական եկեղեցու կրթական հանձնախմբին ենթակա էր: Այս դպրոցի նախակրթարանի դասասենյակների կառուցումը ձեռք բերվեց հանգանակության միջոցով, և առանձ նապես Սեֆերյան ընտանիքի նշանակալի օգնությամբ, որի անունը կրում է այս բաժանմունքը:

Երրորդ կենտրոնացված դպրոցը կառուցեց Դիար բեքիրյանների ընտանիքը, որը հարդարեց նոր դասասենյակներ Ֆլորեսի Արծրունի վարժարանում՝ պաշտոնական կրթություն իրականացնելու համար: Այդ տարածքում փակվեց ին Ֆլորեստայի, Ռաֆֆու և Լինիերսի Նուբարյան դպրոցները՝ աշա -

Գեորգ Մարաֆյանը, որպես կազմակերպական հանձնախմբի ատենապետ, մագաղաթյա հուշագիր է հանձնում գրող և դաստիարակ Հովհաննես Դևեջյանին՝ նրա հոբելյանի առթիվ: Սան Մարտին մշակութային կենտրոն, 10 դեկտեմբերի, 1973 թ.:

Դպրոցի տնօրեն Հայր Հ. Մուշյանը և կրթական հանձնախմբի ատենապետ Գեորգ Մարաֆյանը մի խումբ աշակերտների հետ՝ զբոսանքի ժամանակ, Արսլանյան վարժարանի դպրոցական հին շենքի դիմաց (1960 թ.):

կերտներին Արծրունու նոր շենքերում կենտրոնաց նելու համար:

Վիժա Սոլդատի և Նուեվա Պոմպեժայի շրջանում ևս պարոն Սահակ Բախչեջյանը կառուցեց մի նոր ուսումնական հաստատության շենք Մեսրոպյան դպրոցի հողատարածքի վրա՝ լուծարելով նախորդ՝ Հայկազյան և Սահակյան դպրոցները, և հիմնելով նոր դպրոց, որը կրեց բարերարի անունը:

Հինգերորդ տեղում՝ հյուսիսային գոտում, տեղական հանձնախմբի աջակցությամբ գնվեց մի տարածք և Մարինա Բ. Կույումջյանի նվիրատվությամբ այստեղ կառուցվեց մի նոր նախակրթարան դպրոց, որ կոչվեց իր անվամբ:

Այս ձևով արդեն ունեինք հինգ համակցված՝ Արս լանյան, Արծրունի, Բաղչեջյան, Խրիմյան և Կույումջյան դպրոցներ: Այս ակնառու առաջընթացը ձեռք բերվեց 1960 թ., երբ ես կրթական հանձնախմբի նախագահ էի և եղա համեստորեն այն անձերից մեկը, որոնք շատ ջանացին՝ առաջ տանելու համայնքի դպրոցական ցանցի կազմակերպման այնքան դժվարին և կարևոր խնդիրը՝ ունենալով համայնքի թերթերի տնօրենների համագործակցությունը: Նրանցից պետք է հիշեմ հետևյալ խմբագիրներին. պարոն Հովհաննես Դևեջյանին՝ «Ար մենիայի», պարոն Աբրահամ Էօլմեսեկյանին՝ «Շարժումի» և պարոն Արամ Դեյրմենջյանին՝ «Հայ մամուլի»: Նրանց հետ մենք գոր ծեցինք համաձայնության և ներդաշնակության մթնոլորտում:

Երբ ավարտվեց դպրոցական նոր համակարգի երկկողմ ուսուցման առաջին կիսամյակը, ես հայտնեցի արքեպիս կոպոսին և վարչական կազմին, որ անհրաժեշտ է կազմակերպել նաև երկրորդական ցիկլը, որպեսզի մեր դպրոցականները չցրվեն օտար հաստատություններ: Սակայն չունեինք շենքեր՝ այս ծրագրերն իրագործելու համար: Ես պնդեցի Սրբազան Աբաղյանին, որ մեզ տրամադրի առաջնորդարանի դահլիճը, այնտեղ սկսելու երկրորդական վարժարանի առաջին տարին, մինչև որ վարչական կազմը ձեռք բերեր անհրաժեշտ գումար դասասենյակների կառուցման նպատակով:

Հաջորդ տարի Հայ Բարեգործական Ընդհանուր Միությունը սկսեց իր շենքի շինարարությունը եկեղեցու դիմաց, և

Հայ եկեղեցու հոգաբարձության կրթական հանձնախմբի ատենապետ Գեորգ Սարաֆյանը Արտաքնյան վարժարանի շրջանավարտներին դիպլոմներ հանձնելիս (1962 թ.):

հանձն առավ անհրաժեշտ դասասենյակներ կառուցել մեր հաստատության երկրորդական վարժարանի համար: Այս պիսով, ունեցանք երկու կարևոր երկրորդական վարժարաններ՝ Հայ Կենտրոնի և Խրիմյանի, որոնք կառուցվեցին Ճամ պազյանի նվիրատվության շնորհիվ: Հարկ եմ համարում հիշատակել նաև մեր համայնքում հիմնված մեկ ուրիշ հաստատության մասին: 1954 թ. Վենետիկի Մխիթարյան միաբանության հայր Ստեփան Ֆերահյանը ժամանել էր Արգենտինա՝ երկ րում մի դպրոց հիմնելու մտադրությամբ:

Որպես կրթական հանձնախմբի ատենապետի, նրան հրավիրեցի միանալ մեր հանձնախմբին և նա ինձ ուղեկցեց դպրոցներ կատարած մեր ստուգատեսներին: Նրան ցույց տվեցի մի քանի ազատ շենքեր, տեսնելու, թե արդյոք հնա րավոր կլիներ դրանք օգտագործել իր ծրագրերում: Սակայն նա մտածում էր կառուցել մի նոր դպրոցի շենք՝ Բելգրանո թաղամասում: Այդ կապակցությամբ Հայ Կենտրոն հրավիրեցինք նախկին մխիթարյան աշակերտների մի խմբի՝ մտքեր փոխանակելու և տեսնելու, թե ինչպես կարելի է օգնել հայր Ստեփանին իր առաքելության մեջ, որ և գլուխ բերեցինք մեր համայնքի մի քանի բարերարների օգնությամբ:

Այս նախակրթական և երկրորդական դպրոցներում հաշվում էինք հայկական ծագումով 2500 աշակերտներ, որոնք դպրոց էին հաճախում ուսուցման կրկնակի տևողության կարգով: Հաջողություն ունեցանք ինչպես համայնքում, այնպես էլ կրթության նախարարության շրջանակներում: Ավելի ուշ, այս դպրոցական ցանցի մեջ մտան ևս երկու ուրիշ դպրոցներ: Ինչպես հիշատակեցի, նախկինում ունեինք Վիսենտե Լոպեսի դպրոցը, որն արդեն ուներ իր նախակրթարանը և պաշտոնապես ճանաչվել էր: Այդ շրջանում, 1956 թվականից, Կոստանդնուպոլսից մեր հայրենակիցների նոր արտագաղթ կատարվեց և նորեկները մեծ մասամբ հաստատվեցին Վիսենտե Լոպեսի, Օլիվոսի և նրանց հարակից թաղամասերում:

Այդ օրերին ընդունեցինք հյուսիսային գոտու հայ րենակիցների պատվիրակության այցը Ասատուր Կարագյոզյանի գլխավորությամբ: Նրանք եկել էին առաջարկելու Հայաստան-

Ազգային հերոս, հայության մեծ բարերար Ալեք Մանուկյանը Արգենտինա կատարած իր առաջին այցելության ժամանակ: Ձախից աջ. Հարություն Սարաֆյան, Զաբել Թաբիբյան, Ալեք Մանուկյան, Մարի Մանուկյան և Գևորգ Մարաֆյանը դեկին: (Բուենոս Այրես, 1968 թ.):

Հայ Բարեգործական Ընդհանուր Միության կենտրոնական վարչական կազմի ցկեանս նախագահ, հայության մեծ բարերար և ազգային հերոս Ալեք Մանուկյանն իր դստեր՝ Լուիզ Սիմոն Մանուկյանի հետ (այժմյան ՀԲԸՄ նախագահ) Ալեք Մանուկյան կրթական հասարակական և սպորտային համալիրում Գևորգ Սարաֆյանի ուղեկցությամբ (27 հոկտեմբերի 1984 թ.):

յայց եկեղեցու հոգաբարձության խորհրդին, մի նոր եկեղեցի կառուցելու Վիսենտե Լոպեսում: Նման դեպքերի համար, սովորական կարգով, վարչական կազմն ինձ հանձնարարեց նրանց հետ զրուցել՝ պարզելու, թե ինչ կարելի է անել: Մի քանի անգամ խորհրդակցեցինք: Սկզբում փորձեցի նրանց հա մոզել, որ նոր եկեղեցի չկառուցեն, որովհետև արդեն ունեինք մի քանիսը: Բայց նրանք համառորեն պնդեցին՝ հիմնավորելով, որ ուխտ են արել՝ մի տաճար կառուցել՝ նվիրված Սուրբ Գևորգին: Վերջապես համաձայնեցինք և խոստացանք սատարել այդ գործը, միայն այն պայմանով, որ կառուցեին ևս մեկ ընդարձակ շենք՝ նախակրթական ուսուցման համար: Բավական խորհրդակցելուց հետո նրանք ստանձնեցին ծրագիրն իրա գործելու պարտականությունը: Բարեբախտաբար, եկեղեցու և նոր դպրոցի կառուցումը իրականություն դարձան:

Դպրոցի կառուցման ավարտի և Սուրբ Գևորգ եկեղեցու օծման տարին, Եգիպտոսից եկած մի հմուտ հոգևորական՝ հայր Արշամ Բոզոյանը, իր վրա վերցրեց եկեղեցու քահանայի և դպրոցի տնօրենի պարտականությունները և հասավ մեծ հաջողությունների: Տարիներ անց, բարերար Գրիգոր Դերձակ յանի նվիրատվությամբ կառուցվեցին երկրորդական վարժարանի շենքերը. Հաստատությանը տրվեց նրա անունը:

Այսպիսով, ավելացավ ևս մեկ դպրոց: Արդեն ունեինք վեց նախակրթական և չորս երկրորդական վարժարաններ: Արսլանյան հաստատության երկրորդական բաժինը գործում էր Հայկական Բարեգործական Ընդհանուր Միությանը պատկանող տարածքներում: Ժամանակի ընթացքում հայ եկեղեցու հոգաբարձությունը այդ բաժնի համար կառուցեց մի սեփական շենք: Ահա թե ինչու, ունենալով դպրոցական ազատ շենք, ՀԲԸՄ-ը միտք հղացավ ստեղծել իր սեփական կրթական հաստատությունը՝ սկսելով երկրորդական վարժարանից: Հետագայում, տեսնելով, որ աշակերտների մեծ կուտակում է առաջացել, ընդարձակեցին հարմարությունները՝ մանկապարտեզի և նախակրթարանի բաժինները միավորելով Մարի Մանուկյան հաստատության անվան տակ: Այս գործը իրականացվեց մեծ բարերար, հաստատության կենտրոնական խորհրդի եր-

կարամյա, իսկ այնուհետև՝ ցկյանս նախագահ Ալեք Մանուկյանի, իր տիկնոջ՝ Մարիի և իրենց զավակներ՝ Լուիզի և Ռիչարդի առատաձեռն համագործակցության շնորհիվ: Մեր համայնքը նույնպես մասնակցեց իր նշանակալի նվիրատվություններով՝ տրամադրելով դրանք այս հոյակապ համալիրի կառուցմանը: Համալիրն ունի այն ամենն, ինչ հարկավոր է՝ առաջ տանելու համար մշակութային, կրթական, ընկերային և մարզական ձեռնարկները:

Որպես Արգենտինայի հայ համայնքի կրթական գործիչ, գոհունակություն եմ զգում այժմ, տեսնելով, որ մեր նա խաձեռնած այս լուրջ գործը բոլոր հաստատություններում առաջ է գնում բնականոն ընթացքով: Սրտանց տենչում եմ, որ մեր համայնքը միասնական ջանքերով և ներդաշնակ ընթանա առաջ՝ կրկնապատկելով իր ուժերը հայոց լեզվի դասավանդման գործում, որպեսզի պատրաստենք պիտանի մարդիկ հասա բակության և ապագա առաջնորդներ՝ մեր համայնքի համար:

Համայնքի միասնականությունը

Հայ եկեղեցու հոգաբարձությունն իր հանձնախմբերի հետ արդեն կազմել էր համայնքային գործունեության բազա, այսինքն այն, ինչ վերաբերում էր կրոնական, հասարակական, մշակութային և կրթական հարցերին: Մեզ հաջողվեց համախմբվել մեր ինքնության, պատմության, հնագույն մշակույթի և ընդհանրապես ավանդույթների պահպանության բարձրագույն նպատակի շուրջ:

Այս աշխատանքներն առաջ տանելու համար հրավի ռեցինք բոլոր կարևոր հաստատություններին, որպեսզի նշա նակեն մեկական ներկայացուցիչ: Նրանց միջոցով կազմեցինք համազգային տոնակատարությունների կենտրոնական հանձնախումբ՝ որ պիտի կազմակերպեր տարվա ընթացքում առավել նշանակալի իրադարձությունների հիշատակումը: Մենք նույնպես արձագանքում էինք հայ բնակչության կյանքին բնորոշ՝ կարևոր մշակութային և քաղաքացիական, ազգային ու

Արգենտինայի համազգային տոնակատարությունների կենտրոնական հանձնախմբի վարչակազմը, (1960 թ.):
Կանգնած՝ ձախից աջ. Արամայիս Դարբինյան, Գիսակ Նահապետյան, Գրիգոր Կենճյան և Էմիլիո Սամուելյան: Նստած, ձախից աջ. Սոկրատ Թերզյան, Գեորգ Սարաֆյան (ատենապետ) և Եփրատ Բայրամյան (ատենադպիր):

պատմական իրադարձություններին, որոնք տեղի էին ունենում Մայր Հայրենիքում և Սփյուռքում: Այս հանձնախումբը կազմվեց հայ եկեղեցու հոգաբարձության հովանավորության ներքո, որը նշանակեց երկու ներկայացուցչի՝ ինձ, որպես հանձնախմբի ատենապետ և դոկտոր Բայրամյանին, որպես ատենադպիր: Մասնակցում էին նաև «Արմենիա», «Շարժում», «Սևան», և հետագայում «Սարդարապատ» թերթերի, ինչպես նաև հայ կաթոլիկ և ավետարանական եկեղեցիների ներկայացուցիչները:

Այս հանձնախումբը հավաքվում էր պարբերաբար: Միջոցառումների ամենակարևոր տարեթվերն էին՝ ա) 1915 թ. ապրիլի 24-ի՝ Արևմտյան Հայաստանի հայ բնակչության նկատմամբ Օսմանյան Թուրքիայի իրականացրած ցեղասպանության օրվա նշանավորումը, բ) հայ մշակույթի ամիսը՝ հոկտեմբերին և գ) պատմական այլ անձնավորությունների, մշակույթի և արվեստի գործիչների չնախատեսված տարեդարձերը:

Մի քիչ երկար կլիներ պատմել այս հանձնախմբի ողջ գործունեության մասին. ասենք միայն, որ ամենանշանակալին ապրիլի 24-ն էր, որ միշտ միասնաբար նշում է ողջ հայ ժողովուրդը՝ ինչպես Մայր Հայրենիքում, այնպես էլ Սփյուռքում:

Ցեղասպանության 50-րդ տարելիցի նշանավորումը

1965 թ. լրանում էր ցեղասպանության տխուր տարեթվի 50-ամյակը: Այդ հիշատակը կազմակերպելու համար մշտական հանձնախմբից բացի, հրավիրվեցին երիտասարդական կազմակերպությունները, կանանց և հայրենակցական միությունները, կոչ արվեց Արգենտինայի ողջ հայությանը՝ հանդես գալ համախմբված՝ մեր իրավունքները պաշտպանելու և արդարություն պահանջելու համար: Այդ առիթով կազմվեց հատուկ մի հանձնախումբ՝ այցելելու հայ առևտրականներին և արդյունաբերողներին՝ հորդորելով փակել իրենց ձեռնարկությունները ապրիլի 24-ի օրերին:

Ինչպես ամեն տարի, այդ անգամ ևս խնդրեցինք կառա-

վարությանը, հատկապես պաշտպանության նախարարությանը, որպեսզի այդ օրը ազատ արձակվեն հայ զորակոչիկները, կրթության նախարարությանը՝ հայ համայնքի աշակերտներին դասերից ազատեն, որը թույլ տրվեց սիրալիր կերպով, որ պեսզի նրանք կարողանային հատուցել քաղաքացու՝ իրենց հարգանքի տուրքը ցեղասպանութեան զոհ գնացած անմեղ մարդկանց հիշատակին:

Ամեն տարի ցեղասպանության տարեդարձը նշում էինք Հայ Կենտրոնի դահլիճում և պատարագը մատուցվում էր Սուրբ Գրիգոր Լուսավորիչ տաճարում, սակայն այս անգամ 50-ամյակն էր և ցանկանում էինք այն նշել արտակարգ գործողություններով և մարդաշատ ձեռնարկներով: Դրա համար հանձնախումբն առանձնացրեց մի հատուկ պատվիրակություն՝ կարդինալ Կագժիանոյին այցելելու և նրանից թույլտվություն խնդրելու, որ հայկական ծիսակատարությամբ պատարագ մատուցվի տաճարում՝ ի պատիվ դարի առաջին Ցեղասպանության ընթացքում զոհված հայերի հիշատակի: Ես առիթ էի ունեցել անձնապես ճանաչել նորին վսեմություն կարդինալին Նորին Սուրբ Օծություն Վազգեն Ա-ի այցելության ընթացքում, երբ նրան ուղեկցում էի կարդինալի հետ հանդիպման ժամանակ: Ընդունելություն խնդրեցինք, որը մեզ տրամադրվեց: Եփրատ Բայրամյանի և Էմիլիո Սամուելյանի հետ գնացինք կարդինալին հանդիպելու: Նրա հետ ունեցանք հետևյալ խոսակցությունը:

Գ. Սարաֆյան. – Եկել ենք խնդրելու ձերդ վսեմության թույլտվությունը՝ քաղաքի Մայր տաճարում ցեղասպանության 50-ամյակի առթիվ մի հանդիսավոր պատարագ մատուցելու համար:

Կարդինալ Կագժիանո. – Ինչու՞ համար եք ցանկանում պատարագ մատուցել այստեղ, երբ դուք ինքներդ տաճար ունեք, որն այցելել եմ:

Գ. Սարաֆյան. – Որովհետև այս պատարագին շատ մարդ պիտի հավաքվի, ունենք շատ պաշտոնական հրավիրյալներ և անձնավորություններ բոլոր մշակութային և հասարակական ոլորտներից: Մեր տաճարը ի վիճակի չի լինի տեղավո-

ռել բոլորին, որոնք հավաքվելու են այս կարևոր հիշա տակության առթիվ: Դրա համար կարիք ունենք ավելի ընդարձակ և համապատասխան կառույցի, ինչպիսին է մայրաքաղաքի ձեր Մայր տաճարը:

Կարդինալ Կագժիանո – Սակայն, զավակս, նախընթաց չկա:

Գ. Սարաֆյան. – Երբ թուրքերը մեզ սպանում էին, չէին հարցնում՝ կաթոլիկ ենք, առաքելական հայեր, թե բողոքականներ: Մեզ սպանում էին, որովհետև քրիստոնյա էինք և ցան կանում էինք ապրել ազատության մեջ: Մեր իրավունքները ան տեսեցին և փոխարենը այսքան աղետալի ձևով պատասխանեցին: Հուզմունքով եմ հիշում հորս վերջին կտակն իր գնդա կահարության նախօրյակին, երբ իր 18 ընկերների հետ միասին տարագրված էր Ռաքքա (Եփրատի ափին): Վերջին բառերը, որ մեզ ասաց նա, եղան. «Ինչ ուզում է լինի, չմոռանաք ձեր քրիստոնեական հավատը, ոչ էլ ձեր հայ ազգությունը»: Ինչու՞ գումարեցիք Վատիկանի II Տիեզերական ժողովը՝ քրիստոնյաների միասնության համար: Մենք նույնպես Քրիստոսի այդ եկեղեցու մասն ենք կազմում:

Կարդինալ Կագժիանո. – Կխոսեմ Պապի նվիրակի հետ:

Գ. Սարաֆյան. – Եթե անհրաժեշտ է՝ մի հեռագիր կուղարկենք Սրբազան Քահանայապետ Պապին:

Վերջապես կարդինալը շատ զգացված, պատասխանելու համար ժամանակ խնդրեց: Հրաժեշտ տվեցինք՝ շնորհակալություն հայտնելով հատկացված ուշադրության համար: Բարեբախտաբար, հաջորդ օրը նրա քարտուղարն ինձ կանչեց՝ տեղեկացնելով, որ մեր խնդրանքը համարել են հնարավոր: Ժամը կլիներ մի քիչ ավելի ուշ, քանի որ տաճարը ամեն կի րակի զբաղված էր ժամասացությամբ: Մեր պատարագը պետք է մատուցվեր ժամը 13-ին:

Մեր խնդրանքի բարեհաջող արդյունքի մասին տեղեկացրեցինք արքեպիսկոպոս Բաբկեն Աբաղյանին, մեր համազգային տոնակատարությունների հանձնախմբին և հայ եկեղեցու հոգաբարձության կենտրոնական խորհրդին, որոնք և մեծ ոգևորությամբ և հավանությամբ ընդունեցին լուրը:



Գևորգ Մարաֆյանը ողջ համայնքի անունից ցեղասպանության 50-րդ տարելիցի կապակցությամբ իսպաներեն ընթերցում է գլխավոր ճառը Սան Մարտին թատրոնի գլխավոր Կասակուբերտա Դահլիճում, 24 ապրիլ, 1965 թ.:

Քանի որ 50-րդ տարելիցին նախապատրաստվելը մի կարևոր և արտակարգ աշխատանք էր, մենք նույնպես կազմեցինք երիտասարդության ենթահանձնախումբ: Այսպիսով, ինչպես ավագներն էին ներկայացնում բոլոր հանձնախմբերը, երիտասարդությունը նույնպես ներգրավվեց դրանց մեջ: Նրանց հանձնարարեցինք լրատվության տարածման և քարոզչության աշխատանքները: Կենտրոնական հյուրանոցներից մեկում հրավիրեցինք մամլո ասուլիս, որտեղ ներկա էին համարյա բոլոր թերթերի, լրատվական գործակալությունների, հանդեսների, ռադիո և հեռուստակայանների ներկայացուցիչներ: Նրանց պատմեցի թուրքերի իրագործած ցեղասպանության պատմական փաստի մասին, որ լավագույն կերպով մեկնաբանվեց և հետո տեղ գտավ նրանց հրապարակումներում և հաղորդումներում: Պատրաստվեցին ազդագրեր, որոնք երիտասարդությունը փակցրեց ողջ քաղաքի պատերին, ստեղծվեցին հատուկ հանձնախմբեր, որոնք այցելելու էին զա նազան քաղամասերի համայնքների ավելի պատկառելի անդամներին, հրավիրելով նրանց մասնակցել քաղաքացիական ցույցին, որ պետք է տեղի ունենար Սան Մարտին թատրոնում, ինչպես և հանդիսավոր պատարագին, որ պետք է մատուցվեր մայրաքաղաքի տաճարում: Բոլորն արձագանքեցին հայրենասիրական ոգևորությամբ, որ պատիվ էր բերում հայ համայքին:

Շաբաթ օրը, ապրիլի 24-ի առավոտյան, արքեպիս կոպոս Բաբկեն Աբաղյանը Սուրբ Գրիգոր Լուսավորիչ եկեղեցում ցեղասպանության զոհերի հիշատակին նվիրված հոգե հանգըստյան հանդիսավոր պատարագ մատուցեց «Կոմիտաս» բազմաձայն երգչախմբի մասնակցությամբ՝ մաեստրո Լևոն Վարդապետյանի գլխավորությամբ, և տվեց իր քարոզը մեծ աղետի ընթացքում հայ խաղաղ բնակչության բնաջնջման մասին: Նա ընթերցեց Նորին Ս. Օծություն Վազգեն Ա-ի հայ ռապետական կոնդակը՝ եղեռնի 50-րդ տարելիցի առթիվ:

Պատարագի ավարտին, հոգևորականները շարժվեցին առաջնորդարանի դիմաց գտնվող եղեռնի զոհերի հուշարձանի տարածք, որտեղ կայացավ նահատակների հոգեհանգստի հուզիչ արարողություն:

Հասարակության մի մասը, որ մասնակցեց հայերի դեմ իրագործած ցեղասպանության 50-ամյակի առիթով հայ հոգևոր դասի կողմից մատուցված սուրբ պատարագին՝ մայրաքաղաքի Կաթողիկե Մայր տաճարում, պատուշաճը հաստատելու պահին Ազատարար գեներալ Սամ Մարտինի աճյունն ամփոփող դամբարանի դիմաց
(25 ապրիլի. 1965 թ.):

Բազմահազարանոց հաւաքակությունը, որ մասնակցեց մայրաքաղաքի տաճարում սուրբ պատարագին, ուղեկցում է Պլասա Դե Մաժոյից Դիագոնալ Նորտեով և Ֆլորիդա՝ մինչև Պլասա Սան Մարտին, պատշաճը մատուցելու հայ համայնքի կողմից Ազատարարին (25 ապրիլի, 1965 թ.):

Ժողովուրդը տեղեկացված էր քաղաքացիական ցույցի մասին, որ տեղի պետք է ունենար նույն օրը, ժ. 17-ին, Սան Մարտին Գլխավոր թատրոնի Մարտին Կորոնադո դահլիճում, որը սիրահոժար տրամադրել էր Բուենոս Այրես քաղաքի կառավարիչ Դոն Ֆրանցիսկո Ռաբանալը՝ մեր տրամադրության տակ դնելով մուտքը և նրա կից շինությունները, ձայնա յին համակարգը, որը լսելի էր նույնիսկ փողոցում:

Ավելի քան 5000 մարդ հավաքվեց թատրոնի շենքի և նրա հարակից մասերում, շատերը չկարողացան ներս մտնել և գործողությանը հետևեցին Կոռիենտես պողոտայում տեղակայված բարձրախոսների օգնությամբ: Ինչպես տաճարի, այնպես էլ թատրոնի մուտքերի մոտ բաժանվեցին իմ հիմնական ճառի 5000 կրկնօրինակները, որ ես ընթերցեցի այս կենտրոնական ձեռնարկի ժամանակ: Հայերեն խոսք ասացին համայնքի չորս ներկայացուցիչներ: Դոկտոր Կառլոս Սանչես Վիամոնտեն՝ ՄԱԿ-ի Մարդու իրավունքի հանձնախմբի արգենտինյան ներկայացուցիչը, ներկայացրեց իր զորակցության ուղերձը: Իր ցնցող ճառով նա պահանջեց Հայկական հարցի արդարացի լուծում: Կազմակերպական հանձնախմբի անունից ես հանդես եկա իսպաներեն լեզվով պատմական մի ճառով, վավերական տեղեկություններով և հետ յալ եզրափակիչ խոսքերով. - «Հայ ժողովուրդը խաղաղասեր է. չի ուզում հրահրել ատելություն, քինախնդրություն, ոչ էլ վրեժ խնդրություն, միայն բուռն կերպով ցանկանում է թուրքերի կող մից բռնագրավված իր հողերի վերադարձը, որպեսզի կարո ղանա բարձրացնել իր աղոթքները Ամենակալին՝ իր ավերված եկեղեցիների խորաններից, վառել իր մարած օջախների սուրբ կրակը և հավաքի իր ոչնչացված ծնողների և մյուս հարա զատների մասունքները՝ ազգային մեծ պա նքեռնում նրանց քրիստոնեական թաղում կատարելու համար: Հայ ժողովուրդը միայն ցանկանում է նորից մշակել իր հողերը, որոնք խնամքով պահպանում են իրենց նախ նիների աճյունները և, որոնք ողողված են նահատակների արյունով: Այսօր ազգային այդ անա սելի ողբերգության 50-րդ տարելիցն ենք նշում խորին հուզմունքով:

Հայ ժողովուրդը ցանկանում է վերակառուցել իր ազգա-

Թափորը Սան Մարտին հրապարակում՝ Գեորգ Մարաֆյանի (Արգենտինայի հայկական համազգային տոնակատարությունների կենտրոնական կազմակերպության հանձնախմբի ատենապետ) և Արմեն Բելգամալի (հայ եկեղեցու հոգաբարձության ատենապետ) գլխավորությամբ շարժվում է դեպի գեներալ Սան Մարտինի հուշարձան ծաղկեպսակ գետեղելու համար (1965 թ.)։

յին օջախը, որ եղել է իր բնօրրանը հազարամյակների ընթացքում: Մարդկային արժանապատվության զգացումով, հարգենք անհատական ազատությունը և եղբայրական համընդհանուր կյանքի իմաստը, որ հատկանշում է այն մթնոլորտը, ուր գործում են քաղաքակիրթ ազգերը: Այսպես կլինի արդարությունը»:

Պատմական մի հայտարարություն ևս արեցի, նշելով, որ 50-րդ տարելիցից սկսած՝ ապրիլի 24-ը չպետք է հիշվի որպես ազգային Սգի օր, այլ միայն իբրև արդարության, պահանջատիրության օր՝ Ցեղասպանության ճանաչման համար, հոգևոր և նյութական հատուցում, բռնագրաված տարածքների վերադարձ: Հասարակությունը մի մարդու պես ոտքի կանգնեց և ի նշան բուռն հավանության՝ եռանդագին ծափահարեց: Մոնսենյոր Բաբկեն Աբաղյանի վերջին խոսքերով և օրհնությամբ հանդիսությունն ավարտվեց:

Կիրակի օրը, ապրիլի 25-ին, մայրաքաղաքի տաճարը դարձել էր բոլոր հայերի ուխտավայրը: Կաթոլիկ Մայր եկեղեցու լուսարարի ասածի պես, երբեք այսքան շատ ժողովուրդ չէր եղել մինչ այդ: Ժողովուրդը ոչ միայն լցրեց տաճարը, այլ նաև Պլասա Դե Մաժո (Մայիսյան հրապարակ) և նրա հարակից մասերը, որտեղ տեղադրված էր բարձրախոսների մի ցանց, որպեսզի հասարակությունը հետևեր պատարագին, որը մատուցեց հայր Ներսես Կարաբաշյանը՝ «Արաքս» երգչախմբի հետ միասին: Ներկա էին ազգային հեղինակություններ, զանազան հաստատությունների, համայնքների և բոլոր դավանանքների ներկայացուցիչներ: Մեզ ուղեկցում էին Արգենտինայի կաթոլիկ եկեղեցու բարձրաստիճան պաշտոնատար անձինք:

Ծրագրել էինք պատարագից հետո խմբով ժամանել Սան Մարտին հրապարակ՝ հարգանք մատուցելու հայրենիքի Հորը: Կազմվել էին շարքեր, որոնց գլխավորում էին երեք դավանանքների և մեր հաստատությունների ղեկավարները՝ առջևում մի մեծ պսակ: Մեծ և լուռ երթ սկսվեց, որտեղ տարեց մարդիկ, մեծ աղետը վերապրողները, երիտասարդների և դպրոցականների հետ միասին, քայլում էին կողք-կողքի: Մեծահասակներից շատերը լալիս էին, որովհետև հիշում էին

Հարություն Սարաֆյանը Եդեսիայի հայ հայրենակցական միության անունից հարգանք է մատուցում այդ քաղաքի դիմաղրության հերոսներին՝ 50-ամյակի տարեդարձի կապակցությամբ. ցեղասպանության զոհերի հուշարձանի դիմաց: Ներկաները սրբազանի դիմաց ակնածանքով հեռևում են կրոնական արարողությանը (29 սեպտեմբերի. 1965 թ.):

աքսորի մռայլ քարավանները: Այս երկար երթը տաճարից մինչև Սան Մարտին՝ շատ հուզիչ էր: Հիշում եմ ֆեդերալ ոստիկանության շնորհակալ աշխատանքը. նա ողջ հրա պարակում փակեց երթևեկությունը՝ ապահովելով ճանապարհը, որտեղով անցնում էր ավելի քան 15.000 մարդուց բաղկացած մեր բազմությունը: Հանդարտ հասանք Սան Մարտին հրապարակ, որտեղ ցորենի հասկերի պես հավաքվել էր հարգանք մատուցելու եկած բազմությունը: Երկինքը նույնպես լալիս էր մեզ հետ, քանի որ այդ պահին մեղմ, մանրակաթիլ անձրև էր գալիս:

Ինձ, որպես կազմակերպական հանձնախմբի ատենապետ, պատիվ արվեց, որպեսզի ծաղկեպսակ դնեմ Արմեն Բերգամալիի հետ միասին, ի նշան շնորհակալության, որ սատարեցին մեր ազգին և խնդրում էինք, որ այդ երկիրը՝ մեծահոգի Արգենտինան, մեզ օգնի վերադառնալ մեր բռնագրավված տարածքները: Համայնքի անունից ելույթ ունեցավ դոկտոր Ադոլֆո Աջապահյանը: Ավարտելով այսքան հանդիսավոր և տպավորիչ արարողությունը՝ նվիրված եղեռնի 50-ամյա տարելիցին, հասարակությունը հեռացավ խաղաղված և հոգեկան խորին բավարարվածությամբ:

1965 թ. ցեղասպանության 50-րդ տարելիցին իրականացրեցինք նաև այլ կարևոր միջոցառումներ: Դրանցից էր հայ ազատագրական պայքարի ամենամեծ հերոսի՝ գեներալ Անդրանիկի ծննդյան 100-ամյակը: Այս հոբելյանին հա մազգային տոնախմբությունների հանձնախուբը Հայ Կենտրոնի դահլիճում կազմակերպեց մի հանդիսություն՝ հայրենասիրա կան երգերի հարուստ ծրագրով, ասմունքով: Զորավարի ոգին էր թևածում այստեղ, նաև մի տպավորիչ, կենդանի նկարով: Որպես ատենապետի՝ ինձ խնդրեցին ստանձնել գեներալի առասպելական կյանքի մասին կենտրոնական ճառախոսի պարտականությունը: Դրա համար ուսումնասիրեցի ժամանակաշրջանի թերթերը և Անդրանիկին նվիրված գրքերը: Ինձ հաջողվեց պատրաստել մի ընդարձակ վավերագրական զեկուցում, որտեղ վեր հանեցի մեծ հայրենասերի թանկագին անհատականությունը և նրա անօրինակ սխրանքները Հայաստանի ազատագրման նվիրական գործում: Եդեսիայի (Ուրֆա) հայ հայրե-

նակցական միությունն այդ տարի նույնպես հրավիրեց Բուենոս Այրեսում բնակվող իր բոլոր անդամներին՝ նշելու հիս նամյակը նրա հերոսական պայքարի՝ ընդդեմ թուրքական խու ժանի և կառավարական բանակի: Այս նվիրական տարեդարձը նշեցինք 1965 թ. սեպտեմբերի 29-ին, կիրակի օրը, Սուրբ Գրիգոր Լուսավորիչ եկեղեցում:

Հոգեհանգստի պատարագից հետո կատարվեց հասարակական հարգանքի տուրքի արարողություն ցեղա սպանության զոհերի հուշարձանի առջև, որտեղ խոսեց Եդեսիայի (Ուրֆա) նոր սերնդի ներկայացուցիչ, իմ ավագ որդի Հարությունը: Նա փառաբանեց հայերի հերոսությունը, նրանց դիմադրությունը, որոնք բարիկադներ բարձրացրած հերոսաբար պայքարեցին թուրքական հարձակումների դեմ:

Այդ նրանք էին, որ նախընտրեցին ընկնել խիզախորեն՝ պայքարելով իրենց խրամատներում, մերժելով աքսորն ու հողը լքելը: Նա կոչ արեց այդ հերոսների հետևորդներին և հայ համայնքին, չմոռանալ հայրենասիրական ոգու զորեղության այդ օրինակը: Նա շնորհակալություն հայտնեց Արգեն տինային, մի «երկրի, որ ապաստան տվեց մեր հայրերին և որն այսօր մեր երեխաների հայրենիքն է»:

Հոկտեմբեր. հայկական մշակույթի ամիս

Երկրորդ աշխատանքը, որ կատարվում է բոլոր տարիներին, հայկական մշակույթի ամսի տոնահանդեսն է, որ տեղի է ունենում հոկտեմբերին՝ համընկնելով մեր ազգային կրոնական Սուրբ Թարգմանչաց տոնի հետ: Սուրբ թարգմանիչները՝ Սուրբ Սահակ հայրապետը և հայ այբուբենը ստեղծող Սուրբ Մեսրոպն էին, ինչպես և նրանց աշակերտները, որոնք ուղարկվեցին ուսանելու դարաշրջանի մշակութային կենտրոններ՝ Աթենք, Հռոմ, Եդեսիա և Ալեքսանդրիա: Արդեն ասվեց, որ Եդեսիայում ստեղծվել և կազմավորվել էր ինչպես կարգը, այնպես էլ այբուբենի տառերի անվանումը և Եդեսիայում Հռոփանոսի՝ մեծ գեղագրի արվեստով նկարվեցին տառերը՝ այբուբենի հիմ -

նաղիր Սուրբ Մեսրոպ Մաշտոցի հսկողության տակ: Այ բուբենը ստեղծելուց հետո, Սուրբ Սահակը և Սուրբ Մեսրոպը ար քա Վռամշապուհի օգնությամբ, աշակերտներին ուղարկեցին ուսումնասիրելու ժամանակաշրջանի ողջ գիտությունը, գրականությունը և մշակույթը այս կենտրոններում: Վերադարձան Հայաստան՝ ներշնչված տարբեր քաղաքակրթությունների իմաստությամբ և սկսեցին աշխատել ու թարգմանել: Առա ջինը թարգմանեցին Սուրբ Աստվածաշունչը՝ հունական և եբ րայական տարբերակների հիման վրա, բնագրերին այնքան հարազատ, որ պատմաբաններն ու բանասերները վեր լուծեցին և ցույց տվեցին, որ Սուրբ Գրքի հայկական թարգ մանությունը պետք է համարել «թարգմանությունների թագուհի»՝ իր կատարման որակով և առանձնահատուկ արվեստով: Այս սուրբ թարգմանիչները հայացրեցին հունական, ասորական և բյուզանդական մշակույթի որոշ գործեր: Բացի դրանից, թարգ մանեցին հունական մեծ փիլիսոփաների և ասորական եկեղեցու հայրերի այլ գործեր ևս: Նմանապես հայերեն լեզվով և սեփական այբուբենով գրեցին հայոց պատ մությունը: Ամենահայտնին՝ Մովսես Խորենացու Պատմությունն է և այլ ձեռագիր մատյաններ, որոնց մեծամասնությունը հասել է մեզ: Այս թարգմանությունների միջոցով շատ կարևոր ներդրում արվեց համաշխարհային մշակույթի պատմության մեջ: Թարգ մանելով անտիկ մեծ հեղինակների աշխատությունները, հայ թարգմանիչները դրանք, փաստորեն, պահպանեցին հետագա սերունդների համար, որովհետև դրանց բնագրերը շատ դեպ քերում անհետացել էին և վերականգնվեցին շնորհիվ նրանց թարգմանությունների: Թարգմանչաց տոնի մեծ արժեքն այն է, որ 5-րդ դարից ի վեր ամուր հիմքեր ստեղծվեցին հայ մշա կույթի զարգացման համար, իր նշանակությամբ հանդիսա նալով նրա «Ոսկե դարը»:

Ի նշանավորումն հայկական մշակութային ամսի Արգենտինայում, ինչպես աշխարհի բոլոր կողմերում, մենք նույնպես կազմակերպում ենք մշակութային ձեռնարկներ. կոնֆերանսներ՝ նվիրված դարերի միջով անցնող հայոց պատ մության, դասական գրականության, հնագույն և ժամանակակից

ու հանրահայտ գործերին: Տեղի են ունենում համերգներ և կազմակերպվում գեղարվեստական ցուցահան դեսներ:

Մեր հայկական տոնակատարությունների հանձնախումբը մեծ հաջողությամբ ամեն տարի կազմակերպում էր այս ձեռնարկները՝ նոր սերնդին, հասարակությանը հայ մշակույթի ամենատարբեր դրսևորումները ճանաչել տալու համար:

1965 թ. ցեղասպանության 50-րդ տարելիցն էր և մենք ցանկանում էինք մշակույթի ամիսը ևս տոնել ավելի փայլուն կերպով: Բուենոս Այրեսի կառավարիչ պարոն Ֆրանցիսկո Ռաբանալիի սիրահոժար կամքով մեզ տրամադրեցին Կոլոն թատրոնի հարկաբաժնները՝ տոնակատարությունները գեղարվեստական մի տպավորիչ ծրագրով պսակելու համար:

Բուենոս Այրեսի ֆիլհարմոնիկ նվագախումբը տրամադրվեց հայերին: Մեր հանձնախումբը դիմեց մաեստրո Ռոդրիգես Ֆաուրեին (Ավեժանեդայի Հռոմի թատրոնի նվագախմբի տնօրեն), որպեսզի նա ղեկավարեր նվագախումբը: Մաեստրո Ֆաուրեի հանդեպ համայնքը լցված էր շնորհակալական զգացումով, քանի որ նա առաջինն էր, որ բերել էր Արամ Խաչատրյանի գործերը և ղեկավարելու էր դրանց կատարումը: Մաեստրոյի օգնությամբ պատրաստվեց մի հագեցած ծրագիր՝ բաղկացած հայ մեծ կոմպոզիտորներ Արամ Խաչատրյանի, Ալեքսանդր Հարությունյանի, Էդգար Հովհաննիսյանի և Էդվարդ Միրզոյանի (Հայաստանի կոմպոզիտորների միության նախագահ) ստեղծագործություններից: Ներկայացավ նաև «Արաքս» երգչախումբը՝ Ժան Ալմուհյանի գլխավորությամբ, որը մեծ վարպետությամբ կատարեց հայ հայրենասիրական և ժողովրդական երգերի մի ծաղկաքաղ: Հասարակությունը, որ լցրել էր Կոլոն թատրոնի հոյակապ դահլիճը, ծափահարում էր ոգևորությամբ՝ առաջին անգամ լսելով մեր տաղանդավոր կոմպոզիտորների գործերը, որը կատարում էր մեր գլխավոր թատրոնի նվագախումբը:

Ընդմիջման ժամանակ բեմ դուրս եկա և խնդրեցի հանդիսատեսին ոտքի կանգնել և լռության մեկ րոպեով հարգել Արգենտինայի օդային ուժերի մի օդանավի կրած վթարի զոհերի հիշատակը:

Լատինական Ամերիկայի Հայ Դատի կենտրոնական հանձնախումբը

1964 թվականին, ցեղասպանության 50-րդ տարելիցից մեկ տարի առաջ, ինչպես մեր համայնքում, այնպես էլ ողջ աշխարհում, հայկական պահանջատիրությունը կազմակերպելու գործը անհրաժեշտ էր դարձնում միավորել բոլորիս ջանքերը՝ համաշխարհային մի ցույց կազմակերպելու, մեծ տերությունների ուշադրությունը գրավելու և Հայ Դատի արդար լուծումը գտնելու համար: Այդ մտադրությամբ հանդի պեցի մեր համայնքի տարբեր կազմակերպությունների զանազան ներկայացուցիչների հետ, որովհետև այդ աշխատանքի համար անհրաժեշտ էր բոլոր՝ ինչպես կրոնական, այնպես էլ՝ հասարակական շրջանակների մասնակցությունը: Այս գործի համար համապատասխան մարդկանց հրավիրեցի խորհրդակցական համաժողովի: Բոլոր մասնակիցները համաձայնվեցին մեր մտահղացման հետ: Որոշվեց ստեղծել Լատինական Ամերիկայի Հայ Դատի կենտրոնական հանձնախումբ: Մեզ ոգևորում էր այն, որ Հայկական հարցը բարձրացվել էր դեռևս 19-րդ դարում՝ Խրիմյան Հայրիկի, Ներսես Վարժապետյանի, Մինաս Չերազի և այլ հայրենասերների կողմից: Առաջին համաշխարհային պատերազմի շրջանում Ավետիս Ահարոնյանի և Պողոս Նուբար Փաշայի պատվիրակությունների գործունեության մասին, Հայկական հարցի վերաբերյալ, ի դեպ, մատենա գիտական մի ընդարձակ նյութ էր ուղարկել ինձ Արշակ Չոպանյանը:

Այս հանձնախումբի գաղափարը լայն ընդունելություն գտավ և բարերար ազդեցություն ունեցավ: Բոլորը համաձայն էին հայրենանվեր աշխատել՝ ի պաշտպանություն Հայ կական հարցի, սակայն մի պայմանով, որ ինձ վրա վերցնեի հանձնախմբի ղեկավարումը: Առարկեցի, որպեսզի մեկ այլ անդամ ստանձներ այդ պարտականությունը, պատճառաբանելով, որ շատ եմ զբաղված համայնքի տարբեր կարևոր հաստատությունների աշխատանքներում, բայց՝ ապարդյուն: Հանձնախմբի բոլոր անդամների համառությանը ստիպված էի զիջել և տվեցի իմ համաձայնությունը: Ստանձնեցի նախագա հությու-

նը՝ միավորելով մեր համայնքի ամենակարևոր ստորաբաժանումներին պատկանող իմ ընկերներին և սկսեցինք աշխատել: Կապվեցինք Չիլիի, Ուրուգվայի և Բրազիլիայի հայերի հետ, որտեղ լավ ընդունվեց մեր մտահղացումը և կազմվեցին տեղական հանձնախմբեր, որոնք մշտական կապի մեջ էին մեզ հետ: Բոլոր համայնքներն ուղարկեցինք մեր ներկայացուցչին՝ ի դեմս պրոֆեսոր Հովհաննես Դևեջյանի, որպեսզի հասարակական հավաքույթների և կոնֆերանսների միջոցով բացատրի այն նպատակները, որոնք ոգևորում էին մեզ բոլորիս: Բուենոս Այրեսում ծավալեցինք ինտենսիվ գործունեություն՝ հասարակական կարծիք ստեղծելու համար: Մեր հանձնախումբը հրատարակեց իսպաներեն մի գիրք՝ «Հայկական հարցը» վերնագրով, հայ ժողովրդի պահանջատիրության մի պատմական ամփոփումով, 5000 տպաքանակով, որ բաժանվեց արգենտինյան կառավարության ղեկավար մարմիններին, արտասահմանյան դիվանագիտական կորպուսին և քաղաքական կարևորագույն դեմքերին: Կապի մեջ մտանք ուրիշ նման կազմակերպությունների հետ, որոնք ստեղծվել էին ավելի վաղ՝ ինչպես Եվրոպայում, այնպես էլ Միացյալ Նահանգներում: Նրանց մեջ, հատկապես, առանձնանում էր պրոֆեսոր Մանասե Սնակը, որն այդ նպատակով հայկական պատմական ուսումնասիրությունների մի հաստատություն էր կազմակերպել: Նա ինձ ուղարկեց մի փաստաթուղթ՝ մտքեր արտահայտելով Հայկական հարցը միջազգայնորեն վեր բարձրացնելու մասին, ինչպես և Հալեպ քաղաքի օսմանյան պետական պաշտոնյա Նայիմ բեյի հուշերի անգլերեն տարբերակը, որ թուրքական պաշտոնական փաստաթղթեր էր պարունակում Հայոց ցեղասպանության մասին: Այս գիրքը, որ հայերեն էր հրատարակել գրող Արամ Անտոնյանը, պարունակում էր հույժ կարևոր տվյալներ և ապացույցներ ցեղասպանության մասին, Թուրքիայի ներքին գործերի նախարար Թալեաթի կողմից ուղարկած հեռագրերի լուսապատճենները, որոնք վկայում են Օսմանյան կայսրության տակ եղած ողջ հայ բնակչության բնաջնջելու մասին հրամանները: Այս կարևոր գործի թարգմանությունը հրատարակվեց մեր հանձնախմբի կողմից, իսպաներեն լեզվով, նույնպես 5000

օրինակ տպաքանակով և տարածվեց ողջ Լատինական Ամերիկայում: Այս կերպ գործելով՝ Մեծ եղեռնի 50-րդ տարելիցին նվիրված միջոցառումները հագեցրինք ավելի խոր բովանդակությամբ:

Մեծ գոհունակությամբ տեղեկացանք նույնպես, որ այս աղետալի իրադարձության 50-ամյա տարեդարձը նշելու համար Երևանում կազմակերպվել էր հասարակության մի մեծ ցույց՝ ժողովրդի ամենալայն խավերի մասնակցությամբ, որն առաջին խոշոր ժողովրդական շարժումն էր Խորհրդային Միության մեջ: Ցուցարարները տեղական իշխանություններից և ԽՍՀՄ-ից պահանջում էին պաշտոնապես դատապարտել Հայոց ցեղասպանությունը և այն հասցնել միջազգային ճանաչման՝ հայ ժողովրդի պատմական իրավունքները պաշտպանելու համար: Այդ պահանջները հանրապետության իշխանություններին ներկայացնելու նպատակով ցուցարարների մի մեծ խումբ «Մեր հողերը»՝ միահամուռ վանկարկելով փորձել էր մտնել Ալ. Սպենդիարյանի անվան Օպերայի և բալետի շենքը, որտեղ առաջին անգամ կառավարական մակարդակով նշվում էր մեծ ողբերգության 50-րդ տարելիցը:

Մշակութային հարաբերությունները Մայր Հայրենիքի հետ

Սփյուռքի հարաբերությունները Մայր Հայրենիքի հետ շատ սահմանափակ էին. Հայաստանի վարչակազմը պարտադրում էր այդ հարաբերությունների մի սեղմ շրջանակ և ոչ ավելին: Հայաստանը՝ մաս կազմելով Խորհրդային Միության, մնաց ազատ, սակայն ոչ անկախ: Երկրորդ աշխարհամարտից հետո ԽՍՀՄ-ը այս կամ այն չափով բացեց իր դռները արևմտյան աշխարհի առջև, հայրենակիցները հնարավորություն ունեցան աշխուժացնել մշակութային հարաբերությունները Մայր Հայրենիքի հետ:

Սկսեցվեցին մշակույթի, գիտության և մարզաշխարհի մարդկանց հաճելի այցելությունները հայրենիքից: Հաճա խա-

Բուենոս Այրեսի հայ երիտասարդական կազմակերպությունների կողմից մատուցած հյուրասիրությունների ժամանակ: Գևորգ Սարաֆյանը բարի գալուստ է մաղթում զրուսմայստեր, աշխարհի չեմպիոն Տիգրան Պետրոսյանին՝ Հայ Կենտրոն դահլիճում: Հետևում, ձախից աջ՝ «Հայկական ձայն», «Հանդիպում Հայրենիքի հետ» և «Երիտասարդության ձայն» ռադիոհաղորդումների անօրենները Նուբար Լոմլոմջյանը, Խուան Մենաշյանը, և Գևորգ Կարամանուկյանը (օգոստոս, 1964 թ.):

կի դարձան թատերական, պարային խմբերի, երաժշտական համույթների այցելույթները: Կարծեմ առաջին անձնա վորությունը, որ եկավ Արգենտինա, **Տիգրան Պետրոսյանն** էր, որ հետագայում դարձավ շախմատի աշխարհի չեմպիոն:

Հարկավոր էր տեսնել մարդկանց խանդավառությունը. Հայ Կենտրոնի դահլիճը լեփ-լեցուն էր, մինչև բակը՝ լցված բազմությամբ, որ եկել էր մեծարելու առաջին կոունկին, որը լուրեր էր բերել հեռավոր Հայրենիքից: Ոգևորությունն այնքան մեծ էր, որ մարդիկ նրան տարան իրենց ուսերին. ոմանք, նույնիսկ, պատառիկների վերածեցին նրա փողկապը և բաժա նեցին իրար՝ որպես հիշատակ: Պետրոսյանը խոսեց հուզված՝ ներկաներին փոխանցելով ջերմ ողջույններ Հայաստանի մեր եղբայրներից, որն ընդունվեց մեծ խանդավառությամբ:

Երկրորդ անգամ Պետրոսյանն անհատապես հրա վիրվեց Արգենտինայի շախմատի ֆեդերացիայի կողմից՝ 1964 թվականին: Համազգային տոնակատարությունների կենտրոնական հանձնախումբը ստեղծել էր երիտա սարդական մասնաճյուղ՝ կազմված զանազան բաժանմունքների պատ վիրակներից: Հրավիրեցի նրանց բոլորին, որպեսզի ինձ ուղեկ ցեն Էսեյսա օդակայան՝ աշխարհի չեմպիոնին դիմավո րելու համար: Օդանավից նրա իջնելուն պես, բուռն ծափահա րությունների ներքո, ջերմորեն ողջունեցի նրա գալուստը՝ Ար գենտինայի հայ համայնքի անունից: Պատասխանելով իմ ող ջույնի խոսքերին և պաշտոնական ներկայացուցչությանը, նա ասաց. «Պարոնայք, ես հայ եմ և կխոսեմ հայերեն: Ցանկան ում եմ, որ պարոն Սարաֆյանը թարգմանի իմ խոսքերը»: Նա շնոր հակալություն հայտնեց Արգենտինայի շախմատի ֆեդե ռացիային, որը հրավիրել էր հայ երիտասարդներին՝ չեմ պիոնին դիմավորելու համար: Պետրոսյանին հյուրանոց տարանք իմ ավտո մեքենայով, նա ինձ խնդրեց, որ ա յդ երեկո պաշտոնական ընդունելության ժամանակ ներկա լինեմ՝ թարգմանելու համար, քանի որ հայերեն էր խոսելու:

Պետրոսյանի երրորդ այցելությունը մեր երկիր եղավ Բոբբի Ֆիշերի հետ՝ շախմատի աշխարհի առաջնությանը մասնակցելու համար: Հավուր պատշաճի մի հավա քույթի ժա-

Միջազգային հայտնի մեցոսոպրանո Զարուհի Դոլուխանյանը արքեպիսկոպոսարանի դահլիճում տրված հյուրասիրության ժամանակ: Կանգնած, ձախից աջ. Արսեն Մելիքյան, Գևորգ Մարկոսյան, Լևոն Վարդապետյան, Միհրան Օշին, Զարուհի Դոլուխանյան, Թոռնիկ Շիրակյան, Գևորգ Սարաֆյան, Ադոլֆո Աչարահյան, Աբրահամ Էոլմեսեկյան և Եփրատ Բայրամյան: Նստած՝ վարդապետ Հարություն Մուշյան: (Սեպտեմբեր, 1956 թ.):

մանակ, որտեղ ներկա էին նախարար Մանրիկեն և պաշտոնական այլ անձինք, Տիգրան Պետրոսյանն արգենտինյան կառավարության կողմից պարգևատրվեց «Մայիսյան շքանշանով»: Ընդունելությանը հատուկ ներկա էր Հայաստանից ժամանած պլանավորման նախարար և միաժամանակ Հայաստանի շախմատի ֆեդերացիայի նախագահ Միքայել Ալահվերդյանը:

Հայ համայնքը հատուկ ընդունելություն կազմակերպեց Հայ Կենտրոնում, որին ներկա էր Արգենտինա այցելած Երուսաղեմի Հայոց պատրիարք նորին ամենապատվություն **Եղիշե արքեպիսկոպոս Տերտերյանը**: Իմ ելույթի ժամանակ ասացի, որ հպարտ ենք մեր մեջ կրկին տեսնելու Մայր Հայրենիքի սիրված զավակին, որը փառք ու պատիվ բերեց ամբողջ ազգին: Պետրոսյանը, շարունակեցի ես, շախմատի համաշխարհային թագը նվաճելու համար Հայաստանում մեծարվում է Մեծն Տիգրան տիտղոսով՝ հայոց «արքայից արքա» Տիգրան Մեծի (մ.թ.ա. 95-55 թթ.) տիտղոսի նմանությամբ:

Պատվավոր առիթ ունեցա նրան հյուրընկալելու իմ տանը, ինչպես պատվում էի բոլոր նշանավոր անձանց: Սիրով հիշում եմ համաշխարհային համբավի մեցցոսոպրան ո **Զարուհի Դոլուխանյանին**, որը տպավորիչ համերգներ տվեց Բուե նոս Այրեսի լավագույն դահլիճներում՝ 1956 թ. սեպտեմբերին: Նա այցելեց նաև մեր համայնք՝ տեսնելու հայկական դպրոց ների երեխաներին և պատանիներին: Նրանց բոլորին հավաքել էինք Հայ Կենտրոնի դահլիճ, որտեղ Զառան նրանց հետ մտերմիկ զրույց ունեցավ և ցանկություն հայտնեց երգել երեխաների համար: Նախատեսված ոչինչ չունեինք, չկար նույնիսկ դաշնամուր: «Կարևոր չէ, - ասաց նա, - ես կերգեմ առանց դաշնամուրի, առանց նվագակցության»: Բոլոր ներկա ները խորապես տպավորվեցին. առաջին անգամ էին լսում հա մաշխարհային այսքան նշանավոր մի արվեստագետի ձայնը, որ հմայեց բոլորին: Մեր հայրենակցուհին արտահայտեց իր ազգասիրական ցանկությունը՝ մի բարեգործական համերգ տալ մեր դպրոցների համար, որը և կազմակերպեցինք Հայ Կենտրոնում: Համերգի ավարտից հետո նրան պատիվներ մատուցեցինք արքեպիսկոպոսարանի դահլիճում: Ներկաների հետ

Հայ համայնքն իր սիրելի զավակի՝ մեծ կոմպոզիտոր Արամ Խաչատրյանի պատվին կազմակերպված ճաշկերույթի ժամանակ:
Աջից ձախ. Եփրատ Բայրամյան, Գեորգ Սարաֆյան, Արմեն Բերգամալի:
Նստած, աջից ձախ. Մարթա Դիարբեքիրյան, Մխիթարյան միաբանության աբբահայր արքեպիսկոպոս Ուլուհոջյան և տիկին Նինա դե Խաչատրյան, արքեպիսկոպոս Սիոն Մանուկյան և մաեստրոյի թիկունքում՝ Գրիգոր Կառավարյան (1957 թ.):

Սարաֆյան ընտանիքի զավակ Հայտարյունի գլխավորող մանկական երգչախումբը և ճաշկերույթ, որ տվեց Գեորգ Սարաֆյանն ի պատիվ Արամ Խաչատրյանի՝ Լոխանի «Վարդեր» ամառանոցում:

զրուցելիս նա երբեմն դժվարանում էր հայերեն արտահայտվել, ուստի տիկին Շահպարոնյանը հուշեց, որ երգչուհին ռուսերեն խոսի, իսկ ինքը կթարգմանի: Սակայն երգչուհին համառեց. ինքը հայ է և պետք է խոսի հայերեն, թեկուզ և որոշ կաշ կանդումներով, քանի որ երկար ժամանակ ապրում և գործում է հայ լեզվական միջավայրից դուրս՝ Մոսկվայում:

1957 թ. մեզ այցելեց աշխարհահռչակ կոմպոզիտոր և դիրիժոր **Արամ Խաչատրյանը**:

Մայր Հայրենիքից այս նշանավոր այցելուն տարբեր համերգներ տվեց տեղի հանրահայտ թատրոններում և Կոլոնում, որը կազմակերպել էր Հայկական Բարեգործական Ընդհանուր Միության երիտասարդների լիգան: Հայ Կենտրոնում պատիվ ունեցանք ընդունելություն կատարել համայնքի բոլոր ընկերությունների և երիտասարդների մասնակցությամբ: Իր բանավոր ուղերձում Խաչատրյանը խոսեց հայ մշակույթի, Հայաստանի երիտասարդ կոմոզիտորների մասին և ասաց. «Եթե նրանք ինձ չեն գերազանցելու, ապա էլ ու՞ր կմնա առաջ ընթացը»:

Այն բոլոր անձանց հետ, որ մեզ այցելում էին Մայր Հայրենիքից, պաշտոնական ընդունելություններից բացի, ստեղծվում էր զուտ մարդկային բարեկամություն և ես նրանց հյուրասիրում էի իմ օջախում: Արամ Խաչատրյանի հա մար հատուկ մի խնջույք կազմակերպեցի մեր «Վարդեր» ամառանոցում, բավականություն ունենալով հավաքել համայնքի սե ռուցքը. ավելի քան հարյուր մարդ՝ բարերարներ, դեկա վարներ և մշակույթի գործիչների, որոնք առիթ ունեցան զրու ցելու մեր մեծ մաեստրոյի հետ: Ջութակի, երգի և երաժշտա կան արտասանությունների հանպատրաստի գե ղարվեստական ներկայացումների մեջ նրա ուշադրությունը գրավեց հատկապես Սարաֆյան ընտանիքի փոքրիկ անդամներից բաղկացած երգ չախումբը, իմ որդիները, եղբորորդիները, բոլորն էլ՝ իմ սա նիկները, հավաքված մի խմբի մեջ, որը կոչվում էր «Երևան»: Երեխաներն այդ օրը ներկայացան միանման հագնված՝ ձեռքերին նոտայի փոքրիկ տետրակներ: Մինչ երեխաները երգում էին, մաեստրոն մոտեցավ՝ տեսնելու համար, թե, ի՞նչ էին անում

Գևորգ Մարաֆյանը ներկայացնում է պրոֆեսոր Էզրաս Հասրաթյանին, կանգնած «Կոմիտաս» երգչախմբի հետ միասին. նրա կողքին նստած՝ արքեպիսկոպոս Բարկեն Աբեղյան: «Հայ Կենտրոն» դահլիճ (17 օգոստոսի, 1959 թ.):

պարտիտուրաների հետ իմ որդիներ Անտոնիոն և Էլսան, որոնք ամենափոքրերն էին և հետևում էին երգչախմբին՝ նա յելով երաժշտական նիշերին: Շատ ուրախացավ և եկավ տեսածը մեկնաբանելու մեր սեղանին: Մի տեսակ անմոռանալի տոն եղավ բոլորիս համար:

Երբ հավաքույթն ավարտվեց, բոլոր ներկաները միացան նրան՝ մինչև ելք ուղեկցելու համար, կազմելով հան պատրաստից մի երգչախումբ և երգելով «Գարուն Երևան, սիրուն Երևանը»՝ մեր հյուրի ամենատարածված երգերից մեկը: Եվ ամենակարևորը, որ նա սկսեց ղեկավարել, կարծես իր սե փական երգչախումբը լիներ: Այս ոգևորությամբ հռչակավոր հյուրը մեզ հրաժեշտ տվեց և ես պատիվ ունեցա իմ ավտոմեքենայով նրան հասցնել հյուրանոց:

Հայ անվանի նեյրոֆիզիոլոգ և Մոսկվայի Պավլովի ինստիտուտի տնօրեն դոկտոր **Էդրաս Հասրաթյանը** Արգենտինա ժամանեց 1959 թ. օգոստոսին՝ ղեկավարելով խորհրդային պատվիրակությունը, որը մասնակցելու էր միջազգային մի գիտաժողովի: Մի ազատ պահի նրան կարողացանք հրավիրել Հայ Կենտրոն, որտեղ ընդունվեց առաջին հերթին ար գենտինա-հայկական համալսարանական ընկերության ղեկավար կազմի, իսկ հետո՝ հասարակության կողմից: Մասնավոր մի զրույցի ժամանակ Հասրաթյանն ինձ ասել էր, որ իրեն դուր է գալիս «Նուբար, Նուբար» երգը: Այդ օրվա համար հրավիրեցինք «Կոմիտաս» երգչախումբը՝ մեծարման ժամանակ կատարելու նաև նրա նախընտրած երգը: Բեմի վրա, երգչախմբի հետ միասին, մեր բոլորի կողմից սիրված հյուրի կողքին տեղ զբաղեցրին արքեպիսկոպոս Սիոն Մանուկյանը և տիկին Այմե Շահպարոնյանը: Անվանի հյուրին մեր համայնքի անունից ներկայացնելը եղավ իմ հաճելի պարտականությունը: Այդ առթիվ ուսումնասիրեցի նրա հարուստ կենսագրությունը՝ իմ գրադարանի «Բարեկամություն» վերնագրով մի գրքից, որում հիշատակվում էին Հայաստանի այդ ժամանակվա բոլոր նշանավոր մարդիկ, բնութագրված իրենց օտար գործընկերների կողմից: Շատ հուզիչ էր տեսնել այն նմանությունը, որ ուներ նրա կյանքն իմ սեփականի հետ, որն անց էի կացրել ցեղասպա-

Հայ մեծ գիտնական Էդգար Հասրաթյանի հանդիպումը համայնքի ներկայացուցիչների հետ:
Կանգնած, ձախից աջ. Էդուարդ Ջեռնազյան, Խուան Գալուստյան, Սահակ Բայսեղյան, Հովհաննես Դևեջյան, Աշոտ Արծրունի, Գեորգ Սարաֆյան, Ավետիս Օհանյան, Դիանա Չալուկյան, Սիլվա Բալաբանյան, Անթաստամ Ահարոնյան, Վիկտորյա Սևան և Արմեն Բերգամալի:
Երկրորդ շարք. նստած. տիկին Հյուսյան, Ֆեդերիկո Ռամոս Մենիա, Սիմե Շահպարոնյան, դե Ռամոս Մենիա, պրոֆեսոր Էդգար Հասրաթյան, Բարկեն արքեպիսկոպոս Արաղյան, Հարությունվարդապետ Մուշյան և Այմե դե Բերգամալի:
Երրորդ շարք, ձախից աջ. Ալիսա Թերզյան, Մանուշակ Մեսրոպյան, Ժան Ալմուհյան, Արամ Դեյրմենջյան և Վարդգես Կուլահյան:

նության ժամանակաշրջանում: Դրա համար հենց սկզբից հատուկ համակրանք ունեցա Հասրաթյանի նկատմամբ:

Երկու բառով ներկայացնեմ նրան. ծնվել էր Թիֆլիսի մոտակայքում՝ Խլաթի գավառում, երբ, 1915 թ. սկսեցին ջարդերը և աքսորները, սպանեցին նրա հորը և անվանի բազմաթիվ մարդկանց՝ երեխային փրկելու համար մայրը նրան հագցրեց կանացի շորեր և այսպես, մի կերպ, կարողացան փախչել սարերը: Այդ ժամանակ նա հազիվ 12 տարեկան էր: Ապա ճա նապարհները նրանց տարան Արևելյան Հայաստան, որը գտնվում էր ռուսական ցարի տիրապետության տակ, և այնտեղ՝ Երևանում, սկսեց սովորել: Բայց ինչպե՞ս: Շատ կարևոր է դա ներկայացնել, որպեսզի օրինակ ծառայի երիտասարդներին: Նույնիսկ դրամ չունեին լամպի նավթ գնելու համար և գի շերները սովորում էր փողոցի լապտերների լույսի տակ: Սովորում էր և, որպես ուսուցիչ, յուրացրածը ուսուցանում երեխաներին՝ գոնե իր սննդի կարիքները հոգալու համար: Հետո մահացավ մայրը: Սովորելու իր ընդունակությամբ ու խելքով, բարե բախտաբար, գրավեց ղեկավարների ուշադրությունը, որոնք էլ նրան օգնեցին ավարտելու ուսումը: Միջոց գտավ գնալու Մոսկվա՝ Պավլովի ինստիտուտ, կատարելագործվելու նպատակով: Այստեղ դրսևորած իր տաղանդի շնորհիվ գրավեց նրա տնօրենի ուշադրությունը, կարողացավ հաղորդակցվել նրա հետ և համակրանքը նվաճել:

Այնքան խորացավ իր գիտելիքների մեջ, որ ժամանակի ընթացքում աշխատելով խորհրդային ֆիզիոլոգիայի կրթական ու գիտական կենտրոններում, հասավ մինչև բարձրագույն նյարդային գործունեության և նյարդային ֆիզիոլոգիայի ինստիտուտի տնօրենի պաշտոնին՝ Մոսկվայում, 1960 թվին, փոխարինելով աշխարհահռչակ Պավլովին:

Նրա կյանքի պատմությունն այնքան սրտառուչ էր, որ շատերը չկարողացան զսպել իրենց արցունքները: Լալիս էր և նա, և ես՝ նույնպես: Ահա այսպես տպավորիչ եղավ այդքան տառապած, այդքան տանջված այս մարդու այցելությունը մեզ, մի մարդու, որ դարձավ միջազգային մակարդակի հանրահայտ դեմք: Տարիների ընթացքում բարեկամական հարաբե-

Արսլանյան վարժարանի շրջանավարտների դիպլոմների հանձնման արարողության ժամանակ, Արտաստահմանյան երկրների հետ մշակութային կապերի հայկական ընկերությանն նախագահ Բերսաբե Գրիգորյանի ներկայությամբ, որին ուղեկցում են Գևորգ Սարաֆյանը (կրթական հանձնախմբի նախագահ) և արքեպիսկոպոս Ավաղյանը.: Կանգնած. դպրոցի տնօրեն, հայր Հարություն վարդապետ Մուշյանը բարի գալուստ. մսալթելիս, 1959 թ.:

ռություններ պահպանեցինք՝ նամակագրական կապի մի ջոցով: 1978 թ. մի գիրք գրեց իր ղեկավար Պավլովի մասին («Ի. Վ. Պավլով» վերնագրով, Երևան) հայերեն, որն ինձ ուղարկեց իր ընծայագրով:

Մշակութային հարաբերությունները Լատինական Ամերիկայի հայերի հետ խորացնելու առաջարկությամբ, 1959 թվականի նոյեմբերին մեզ մոտ եկավ Արտասահմանյան երկրների հետ մշակութային կապերի հայկական ընկերության (ԱՕԿՍ) նախագահ Բերսաբե Գրիգորյանը:

Կիրակի օրը, նոյեմբերի 29-ին, Գրիգորյանը ներկա գտնվեց Սուրբ Գրիգոր Լուսավորիչ եկեղեցում սուրբ պատարագի ժամերգությանը: Վերջում նա ընդունվեց հայ եկեղեցու հոգաբարձության առաջնորդների կողմից արքեպիսկոպոսարանի դահլիճներում, որտեղ ի պատիվ նրա, ընդունելություն տրվեց: Սրբազան Բաբկեն Աբաղյանի հայտնած բարի գալստյան խոսքերց հետո խոսեցի ես, որպես փոխատեղապետ. «Սփյուռքի բոլոր հայերն իրենց սրտի խորքերում կապված են Մայր Հայրենիքի հետ: Բոլորը երազում են մի օր վերադառնալ Հայաստան և մասնակցել նրա հզորացման գործին: Ծանր կլիներ, եթե մեր նահատակների զոհվելը իզուր լիներ. նրանք զոհաբերեցին իրենց կյանքը հանուն հայրենիքի ազատության: Պատմական Հայաստանի մի կարևոր մասը, որտեղից մենք ենք սերվել, դեռ զավթիչ թշնամու տիրապետության տակ է: Մենք նոր պատերազմներ չենք ուզում, բայց համոզված ենք, որ մեր հայրենիքը խաղաղ միջոցներով կկարողանա այնքան ընդարձակել իր սահմանները, որպեսզի կարողանանք վերադառնալ մեր եղբայրների արյամբ ողողված հողերը» - ասացի ես: Ավարտեցի խոսքս՝ խնդրելով Գրիգորյանին, որպես մեր ներկայացուցիչ, հաղորդել այս բուռն ցանկությունները Հայաստանի իշխանություններին:

Տիկին Բերսաբեն իր գոհունակությունն արտահայտեց ջերմ ընդունելության համար: Հաջորդ օրը նա մասնակցեց Արսլանյան վարժարանի դասընթացի ավարտական միջոցառմանը և իր մեծ գոհունակությունը հայտնեց՝ տեսնելով, որ Սփյուռքում իր հայրենակիցները ջանք են թափում՝ պահպանե-

Հայաստանի Արտաքին գործերի նախարարը՝ շրջապատված հայազգի բիզնեսմեններով, արդյունաբերական ցուցահանդեսի հայկական ընդարձակ տաղավարում: Ձախից աջ. Վահրամ Ղայաթ, Իսկուհի Գուլահյան, Եփրատ Բայրամյան, Տիգրան Մուրեքյան, պարոն նախարարը, Ռուբեն Քեշիշյան, Հունանյան, Խոսե Յուսեֆյան, Գևորգ և Պողոս Մարաֆյաններ և Գևորգ Քեշիշյան:

Հայաստանի Արտաքին գործերի նախարար Ջոն Կիրակոսյանը Միավորված ազգերի Կազմակերպության 33-րդ գլխավոր ասամբլեայում, Նյու Յորք, 1978 թ.:

լու համար իրենց դպրոցները, կանգուն պահելու հայկական մշակույթի հավերժական ջահը:

1964 թ. Արտասահմանյան երկրների հետ մշակութային կապերի հայկական ընկերության ստեղծմամբ մեր համայնքների կյանքը դարձավ ավելի բովանդակալից: Ավելի հաճախակի դարձան դերասանների, կոմպոզիտորների, դասական և ժողովրդական երգեր կատարողների, գրողների, բանաստեղծների և այլ արվեստագետների այցելությունները: Մեզ մոտ հյուրընկալվեցին Վահագն Դավթյանը, Վարդգես Պետրոսյանը, Սիլվա Կապուտիկյանը, Դավիթ Հովհաննեսը և ուրիշներ, ինչպես նաև ակադեմիկոս Գևորգ Բրուտյանը: Բոլորի հետ երկար զրույցներ ունեցա Մայր Հայրենիքի վերածնված մշակույթի մասին: Նրանք տեսան համայնքային կյանքի կազմակերպման ասպարեզում իմ գործունեության արգասիքները և բացի դրանից՝ գրքեր, որտեղ զետեղված էին հայրենի գրողների գործերի թարգմանությունները:

1976 թ. հոկտեմբերին կազմակերպվել էր ԽՍՀՄ արդյունաբերական ապրանքների մի խոշոր ցուցահանդես, որտեղ Հայաստանն ուներ արտոնյալ մի տեղ՝ զբաղեցնելով մի մեծ տաղավար, ուր ցուցադրված էին արդյունաբերական զանազան ապրանքներ՝ մետաղագործության, բյուրեղապակու արտադրության, հանքաքարերի և հղկված քարերի (նրբագեղ, ինչպես այցետոմս), սինթետիկ կաուչուկի, տեքստիլ և շինարարական բնագավառների արտադրանքներ և սարքավորումներ: Այցելուները զարմացած էին՝ տեսնելով Հայաստանի արդյունաբերության առաջընթացը:

Այդ իրադարձությունն այնքան կարևոր էր, որ նրա բացման համար հատուկ Արգենտինա էր եկել **Ջոն Կիրակոսյանը**, որին ճանաչում էի իր գործունեությունից, Հայաստանի հետ կապված միջազգային հարաբերությունների վերջին իրադարձություններին վերաբերող իր պատմական ուսումնասիրություններից: Միասին դիմավորեցինք անվանի հյուրին Էսեյսա միջազգային օդակայանում: Առաջին պահից մեր միջև ստեղծվեցին մտերմիկ և սիրալիր փոխհարաբերություններ, որոնք շարունակվեցին մինչև նրա տունդարձը:

Հայ նշանավոր գլուխ Վահագն Դավթյանը և Բարեգործական Ընդհանուր Միության անդամները: Ձախից աջ, նստած. Գևորգ Սարաֆյան, բանաստեղծը, Կարպիս Մալխասյան: Կանգնած, ձախից աջ. Խոսե Յուսեֆյան և Վահրամ Հայրապետյան (26 նոյեմբերի, 1978 թ.):

Հայաստանի ազգագրության պետական թանգարանի տնօրեն Լավրենտի Բարսեղյանը մշակույթի նախարար Կառլոս Գորոստիսայի հետ զրուցելիս՝ կիրառական արվեստի ազգային թանգարանում հայկական ցուցահանդեսի բացման ժամանակ: Նրանց ուղեկցում է ձախից աջ. Եվրասդ Բայրամյանը, Միսակ Ենգուլյանը և Գևորգ Սարաֆյանը, (23 հոկտեմբերի, 1985թ.) :

Բախտ ունեցա իմ օջախի ջերմ մթնոլորտում նրա հետ մտքեր փոխանակել Հայկական հարցի լուծման հնարավոր այլընտրանքների վերաբերյալ: Որքանով որ նախագահում էի համազգային տոնախմբությունների հանձնա խումբը և Լատինական Ամերիկայի Հայ Դատի կենտրոնական խորհուրդը, իրականացվող միջոցառումների վերաբերյալ ունեի կարևոր փաստաթղթեր, ինչպես նաև մատենագիտական աղբյուրներ, որ դրեցի իր տրամադրության տակ: Այդ իմաստով զանազան առաջարկներ ներկայացրեցի նրան և խնդրեցի, որ ինձ լսի, բայց չպատասխանի, քանի որ մեծ քաղաքագետները չեն խոսում, գործում են:

Մտածեցի նրան նվիրել կոկորդիլոսի կաշվից մի գեղեցիկ պայուսակ, ձեռքի մի հիասքանչ աշխատանք, որ բերել էին իմ որդիներն ինձ համար, ամենևին չօգտագործված: Ասացի նրան, որ ինքն ավելի լավ կօգտագործի. «Ցանկանում եմ, որ մի օր այն լցվի Հայոց ցեղասպանության վերաբերյալ բոլոր փաստաթղթերով ու վկայություններով և, որ այս բախտորոշ ապացույցներով նա գնա ներկայացնելու Հայաստանը ՄԱԿ-ում՝ պահանջելով Հայկական հարցի լուծումը»: Կիրակոսյանը շատ շոյված զգաց իմ բառերից և, հուզված խոստացավ ամեն ինչ անել, որ այն ծառայի իր նշանակությանը: Հետո ինձ տեղեկացրեց, որ չնայած ԽՍՀՄ արտաքին քաղաքականության սահմանափակումներին, որպես Սովետական Միության արտաքին գործերի նախարարության ներկայացուցիչ ներկա էր գտնվել Միավորված ազգերի 33-րդ ասամբլեայում, որտեղ քննարկվել էր ցեղասպանության հարցը: Բազմաթիվ համոզիչ փաստարկներով նա ցույց էր տվել, որ ցեղասպանությունը տեղի է ունեցել թուրքական պետության կողմից՝ Օսմանյան տիրապետության տակ գտնվող հայ խաղաղ բնակչության նկատմամբ: Նա ինձ նվիրեց իր արժեքավոր «Երիտթուրքերը պատմության դատաստանի առաջ» աշխատությունը, «Առաջին հահամաշխարհային պատերազմը և արևմտահայերը», ինչպես նաև «Բուրժուական դիվանագիտությունը և Հայաստանը» գրքերը, որոնք նոր փուլ են բացում Հայկական հարցի պատմագրության մեջ:

Գրող Վահրամ Մավյանը (կենտրոնում)՝ Սիդնեյի հետ Հայաստանի մշակութային կապերի կոմիտեի նախագահ Վարդգես Համազասպյանի և Գևորգ Մարաֆյանի հետ (Բուենոս Այրես, հոկտեմբեր, 1981 թ.,

Հայաստանի գրողների միության նախագահ Վայրգես Պետրոսյանը Արգենտինայի գրողների միության ղեկավարներ Խուան Ջակոբո Բայարլիայի, Լեոն Բենառոսի և Գեորգ Մարաֆյանի հետ (1984 թ.):

Դժբախտաբար շատ երիտասարդ մահացավ: Լավ հիշողություն եմ պահպանել նրանից, ներառյալ իր վերջին նա մակը, որն ինձ ուղարկեց, երբ հիվանդանոցում էր՝ վիրա հատության համար: Եթե Կիրակոսյանը կենդանի լիներ, կարծում եմ, շատ արժեքավոր կլիներ նրա մասնակցությունը ազատ ու անկախ Հայաստանի կառուցման գործին: Բարեբախտաբար, ներկայումս նրա որդին, ինչպես նրա այլ հետնորդներ, շարունակում են ընթանալ հոր արահետով՝ հայկական արտաքին հարաբերություններում: Հույս ունեմ, որ երիտասարդ Կիրակոսյանը շատ հաջողություններ կունենա՝ իր հոր ավանդույթն ու գործը շարունակելու համար:

Մեզ այցելած Հայաստանի գրողներից սիրով հիշում եմ բանաստեղծ **Վահագն Դավթյանին**, կատարյալ և փայլուն կուլտուրայի տեր մի մարդու: Շատ հայրենասեր է իր գրական գործունեության մեջ: Ծնվել է 1922 թ. Արևմտյան Հայաստանի Արաբկիր քաղաքում՝ իր վրա կրելով ցեղասպանության ծանրագույն հետևանքները: Փոքր տարիքում, բախտ ունեցավ փրկվելու և գալու Արևելյան Հայաստան՝ Երևան, որտեղ կա բողացավ սովորել և դառնալ հայ գրականության ամենա նշանավոր դեմքերից մեկը, Հայաստանի գրողների միության և Սփյուռքի հետ մշակութային կապերի ընկերության անդամ: Նրա հետ հաստատել էի մտերմիկ և ջերմ հարաբերություններ, ինչպես Բուենոս Այրես իր այցելության ընթացքում՝ 1978 թ. նոյեմբերին, այնպես էլ Հայաստանում, երբ հրավի բվեցի մասնակցելու Հայաստանի գրողների միության 9-րդ հա մագումարին: Նրան ցույց տվեցի իր բանաստեղծությունները, որ ընդգրկել էի իմ կողմից թարգմանած գրքերում:

Հայաստանի հին և ժամանակակից հարուստ կիրա ռական արվեստի ցուցահանդես կազմակերպելու նպատակով 1985 թ. Բուենոս Այրես ժամանեց Հայաստանի ազգագրության պետական թանգարանի տնօրեն **պրոֆեսոր Լավրենտի Բարսեղյանը**: Ներկայումս ցեղասպանության թանգարան-ինստիտուտի տնօրենն է, որը գտնվում է Ծիծեռնակաբերդում: Լի նելով շատ գործունյա մարդ, նա հաշված օրերի ընթացքում, Հայաստանից բերված իրերի տարատեսակ ցուցանմուշներով,

Ֆրանս-հայկական երգիչ Շառլ Անզնավուրը արքեպիսկոպոս Բաբկեն Աբաղյանի և Գեորգ Սարաֆյանի հետ նրա առաջնորդարան այցելելու ժամանակ (1964 թ.):

Բանաստեղծուհի Սիլվա Կապուտիկյանը Տիգրեի ջրանցքներում՝ Արգենտինա այցելության ժամանակ, իրենից ձախ. Գեորգ Սարաֆյան (1984 թ.):

կազմակերպեց այդ ցուցահանդեսը: Պատմական այս իրադարձությունը տեղի ունեցավ Արգենտինայի կիրառական արվեստի ազգային թանգարանի դահլիճներում: Միջոցառման կազմակերպիչը երկրի մշակույթի նախարար Կարլոս Գորոստիսան էր: Ցուցահանդես այցելեցին հայ և արգենտինացի բազմաթիվ քաղաքացիներ: Նրան, որպես Հայաստանի ազգագրության պետական թանգարանի տնօրենի, պատիվ ունեցա հրավիրել՝ Արևելյան արվեստի թանգարանի ղեկավարների հետ մի հատուկ հավաքույթի, որոնց անդամակցում էի նաև ես:

Մեր համայնքը բախտ ունեցավ 1981 թ. ընդունելու պարոն **Վարդգես Համազասպյանին**, որն այդ ժամանակ Սփյուռքի հետ մշակութային կապերի կոմիտեի նախագահն էր: Նա հասուն ու կիրթ մտավորական էր, շատ ուրախացավ, տեսնելով, որ մեր համայնքը լավ կազմակերպված էր: Այցելեց եկեղեցի, դպրոցներ և հանդիպեց մեր երիտասարդությանը, որը լավ էր պատրաստված, ճշմարտացի պատկերացումներ ուներ Մայր Հայրենիքի մասին: Նա նույնպես գոհ մնաց՝ տեսնելով մարզական, մշակութային և երիտասարդական տարբեր կազմակերպությունների աշխատանքը: Հանդես եկավ զեկուցումով և խոստացավ իր անմիջական օգնությունը՝ նպաստելու Հայաստանից մտավորականների, երգիչների և կոմպոզիտորների ավելի հաճախակի այցերին՝ ի շահ Մայր Հայրենիքի և Արգենտինայի միջև հարաբերությունների սերտացման:

Այդ օրերին մեզ մոտ էր գտնվում Լիսաբոնի Գալուստ Գյուլբենկյան հիմնադրամի հայկական բաժնի ատենադպիր, գրող **Վահրամ Մավյանը:** Հիմնադրամը մի կազմակերպություն է, որ ծավալում է մշակութային և մարդասիրական ընդարձակ գործունեություն աշխարհի բոլոր երկրներում անխտիր և, հատուկ բաժին ունի Սփյուռքի և Մայր Հայրենիքի հայերին օգնելու համար: Մավյանը եկավ Արգենտինա՝ ստուգելու համար այն կարգը, որով իրացվում էր վարժարաններին տրված օգնությունը և այդ օգնության ընդլայնման հնարավորությունները: Նա գոհունակությամբ համոզվեց, որ նախատեսված նվի բաշխվությունները հատկացվել են այն երեխաներին, որոնց ընտանիքներն ի վիճակի չէին վճարելու իրենց ուսման ծախսը:

Սփյուռքի հետ մշակութային կապերի կոմիտեի նախագահ Կառլեն Դալլաքյանը Գեորգ Սարաֆյանի հետ իր «Հայաստանն իր բանաստեղծների միջով» իսպաներեն անթոլոգիայի մասին զրուցելիս. (1987 թ.).

Պարոն Մավյանին ուղեկցում էր նրա կին Իվոնը, շատ կիրթ մի տիկին, որը խոսում էր տարբեր լեզուներով, ներառյալ՝ իսպաներեն: Նրանց հետ տարբեր առիթներով բազմաթիվ մտերմիկ հանդիպումներ ունեցանք իմ օջախում: Այդ հավաքույթների ընթացքում խոսում էինք պոեզիայից և գրականությունից ընդհանրապես. բավականություն պատճառեցի նրան՝ ցույց տալով իր որոշ գործերը, որ ես թարգմանել էի իսպաներեն:

Մեր հավաքույթներին մասնակցում էր նաև պարոն Համազասպյանը, որը շատ գոհ մնաց այն տեղեկությունների համար, որ նրան իր խնդրանքով հայտնեցի Բուենոս Այրեսի հայ համայնքի մշակութային, կրոնական և կրթական կյանքում իմ գործունեության վերաբերյալ: Ծանոթացավ շատ կարևոր փաստերի հետ, որի համար շնորհակալ եղավ:

Հետևելով Հայաստանի նշանավոր այցելությունների ժամանակագրական ընթացքին, հատկապես պետք է հիշատակեմ Հայաստանի գրողների միության նախագահ Վարդգես Պետրոսյանի այցելությունը: Նա մի բանախոսություն կարդաց «Presidente» հյուրանոցում, որտեղ տեղեկություններ տվեց Հայաստանի մշակութային կյանքի, մասնավորապես բանաստեղծների ու գրողների մասին: Հանդիպմանը մասնակցում էին նաև Արգենտինայի գրողների միության անդամները, նրանց թվում և ես: Կարծիքներ փոխանակեցինք Մայր Հայրե նիքում արգենտինյան գրողների հայերեն թարգմանված հատ ընտիրը հրատարակելու հնարավորության մասին, ինչպես անում էի ես՝ իսպաներեն թարգմանելով հայ հեղինակների լավագույն ստեղծագործությունները: Մտքերի փոխանակության ժամանակ ներկաները ցանկացան լսել որևէ բանա ստեղծություն՝ հայերեն լեզվով: Վարդգես Պետրոսյանն արտասանեց Չարենցի «Ես իմ անուշ Հայաստանի» հայտնի բանաստեղծությունը՝ ինձ թողնելով դրա իսպաներեն թարգմանությունը: Մեր բարեկամ արգենտինացի գրողները շատ բարձր գնահատեցին այդ գործը և խոստացան նպաստել մշակութային այս կարևոր փոխանակության իրականացմանը: Պատիվ ունեցա ուղեկցել Պետրոսյանին գրքի տարեկան տոնավաճառում, որը տեղի էր ունենում այդ օրերին: Այցելեցինք բոլոր բաժինները, այդ թվում

Հայկական փիլիսոփայական ընկերության նախագահ պրոֆեսոր Գևորգ Բրուտյանը բարձր գնահատելով իսպաներեն լեզվով հայ դասական փիլիսոփաների գործերի ընդգրկումը Գևորգ Մարաֆյանի կողմից հրատարակված տարբեր գրքերում, (ապրիլ, 1990 թ.):



ՀԱՅԿԱԿԱՆ
ՓԻԼԻՍՈՓԱՅԱԿԱՆ
ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ

ՊԱՏՎԱՎՈՐ ԱՆԴԱՄ

ԳԵՎՈՐԳ ՄԱՐԱՖՅԱՆ

Պրեզիդենտ Գ.Ա. Բրուտյան

Երևան, 20 ԴԵԿՏԵՄԲԵՐ 1990 թ.

Գևորգ Մարաֆյանի Հայկական փիլիսոփայական ընկերության պատվավոր անդամության տիտղոսագիրը, իբրև հայ փիլիսոփայական մտքի և մշակույթի տարածման գնահատական, ստորագրված է նախագահ Բրուտյանի կողմից 1990 թվականի դեկտեմբերի 20-ին:

հայկական տաղավարը, ուր ցուցադրված էին իմ գրքերն իսպաներեն լեզվով, ի թիվս այլ գրքերի ու գործերի, որ հրատարակվել էին Սփյուռքում և Հայաստանում: Շատ գոհ մնաց և խոստացավ համագործակցել հաջորդ ցուցահանդեսներին՝ նոր գործեր ուղարկելով: Բացի դրանից, հյուրընկալվեցինք ցուցահանդեսի կազմակերպիչ «Լիբրո» հիմնադրամի նա խագահի և գործադիր մարմինների կողմից: Սիրալիր զրույցի ժամանակ մտքեր փոխանակեցինք հայ մշակույթի, տոնա վաճառի առանձնահատկությունների և այլ ցուցահանդեսների մա սին, որոնք տեղի էին ունեցել Հայաստանում:

Մեկ տարի անց, Արգենտինա ժամանեց **Միլվա Կապուտիկյանը,** որի հետ պաշտոնական հավաքույթներից բացի պատիվ ունեցա հանդիպել իմ տանը՝ իրեն ուղեկցող դերասանների հետ միասին: Բուենոս Այրեսի տեսարժան վայրերին ծանոթացնելու նպատակով, նրան ուղեկցեցի Տիգրե, զբոսնեցինք նավով: Քանի որ նա մեծ հետաքրքրություն ուներ ճանաչել ժողովրդին, իմ միջոցով առիթ ունեցավ զրուցել նավաստիների և ուղևորների հետ:

Հայաստան վերադառնալուց հետո նա հրատարակեց իր ճանապարհորդական հուշերը, ուր պատմում է հատկապես արգենտինացիների և մեր համայնքի կյանքի մասին:

Երկու տարի անց՝ 1987 թ., ընդունեցինք վախճանված Վարդգես Համազասպյանի հաջորդին՝ Սփյուռքի հետ մշա կութային կապերի կոմիտեի նոր նախագահ պարոն **Կառլեն Դալլաքյաննին**՝ անվանի մի անձնավորության գրա կանագիտության և հայ մշակույթի բնագավառում, որն իր իմա ցությունը խորացրել էր արևմտահայ բանաստեղծների և գրողների մասին իր ուսումնասիրություններով:

Նա բերել էր վերջերս հրատարակված իր մի գիրքը՝ մեր շատ սիրելի գրող Արշակ Չոպանյանի մասին: Չոպանյանը շատ հայտնի էր Արգենտինայում, ժամանակին նրա 55 և 65 ամյա տարեդարձներն էինք նշել և ուղարկել մի գումար՝ որպեսզի շարունակի ֆրանսերենով հրատարակել հայ պոե զիային նվիրված շատ արժեքավոր գրքերի շարքը՝ «Rosedal de Armenia» անվան տակ («Վարդենիք Հայաստանի», եռահա-

Դրոշ Ավետիկ Ճատուկյանը Լրգենտինա կատարած աշխատության ժամանակ. Գեորգ Մարաֆյանի հետ (1962 թ.)

Գեորգ Մարաֆյանի հարցազրույցը հայտնի բանաստեղծ և լրագրող Դավիթ Հովհաննեսի հետ տեսանկարահանման պահին, որը հաղորդվեց Երևանի հեռուստատեսության իր ծրագրում (հոկտեմբեր, 1989 թ.):

տոր ժողովածուն, որ լույս էր տեսել 1918-1929 թթ.): Պարոն Դալլաքյանի ուսումնասիրությունը Չոպանյանի կյանքի և գործունեության մասին, որքան գրական, այնքան էլ քաղաքական արժեք ուներ: Առաջին համաշխարհային պատերազմի ընթացքում Փարիզում եղել էր Պողոս Նուբար Փաշայի ատենադպիրը: Չոպանյանի գրական գործունեության 65-ամյա հոբելյանը տոնելիս, մտածեցինք իրեն Արգենտինա հրավիրել: Որպես կազմակերպական հանձնախմբի ատենապետ, նրան մի հատուկ նամակ ուղարկեցի՝ հրավիրելով ներկա գտնվել Բուենոս Այրեսում իր մեծարմանը:

Չոպանյանն արդեն բոլորել էր 80 տարին: Ինձ ուղարկեց շնորհակալական մի նամակ, որտեղ բացատրում էր, որ իր առողջությունը թույլ չի տալիս կատարելու այդքան երկար ճանապարհորդություն: Նրան ուղարկեցի մեկ այլ նամակ՝ խնդրելով մեզ տրամադրել ձայնագրված մի ուղերձ: Բարեբախտաբար, ինձ ուղարկեց մի ձայնագրություն, որը հայ գրականության մասին մի զեկույց էր:

Պարոն Դալլաքյանը գիտեր այս հարաբերությունների և Արշակ Չոպանյանի վերաբերյալ իմ գիտելիքների մասին և ցանկացավ, որ ես ներկայացնեմ իր գիրքը Արգենտինայում: Այդ առիթով Թեքեյան մշակութային միությունը մի ձեռնարկ կազմակերպեց գրասերների կոլեգիայի սրահում, ուր առիթ ունեցա համարյա մեկ ժամ ներկայացնելու գիրքը և մանրամասն վերլուծելու փաստերով հագեցած գործը և շնորհավորելու նրա հեղինակին: Իմ ելույթից հետո խոսեց Դալլաքյանը, ինձ շնորհակալություն հայտնեց և ասաց, որ իրեն շատ օգտակար էին եղել Չոպանյանի այն նամակները ու ձայնագրությունը, որ ես նրան ուղարկել էի մի առիթով:

Նրան ուղեկցեցինք հայկական դպրոցներ, նախակրթարաններ և երկրորդական վարժարաններ, ուր հաճախում են մեր համայնքի երեխաները ու պատանիները: Նրանց հետ Դալլաքյանը խոսեց Մայր Հայրենիքի և նրա նվաճումների մասին: Նա հանդես եկավ հասարակական թեմաներով տարբեր զեկուցումներով, այցելեց եկեղեցի, զրուցեց եպիսկոպոս Գրիգորիս Բունիաթյանի՝ Արգենտինայում Նորին Ս. Օծության

Արգենտինայի հայկական ռադիոհաղորդման առաջին տնօրեն Գևորգ Սարուխյանը (1936 թ.) Արգենտինայում, Բրազիլիայում և Ուրուգվայում Հայաստանի դեսպան Վահան Տեր-Ղևոնդյանի ներկայությամբ կատարում է հուշատախտակի հանձնում Հայաստանի Ազգային Ռադիոյի սրտաստամանյան հաղորդումների տնօրեն պարոն Լևոն Անանիկյանին ռադիոհաղորդումների 50-ամյակի կապակցությամբ Բուենոս Այրեսի հայկական ռադիո ժամերի, երեք տնօրենների կողմից կազմակերպված ձեռնարկում. ձախից. «Հայկական ձայն»-ի տնօրեն Նուբար Լոմիմջյան և աջից՝ «Հայկական Ժամի»-ի տնօրեն Գևորգ Կարամանուկյան (3 հոկտեմբերի, 1997 թ., Հայ Կենտրոնի դահլիճ):

ներկայացուցչի հետ, մասնակցեց կիրակնօրյա պատարագին, հանդիպում ունեցավ համայնքի երիտասարդների հետ՝ նրանց ներարկելով նոր մտքեր, կենսունակություն և ուժ, հորդորելով խորացնել իրենց գիտելիքները և պիտանի մարդ դառնալ ինչպես Արգենտինայի, այնպես էլ Մայր Հայրենիքի համար:

1989 թ. մեզ այցելեց մի այլ անվանի անձնավորություն՝ ակադեմիկոս **Գեորգ Բրուտյանը**՝ Հայկական փիլիսոփայական ընկերության նախագահը: Մեր միջև հաստատվեցին շատ սիրալիր փոխհարաբերություններ: Պատիվ ունեցա նրան ընդունել իմ տանը, որտեղ նա տեսավ իմ հրատարակած գործերը և, որպես փիլիսոփա, հետաքրքրվեց՝ տեսնելով առաջին անգամ իսպաներեն թարգմանված հատվածներ հնագույն հայ փիլիսոփաների գործերից: Շատ գոհունակությամբ ինձ ասաց. «Դուք ի ծնե փիլիսոփա եք: Պարտքս եմ համարում, Հայաստան վերադառնալուց հետո միջնորդել մեր խորհրդին, որ Ձեզ ընտրի մեր ընկերության պատվավոր անդամ»: Իսկապես, երբ վերադարձավ Հայաստան, ինձ ուղարկեց իր կողմից ստորագրված վկայականը և որոշման արձանագրությունը, որով ես համարվում էի Հայկական փիլիսոփայական ընկերության պատվավոր անդամ:

Վերջին տարիներին ավելի հաճախակի դարձան Մայր Հայրենիքի գրողների, բանաստեղծների և դերասանների այցելությունները: Նրանցից արժե հիշատակել բանաստեղծ և լրագրող **Դավիթ Հովհաննեսին**, անվանի գրող Հրաչյա Հովհաննիսյանի որդուն, մեր անվանի մտավորականներից մեկին: Այս երիտասարդի հետ բավականին երկար զրուցեցինք Հայաստանում վերջին բարեփոխումների մասին, հատկապես քաղաքական տեսանկյունից: Նրանք, համարյա 70 տարի մեկուսացած արևմտյան աշխարհից, չգիտեին հայերի հետ պատահած քաղաքական ճշգրիտ անցքերը մինչև խորհրդայնացումը: Հովհաննեսը շատ հետաքրքրվեց իմ հրատարակած գրքերով, և Արգենտինայի հայ համայնքում իմ իրականացրած մշակութային գործունեությամբ: Նա զարմացավ նամակների այն քանակությունից, որ ստացել էի իմ գրքերը բաշխելու առթիվ և որոնք ապացուցում էին կատարածս գործի օգտակարությունը: Նա

ընդարձակ լրահաղորդում տեսագրեց Երևանի հեռուս տատեսության համար, որտեղ մի ծրագիր էր վարում ամիսը երկու անգամ: Այդ հարցազրույցի ժամանակ շոշափեցինք Արգենտինայի հայ համայնքի կյանքի կազմակերպման տարբեր կող մերը, մի թեմա, որն իրեն որպես լրագրողի, շատ հետաքրքրեց: Իսկապես, նրան մի շարք փաստեր տրամադրեցի, քանի որ բավական գործուն մասնակցում էի այդ աշխատանքներին:

Դավիթ Հովհաննեսը տեսավ իմ գրքերը, նկարահանեց դրանք և մենք զրուցեցինք այն մասին, թե ինչ կարելի է անել, որպեսզի արտասահմանի հայ համայնքներին հասնի Մայր Հայրենիքի կենդանացնող շունչը, որպեսզի շարունակենք ներ գրրավել նոր սերունդներին հազարամյա հայ մշակույթի ոլոր տը:

Հայաստանից ստացված նամակներից տեղեկացա, որ մեր հարցազրույցը բազմիցս ցուցադրվել է պետական հեռուստատեսությամբ:

Վերջերս մեզ այցելեց **Լևոն Անանիկյանը**, Երևանի ազգային ռադիոյի արտասահմանյան հաղորդումների տնօրենը: Նա հատուկ հրավիրվել էր Բուենոս Այրեսի հայկական երեք ռադիոհաղորդումների տնօրենների՝ Նուբար Լոմլոմջյանի (La Voz Armenia - Հայկական Ձայն), Գեորգ Կարամանուկյանի (La Hora Armenia - Հայկական Ժամ) և Օսկար Լոմլոմջյանի (Integrasion Armenia - Հայկական Վերամիավորում) կողմից՝ տոնելու Մայր Հայրենիքից կարճ ալիքով Արգենտինայի համար տրվող ռադիոհաղորդումների 50-րդ տարելիցը:

Այս պատմական իրադարձությունը տեղի ունեցավ 1997 թ. հոկտեմբերի 3-ին, մի ակադեմիական ձեռնարկով, որը համալրվել էր գեղարվեստական մասով: Պարոն Անանիկյանը մեզ մի հաճելի անկնկալ մատուցեց՝ մի հատված ունկնդրել տալով Հայաստանի ազգային ռադիոյի արտասահմանի հայության համար հեռարձակվող առաջին ռադիոհաղորդումից: Հուզիչ էր Մայր Հայրենիքի անվանի մարդկանց՝ գրող Ավետիք Իսահակյանի և հռչակավոր նկարիչ Մարտիրոս Սարյանի ձայներն ունկնդրելը:

Իմ որդի Անտոնիո Սարաֆյանը նախկին տնօրեն Շահե Դաղուրյանի հետ միասին՝ այս հաղորդումները գոր ծարկողնե-

րից մեկը, խոսք վերցրեց կազմակերպական հանձնախմբի անունից՝ ընդգծելով մեզ համար Մայր Հայրենիքի հետ հա ղորդակցվելու կարևորությունը ռադիոյի միջոցով:

Ապա Հայաստանի դեսպանը վկայակոչեց տեղական հայկական ռադիոժամերի դերը և նրանց եռանդուն ջանքերը Երևանի ռադիոյի հետ կապերը պահպանելու ուղղությամբ: Կազմակերպիչներն ինձ պատիվ արեցին բեմ ելնել, որպես «Հայկական մշակութային ժամ» ռադիոհաղորդման առաջին տնօրենի: Այդ հաղորդումը սկսել էի Արգենտինայում՝ 1936 թվականին: Ինձ հանձնարարեցին հյուրին հանձնել մի հուշատախտակ՝ հետևյալ մակագրությամբ. «Միությունը ուժ է»: Լևոն Անանիկյանը շնորհակալություն հայտնեց և գրկախառնվեց ինձ հետ: Այդ հուզիչ հանդիսությանը Հայ Կենտրոնի բեմի վրա միասին էինք Հայաստանի դեսպան Վահան Տեր-Ղևոնդյանի, Սրբազան Գիսակ Մուրադյանի, ռադիոհաղորդումների տնօրենների և այլ հեղինակավոր մարդկանց հետ: Հան դիսականներն իրենց ուրախությունը ցուցադրեցին բուռն ծափա հարություններով:

Պարոն Անանիկյանը պարտք համարեց այցելել ինձ՝ իմ հրատարակած գրքերին ծանոթանալու համար: Հաջորդ օրը մի հանդիպում կազմակերպեցինք իմ տանը, որտեղ նրան ցույց տվեցի հայ մշակույթի վերաբերյալ իսպաներեն տպագրած գրքերը: Դրանք շատ հետաքրքիր համարեց և կարծիք հայտնեց, որ վերջիններս մեծ կարևորություն կարող են ունենալ իրենց համար՝ իսպաներեն լեզվով ծրագրեր պատրաստելիս, քանի որ ինն այլ լեզուների հետ մեկտեղ իսպաներենը հեռարձակվում է «Հայաստանի Ձայն»-ի արտասահմանյան ռադիոհաղորդումներով: Ինձանից խնդրեց նշված գրքերի զանազան օրինակներ, որոնք տարավ իր հետ:

Իր վերադարձից հետո, մեծ բավականությամբ լսեցի նրա ռադիոմեկնաբանություններն իմ անձի և գործունեության վերաբերյալ, որոնք բնութագրվում էին Լատինական Ամերիկայում հայ մշակույթի զարգացմանը նպաստելու տեսան կյունից: Ասեմ նաև, որ հաղորդումն ուղեկցվում էր իմ գրքերի ընթերցմամբ:

Բարձրաստիճան այցելություն

Ամենանշանավոր և պատմական իրադարձությունը, որը մեր համայնքն ապրեց, եղավ Հայաստանի Ազատ և Անկախ Հանրապետության առաջին նախագահի այցը, ի դեմս պարոն Լևոն Տեր-Պետրոսյանի, որին բոլոր մեծարանքներով անձամբ ընդունեց Արգենտինայի նախագահ դոկտոր Կառլոս Սաուլ Մենեմը 1992 թվականի հունիսի 10-ին: Նախօրոք ստեղծվել էր ընդունելության հանձնախումբ Արգենտինայում հայ առաքելական եկեղեցու առաջնորդ այրքեպիսկոպոս Գիսակ Մուրադյանի գլխավորությամբ: Հանձնախմբի մեջ ընդգրկվել էին մեր համայնքի ներկայացուցչական անձինք, որոնց մաս էի կազմում նաև ես: Մեր հանձնախումբն անվանի այցելուին սպասում էր Բուենոս Այրեսի օդակայանի զինվորական հարկաբաժնում: Այդ ժամանակ բարձրակարգ սպասարկման ծառայության սպասասրահում (VIP) հայտնվեց նախագահ Կառլոս Մենեմը և սիրալիր զրուցեց մեզ հետ, մինչև Ուրուգվայից ժամանող օդանավի վայրեջքը:

Ինքնաթիռից իջնելիս Հայաստանի նախագահը մի պահ շփոթվեց իր արգենտինյան պաշտոնակցի հետ գրկա խառնության ժամանակ, որ ամենևին նկատելի չեղավ ներ կաների ողջույնների մեջ: Զինվորական նվագախմբի կողմից կատարվեցին Արգենտինայի և Հայաստանի օրհներգները: Մի ասին դիտեցին զինվորական ուժերի կողմից հյուրի պատվին կազմակերպված զորահանդեսը և մոտեցան անհատապես ողջունելու պատվավոր հանձնախմբի անդամներին: Օդա կայանում տեղի ունեցավ ավանդական արարողություն.հայ երիտասարդները, ազգային զգեստներով, ի նշան հյուր ընկալության, համաձայն հայկական ավանդույթի, Հայաստանի նա խագահին սկուտեղով աղ ու հաց մատուցեցին: Տեր-Պետրոսյանը համտես արեց և ասաց, որ Արգենտինայի հացը շատ համեղ է: Նախագահ Մենեմին ողջունելուց և շնորհակալություն հայտնելուց հետո հանձնախմբի ամբողջ կազմով Հայաս տանի նախագահին ուղեկցեցինք դեպի Կոլոն թատրոն:

Ժամանակին ծանուցված՝ այնտեղ մեզ էր սպասում մի

Հայաստանի Հանրապետության նախագահ դոկտոր Լևոն Տեր-Պետրոսյանը Լատինական Ամերիկա կատարած իր առաջին այցելության ընթացքում, Գեորգ Սարաֆյանի հետ, Բուենոս Այրես, 10 հունիսի, 1992 թ.:

հոծ բազմություն, որը նրան մեծագույն խանդավառությամբ դիմավորեց: Մեծարման մի գագաթնակետային արարողություն էր: Կոլոն թատրոնի բոլոր նստատեղերը լեփ-լեցուն էին: Շատերը սպասում էին փողոցում՝ պարոն նախագահին տես նելու և նրան ջերմորեն ողջունելու համար:

Նրա ելույթը պատմական մի ուղերձ էր: Առաջին անգամ էր, որ մի հայ նախագահ պաշտոնական այցով գալիս էր Արգենտինա՝ տեսնելու այս հեռավոր երկրներում իր գաղթական եղբայրներին: Դոկտոր Լևոն Տեր-Պետրոսյանը խոսեց այն պայքարի մասին, որ մղում էին հայրենիքում՝ ազատություն և անկախություն ձեռք բերելու և ժողովրդին իր ճակատագրի տերը դարձնելու համար: Նա մեզ ներկայացրեց այն դժվարությունները, որ հաղթահարել էին մեր եղբայրները և շարունակում էին դեռ տոկալ տնտեսական ոլորտներում: Նմանապես խոսեց 1988 թ. ահավոր երկրաշարժի բերած աղետի մասին, որը ավելի քան 25.000 մարդկային զոհեր պատճառեց և վնասեց Հայաստանի տարածքի մի զգալի մասը՝ հատկապես Գյումրի, Սպիտակ և Կիրովական քաղաքներն ու նրանց շրջակա բնակավայրերը: Հատուկ շնորհակալություն հայտնեց հատկապես միջազգային մարդասիրական օգնության և մասնավորապես, Արգենտի նայից ստացած աջակցության համար:

Հիշատակեց նմանապես Ղարաբաղի հայերի պայքարը, որ դիմադրում էին ազերի ագրեսորներին՝ իրենց տարածքը ազատագրելու համար: Այս հարցի արդար լուծման գործում բոլոր հայերը մեծապես մտահոգված էին՝ օգնելու Արցախի հերոսական ժողովրդին, որպեսզի նա ձեռք բերի իր վերջնական անկախությունը: Նախագահը ներկաներին կոչ արեց օգնություն ցուցաբերել իրենց եղբայրներին, որոնք տառապում էին ինչպես Ղարաբաղի լեռներում, այնպես էլ Հայաստանում՝ ազերիների և թուրքերի շրջափակման պատճառով, որի պայմաններում ժողովուրդը մնացել էր առանց մատա կարարումների և մեկուսացած, չկարողանալով օգնություն ստանալ ար տասահմանից:

Նա խոսեց նաև մտավոր և մշակութային ոլորտներում հայ ժողովրդի ձեռք բերած մեծ նվաճումների մասին, ասաց, որ



Հայ մշակութային ընկերության դահլիճներում (1982 թ.) Արգենտինայի նախագահ դոկտոր Ռաուլ Ռիկարդո Ալֆոնսինը, արդարադատության նախարար դոկտոր Կառլոս Արսլանյանը և Գեորգ Սարաֆյանը հայ համայնքի հյուրասիրության ժամանակ՝ շնորհակալություն հայտնելով Հայաստանի երկրաշարժի աղետյալներին պաշտոնական մեծ օգնության համար:

Հայաստանն իր երկարաձիգ գոյության ընթացքում այնքան է տառապել և այնքան անգամ է վերածնվել, որ այս անգամ նույնպես ոտքի կկանգնի, ինչպես Մայր Հայրենիքի, այնպես էլ Սփյուռքի իր որդիների միասնական ջանքերով:

Գեղարվեստական ծրագրից հետո հայ համայնքի անունից խոսեց դոկտոր Կառլոս Արսլանյանը, երկրի նախկին արդարադատության նախարարը, որն արտահայտեց Ար գենտինայի հայ համայնքի տագնապն ու որդիական խորունկ զգացումները հայրենիքի հանդեպ և իր անունից խոստացավ իր պարտքը կատարել՝ մասնակցելով նրա բարեկեցության աշխատանքներին:

Հանդիպման ավարտից հետո ելքի մոտ մեր հայ ընկերները Լևոն Տեր-Պետրոսյանին ուղեկցեցին որոտալի ծափերով և օվացիաներով՝ արտահայտելով իրենց հախուռն ուրախությունն ու միասնականությունը Մայր Հայրենիքի նկատմամբ:

Նրան ուղեկցեցինք մինչև Սուրբ Գրիգոր Լուսավորիչ եկեղեցի՝ Արմենիա փողոցի վրա, որտեղ արդեն հավաքվել էր մեծ բազմություն, որը չէր կարողացել լինել Կոլոն թատրոնում:

Մեծ օվացիաների և զանգերի հանդիսավոր ղողանջների ուղեկցությամբ նախագահն իր ուղեկիցներով ընդունվեց հոգևորական դասի կողմից և բազմությունը շարժվեց դեպի եկեղեցի: Իր աղոթքն անելուց հետո նախագահը կրկին խոսեց՝ եղբայրական ողջույններ հաղորդելով արդեն ազատ ու անկախ ողջ հայ ժողովրդի կողմից, այնպես, ինչպես Կոլոն թատրոնում: Եկեղեցու ներսում կրկին ծափահարեցինք և օվացիա սարքեցինք նախագահի պատվին:

Հայաստանի նախագահը ցանկացավ ծանոթանալ համայնքի կարևոր հաստատություններին: Նրան առաջար կեցինք երկու կարևոր կենտրոններ, որոնք գտնվում էին եկեղեցու նույն տարածքում: Նախ ուղևորվեց Հայկական բարեգործական ընդհանուր միության հասարակական, մշակութային և մարզական համալիր, որտեղ նրան Նազարյան դահլիճում սպասում էին մանկապարտեզից մինչև երկրորդական վարժարանի ղեկավարներն ու աշակերտները:

Արգենտինայի պետության նախագահ դոկտոր Կառլոս Սաուլ Մենեմը Գեորգ Մարաֆյանի հետ հայ համայնքի կողմից «Շեռատոն» հյուրանոցի սրահում, իբրև մեծարանք նրա Հայաստանի անկախության ճանաչման և նախագահ Լևոն Տեր-Պետրոսյանի ջերմ ընդունելության:
18 օգոստոսի, 1992 թ.:

Այնտեղ նրան դիմավորեցին երեխաները՝ իրենց ողջույններով ու սրտառուչ համակրանքով. նրանց համբուրեց և շոյեց: Խոսեց որպես ազգի Հայր՝ նրանց կոչ անելով լինել լավ քաղաքացիներ, համառորեն սովորել և պահպանել Հա յաստանի մշակութային ավանդույթները:

Այս այցելությունները ավարտելուց անմիջապես հետո Հայաստանի նախագահը տեղափոխվեց հայ մշակութային ընկերության կենտրոնական նստավայր, որտեղ նրան սպա սում էր մի անհամբեր բազմություն: Այդ շենքում, հրա տարակվում է «Armenia» թերթը, հավաքված էին բարեգործական, մար զական, երիտասարդական և մշակութային հաստատու թյունների ներկայացուցիչներ: Դրանց ղեկավարների հետ հանդիպ ման ընթացքում նա նկարագրեց Հայաստանի իրավիճակը և խնդրեց երիտասարդությանը՝ օգնել Մայր Հայրենիքին, որ պեսզի այն հզորանա և հաղթահարի տնտեսական առկա դժ վարությունները: Նշեց դրանց պատճառները՝ աղետալի երկ րաշարժը և ապա՝ շրջափակումը, որը դժվարություններ է ստեղ ծել մարդասիրական օգնություն ստանալու համար:

Այդ նույն երեկոյան մեր ընդունելության հանձ նախումբը պատրաստել էր պատվո ընթրիք կենտրոնական հյուրա նոցներից մեկում: Ներկա էին մեր համայնքի բոլոր հ աստատությունների՝ արդյունաբերության, առևտրի և այլ մաս նագիտությունների ներկայացուցիչները: Նաև իրենց ներկայությամբ մեզ պատիվ արեցին պաշտոնական նշանավոր անձնավորություններ: Նրանց մեջ կային Արգենտինայի արտաքին գոր ծերի նախարարության պաշտոնյաներ, որոնք զբաղվում էին Կովկասի աշխարհաքաղաքական հարցերով: Ես հան գամանալի բացատրություններ տվեցի հայ ժողովրդի պատմական անցյալի, նրա ներկայի և երկրում հայ համայնքի հաս տատման մասին: Դա նրանց շատ հետաքրքրեց և ի դեպ, նրանց հետո ուղարկեցի իմ հրատարակած զանազան գրքերից, որ պեսզի բավարար պատկերացումներ ունենային Հայաստանի ազատ և անկախ կյանքի վերականգման համար ծավալված վերջին իրադարձությունների մասին: Աղանդերի մատուցման ժամանակ խոսեց պարոն նախագահը: Այդ օրը շատ հագեցած

Հայաստանի Հանրապետության փոխնախագահ պրոֆեսոր Գագիկ Հարությունյանը Գևորգ Սարաֆյանի հետ բերելով իր «Ազատ և Անկախ Հայաստան» գիրքը: Բուենոս Այրես, 15 ապրիլի, 1993 թ.:

էր: Նրա համոզիչ խոսքերը բարենպաստ տպա վորություն թողեցին հավաքվածների վրա, որոնք եկել էին իրենց ընտանիքներով՝ իրենց հարգանքը մատուցելու և նրա ուղերձը լսելու:

Այս, ինչպես և մյուս հանդիպումների ժամանակ և պատվո հանձնախմբի հետ նախագահական ընդունելության հատուկ հավաքույթին, պատիվ ունեցա անհատապես զրու ցելու պարոն նախագահի հետ, որին հաջողություն ցանկացա իր հայրենասիրական առաքելության գործում: Ի դեմս նրա տեսա մի կիրթ անձնավորության, մի խորագիտակ բանասերի և եռանդուն ու գործող մի մարդու: Հաջորդ օրը Լևոն Տեր-Պետրոսյանը պաշտոնապես ընդունվեց Օլիվոսի նախագահական ամառանոցում, որտեղ ճաշեց դոկտոր Մենեմի հետ: Այնուհետև, Հայաստանի և Արգենտինայի արտաքին գործերի նախարարների մասնակցությամբ տեղի ունեցավ առաջին երկկողմանի համաձայնագրի ստորագրումը, որի կազմմանը մասնակցել էր ամիսներ առաջ Արգենտինայում Հայաստանի գործերի առաջին հավատարմատար Արա Հակոբյանը:

Պետությունների երկու ղեկավարների միջև ստեղծվեց անկեղծ համակրանք: Նախագահ Մենեմը Լևոն Տեր-Պետրոսյանին հրավիրեց ճանապարհորդել հունիսի 12-ին իր հետ նախագահական ինքնաթիռով, շրջակա միջավայրի հիմնախնդիրներին նվիրված համաշխարհային վեհաժողովին մասնակցելու համար, որ տեղի ունեցավ Ռիո դե Ժանեյրոյում :

Մեկ այլ կարևոր իրադարձություն, որը տեղի ունեցավ այդ ժամանակներում, Հայաստանի փոխնախագահ **Գագիկ Հարությունյանի** այցն էր Արգենտինա:

Ժողովրդի կողմից շատ սիրված այս անձ նավորությունը ընտրվեց փոխնախագահ՝ իր երկրի ղեկավարի հետ կազմելով հաղթական մի զույգ: Բուենոս Այրես ժամանեց 1992 թ. նոյեմբերին:

Առիթ ունեցա զրուցել նրա հետ և շփվել մոտիկից: Որպես մի կիրթ անձնավորություն, հետաքրքրվեց իմ թարգմանական, մշակութային և հասարակական գործունեությամբ:

1993 թ. ապրիլին նրա երկրորդ այցելությունը համընկավ՝ «Գրողից ընթերցողին» գրքի միջազգային ցուցահանդեսի

Լեռնային Ղարաբաղի Հանրապետության նախագահ Ռոբերտ Քոչարյանը Գեորգ Սարաֆյանի հետ զրուցելիս՝ իր պատվին մատուցած ընդունելության ժամանակ, Հայ Կենտրոնի դահլիճում (27 մայիսի, 1996 թ.):

Այն ժամանակվա արտաքին գործերի նախարար, իսկ այժմ՝ Լեռնային Ղարաբաղի Հանրապետության նախագահ Արկադի Ղուկասյանը Գեորգ Սարաֆյանի ձեռքից «Ազատ և Անկախ Հայաստան» գրքի մեկ օրինակ ստանալիս (Բուենոս Այրես, մայիս, 1996 թ.):

բացման հետ, որը տեղի է ունենում ամեն տարի ցուցահանդեսների մունիցիպալ կենտրոնում:

Հայաստանի օրվա առիթով պատրաստվել էր մի ակադեմիական մշակութային ձեռնարկ, ազգային պատերով և դրստերս՝ ուսուցչուհի Մարիա Ռոսա Սարաֆյան Բարսեղյանին պատկանող մի զեկուցումով:

Ներկայումս նա Արսլանյան դպրոցի համալիրի Սուրբ Գրիգոր Լուսավորիչ հաստատության նախակրթարանի բաժնի տնօրենն է:

Ելույթ ունեցավ նաև Գագիկ Հարությունյանը, որը բարձր գնահատեց տոնավաճառին հայկական մասնակցության նախաձեռնությունը և նրա մշակութային արժեքը:

Իր այցելության ընթացքում նրան ուղեկցեցի տարբեր երկրների տաղավարներ, ուր ներկայացված էին բազմաթիվ հրատարակություններ և դրանց մեջ՝ Հայաստանի տաղավարը, որ նրան շատ հետաքրքրեց: Ուշադիր դիտեց Հարավային Ամերիկայում հրատարակված գրքերը և դրանց մեջ՝ իմ մի քանի գործերը:

Թերթեց գրքերը և դրական կարծիք հայտնեց ցուցահանդեսի վերաբերյալ, խոստացավ, որ պաշտոնապես Հայաստանի կառավարությունը կզբաղվի այդ աշխատանքով՝ օգնելով տեղական հանձնախմբին՝ հաջորդ տարիների համար պատրաստելու ավելի լիարժեք ցուցադրություն, ուր կարտացոլվի Հայաստանի առաջադեմ մշակույթը, որը զարգանում է նույնիսկ այսօրվա դժվարին ժամանակներում:

Կցանկանայի հիշել մեկ այլ նշանակալի իրադարձություն ևս: Լեռնային Ղարաբաղի Հանրապետության ամենաբարձր պատվիրակության առաջին ժամանումը Արգենտինա՝ ԼՂՀ Նախագահ, (հետո՝ ՀՀ վարչապետ և նախագահ՝ 1998 թ. մարտի 30) **Ռոբերտ Քոչարյանի** գլխավորությամբ: Նրան ուղեկցում էին արտաքին գործերի նախարար **Արկադի Ղուկասյանը** (այժմ Ղարաբաղի նախագահ) և Հայաստանում ԼՂՀ ներկայացուցիչ **Ալեքսան Հարությունյանը**: Լատինաամերիկյան այս ուղևորությունը կազմակերպվել էր «Հայաստան» Համահայկական Հիմնադրամի կենտրոնական խորհրդի կողմից

կազմակերպված մարաթոնի առթիվ: Այդ նախաձեռնությունը սկսվեց Միացյալ Նահանգներում և տարածվեց Սփյուռքի բոլոր համայնքներում՝ նրանց խրախուսելու, որ նպաստեն «Կյանքի ճանապարհ»-ի կառուցման աշխատանքներին, որը միացնում է Գորիս և Ստեփանակերտ քաղաքները և այս պիսով կապում Հայաստանի ու Ղարաբաղի հանրապետությունները ամենաղրժվար լեռնային ճանապարհով, որը խիստ անհրաժեշտ է Ղարաբաղի բնակչության անվտանգության համար և որի շնորհիվ Ղարաբաղը աշխահին կմիանա Հայաստանի միջոցով:

Ինձ վիճակվեց զրուցել նրանց հետ Հայ Կենտրոնի դահլիճում կազմակերպված ընդունելության ժամանակ, որ տեղ հայտնեցի իմ հիացմունքը հանուն ազատության նրանց մղած պայքարի համար, երբ հայ ժողովրդի խիզախ զավակ ները ոչինչ չէին խնայում՝ Ղարաբաղը դարձնելով անխորտակ ամրոց:

Նրանց նույնպես նվիրեցի «Հայաստան, Ազատ և Անկախ Հանրապետություն» վերնագրով իմ վերջին հրատարակության օրինակներից, որտեղ արտացոլված են այս հերոսական իրադարձությունները:

Հայ եկեղեցու գլխավոր պետի հովվապետական այցելությունը

1960 թվականի հուլիսին Ծայրագույն Պատրիարք Ն.Ս.Օ.Տ.Տ. Ամենայն Հայոց Կաթողիկոս Վազգեն Ա-ն կա տարեց իր առաջին հովվապետական այցելությունը Հարավային Ամերիկա: Այդ առիթով բարձրաստիճան հյուրին հավուր պատշաճի ընդունելու համար հայկական եկեղեցու հոգա բարձության կենտրոնական խորհուրդն ինձ հանձնարարեց կազմել ընդունելության մի հանձնախումբ՝ բաղկացած մեր համայնքի բոլոր կազմակերպությունների ներկայացուցիչներից:

Նրա ժամանման օրը Էսեյսա միջազգային օդա կայանը իսկական տոնական տեսք ստացավ: Բոլոր հայերը փո ղոց էին

դուրս եկել: Հարյուրավոր ավտոմեքենաներ ուղևոր վեցին օդակայան՝ ըստ արժանվույն դիմավորելու մեր անվանի հյուրին: Ինքնաթիռից իջնելուն պես Սրբազան Բաբկեն Աբաղյանը, կենտրոնական խորհրդի նախագահ Արմեն Բեր գամալին և ես, որպես ընդունող հանձնախմբի ատենապետ, համբուրեցինք Վեհափառի աջը և բարի գալուստ մաղթեցինք Արգեն տինայի հայ համայնքի անունից:

Բարձրակարգ սպասարկման ծառայության (VIP) սպասասրահի ելքի մոտ կաթողիկոսին ողջունեց հավաքված հոծ ժողովուրդը, որոնց Վեհափառը տվեց իր օրհնությունը: Կազ մելով մի քարավան, որի գլխամասում ընդունող հանձնաժողովի մեքենաներն էին, ժամանեցինք Սուրբ Գրիգոր Լուսավորիչ եկեղեցի, որտեղ մեզ ընդառաջ եկավ հոգևոր սպասավորների մի հատուկ շքախումբ, որն աշխարհականների հետ միասին դուրս էր եկել երթի՝ Վեհափառին ընդունելու և նրան շքեղ ամպհովանու տակ մինչև եկեղեցու մուտքը տանելու համար՝ ելով «Հրաշապար»-ի մեղեդիները (ավանդական օրհներգ՝ եկեղեցու բարձրաստիճան պաշտոնյաներին ընդունելու համար): Այդ պահին ողողանջում էին զանգերը՝ ավետելով բարի լուրը: Նորին Ս. Օծությունն ուղևորվեց դեպի բեմ՝ իր աղոթքներն ուղղելով առ երկինք և շնորհակալություն հայտնելով Բարձյալին, ողջ և առողջ մեր երկիր հասնելու համար: Նա շնորհակալություն հայտնեց իրեն դիմավորելու եկած Արգենտինայի բարձրաստիճան ղեկավարներին և օրհնեց բոլոր ներկաներին:

Իր ուղերձում անդրադարձ կատարելով Սուրբ Էջ միածնի հնագույն քրիստոնեական եկեղեցու պատմության խոր քերը, մի եկեղեցու, որը կառուցվեց բիբլիական Արարատ լեռան ստվերի տակ: Նա նշեց, որ ինչպես Արարատը, այնպես էլ Սուրբ Էջմիածինը, հայ ժողովրդի հավերժ խորհրդանիշներն են: Նորին Ս. Օծությունը հատուկ փոխանցեց Մայր Հայրենիքի ժողովրդի ողջույնները:

Նրա անձի միջոցով այդ պահին Հայաստանը, կարծես, տեղափոխվել էր Արգենտինա: Հայրենակիցներին ուղղված միասնության և արգենտինացի ժողովրդի հետ բարեկամության խոսքերը մեծ արձագանք գտան:

Արգենտինայի նախագահ Դոկտոր Արտուրո Ֆրոնդիսին Կառավարության Տան իր աշխատասենյակում ընդունում է Նորին Ս. Օծություն Ամենայն Հայոց Կաթողիկոս Վազգեն Ա-ին, որը զրույցի ավարտին նրան նվիրում է Հայաստանի ոսկերչական և արծաթի արտադրության ամենանուրբ մի հուշանվեր՝ երկու երկրների խորհրդանշական մոտիվներով: Նրանց ուղեկցում են ձախից աջ. Գեորգ Սարուֆյանը. հայր Եղիշե վարդապետ. Մարգսյանը. սրբազան Աբաղյանը և Ադոլֆո Աջապահյանը: (օգոստոս, 1960 թ.):

Հաջորդ՝ կիրակի օրը Նորին Սուրբ Օծությունը մատուցեց մի շքեղ հայրապետական պատարագ, որին ներկա էին եպիսկոպոսներ, քահանաներ՝ մաեստրո Լևոն Վարդապետյանի ղեկավարած բազմաձայն «Կոմիտաս» երգչախմբի մասնակցությամբ: Նա հավատարմության և հայրենասիրության հուզիչ մի քարոզ.կարդաց:

Բուենոս Այրեսը Վազգեն Ա-ի հովվապետ ական այցելության կենտրոնն էր, որտեղից նա շարունակեց իր ընթացքը Կորդոբա քաղաք (Արգենտինա), Մոնտեվիդեո (Ուրուգվայ), Սան Պաուլո և Բրազիլիա՝ (Բրազիլիա) վերադառնալով միշտ Արգենտինայի մայրաքաղաքը: Այստեղ նա այցելեց բոլոր հեռավոր թաղամասերի և շրջակա բնակավայրերի ծխականներին, մտավ հավատացյալների նվիրատվություն ներով կառուցված եկեղեցիներ, մատուռներ և դպրոցներ:

Արտաքին հարաբերությունների և պաշտամունքի նախարարության քարտուղար դոկտոր Միգել Անգել Սենտենոն կառավարության անունից եկավ ներկայացնել ու իրենց հարգալից ողջույնները:

Առիթ ունեցանք նրա հետ ընդունելություն նախա պատրաստել պետության նախագահ դոկտոր Արտուրո Ֆրոնդիսիի մոտ, որը մեզ ընդունեց շատ ջերմորեն «Casa Ros ada»-ի իր աշխատասենյակում:

Հայրապետը շնորհակալություն հայտնեց իշխանություններին և Արգենտինայի ժողովրդին, որոնք կյանքի ծանր պահին գրկաբաց ընդունեցին հայ գաղթականներին՝ տրամադրելով նրանց օթևան և աշխատելու հնարավորություն: Նախագահ Ֆրոնդիսին ընդհատեց նրա բառերը ասելով. «Ոչ, Նորին Ս. Օծություն, այդ մենք ենք շնորհակալ հայերին: Մենք մի երկիր ենք, որ դեռ զարգացման ուղու վրա է գտնվում, իսկ Դուք ունեք հազարամյա ավանդույթ և մշակույթ, որն ի սպաս դրվեց արգենտինյան բազմազգ ժողովրդի առաջընթացին»:

Մեր հովվապետը բերել էր հատուկ պատրաստված մի նվեր: Խոսքը վերաբերում է Հայաստանի ոսկերիչ և արծաթագործ վարպետների ձեռքով պատրաստած մի արծաթե ափսեի, որ պատկերում էր մի կողմից գեներալ Սան Մարտինին, որ

Նորին Ս. Օծություն Վազգեն Ա-ն հայկական արքեպիսկոպոսարանում ընդունում է Արգենտինայի գահերեց արքեպիսկոպոս կարդինալ Նորին վսեմություն Անտոնիո Կագժիանոյին: Նրանց ուղեկցում է հայկական եկեղեցու հոգաբարձության փոխատենապետ Գևորգ Մարաֆյանը (Բուենոս Այրես, 1960 թ.):

որ կտրում անցնում էր Անդյան լեռնաշղթան, մյուս կողմից Սուրբ Էջմիածնի տաճարը՝ Արարատ լեռան ստորոտին: Նախագահ Ֆրոնդիսին, գոհունակ, շնորհակալություն հայտնեց այցելության և Հայոց հայրապետի արժեքավոր նվերի համար:

Նորին Ս. Օծությանը ուղեկցեցին արքեպիսկոպոս Բաբկեն Աբաղյանը, պարոն Արմեն Բերգամալին, դոկտոր Ադոլֆո Աչաբաշյանը և ես, որպես պատվո հանձնախմբի ատենապետ:

Մեկ այլ նշանավոր հանդիպում իրականացավ Նորին Ս. Օծության համար Արգենտինայի կաթոլիկ առաքելական հռոմեական եկեղեցու առաջնորդ նորին վսեմություն կար դինալ Կագժիանոյի հետ, որը բարեհաճել էր այցելել մեր հաս տատություն և ողջունել Հայաստանի Ծայրագույն Պատ րիարքին: Նորին Ս. Օծությանը պատիվ ունեցա ուղեկցել կարդինալ Կագժիանոյի մոտ մետրոպոլիտենի կուրիայի իր աշ խատավայրը: Մեզ ընդունեցին շատ ջերմորեն, մտերմիկ զրույց սկըսվեց Կաթողիկոս Վազգեն Ա-ի և Արգենտինայի գահերեց արքեպիսկոպոսի միջև՝ քրիստոնեական եկեղեցիների ընդհանրականության վերաբերյալ:

Մոնսինյոր Կագժիանոն ճանաչում էր հայ կական եկեղեցին, ուր այցելել էր ապրիլի 24-ի մի տա րեղարձի կապակցությամբ և խոսել հավա տացյալների հետ՝ ցեղասպանության մասին: Այդ առթիվ նորին վսեմությանը նվիրեցի իմ հրատարակած գրքերը հայ գրակա նության և պատմության մասին: Կագժիանոն մասնակցել էր Վա տիկանի երկրորդ Տիեզերական ժողովին և հայկական եկե ղեցու պատմության խորագիտակ մի անձ էր: Այսպիսով, տեղի ունե ցավ շատ արգասավոր մի երկխոսություն Հայաստանի և Արգեն տինայի եկեղեցիների գերագույն ղեկավարների միջև:

Նորին Ս. Օծությունն իրականացրեց մի հագեցած ծրագիր, խստիվ հետևելով դրան՝ արարողակարգային և մաս նավոր հանդիպումներում, Արգենտինայի բոլոր հայկական հաստատությունների ներկայա ցուցիչների հետ առնչվելու ժամանակ: Որպես համազգային տոնակատարությունների հանձնախմբի ատենապետ, ես կաթողիկոսին ներկայացրեցի այդ հանձնախմբի անդամներին՝ իբրև համայնքի տարբեր հոսանք -

Ամենայն Հայոց կաթողիկոս Վազգեն Ա-ն Հարավային Ամերիկա հովվապետական իր առաջին այցելության ժամանակ՝ եկեղեցու հոգաբարձության կենտրոնական խորհրդի հետ: Ձախից աջ. Վարդան Բարաղյան, Եփրատ Բայրամյան, Կարապետ Էքշյան, Մարգիս Կետեն, արքեպիսկոպոս Բաբկեն Աբաղյան, Նորին Մ. Օծություն Վազգեն Ա., Արմեն Բերգամալի, (ատենապետ), Գեորգ Սարաֆյան (փոխատենապետ), Լևոն Տեր-Ավետիսյան, Հակոբ Տիգրանյան և Գալուստ Տեր-Մարտիրոսյան: Հունիս, 1960 թ.:

ների ներկայացուցիչների: Սոկրատես Թերզյան («Արմենիա» թերթ), Աբրահամ Էուլմեսեկյան («Շարժում» շաբաթաթերթ), Գրիգոր Գենջյան («Սևան» շաբաթաթերթ), Էմիլիո Սամուելյան (Հայ Կաթողիկե Եկեղեցի), Արամայիս Դարբինյան (Հայ Ավետարանական եկեղեցի), Եփրատ Բայրամյան և Գևորգ Սարաֆյան (հայ եկեղեցու հոգաբարձության ատենապետ և ատենադպիր):

Մեր զրույցի ժամանակ Նորին Ս. Օծությունը հաճելիորեն զարմանալով ինձ ասաց. «Սարաֆյան, ինչպե՞ս կարողացար համախմբել այսքան տարբեր անձանց մի հանձնախմբում, որ համերաշխ աշխատում է ամբողջ տարին՝ կազմակերպելով Հայաստանի և Սփյուռքի ամենակարևոր պատմական և ժամանակակից բնույթի մշակութային ու քաղաքական իրադարձությունների տոնակատարումները»: Նա օրհնեց մեր գործունեությունը՝ ասելով, որ այս եղբայրական ոգին պետք է իշխի մեր բոլոր հայրենակիցների մեջ. «Երևում է, որ Բուենոս Այրեսում կան մարդիկ, ինչպես Դուք, որ հասկանում են և արժեքավորում հայերի միասնության ուժը և աշխատում խորացնել եղբայրական համերաշխությունը՝ հենվելով մեր ավանդույթ ների ու մեր մշակույթի վրա»:

Այդ օրը Վեհափառը շատ հագեցած օր էր անցկացրել և մտադիր էր հյուրանոց վերադառնալ, քանի որ արդեն ուշ էր: Նրան հրավիրեցի մեր տուն ընթրիքի, ասելով, որ մեզ մեծ պատիվ արած կլիներ: Նորին Սրբությունն ասաց, որ մտածում էր թեյ խմել և հետո հանգստանալ: Նրան խնդրեցի, որ այդ թեյը խմի իմ օջախում և նա համաձայնեց: Վեհափառն անա կնկալի եկավ, երբ մեր տան դռան մոտ նրան դիմավորեց մեր տնա յին պատանեկան երգչախումբը՝ «Ամեն հայի սրտից բխած» երգով՝ նվիրված Ամենայն Հայոց Կաթողիկոսին: Ապա նրան սի - րով ընդունեցին բոլոր ներկաները՝ իրենց ծափողջույններով: Կաթողիկոսը շատ գոհ նմաց՝ մոռանալով իր հոգնածությունը, փոխեց նույնիսկ իր դեմքի արտահայտությունը: Նրան ներ կայացրեցի իմ ընտանիքի բոլոր անդամներին, ազգականներին և ընկերներին:

Նորին Ս. Օծությունն ինձ հարցրեց, թե ինչու՞ ենք այս -

Նորին Ս. Օծություն Վազգեն Ա-ն օրհնում է Գևորգ և Ռոսա Սարաֆյաններին՝ ամուսնության 24-րդ տարեդարձի առթիվ (15 օգոստոսի, 1960 թ.):

պիսի պատրաստություն տեսել: Նրան պատասխանեցի, որ ցանկանում ենք տոնել մեր հարսանիքի 24-ամյակը և որ մեզ համար մեծ պատիվ է ընդունել նրան մեր համեստ օջախում: Վազգեն Ա-ն նստեց պատվավոր բազկաթոռին և նրա շուրջ՝ իմ ընկերներն ու հարազատները: Այնքան գոհ եղավ, որ ինքն իրեն հայտարարեց «սեղանապետ», որը հայկական ավանդույթի համաձայն, մի անձ է, որը խորհրդակցում է բոլոր ազդեցիկ մարդկանց հետ՝ սեղանը ըստ ամենայնի ղեկավարելու համար, հուն տալով ելույթներին, երգերին, արտասանու թյուններին և այլն:

Կաթողիկոսը պերճախոս էր, խորիմաստ էի ն նրա մըտքերը: Օրհնեց մեր ամուսնությունն ու օջախը: Երեկույթի ընթացքում Նորին Ս. Օծությունը, որպես «սեղանապետ», հաջորդականությամբ հրավիրեց սեղանակիցներին արտահայտվելու: Երբ հերթն ինձ հասավ, նրա համար արտասանեցի Դանիել Վարուժանի «Հայր օրհնե» պոեմը: Նրան այնքան ուրախացրեց մեր միջավայրը և ընտանեկան վերաբերմունքը, որ բացի ինձ շնորհավորելուց և նորից մեզ օրհնելուց հետո, խընդրեց լուսանկարվել Սարաֆյանի ողջ ընտանիքի անդամ ների հետ: Այդ լուսանկարը ընդգրկվեց Արգենտինա՝ առաջին անգամ հովվապետական այցելության կապակցությամբ հրա տարակված իր գրքում, որպես հայկական ավանդական մի ըն տանիքի նկար:

Հրաժեշտի համայնքային մեծ ընթրիքի ժամանակ, որ վերջինը եղավ ընդունելությունների երկար շարքի մեջ և որը մատուցվեց Alvear Palace Hotel-ում, ուր Վազգեն Ա-ն ժա մանակավորապես բնակվում էր, մեծ գոհունակություն զգացինք, երբ Նորին Ս. Օծությունն իր ճառում հատկապես նշեց իր այցե լությունը Արսլանյան վարժարան, որը դարձել էր նպատակասլաց մի հաստատության:

Նա ասաց, որ ներկա է եղել դասերին և մատնանշեց այն դրական նվաճումները, որին հասել էր իմ ատենա պետության ներքո գործող կրթական հանձնախումբը, նաև ի դեմս արքեպիսկոպոս Բաբկեն Աբաղյանի, վարդապետ Հարություն Մուշյանի և մյուս անդամների:

Նորին Ս. Օծութիւն Վազգեն Ա-ն հովվապետական առաջին այցելության ժամանակ անձամբ զարդարում է Գ. Մարաֆյանի կուրծքը Մ. Գրիգոր Լուսավորչի առաջին կարգի շքանշանով: (1960 թ)
Ձախից աջ, Եփրատ Բայրամյան, Մ. Գեղեն, Արմեն Բերգամալի, Լևոն Տեր Ավետիսյան, Հարություն վարդ.. Մուշյան և Բաբկեն արք. Աբաղյան:

Նորին Ս. Օծությունը հիշելով տարբեր ղեկավարների, ասաց նաև, որ պետք է խոսի մասնավորապես մի անձ նավորության մասին, որն իրեն անմնացորդ նվիրել է համայնքային աշխատանքներին՝ մշակութային և կրթական ոլորտում: «Տիար Գևորգ Սարաֆյան»: Իմ գործունեության դրվատանքն անելով, եզրափակեց իր կարճ ելույթը. «Ես տեսա և համոզվեցի, որ պարոն Գևորգ Սարաֆյանն իսկական հայրենասիրական ոգի ունի: Գիշեր ու ցերեկ նրա սիրտը խփում է հայության, հայ կական եկեղեցուն և դպրոցներին բարոյապես և նյութապես աջակցելու համար: Ձեր ներկայությամբ պարգևատրում եմ Գևորգ Սարաֆյանին հայ եկեղեցու ամենաբնարձր՝ Սուրբ Գրիգոր Լուսավորչի Առաջին Աստիճանի Ասպետի Շքա նշանով»:

Ինձ կանչեց իր մոտ և անձամբ ամրացրեց երջան կության շքանշանը իմ կրծքին: Այդ պահին ուժգին ծափա հարություններ հնչեցին և բոլորը գոհ մնացին՝ տեսնելով, որ Վեհափառ Վազգեն Ա-ն գիտեր հրապարակավ երախտագետ լինել նվիրվածության համար:

Շատ հուզված՝ նրան խնդրեցի, որ ինձ թույլատրի մեկ րոպե արտահայտվել: Եվ ասացի. «Վեհափառ, մեծ պատիվ է, որ արեցիք ինձ համար այն, ինչին ինձ արժանի չէի զգում: Քանի որ Դուք այսպես վճռեցիք, պարգևն ընդունում եմ որդիական սիրով, Ձեզ խնդրելով, որ ինձ օրհնեք և թող Աստված ինձ ուժ, առողջություն և կյանք տա, որպեսզի շարունակեմ կատարել իմ պարտականությունները հայ եկեղեցու, համայնքի և հայ մշակույթի բարօրության համար և այսպիսով, արժանի լինել այս շքանշանին, որով ինձ պարգևատրեցիք»: Դրան հետևեցին ներկաների ծափահարությունները:

Նորին Ս. Օծություն Վազգեն Ա-ն մեզ ևս երկու այլ հովվապետական այցելություն կատարեց: Երկրորդը տեղի ունեցավ 1968 թվականին և ես կրկին հրավիրվեցի նախագահելու նրա պաշտոնական ընդունելության հանձնախմբին: Լարված աշխատանք ծավալեցինք, որպեսզի Նորին Ս. Օծությունը կարողանա լինել իր ծխականների մոտ և նրանց հաղորդել իր հայրական խրատներն ու խորհուրդները, որպեսզի միշտ լի -

Սուրբ Գործվածքը, որտեղ արտացոլված է Քրիստոսի պատկերը այնպես ինչպես այն պահպանվում է Ճենովայի հայերի Սուրբ Բարդուղիմեոս եկեղեցում:

ենք մեզ որդեգրած երկրների հավատարիմ քաղաքացիները՝ պաշտպանելով մեր նախնիների քրիստոնեական հավատքի կրակը, որ բացառիկ զոհաբերություններով մեզ կտակեց մեր *Մարտիրոս* եկեղեցին՝ շարունակելով հաստատապես ընթանալ դարերի միջով: Հայ առաքելական եկեղեցին ճառագում է քրիստոնեության լույսը մեր հնադարյան լեզվի, ավանդույթի և մշակույթի մեջ, ուսուցանում մեզ՝ միասին ապրել խաղաղության, համերաշխության և ներդաշնակության մեջ՝ մարդկության մեծ ընտանիքում:

Իմ խոսքում, որ հայտնեցի ողջ համայնքի անունից, որպես ընդունելության հանձնախմբի ատենապետ, ի շարս այլ մտքերի, նշեցի, որ Նորին Ս. Օծությունն իր կարճաժամկետ այցելության ընթացքում մեծ հաճույքով նկատեց, որ իր հայ ռենակից վերապրողները, հակառակ իրենց թանկագին հարազատների, նախնիների տարածքների և բոլոր նյութական բարիքների կորստյանը, անվրեպ շարունակեցին պահպանել հայ ժողովրդի բարոյական և մտավոր արժեքները. վերա հաստատեցին իրենց կյանքն ու կենցաղը այս ազնիվ հայ ռենիքում՝ Արգենտինայում: Վեր խոյացան եկեղեցիներ և մատուռներ, կառուցվեցին մշակութային, կրթական և բարեգործական կենտրոններ: Ֆաբրիկաներում, արհեստանոցներում և դասասենյակներում, բանակի շարքերում նրանց որդիները հա մախընթացվել են հուզիչ ներդաշնակությամբ՝ բարձրացնելու վեհությունը Արգենտինայի Հանրապետության, որը նրանց ասպընջականեց: Եվ եզրափակեցի. «Անշուշտ, Ձեր զգացումների հավատարիմ թարգմանիչը կլինեմ՝ մաղթելով երջանիկ վերադարձ մեր նշանավոր հյուրին և իր ուղեկցող անձանց: Նորին Ս. Օծությանը ցանկանում եմ խնդրել, որպեսզի նա Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում հանդիսավոր պատարագ մատուցի՝ ի հավերժ համերաշխություն իր ծխականների և արգենտինյան ժողովրդի, որպեսզի խաղաղությունը, արդարությունը և փոխ ըմբռնումը թագավորեն աշխարհում»:

Երուսաղեմի հայկական պատրիարքարանը

Սուրբ Էջմիածնից հետո, անկասկած, ամենահարգված սրբավայրը Երուսաղեմն է, որտեղ հայերը Քրիստոսից առաջ թափանցել էին Պաղեստին՝ Հայաստանի «արքայից արքա» Տիգրան Մեծի ժամանակաշրջանում: Շատ ջերմ հարաբերություն ենք ունեցել այս շրջանի հետ, բացի դրանից, ունենք Մովսես Խորենացու մեկնաբանությունը, որտեղ նա պատմում է, թե ինչպես Աբգար թագավորը ուղարկում է մի պատվիրակություն՝ հրավիրելու Քրիստոսին իր մայրաքաղաք Եդեսա (Եդեսիա), որովհետև լսել էր, որ նա բուժում է բորոտներին և հրաշքներ գործում: Հայ միապետը, որ տառապում էր այդ հիվանդությամբ, իր ուղերձում դիմում է նրան, իբրև Աստծո կամ Աստծո որդու. «Այդ պատճառով, գրում է Աբգարը, - քեզ գրեցի, աղա չելով, որ նեղություն կրես, գաս: Նաև լսեցի, թե հրեաները... ուզում են քեզ չարչարել, բայց ես մի փոքր և գեղեցիկ քաղաք ունեմ, որը երկուսիս էլ բավական է»: Պատվիրակները ժամանեցին Երուսաղեմ ճիշտ Քրիստոսի վերջին օրերին, սինագոգը լիքը լցված էր բոլոր կողմերից եկած մարդկանցով և հայկական պատվիրակությունը չկարողացավ մոտենալ Հիսուս Քրիստոսին: Պատվիրակներից մեկը նկարիչ էր, որը փորձեց նկարել Մեսիային: Հիսուսը հեռվից նկատեց և ուղարկեց իր առաքյալներից մեկին՝ նրանց ասելու, որ մի պահ սպասեն, քանի որ նրանց իր պատկերն է տալու: Նա վերցրեց սպիտակ մի գործվածք և հպեց իր դեմքին, որտեղ դրոշմվեց սուրբ պատկերը: Քրիստոսն այն տվեց հայ պատվիրակությանը՝ ասելով, որ չի կարող գալ այդ պահին, սակայն խոստանում է, որ իր հարություն առնելուց հետո կուղարկի իր առաքյալներից մեկին, որպեսզի նրան բուժի և քրիստոնեական դարձի բերի հայ ժողովրդին: Պատվիրակները վերադարձան Եդեսիա՝ թագավորին բերելով սուրբ պատկերը և Փրկչի խոստումը, որը հետո կատարվեց Սուրբ Թադեոսի կողմից, նրա համբարձվելուց հետո:

Աստվածային պատկերը Եդեսիայում պաշտվեց դարեր շարունակ: Երբ քաղաքը նվաճվեց արաբների կողմից, Կոստանդին կայսրը սուրբ պատկերը փրկագնելու համար ետ վե-

ռաղաձրեց 200 գերիների և վճարեց 1200 արծաթե դրամ: 1362 թվականին Լեոնարդո Մոնտալտոն ստացավ Պալեոլոգ կայսեր նվիրած այս պատկերը իր ծառայությունների դիմաց և այն տարավ Ճենովա: Մոնտալտոյի մահից հետո սուրբ պատկերը հանձնվեց Սուրբ Բարդուղիմեոս Դեգլի Արմենիի եկեղեցու հայրերին:

Քրիստոնեության առաջին տարիներից հետո Երուսաղեմում կար հայկական նշանակալի մի համայնք, որտեղ հիմնվել էր հայ առաքելական եկեղեցու կրոնական մի եղ բայրություն՝ կոչվելով սրբոց Հակոբյանց միաբանություն: 638 թ. այնտեղ կառուցվեց հայկական մի պատրիարքարան, որպես սուրբ վայրերի պահապան, որը ճանաչվեց Մոհամեդ մարգարեի հրովարտակներով: Հայերը կառուցեցին նաև մի մեծ տաճար այն վայրում, որտեղ թաղված էր Սուրբ Հակոբ առաքյալի գլուխը: Ինչպես հայտնի է, սրբի մարմինը տարվեց Իսպանիա, ուր այն ընդունվեց և կառուցվեց Կոմպոստելայի հռչակավոր Սուրբ Հակոբ սրբավայրը:

Հայկական պատրիարքարանը կարևոր աշխատանք է իրականացնում կրթության և մշակույթի ոլորտներում: Շարունակում է գործել հատուկ ճեմարանը, որտեղ հաճախում են բոլոր կողմերից եկած հայ երիտասարդները՝ փորձնական շրջան անցնելու և հոգևոր կյանքին նվիրվելու համար: Այնտեղից դուրս եկան շատ արքեպիսկոպոսներ, որ տակավին այսօր ղեկավարում են Սփյուռքի եկեղեցիների մեծամասնությունը: Պատրիարքարանը զբաղեցնում է շատ մեծ մի տարածք (150 հազ. քառ.մ. չափով) հին քաղաքի հայկական թաղամասում:

1964 թվականին ընդունեցինք Երուսաղեմի հայ պատրիարք նորին ամենապատվություն արքեպիսկոպոս Եղիշե Տերտերյանի այցելությունը մի շքախմբի հետ, որի անդամներն էին՝ արքեպիսկոպոս Շահե Աճեմյանը և վարդապետ Հակոբ Վարդանյանը: Այդ տարի Երուսաղեմի երեք պատրիարքները որոշել էին վերանորոգել Սուրբ Հարության տաճարը, որը գլխավորվում է ուղղափառ եկեղեցու, հայ առաքելական եկեղեցու և կաթոլիկ առաքելական հռոմեական եկեղեցու հսկողության տակ: Աշխատանքների նախահաշիվը եկեղեցիների միջև բա-

Երուսաղեմի հայ պատրիարք Նորին Սրբություն Եղիշե Տերտերյանը և արքեպիսկոպոս Շահե Աճեմյանը ընդունվում են Էսեյսա միջազգային օդակայանում արքեպիսկոպոս Բարկեն Աբաղյանի գլխավորած հայկական եկեղեցու հոգաբարձության պատվիրակության կողմից. Գևորգ Մարաֆյան, Եփրատ Բայրամյան և Ժիրայր Էկշյան: (1964 թ.):

ժանվել էր երեք հավասար մասերի: Վատիկանը ապահովում էր կաթոլիկական մուծումը, Հունաստանի թագավորը՝ ուղղափառների, իսկ հայ եկեղեցու մասը պետք է վճարվեր Սփյուռքի հավատցյալների նվիրատվություններով:

Դրա համար նորին ամենապատվությունը գալիս էր այցելելու իր հայրենակիցներին՝ նրանց ներդրումը միացնելու աշխարհի մյուս համայնքներում հավաքված միջոցներին: Հայ եկեղեցու հոգաբարձության գլխավոր խորհուրդը նրան ընդունեց ոգևորությամբ և մեր բազմաթիվ հայրենակիցների մասնակցությամբ, Էսեյսա օդակայանում այնպես, ինչպես Նորին Ս. Օծություն Վազգեն Ա-ին դիմավորելիս: Իր նվիրա պետական անձին համապատասխան մեծարանքներով պատրիարքը և նրան ուղեկցող անձինք ժամանեցին Սուրբ Գրիգոր Լուսավորիչ եկեղեցի, ուր նրանց սպասում էր հոգևոր ականությունը և բազմությունը: Կարճ ժամանակ մնալով եկեղեցու բեմում, պատրիարքը ուղղվեց դեպի աղոթողները՝ նրանց բաժանելով սուրբ վայրերի օրհնանքները, Հիսուս Քրիստոսի և առաքյալ Սուրբ Հակոբի սիրո պատգամը, որի անունը կրում է իր միա բանությունը:

Հաջորդ կիրակի նորին ամենապատվությունը մա տուցեց հովվապետական շքեղ պատարագ՝ հոգևորականության մասնակցությամբ: Նրա քարոզը մեծ ոգևորություն առաջացրեց ներկաների մեջ: Խոսեց՝ բացատրելով այն ամենը, ինչը պատճառ դարձավ իր ճանապարհորդության: Բարեբախտաբար, պատրիարքը հաջողություն ունեցավ: Համայնքը, ինչպես և սպասվում էր, հոգածու վերաբերմունք ցույց տվեց, մի շատ կարևոր և ողջ քրիստոնեության համար ընդհանուր գործին: Այնտեղ՝ Երուսաղեմում է պահպանվում Տերունական դամբարանը, որտեղ ուխտագնացներ են հաճախում աշխարհի բոլոր կողմերից:

Ինձ պատիվ վիճակվեց ուղեկցել Եղիշե պատրիարքին Արգենտինայի պետության նախագահ դոկտոր Արտուրո Իլիայի մոտ ընդունելությանը՝ արքեպիսկոպոս Աբաղյանի և Աճեմյանի, պարոնայք Արմեն Բերգամալիի, Եփրատ Բայրամյանի և արտաքին հարաբերությունների և պաշտամունքի նա-



Երուսաղեմի պատրիարք Նորին ամենապատվություն Եղիշե Տերտերյանի այցելությունը երկրի նախագահ դոկտոր Արտուրո Իլիային:
Ձախից աջ. Եփրատ Բայրամյան, Արմեն Բերգամալի, եպիսկոպոս Բաբկեն Աբաղյան, Գևորգ Մարաֆյան և դոկտոր Ռոման Բրավո (1964 թ.):

խարարությունից՝ դոկտոր Ռամոն Բրավոյի հետ: Նորին ամենապատվությունը Երուսաղեմի Տերունական դամբարանի օրհնանքներն հաղորդեց պարոն նախագահին, Արգենտինայի Հանրապետության ժողովրդին և իշխանություններին: Շնորհակալություն հայտնեց հայերին, հատկապես առաջին հայ գաղթականներին և նրանց հետնորդներին ասպնջականելու համար: Ի երախտագիտություն այս հարգանքի, արքե պիսկոպոս Տերտերյանը, որպես Երուսաղեմի հայ պատրիարքարանի առաջնորդ, Նորին Գերազանցություն դոկտոր Արտուրո Իլի ային պարգևատրեց Սուրբ Տեղյաց Ասպետի Առաջին Կարգի Շքանշանով, մի պարգև, որ շնորհում են Երուսաղեմի երեք պատրիարքները՝ (լատինական, ուղղափառ և հայկակա ն) ճանաչված և գնահատված է ողջ քրիստոնեության կողմից: Որպես հաճելի տեղեկություն հայտնեցի, որ այս նույն պարգևը ուղղափառ պատրիարքը շնորհել է Միացյալ Նահանգների նախագահ Ջոն Քենեդուն, իսկ մեր պատրիարքարանը՝ Հորդանանի Հուսեյին թագավորին և ուրիշ բարձրաս տիճան անձնավորությունների: Նորին ամենապատվությունն ինձ ևս շնորհեց Սուրբ Տեղյաց Ասպետի Առաջին Կարգի Շքանշան՝ Արգենտինայի համայնքային կյանքում իմ իրագործած աշխատանքների, մասնավորապես՝ իսպաներեն լեզվով հայ մշա կույթի տարածման համար: Համայնքը՝ հայկ ական եկեղեցու հոգաբարձության կենտրոնական խորհրդի գլխավորությամբ, հրաժեշտի մի մեծ ընթրիք կազմակերպեց Հայ Կենտրոնի դահլիճում ի պատիվ Երուսաղեմի պատվիարակության: Ճաշ կերույթի հովանավորն էր Հարավային Ամերիկայի արքե պիսկոպոս Բաբկեն Աբաղյանը: Դրան ներկա էր նաև շախմատի աշխարհի չեմպիոն, գրոսմայստեր Տիգրան Պետրոսյանը:

Խոսք վերցրեցի՝ ներկայացնելու երկու նշանավոր անձանց և նշելու նրանց այցի կարևորությունը համայնքի համար: Տիգրան Պետրոսյանն իր ելույթով բարձրացրեց երի տասարդության ոգին՝ հիշատակելով հայ ժողովրդի ինչպես հոգևոր, այնպես էլ մարզական նվաճումները: Նորին ամե նապատվությունն անդրադարձավ հատկապես պատրիարքարանի դա բավոր առաքելությանը, որն այնքան կենսունակ եղավ նաև մեր

օրերում:

Կցանկանայի հիշատակել մի դիպված, կապված նորին ամենապատվության հետ: Մի մտերմիկ փաստ: Մեր հարկի տակ ընտանեկան ընթրիքով պատվել էինք պատրիարքին, նրա ուղեկիցներին և արքեպիսկոպոս Աբաղյանին: Սեղանի շուրջ, գրկիս տեսնելով իմ առաջնեկ թոռնուհուն, վարդապետ Հակոբ Վարդանյանն ինձ հարցրեց, թե արդյո՞ք նա կնքված է: Նրան պատասխանեցի, որ ոչ, դեռ փոքր է: «Կարևոր չէ,- ասաց նա,- կկնքենք: Հարկ է, որ նրան կնքի պատրիարքը »: «Ինչպե՞ս, - հարցրեցի ես, - Պատրիարքը նու՞յնպես կնքում է»: Պա տասխանեց. «Սարաֆյանի համար կարող է»: Խոսեցին իրար մեջ և պայմանավորվեցին, որ հաջորդ կիրակի պատրի արքի գըլխավորությամբ և ողջ հոգևորականության մասնակցությամբ եկեղեցում կկատարվի իմ թոռնուհի Ռոսալբայի (այժմ քա ղաքացիական ինժեներ) կնունքը: Դա մի արտակարգ իրադարձություն էր, որը մեծ պատիվ բերեց մեր ընտանիքին:

ՀԱՅԿԱԿԱՆ ՊԱՏՐԻԱՐՔԱՐԱՆ

Պայծառափայլ պարոն Գևորգ Սարաֆյանին

Հարգելի պարոն Սարաֆյան

Մեզ համար մեծ հաճույք է զարդարել Ձեր անձնավորության կուրծքը Սուրբ Հարության Տաճարի Առաջին Կարգի Ոսկյա Շքանշանով: Ձեր կողմից մատուցած մշակութային և կրթական ծառայությունները մեր ազգին և մեր եկեղեցուն ձեր կյանքի շրջայի անգնահատելի օրակներն են, որ տարածվում են Արգենտինայից Երուսաղեմ և անհատականացնում ձեր ազնիվ հոգին որպես մի մեծ հայի:

Որպես ձեր հայկական հոգու գնահատական և փառաբանում ձեր կողմից կատարված գործունեությանը մեր ժողովրդին, հայտարարում ենք ձեր պատվավոր անձին Քրիստոսի Սուրբ Տեղյաց Առաջին Կարգի Շքանշանի Ասպետ և օրհնում ձեզ, ձեր տիկնոջը և երեխաներին խնդրելով, որ մնան միշտ որպես մի հայ օրինակելի ընտանիք:

Սրտաբուխ ողջույններով և օրհնանքներով
Աղոթարար Արքեպիսկոպոս Եղիշե Տերտերյան
Երուսաղեմի հայ պատրիարքարան

Երուսաղեմի հայ պատրիարք նորին ամենապատվություն Եղիշե Տերտերյանի նամակը Գևորգ Սարաֆյանին Սուրբ Տեղյաց Առաջին Կարգի Շքանշանով պարգևատրվելու մասին:

Սուրբ Գրիգոր Լուսավորիչ եկեղեցու բեմից արքեպիսկոպոս Բաբկեն Աբաղյանը Գևորգ Սարաֆյանին է հանձնում Սուրբ Տեղյաց Առաջին Կարգի Շքանշանը՝ ուղարկված Երուսաղեմի Պատրիարք Եղիշե Տերտերյանի կողմից:

Նորին Սուրբ Օծություն Գարեգին Ա-ի այցելությունը

Մեզ այցելած հայ առաքելական եկեղեցու բարձ բաստիճան հոգևորականների շարքը համալրելու համար, մեծ բա վականությամբ պետք է նշեմ Ծայրագույն Պատրիարք և Ամենայն Հայոց Կաթողիկոս Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Ա-ի հով վապետական առաջին այցելությունը 1996 թվականին Մայր Ա թոռ Սուրբ Էջմիածնից: Նա ընտրվել էր 1994 թվականին որպես ան մահության գիրկն անցած երջանկահիշատակ Վազգեն Ա-ի հա ջորդ:

Նոր Կաթողիկոսը եկել էր Արևմտյան Եվրոպայի հայ թեմի առաջնորդ արքեպիսկոպոս Գյուտ Նազգաշյանի ուղեկցությամբ, մի հմուտ աստվածաբանի, որ երկար տարիներ գլխավորում է այդ բարձր պաշտոնը:

Էջմիածնի կաթողիկոսական ընտրություններից առաջ Նորին Ս. Օծությունը Մեծի Տանն Կիլիկիո Կաթողիկոս Գա ռեգին Բ-ն էր:

Այս պատճառով էլ, երբ նա հրավիրվեց զբաղեցնելու Սուրբ Գրիգոր Լուսավորչի գահը Էջմիածնում, որտեղ այդ անունով կաթողիկոս նախկինում չէր եղել, անվանվեց Գա ռեգին Ա:

Նորին Ս. Օծությունը Մոնտեվիդեոյից ժամանեց Բուենոս Այրես: Ընդունվեց մեծ ոգևորությամբ և բոլոր մեծա ռանքներով, իր բարձր պաշտոնին անցնելուն պատշաճ ձևով: Մեր համայնքի բոլոր ղեկավարներով նրան ուղեկցեցինք մինչև Սուրբ Գրիգոր Լուսավորիչ եկեղեցի, որտեղ նրան ընդունեց Սրբազան արքեպիսկոպոս Գիսակ Մուրադյանը, որը հոգևորականության գլուխն անցած՝ հնչեցնում էր «Հրաշապար» խմբերգը, այն ժամանակ, երբ զանգերի ղողանջը ազդարարում էր նրա երկնահաճո գալուստը:

Եկեղեցու բեմից Գարեգին Ա-ն աղոթեց Բարձրյալին՝ շնորհակալություն հայտնելով բարեհաջող տեղ հասնելու և իր հոտին հանդիպելու համար: Խոսեց տեղն ի տեղոք, ինչպես վերածնված եկեղեցու և այսօրվա Ազատ և Անկախ Հայաստանի, այնպես էլ իր այցելած համայնքների կյանքի մասին: Նորին Ս.

Օծությունն այցելեց մշակութային, քաղաքական, մարզական միություններ, զրուցեց նրանց ներկայացուցիչների հետ: Ինձ վրա վառ տպավորություն թողեցին նրա մտքերը, մասնա վորապես այն խոսքերը, որոնք նա ասաց դպրոցներում՝ դիմելով աշակերտներին: Երբ առիթ ունեցա մտերմիկ զրույց վարել Վեհափառի հետ, նրան շնորհավորեցի իր ազդեցիկ խոսքի համար. իրոք ինձ շատ էր դուր եկել, թե ինչպես էր նա գրավում երեխաների և պատանիների համակրանքը: «Մեր օրերում, իսկապես, զգացվում է այսպիսի մերձեցման կարիքը, առավել ևս՝ համայնքի բոլոր անդամների հետ հաղորդակցման կարողությունը», ասացի նրան: Այստեղ՝ Արգենտինայում, մեր հա մայնքը այս հոգևոր ուժի կարիքն է զգում: Բարեբախտաբար Դուք, այն անձնավորությունն եք, որին պետք է ընդօրինակեն մեր հավատացյալները, որպեսզի կարողանան պահպանել մեր բոլոր հայրենակիցների հոգևոր միասնությունը եկեղեցու հետ»: Կաթողիկոս Գարեգին Ա-ն ծանոթ էր Հալեպի Հայկազյան վարժարանին, որի շրջանավարտն էի ես:

Խոսեցինք և հիշեցինք այս հաստատության ուսուցիչներին: Առիթ ունեցա նրան նվիրել Մ. Օրմանյանի «Հայոց եկեղեցին և իր պատմությունը» գիրքը, որը, ես թարգմանել և հրատարակել էի իսպաներեն: Նորին Ս. Օծությունը մեծ բա վականություն զգաց, և ինձ շնորհավորեց՝ խնդրելով, որ շարունակ եմ այս ճանապարհով Արգենտինայում ճանաչել տալ հայ եկեղեցին և հայ ժողովրդին:

Հայ մշակույթի ժողովրդականացման աշխատանքները

Հարկավոր էր իրականացնել հայոց պատմության և մշակույթի ժողովրդականացման գործը: Քիչ էին այն հայ երիտասարդները, որոնք պետք է գնային համալսարան հայկական դպրոցն ավարտելուց հետո: Ասենք, դա հնարավոր էլ չէր, որովհետև դեռ չունեինք լիարժեք կազմակերպված և երկրի միջնակարգ կրթությանը համարժեք հաստատու թյուններ:

Ես եկա Արգենտինա որշակի պատրաստականությամբ և անհրաժեշտ գիտելիքներով: Մնաս բարով ասացի Հայ կազյան վարժարանի տնօրենին: Նա ուսանել էր Եվրոպայում և իբրև լուսամիտ մարդ, ինձ ասաց, որ. «Բուենոս Այրեսում ես կտեսնեմ բոլորովին մի այլ աշխարհ, արտասովոր և անծանոթ: Հենց այդ աշխարհին էլ պետք է ճանաչեցնել տալ մեր ժողովուրդը և մշակույթը»:

Տիրապետելով զանազան լեզուների, հատկապես ֆրանսերենի, կարողացա սովորել իսպաներեն լեզուն իր քերականական նրբություններով և կապող օղակ լինել տարագիր հայերի և նոր սերնդի միջև:

Համագործակցեցի «Արարատ» գրական հանդեսին, որը հրատարակում էր Բուենոս Այրեսում Հարավային Ամերիկայի հայ առաքելական եկեղեցու առաջին պատվիրակ Սրբազան Գարեգին Խաչատրյանը: Իմ գրառումները հրապարակվում էին իսպաներեն բաժնում, «Հայ Կեդրոն» հանդեսում և ուրիշ թերթերում ու շաբաթաթերթերում, ինչպես նաև «Հայկական մշակույթի ժամ»-ի ռադիոհաղորդումներում, որտեղ ընթերցում էի հայերենից և ֆրանսերենից գրական հատընտիր հատվածների իմ թարգմանությունները:

Դրա նպատակն էր հաստատել մեր ինքնությունը և խուսափել՝ որ մեզ շփոթեն այլ ժողովուրդների, մաս նավորապես նրանց հետ, ովքեր մեր դահիճներն էին եղել. մի բան, որ գըրգռում էր մեր վրդովմունքը:

Օգտագործեցի գրիչը որպես լավագույն զենք՝ ընդդեմ յաթաղանի, որ գործի էին դրել թուրքերը՝ ջանալով բնաջնջել հայ ժողովրդին:

Համառորեն ձգտեցի փոխըմբռնման կամուրջ ստեղծել ավագների և երիտասարդների միջև՝ ինչպես իմ տարիքով, այնպես էլ՝ գիտելիքներով: Գործում էի ամեն ուղղություններով, որպեսզի իրականացնեմ իմ այդ նպատակը: Ուստի չբա վարարվեցի հոդվածների հրապարակումներով, մտադրություն ունեի պատրաստել ինչ որ կարևոր բան, ավելի մնայուն: Հարկավոր էր գիրք հրատարակել:

Մեծ զրկանքներով ինձ հաջողվեց ստեղծել իմ անձ նա-

կան գրադարանը: Իմ խնայողությունն առաջին անգամ ծախսել եմ գրքեր գնելու համար: Անմիջապես ձեռք էի բերում արտասահմանում հայտնվող յուրաքանչյուր նոր գիրք, հայերեն, ֆրանսերեն, կամ մի այլ լեզով, հայոց պատմության և մշակույթի վերաբերյալ՝ իմ գիտելիքները հարստացնելու համար: Տրվել էի ինքնակրթությանը՝ միշտ գիտենալու անհագ ցանկությամբ:

Բացի դրանից, Սփյուռքի հետ մշակութային կապերի կոմիտեն, որի ղեկավարները գիտեին իմ անցած ուղին, ինձ բաժանորդագրում էին արվեստի և գրականության մասնագիտական հանդեսներին, որոնք ինձ էին ուղարկում գրական նոր հրատարակությունների հետ:

Ինչպես ծնվեց իմ առաջին գիրքը

1950 թվականին Բուենոս Այրես էր եկել Երուսաղեմի հայկական պատրիարքարանի մի ներկայացուցչություն՝ օգնելու մեր համայնքի մարդասիրական համագործակցությանն այն գաղթականների համար, որոնք պատսպարվում էին միաբանության վանքում: Ներկայացուցչության ղեկավարը Սեբրովբե վարդապետ Մանուկյանն էր, որը հետո պատվիրակ նշանակվեց Արևմտյան Եվրոպայում՝ նստավայրը Փարիզ: Նա տեսավ իմ հակումները և մեր մշակույթի տարածման օգտին կատարած իմ աշխատանքները: Խնդրեցի, որ ինձ ուղարկեր հայագիտական նյութեր: Նա հայտնեց, որ Ֆրանսիայում՝ Փարիզի Սորբոնի Համալսարանի հայագիտության ամբիոնի վարիչ պրոֆեսոր Հրանտ Թորոսյանը հրատարակել է մի շատ ուշագրավ գիրք և խոստացավ ուղարկել: Երբ գիրքը ստացա և ընթերցեցի, տեսա, որ մեծ իմացության տեր մի հեղինակի գործ է, և շատ ընդարձակ, 350 էջանոց: Առաջաբանը գրել էր Ռենե Գրուսեթը՝ ֆրանսիական ակադեմիայից և արժանացել «Bremont» մրցանակի: Մտածեցի, որ այս շատ ուշագրավ գիրքը արժանի է իսպաներեն թարգմանվելու: **«Հայ գրականության պատմություն»** վերնագրով այս աշխատության մեջ Թորոսյանն ամփոփում էր հայագիտության և հայ գրականության

զարգացման վերաբերյալ իր սահմանած դասակարգումները:

Այս ուսումնասիրությունը պատրաստվել էր մի շարք տեսական հիմնադրույթների հիման վրա՝ նկատի ունենալով համաշխարհային գրականությունը: Հեղինակը հատուկ տեղ էր հատկացրել հայ գրերին՝ սկսելով հեռավոր անցյալից, անց նելով միջին դարերը և հասնելով մինչև 1950-ական թվականներ: Հաշվի էին առնվել բոլոր սկզբնաղբյուրները՝ ողջ համայ նապատկերը ներկայացնելու համար:

Քանի որ գիրքը պատրաստված էր ոչ հայ ուսանողների համար, արժեր, որ ներկայացվեր իսպանախոս ընթերցողներին ևս: Նրա մեկնաբանություններն օբյեկտիվ էին, արված գիտական չափանիշներով: Հիրավի, աշխատությունը մեծ արժեք էր, քանի որ, բացի հայ գրականության ընթացքն իր զարգացման մեջ հետազոտելուց, հեղինակն ավելացրել էր պատմական մի հմտալի ներածություն:

Հրանտ Թորոսյանի «Հայ գրականության պատմություն» գրքի իսպաներեն իմ թարգմանությունը հրատարակվեց 1959 թվականի հունիսին: Սա իմ առաջին աշխատանքն էր, լուրջ և կարևոր, երկար տարիների իմ ցանկությունը՝ այս գործում բյուրեղացած:

Գիրքը 3000 օրինակ, դրվեց կրթական բոլոր հաստատությունների աշակերտների, դասավանդող մարմնի և հայկական դպրոցների տրամադրության տակ:

Գրքի բազմաթիվ օրինակներ նվիրեցի արգենտինյան մտավորականությանը, ակադեմիաներին, Արգենտինայի գրողների միությանը և նրա բոլոր մասնաճյուղերին, ինչպես նաև ազգային, մունիցիպալ և համալսարանական, ինչ պես Արգենտինայի, այնպես էլ իսպանախոս այլ երկրների բոլոր գրադարաններին:

Բազմաթիվ նամակներից, որ սկսեցի ստանալ անվանի անձնավորություններից, ցանկանում եմ առանձնացնել Ար գենտինայի կրթության այն ժամանակվա նախարար Ատիլիո Դելլ Օրո Մայնիի գրածը. «Դուք բացեցիք մի նոր աշխարհ ինձ համար, որ չէի ճանաչում: Գիտեի հայերին իրենց տառապանքներից, սակայն չգիտեի, որ տիրում էին այդքան հարուստ և

նշանակալի մի գրականության: Կցանկանայի ընթերցել այս հեղինակների գործերից»:

Պարոն նախարարի, ինչպես նաև շատ ուրիշ արգեն տինացի և հայ մտավորականների այս խրա խուսանքներն ինձ մղեցին շարունակել գրական աշխատանքը, թարգմանել և հրատարակել հայ բանաստեղծների մի անթոլոգիա V դարից մինչև մեր օրերը՝ իսպանախոս հասարակությանը մեր գրականության ընտրյալ նմուշներով գեղագիտական հաճույք պատճառելու համար:

Բազմաթիվ օրինակներ ուղարկեցի հեղինակին՝ Հրանտ Թորոսյանին, որը շարունակում էր աշխատել Սորբոնում, որպես հայ գրականության պրոֆեսոր: Նա ինձ ուղարկեց մի նամակ՝ շնորհավորելով և հայտնելով, որ գիրքը ցույց է տվել բազմաթիվ վարժարաններում, իսպանական գրականությանը քաջատեղյակ մարդկանց, որոնք բարձր էին գնահատել թարգմանությունն ու այն ներկայացնելու ձևը: Իմ շփումները հեղի նակի հետ սահմանափակվեցին զուտ նամակագրական շրջանակներում: Ինձ մոտ պահպանվել են նրա մի քանի հե տաքրքիր նամակներ:

Այս գրքի հաջողությունից քաջալերված՝ Թորոսյանն ինձ ուղարկեց մի նոր անտիպ գործի ձեռագիր, որը կրում էր **«Հայաստանը և Հայկական հարցը»** վերնագիրը: Ընթերցեցի, շատ հետաքրքիր և լուրջ գործ էր, գրված էր ֆրան սերեն լեզվով, հեղինակը չէր կարողացել հրատարակել, որովհետև հովանավոր չէր գտել:

Գործը մեքենագիր 600 էջից էր բաղկացած, հագեցած առատ փաստերով և հանգամանալի վերլուծությամբ: Այն ընդգրկում էր թուրքերի կողմից Կոնստանդնուպոլսի նվա ճումից մինչև մեր օրերն ընկած ժամանակաշրջանը: Նրան ասա ցի, որ ինձ հետաքրքրում է դրա հրատարակությունը և թույլ տվություն խնդրեցի այն իսպաներեն թարգմանելու և տարա ածելու իսպանախոս երկրներում: Թորոսյանը տվեց իր հա մաձայնությունը՝ հայտնելով, որ վստահում է ընտրության իմ կարողությանը:

Սկսեցի իմ թարգմանությունը Ռուսաստանի ու Թուր-

քիայի միջև Սան Ստեֆանոյի խաղաղության մասին նախ նա-կան բանակցություններից, որտեղ Օսմանյան կայս րությանը պարտավորեցվում էր բարենորոգումներ կատարել Արևմտյան Հայաստանում: Այնուհետև, գրքում ներկայացվում են միջազ-գային կոնֆերանսներում Հայկական հարցի քննար կումները և հայերի ինքնապաշտպանական պայք արի դրվագները: Չնա-յած բարեփոխումների վերաբերյալ խոստումներին, Թուր քիան օգտագործեց Համաշխարհային առաջին պատե րազմը՝ ջանա-լով բնաջնջել իր տիրապետության տակ գտնվող հայ բնակ չու-թյանը՝ կազմակերպելով XX դարի առաջին Ցեղասպա նությունը և ձգտելով այս կերպ վերացնել Հայ կական հարցը: Այս գիր-քը պարունակում է լավ վերլուծված հի շարժան փաստեր: Խոսում է հայերի դժվարին կյանքի և ճա կատագրի մա սին՝ մինչև անկախության ձեռքբերումը և Հան րապետության ստեղ-ծումը 1918 թվականի մայիսի 28-ին, հնա գույն մի փոքրիկ տա-րածքի վրա: Դժբախտաբար, Սևրի պայ մանագիրը չիրագործ-վեց և վրա հասավ խորհրդայնացումը:

Հեղինակն անդրադառնում է Երկրորդ համաշ խարհա-յին պատերազմում հայերի հերոսական պայքարին՝ Կովկասի պաշտպանության ժամանակ: Այստեղից ծագեց «Մենք քիչ ենք, սակայն հայ ենք» գիտակցությունը՝ աշխարհին ցույց տա-լու համար, որ պայքարել և իրենց զոհաբերել են հանուն հայ-րենիքի ազատության: Խորհրդային Միությունը կազ մավորվել էր 1922 թ. և Հայաստանը միութենական հանրապետու թյուններ-ից մեկն էր: Վերջին 150 տարիների Հայաստանի քա ղաքա-կան պատմությունն արժանիորեն ճանաչելու նպա տակով հրավիրեցինք ընթերցողների՝ մտքեր փոխանակելու այս գրքի վերաբերյալ: Նրանք խրախուսեցին դրա հրատարա կության մտահղացումը: **Առաջին հրատարակությունը,** 3000 տպաքա-նակով, լույս տեսավ 1965 թվականի ապրիլի 24-ին, Ցե ղասպա-նության 50-դդ տարելիցի առթիվ: Ես այն նվիրեցի իմ հոր՝ Հա-րությունի և իր ընկեր ների հիշատակին, որոնք բաբա ռոսաբար սպանվել էին հանցագործ այն նույն ձեռքով, որը կո տորել էր մեկ և կես միլիոն հայերի՝ XX դարի առաջին Ցեղասպանության ժամանակ:

Այս գիրքն արագորեն տարածվեց և սպառվեց: Նրա պահանջարկն այնքան մեծ էր, որ անհրաժեշտություն զգացվեց 1985 թվականին թողարկել **երկրորդ հրատարակությունը**՝ Ցեղասպանության 70-րդ տարելիցի առթիվ, դարձյալ 3000 տպաքանակով: Գործն այս անգամ ընդարձակվել էր՝ ավելացվել էր մի հատված **«Հայաստանն այսօր»** խորագրով, որտեղ արտացոլվում էր Մայր Հայրենիքի այժմեականությունը, մինչև 80-ականի կեսերը, երբ սպիանում էին վերքերը մի ժողովրդի, որ տառապել էր և կորցրել իր երիտասարդության մեծ մասը Երկրորդ համաշխարհային պատերազմում: Առաջ էր եկել մի նոր, առաջադեմ սերունդ: Չնայած, որ հայրենիքում տիրող քաղաքական կարգը հաճելի չէր Սփյուռքի որոշ հայերին, նրանք չէին կարող չգնահատել Հայաստանի մշակույթի և գիտության մեծ զարգացումը. ունեինք Օպերա, թատրոններ, դպրոցներ, համալսարան և բարձրագույն դպրոցներ, ակադեմիա: Հայրենիքը միջազգային բարձր մակարդակի էր հասել սպորտի և արվեստների բնագավառներում: Երկրորդ հավելվածում հիշատակվում են միջոցառումներ, նվիրված այն ամենակարևոր իրադարձություններին, որոնք տեղի էին ունեցել նշված 50-ամյակի ընթացքում՝ ինչպես Սփյուռքում, այնպես էլ Արցեն տինայի Հանրապետությունում. այստեղ ընդգրկված են լրագրային հոդվածներ, նյութեր կոնֆերանսների մասին, գծանկարչական նոթեր ինչպես և իմ ճառերը 1915 թվականի ապրիլի 24-ի, 50 և 60-րդ տարելիցների կապակցությամբ:

Գիրքն ավարտվում է ճառով, որը համայնքի անունից, որպես ընդունելության հանձնախմբի ատենապետ, կարդացել եմ Նորին Սուրբ Օծություն Վազգեն Ա-ին մատուցած հյուրասիրության պահին, իր երկրորդ հովվապետական այցելության ժամանակ: Գրքի **երրորդ հրատարակությունն** իրականացավ 1995 թվականին, Ցեղասպանության 80-րդ տարելիցի առիթով, որը նշվեց մեծ հանդիսավորությամբ ինչպես Մայր Հայրենիքում, այնպես էլ Սփյուռքում: Այս երրորդ հրատարակության մեջ հաշվի է առնվել նոր սերնդի հետաքրքրասիրությունը բավարարելու անհրաժեշտությունը, այն սերնդի, որը մեծ ցանկություն ուներ իմանալու իր նախնիների պատմությունը և Ար-

գենտինա գալու նրանց դրդապատճառները:

Այս անգամ միացրեցի հավելվածները՝ երկրորդ հրատարակության իրադարձությունների ժամանակագրական մի ամփոփմամբ, որի պսակը եղավ **Ազատ և Անկախ Հայաստանի Հանրապետության** նոր և փառավոր հռչակումը՝ 1991 թ. սեպտեմբերի 21-ին: Այս կերպ՝ գրքի երրորդ հրատարակության միջոցով, ընթերցողը հսկայական գիտելիքներ է ձեռք բերում հայ ժողովրդի մասին՝ նրա ծագումից մինչև մեր օրերը:

Հիշյալ հրատարակություններին զուգահեռ, տպագրեցի մի շարք գործեր ևս՝ ճանաչել տալու նաև մեր հարուստ գրական կանությունը ինչպես բանաստեղծության մեջ, այնպես էլ՝ արձակում:

Այդ մտադրությամբ նախ պատրաստեցի բավական ամբողջական մի ընտիր ծաղկաքաղ՝ **«Հայաստանն իր բանաստեղծների միջով»** վերնագրով, որը հրատարակվեց 1983 թվականին: Այս գործը սկսվում է V դարից, կրոնական թեմաներով, եկեղեցու մեր առաջին հայրերի՝ Սուրբ Սահակի և Սուրբ Մեսրոպի գործերից՝ հայկական այբուբենը ստեղծողներից և մեր գրականության հիմնադիրներից մինչև Մայր Հայր ենիքի և Սփյուռքի մեր օրերի բանաստեղծները: Հարկ եղավ կիրառել ճշգրիտ մի չափանիշ՝ լայնածավալ մատենագիտությունից ընտրելու տարբեր ժամանակաշրջանների և հոսանքների բնութագրական ստեղծագործությունները:

Ոգևորված ձեռք բերած հաջողություններով և հասարակության մեջ արթնացած աշխույժ հետաքրքրությունով, որոշեցի պատրաստել նաև մի ուրիշ ժողովածու՝ կազմված մեր գրողների և պատմաբանների ստեղծագործություններից, V դարից մինչև մեր օրերը **«Հայաստանն իր արձակի միջով»** վերնագրով, որը լույս տեսավ 1988 թվականին:

Բանաստեղծությանը սերտորեն կապված է հայկական երաժշտությունը, որ հնագույն ժամանակներում մշակել են Գողթնի գուսանները: Արդի հայ երաժշտությունը հենվում է եկեղեցու հայրերի, ժողովրդական երգարվեստի, հայ կոմպոզիտորների բազմաթիվ սերունդների ստեղծած հարուստ արժեքների վրա: Մեր մեղեդիները բանաստեղծական խոսքի միջոցով

արտահայտում են մեր ժողովրդի արնածոր ու հերոսական պատմությունը, որը կարողացավ պաշտպանվել ժամանակի անողոք ներգործությունից և վերջապես ապրել իր վերա ծնունդը: Մեր երաժշտական գոհարները ներկայացնելու համար 1991 թվականին հրատարակեցի «**Հայաստանն իր երգերի միջով**» համառոտ շարադրանքը, որտեղ ինձ հաջողվեց հավաքել ժողովրդի սրտից բխած նվիրական բաղձանքները V դարից մինչև մեր օրերը՝ սկսելով եկեղեցական երգերից, շա ռունակելով գուսանների թեման, հայրենասիրական և հեղափոխական երգերը և ազգագրական ու ռոմանտիկ թեմաները: Կցեցի նաև մանկական երգեր: Յուրաքանչյուր թեմա, բացի հայերեն բնագրից, հագեցած է երաժշտական նոտաներով, կից տրվում է նրա թարգմանությունը իսպաներեն, որպեսզի ցանկացած տեղ համարժեք գործիքներով կարողա նան կատարել մեղեդիները և երգել:

Հայաստանում՝ քրիստոնեության որպես պետական կրոն ընդունման 1700-ամյակի տոնակատարությունների առիթով, նպատակահարմար գտա մի գիրք հրատարակել հայ առաքելական եկեղեցու մասին:

Հարկ է ընդգծել, որ այդ տարեդարձի նշումը հատուկ իրադարձություն է եկեղեցու համաշխարհային պատմության մեջ. հայերն առաջին ազգն եղան, որ ընդունեցին Հիսուս Քրիստոսի հավատը որպես պետական կրոն: Այս եղելությունը ճանաչված է բոլոր մյուս եկեղեցիների կողմից:

Մանկական տարիներին հայ եկեղեցու պատմություն եմ սովորել: Հիշեցի Կ. Պոլսի պատրիարք Մաղաքիա Օրմանյանի **«Հայոց եկեղեցին»** բարձրարժեք գործը՝ որն ընդգրկում է մեր եկեղեցու ոչ միայն պատմությունը, այլև դավանանքը, վար չական կառույցը, արարողությունները և այն ամենը, ինչը բնո ռոշում է նրա ազգային նկարագիրը: Այդ գիրքը նախ հրատարակվեց 1910 թ. ֆրանսերեն՝ ծանոթացնելու համար հայոց ազգային եկեղեցին, ապա՝ հայերեն, որին հետևեցին ռուսերեն և անգլերեն հրատարակությունները: Իսպաներեն տարբերակը իրականացրեցի՝ հիմք ընդունելով ֆրանսերեն բնօրինակը և 1911 թվականի հայերենը: Այս գրքում, որ հրատարակեցի 1994

թվականին, ավելացրեցի մի հավելված և մի քանի շարա կանոներ, որ երգում են պատարագի ժամանակ: Սրանք նվիրված են նահատակներին, սրբերին, որոնք անմահացան հավատքի և հայրենիքի համար, ինչպես Ս. Գայանեն, Հռիփսիմեն և Սուրբ Վարդան Մամիկոնյանը, որ իր գլխավորած բանակի հետ հակահարված տվեց զրադաշտական պարսիկներին, որոնք եկել էին հայերին պարտադրելու իրենց դավանանքը (451 թ.), և շատ ուրիշ նվիրյալներ, որ այնքան պայքարեցին Մարտիրոս անվանված հայ սուրբ եկեղեցին պաշտպանելու համար՝ հանուն տարածաշրջանում քրիստոնեության և իրենց ազգային ինքնության պահպանության:

Գրքի պատրաստման ընթացքում մի նամակ ուղարկեցի Նորին Սուրբ Օծություն Ամենայն Հայոց Կաթողիկոս Վազգեն Ա-ին, խնդրելով նրա կարծիքը թարգմանության վերաբերյալ և նրա համաձայնությունն ու օրհնությունը՝ հրատարակելու այս գործը, որը մտածում էի նվիրել, որպես իմ համեստ մաս նակցությունը 1700-ամյակի տոնակատարությանը: Այս կարևոր իրադարձության համար ստեղծվեցին հանձնախմբեր՝ հայ առաքելական եկեղեցու առաջնորդություններից և թեմերից, որը գլխավորում է Հայոց ծայրագույն պատրիարքությունը, Հայաստանի կառավարության բարձրաստիճան պաշտոնյաներից՝ ՀՀ նախագահի նախագահությամբ, և միջազգային մակարդակով նշանավոր մի այլ հանձնախումբ՝ նշանակված ՅՈՒՆԵՍԿՈ-ի կողմից:

Մեծ բավականությամբ ստացա Նորին Ս. Օծություն Վազգեն Ա-ի կողմից ստորագրված նամակը, որում նա ինձ շնորհավորում էր այս պատշաճ հրատարակության և հայ մշակույթի տարածման գործում իմ անցած երկար ուղու համար, տալով իր օրհնանքները: Դժբախտաբար այն եղավ վերջին նամակը, որ կարողացավ ստորագրել Վեհափառը՝ Հայաստանի ազգային հերոսը: Այն ստորագրվել էր 1994 թ. հունիսի 22-ին՝ հավերժական հոր մոտ իր վշտալի մեկնումից մի քանի օր առաջ:

Պատմական փաստաթուղթ լինելուց բացի, Նորին Սուրբ Օծություն Վազգեն Ա-ի կողմից ստորագրված այս նա-

մակը որպես Վեհափառ հայրապետի վերջին ցանկություն, որ նա հղեց ինձ՝ լավ ճանաչելով ինձ և իմ աշխատանքները, ինձ ուժ տվեց այնուհետև ևս անդուլ ջանալ համայնքին և հայ մշակույթին ծառայելու համար:

Վերջերս ինձ մոտեցան զանազան ընկերներ և մեր համայնքի պատկառելի մարդիկ, ցանկություն հայտնելով մեծարել ինձ իմ հասարակական և գրական գոր ծունեության հոբելյանով: Ցույց տալով Վեհափառ Վազգեն Ա-ի նամակը ասացի, որ ինձ զգում եմ լիովին հատուցված՝ այնտեղ ար տահայտված մտքերից: «Շնորհակալություն եմ հայտնում բոլորիդ, սակայն մեծարման ուրիշ այլ ձևի կարիք չեմ զգում: Ես միայն կատարել եմ այն, ինչ իմ պարտքն էր» - պատասխանեցի նրանց:

1995 թվականին՝ **«Հայաստան, Անկախ ու Ազատ Հանրապետություն»** գիրքը հրատարակելուց հետո նվիրվեցի գրելու իմ կենսագրությունը՝ «Եփրատից Ռիո դե Լա Պլատա», որը գումարում է 1959 թվականից ի վեր հրատարակված իմ 10 հատորները՝ կազմելով ավելի քան 27.000 օրինակ ընդհանուր տպաքանակ: Դրանք կատարել եմ հատուկ ուշադրությամբ և նվիրումով:

Բոլոր այս գրքերն ձրիաբար բաժանեցի քաղաքական և գրական մարդկանց, դիվանագիտական մարմիններին, ակադեմիաների անդամներին, գրողների միություններին, Արգենտինայի և արտասահմանի ազգային, նահանգային և մու նիցիպալ գրադարաններին, ինչպես նաև մեր համայնքի բոլոր հաստատությունների աշակերտներին, շրջանավարտներին և բոլոր դպրոցների ուսուցչական կազմին, Սփյուռքի և Մայր Հայրենիքի գործիչներին, մշակութային կենտրոններին և գրադարաններին:

Մեծ շնորհակալությամբ նրանցից ստացա բազմաթիվ նամակներ, որոնցում ինձ երախտագիտություն էին հայտնում և շնորհավորում գրական ու պատմական այն արժեքի համար, որ ներկայացնում են այս գործերը, այնքան օգտակար՝ հայ ժողովրդին լավագույնս ներկայացնելու համար:

Առաջին ճանապարհորդություն Մայր Հայրենիք

1974 թվականին առաջին անգամ կարողացա իրա գործել իմ վաղեմի երազանքը՝ գնալ ուխտագնացության Մայր Հայրենիք: Ճամփա ընկանք իմ տիկնոջ՝ Ռոսայի հետ, այցելելով նախ Եվրոպայի հիմնական քաղաքների մշակութային կենտրոններ: Փարիզում առիթ ունեցա լինել Սուրբ Հովհաննես Մկրտիչ հայկական եկեղեցում, և Սրբազան Սերովբե Մա նուկյանի՝ Արևմտյան Եվրոպայում Նորին Ս. Օծության Պատվիրակի հյուրը, որի հետ ծանոթացա, երբ այցելե ց Բուենոս Այրես: Տեսա Լուվրի նշանավոր գեղարվեստական հարստու թյունը և Վերսալի շքեղ պալատը, որտեղ պահպանվում էին այն սեղանն ու աթոռները, որ օգտագործվել էին 1918 թվականի զինադադարի ստորագրման ժամանակ, Առաջին համաշ խարհային պատերազմն ավարտելուն պես, ինչպես նաև պատմական այլ վայրեր: Մադրիդում այցելեցի Պրադոյի թանգարան, Հռոմում՝ Վատիկանի գրադարան և թանգարան: Վենետիկում հի ացա Դոժերի պալատի գործերով և զմայլված մնացի իտալացի մեծ վարպետների ստեղծագործություններով: Այցելեցի Սուրբ Մարկոսի Մայր տաճարը և հրապարակը: Կարդացել էի, որ այնտեղ գտնվող ձիերի արձանը նվիրել է հայ թագավոր Տրդատ Մեծը: Հաճույք ունեցա ճանաչելու Սուրբ Ղազար կղզին, որտեղ Մխիթարյան միաբանությունը հաստատել էր իր նստավայրը՝ կից շինություններով: Տեսա նրա բազմալեզու տպա րանը և հռչակավոր թանգարանը՝ ձեռագրերի և արվեստի գոր ծերի նշանավոր հավաքածուով: Այնտեղ ինձ ընդունեցին ջերմորեն, զրուցեցի միաբանության անդամների հետ, հատկապես հայր Ստեփան Ֆերահյանի հետ, որին օգտակար էի եղել իր կրթական առաքելության ժամանակ, Բուենոս Այրես ում: Մեզ տարան շրջելու կղզին և ես զրուցեցի բանաստեղծ և գրող հայր Վահան Հովհաննիսյանի հետ, որը ծանոթ էր Եղեսիայի հերոսամարտին, իմ հայրենակիցների կողմից իրագործված դյուցազնական պաշտպանությանը: Նա ինձ խնդրեց, որ գրեմ իմ հուշերը Արգենտինայի հայերի կյանքի վերաբերեալ:

Այնտեղ ծանոթացա նաև պրոֆեսոր Շուշանիկ Նա զարյանի հետ: Այնուհետև, միասին վերադարձանք կղզուց՝ նույն շոգենավով: Մեզ հետ զրուցելիս նա ասաց, որ Հայաստանից է եկել: Ձեռագրագետ էր և աշխատում էր Մատենադարանում, որպես գիտաշխատող: Մի քանի օր է, ինչ Սուրբ Ղազար կըղզում էր, նվիրվել էր իր մասնագիտության հետ կապվող տարբեր աշխատանքների, որոնք պետք է հրատարակեր Հայաստանում: Երբ ասացի, որ Արգենտինայից ենք, և որ գնում ենք Հայաստան, նա ասաց. «Արգենտինա, այո: Արգենտինայի մասին մեզ երկու անգամ պատմեց Երևանի պետական հեռուստատեսությամբ Հայաստանի կոմպոզիտորների միության նախագահ Էդվարդ Միրզոյանը, որն այցելել էր Արգենտինա՝ գեղարվեստական մի հայտնի խմբի հետ: Հիշում եմ, հատկապես, նրա պատմածը մի ընտանիքի մասին, որի հետ հաճելի երեկո էր անցկացրել հայկական ջերմ միջավայրում, և որը նրանց վրա թողել էր Արգենտինայում մի փոքրիկ Հայաստանի տպավորություն: Աչքի էր զարնել այն դաստիարակությունն ու պատրաստությունը, որ դրսևորել էին այդ ընտանիքի զավակները, այն, որ նրանք խոսում էին իրենց ծնողների լեզվով և գիտեին հայոց պատմությունն ու Մայր Հայրենիքի իրականությունը»:

Մեծ անակնկալ եղավ այդ տիկնոջ համար, երբ տեղեկացրի, որ դա մեր ընտանիքն է եղել: Մենք անկեղծորեն ուրախացանք՝ իմանալով Հայաստանի հեռուստատեսության միջոցով ներկայացված այդ մեկնաբանության մասին:

Շրջագայելով, Վենետիկից անցանք Հռոմ, այցելեցինք Ռավեննա, Ֆլորենցիա, Պոմպեյի ավերակներ և այլ վայրեր: Հռոմից ճանապարհվեցինք ուղիղ Բեյրութ: Լիբանանի մայրաքաղաքում հայկական մեծ համայնք կար, որը բազմամարդ էր դարձել 1921 թ. վերջերին Ֆրանսիայի կողմից Քեմալին հանձնված Կիլիկիայից (որը գրավել էին հայկական Լեգեոնի քաջարի աջակցությամբ 1918-ի նոյեմբերին), և 1930-ական թթ.՝ ամբողջ Ալեքսանդրեթի սանջակից այստեղ հանգրվանած հայերի շնորհիվ:

Բարեբախտաբար Սիրիայում և Լիբանանում հայ վե-

ռապրոդներն արժանացան բարյացակամ ընդունելության: Արաբ ժողովուրդը, որը նույնպես եղել էր թուրքական տիրապետության տակ, այդ ժամանակաշրջանում որոշակի ազատություն էր վայելում ֆրանսիական հովանու ներքո: Այստեղ արտագաղթեցին մոտ 300000 հայեր, որոնցից շատերը հաստատվեցին վերջնականապես: Նրանց մեծամասնությունը փաստաթղթեր չուներ, դրանք կորցրել էին պատերազմի ընթացքում, երբ մազապուրծ էին եղել ցեղասպանությունից: Սիրիան նրանց ընդունեց որպես սեփական քաղաքացիների և շատերն այնտեղ կարողացան վերականգնել իրենց ապրելակերպը: Ուրիշները՝ քաջալերված նույն սիրիացիներից և լիբանանցիներից, որոնք գաղթել էին Հարավային Ամերիկա և գտյացրել իրենց համայնքները, նույնպես բռնեցին այդ ճամփան և գնացին Արգենտինա, Ուրուգվայ ու Բրազիլիա:

Մեր Բեյրութ գալուց մեկ օր առաջ հայկական «Զարթոնք» թերթը հրատարակել էր Երվանդ Բաբայանի՝ իմ անձին վերաբերող «Մի հայ, որ պատիվ է բերում հայությանը» հոդվածը: Շատ բարեկամներ և հին ծանոթներ, ինչպես նաև միությունների ներկայացուցիչներ, իմ ազգականները, քեռի Դաանիել Սաղաթելյանի որդիները և մի քանի վաղեմի դաս ընկերներ, ինչպես օրինակ՝ Կարո Փոլադյանը, Երվանդ Բարսումյանը և ուրիշներ, եկան օդակայան՝ ինձ դիմավորելու: Ինքնաթիռից իջնելիս մենք ողջագուրվեցինք հուզմունքով և ուրախությամբ: Վեճ առաջացավ, որովհետև ցանկանում էին ինձ հյուրասիրել, նրանք ովքեր եկել էին մեզ դիմավորելու: Խնդրեցի, որ առաջին օրն ինձ թողնեն մնալ իմ ազգականների հետ, որից հետո կպատրաստեինք մի ծրագիր՝ հաջորդ օրերի հանդի պումների համար:

Ուղևորվեցինք Սուրբ Գևորգ հյուրանոց՝ հանգստանալու մեզ հատկացված սենյակում: Երեկոյան այցելեցինք իմ մորաքույր Ազնիվ Սաղաթելյանին և իր երկու որդիներին. իմ քեռի Դանիելը մի քանի տարի էր, ինչ մահացել էր: Հաջորդ օրը եկան իմ դպրոցական ընկերները և մեզ տարան շրջելու զբոսաշրջիկներին առավել հետաքրքրող վայրերը: Ըստ նախնական պայմանավորվածության, հյուրանոց եկավ տիկին Արտեմիս

Նազարյանը՝ մեզ տանելու իր ամուսնու՝ հայտնի բարերար Նազար Նազարյանի հետ գեղարվեստական մի արտակարգ երեկույթի, որը կազմակերպել էր Լիբանանի Կարմիր Խաչը, և ղեկավարում էր այդ պետության նախագահի տիկինը: Տիկին Արտեմիսը նույնպես կազմակերպական հանձնախմբի մաս էր կազմում:

Միջոցառումը տեղի ունեցավ Այնճար գյուղի պատմական պալատների վրա հատուկ ձևով բարձրացված՝ Օմայանների խալիֆայության մի բացօթյա բեմում:

Ելույթ ունեցան տարբեր դերասաններ և երգիչներ, հնագույն հագուստի մի շքահանդես կատարվեց, սակայն ամենից շատ ինձ դուր եկավ սինֆոնիկ նվագախմբի ելույթը, որ եկել էր Եգիպտոսից՝ հատկապես այդ երեկո հանդես գալու համար՝ կատարելով արևելյան բարդ մեղեդիներ, մասնավորապես հորինված այդ մեծ նվագախմբի համար: Հաճելի հիշողության պահպանման համար նկարահանեցի զանազան հատվածներ այդ արտակարգ ծրագրից:

Այնճար գյուղը, որտեղ տեղի ունեցավ այդ փառատոնը, գտնվում է Բեյրութից մի քանի կիլոմետր հեռավորության վրա, Լիբանանի սարերում: Այստեղ են բնակվում հերոսական Մուսալեռի հայերը, որոնք ստիպված եղան արտագաղթել 1915 թ. և երկրորդ անգամ՝ 1939 թվականին, երբ, ինչպես ասացինք, Ֆրանսիական կառավարությունը Թուրքիային զիջեց Ալեքսանդրեթի գավառը, որտեղ դրանից առաջ վերադարձել էին հայերը՝ վերակառուցելու իրենց օջախները:

Մի քանի օր անց ինձ հյուրանոց այցելեց համայնքի նշանավոր դաստիարակ և քաղաքական առաջնորդ պրոֆեսոր Բարունակ Թովմասյանը: Մեր առաջին զրույցի ժամանակ հանգամանորեն կարծիքներ փոխանակեցինք Սփյուռքում հայկական կյանքի իրողությունների, և մանավանդ ավանդույթների պահպանման գործում հայ մտավորականների առաքելության մասին: Նրան պատմեցի Բուենոս Այրեսում իմ կատարած աշխատանքների մասին համայնքի մակարդակով, իր հերթին, նա ինձ ծանոթացրեց Բեյրութում վերջին ժամանակաշրջանում տեղի ունեցած իրադարձություններին: Թով մաս

յանը, ինչպես ես, ցեղասպանության վերապրողներից էր. իր նվիրվածությամբ և համառությամբ նրան հաջողվեց սովորել և դառնալ երկրի ամենանշանավոր կրթական հաստատության՝ Լիբանանի Ամերիկյան համալսարանի պրոֆեսոր: Այնքան համակրեցինք իրար, որ այնտեղ գտնվելու ընթացքում միշտ միասին էինք: Ամեն երեկո գալիս էր մեզ մոտ իր տիկնոջ՝ Անջելայի հետ վիսկի խմելու: Չորսով դուրս էինք գալիս նրա մեքենայով: Շատ շոգ ամառ էր: Թովմասյանը մեզ տանում էր միջերկրականի լողափերը՝ զբոսնելու:

Մեր բարեկամությունը շարունակվեց դրանից հետո էլ, նամակագրությամբ: Ունեինք շատ ընդհանուր տեսակետներ՝ հայկական Սփյուռքի խնդիրների լուծումների վերաբերյալ: Նրան հաջողվել էր միավորել, ինչպես ես Բուենոս Այրեսում, Բեյրութի համայնքի տարբեր հատվածներ:

Նրան բացատրել էի, որ առաջին անգամն էր, որ ճա նապարհորդում էի արտասահմանում՝ 1927 թվականին Արգենտինա իմ գալուց ի վեր: Եվ այժմ, 1974 թվականին, առիթ և հարմար ժամանակ ունեմ մոտիկից ճանաչելու եվրոպական երկրները և մայրաքաղաքները, որ ինձ հրապուրել էին փոքրուց: Հասկացրեցի, որ ուխտագնացություն եմ ձեռնարկել Երևան՝ Մայր Հայրենիք, և որ մտածում եմ աննկատ այնտեղ հասնել որպես մի պարզ ուխտագնաց, մոտիկից ճանաչելու նոր Հայաստանը, որտեղ երբևէ չէի եղել: Ասացի, որ ոչ մեկին չեմ տեղեկացրել Հայաստան իմ այցելության մասին: Պրոֆեսոր Թովմասյանն առանց ինձ ոչինչ ասելու՝ մի հեռագիր ուղարկեց Սփյուռքահայության հետ մշակութային կապի կոմիտեին, հաղորդելով իմ ժամանման մասին: Նույնպես տեղեկացրեց Նորին Ս. Օծություն Վազգեն Ա-ին՝ հեռախոսով հայտնելով այդ մասին:

Երևանի «Զվարթնոց» միջազգային օդակայան ժամանելիս, նախ ծունկի եկա և համբուրեցի հայրենի հողը՝ իմ ն ախնիների հոգիների հետ հաղորդվելու համար Արարատ լեռան հովանու ներքո: Մինչ շարք կազմած՝ սպասում էինք ուրիշ ուղևորների հետ, հանկարծ լսեցի, որ ինձ կանչում են: Մի կողմից մի եպիսկոպոս, որ եկել էր որպես կաթողիկոսի ներկա յա-

Նորին Մ. Օծություն Վազգեն Ա-ն, որին ուղեկցում է Հայաստանի մշակույթի փոխնախարարը (իր աջ կողմում), օրհնում է երեկույթին մատուցված սեղանը Ղազարապատում նորոգված շենքի բացման առիթով: Իր ձախ կողմում Ռոբերտ Գյուլբենկյանը և տիկինը, Վահրամ Մավյանը, Գևորգ Մարաֆյանը և իր տիկինը Էջմիածնում (Հայաստան) (28 սեպտեմբերի, 1974 թ.):

ցուցիչ, մյուս կողմից՝ Անդրանիկ Մարտիրոսյանը, Սփյուռքահայության հետ մշակութային կապի կոմիտեի փոխնախագահը, որն ինձ ճանաչում էր անձնապես, մեկ տարի առաջ մեզ մոտ կատարած իր այցից: Խնդրում էին, որ մոտենամ: Ես շատ զարմացա և շփոթվեցի, որովհետև չէի ուզում թողնել իմ պարզ ճամփորդի կարգավիճակը և այս նախապատվությունն ինձ անհանգստացրեց: Ի վերջո այնքան համառեցին, որ ստիպված առաջացա: Ինձ ուղեկցեցին ծառայողների մոտ և բոլոր գործողությունները կատարեցին մի քանի րոպեում: Մեկնեցինք կոմիտեի պաշտոնական մեքենայով՝ պարոն Մարտիրոսյանի և Արամ Դեյրմենջյանի հետ, ուղղվելով դեպի Երևան, լայն և ծառազարդ պողոտաներով: Աստիճանաբար, երբ մոտենում էինք, մեր ուշադրությունը գրավեց քաղաքի նոր համայնապատկերն՝ իր մեծ շենքերով, որ բնորոշ է ժամանակակից մի մայրաքաղաքի:

Մենք հաստատվեցինք «Արմենիա» հյուրանոցի 5-րդ հարկում, որի հարևան սենյակներում, ինչպես իմացա, սովորաբար հանգրվանում էր հանրահռչակ կոմպոզիտոր Արամ Խաչատրյանը՝ այստեղ կատարած իր այցելությունների ժամանակ:

Մենք հանդիպեցինք իմ ընկերոջ՝ գրող Վահրամ Մավյանին, որի հետ ծանոթացել էի Գալուստ Գյուլբենկյան հաստատություն մեր այցելության ընթացքում, դեռևս մեր առաջին ճամփորդության ժամանակ՝ Լիսաբոնում (Պորտուգալիա): Մավյանն ուղեկցում էր Ռոբերտ Գյուլբենկյանին և տիկ նոջը, բարերարի քրոջորդուն, որը հիմնադրամի կարևոր պաշտոնյաներից էր: Նրանք եկել էին հատուկ առաքելությամբ՝ կատարելու 17-րդ դարի Ղազարավանք կոչված հնագույն շենքի բացումը, որ նորոգված էր բարերար Գալուստ Գյուլբենկյանի հիմնադրամով:

Մենք Վեհափառի կողմից հրավիրվեցինք՝ մասնակցելու բացման արարողությանը, որը տեղի ունեցավ շաբաթ օրը, 1974 թվականի սեպտեմբերի 28-ին: Վեհափառը Հոգեհանգստյան պաշտոն մատուցեց բարերարի հիշատակին, ավարտվեց կրոնական արարողությունը, որի ավարտից հետո այցելեցինք

վերանորոգված կառույցը, ուր ճաշ մատուցվեց ճեմարանի ճաշարանում: Սեղաններն ամբողջությամբ մարմարից էին, նույնը և նստարանները: Առաջինը մատուցվեց մածնապուր, որը պատրաստվում է ամբողջական կեղևազերծ հում ցորենով (կորկոտ) և հեղուկ մածնով (թան), իսկ հետո՝ ավանդական հարիսան: Այս կերակրատեսակի համար եփում են հում կեղե վազերծ ցորեն՝ տրորում գառան կամ հավի մսով, այնքան ժա մանակ, մինչև ստացվում է թանձր զանգված, որին ավե լացնում են համեմունքներ: Ճաշի մասնակիցներս քիչ էինք. Նորին Ս. Օծությունը, մշակույթի փոխնախարարը, պարոն Ռոբերտ Գյուլբենկյանը և տիկինը, գրող Վահրամ Մավյանը, բարերար Արշակ Տիգրանյանն՝ ԱՄՆ-ից, իր տիկնոջ և դստեր հետ, տիկինս և ես: Մեր ուշադրությունը գրավեց այն, որ Գյուլբենկյանի տիկինը՝ ծագումով ֆրանսուհի, կրկնել էր տվել հարիսայի իր պնակը, որ նրան շատ էր դուր եկել:

Վեհափառը հայկական այս կերակրատեսակի ծագման վերաբերյալ տվեց մի հետաքրքիր բացատրություն. ավան դույթի համաձայն, այս կերակուրը պատրաստվել էր առաջին անգամ, երբ Սուրբ Գրիգոր Լուսավորիչը և Տրդատ 3-րդ թագա վորը 303 թվականին կառուցում էին Էջմիածնի Մայր եկեղեցին ըստ աստվածային տեսիլի: Ողջ ժողովուրդը գալիս էր մասնակցելու հավատքի այս գործին: Թագավորը և թագուհին, իշխաններ և իշխանուհիներ, ողջ ազնվականությունը և ժողովուրդը համախմբված աշխատում էին՝ բերելով քար առ քար՝ կառույցին օգնելու համար: Երբ կեսօր եղավ, այնքան հավատացյալներ էին հավաքվել, որ գործնականում շատ դժվար էր բոլորին կերակրել: Գերազանցել էին բոլոր կանխա տեսումները ժողովրդի մասնակցության իմաստով: Այդ կապակցությամբ խորհրդակցեցին Սուրբ Գրիգորի հետ, որը նրանց հարցրեց, թե արդյոք ցորեն ունե՞ն: Գյուղացիները պատասխանեցին, որ այո, ունեն և նա նրանց հորդորեց. «Հար ես սա (տրորես այս), եփեցեք մսով, որ ունեք և տվեք ժողովրդին, որ ուտի »: Այդ ժամանակից ի վեր այդ կերակրատեսակը տարածվեց հարիսա անունով:

Երբ մեր կաթողիկոսը խոսում էր ցորենը տրորելու և հա-

րիսայի մասին, հիշեցի հարիսայի պատմության մեկ այլ դեպք, որ պատմեցի ներկաներին:

Դա տեղի է ունեցել 1878 թ. հուլիսին՝ Բեռլինի մի ջազգային կոնգրեսում, որին մասնակցելու էր գնացել կաթողիկոս Մկրտիչ Խրիմյանն իր շքախմբով, Օսմանյան Թուրքիայի լծի տակ գտնվող պատմական Հայաստանի վիլայեթներում.նպաստավոր համաձայնություն ձեռք բերելու սպասումով: 1878 թվականի փետրվարին Սան-Ստեֆանոյի պայմանագրով հայերի համար նպաստավոր խոստումները ամբողջապես ի չիք դարձան մեծ տերությունների միջամտությամբ:

Հայկական հարցին առնչվող՝ Սան-Ստեֆանոյի պայմանագրի 16-րդ հոդվածը ձևափոխվեց 61-ի՝ Բեռլինի դաշնագրով: 61-րդ հոդվածով Թուրքիային մեծ պետությունները, փաստորեն, հնարավորություն տվեցին միայն խոստանալ, իսկ իրականում, ոչինչ չարվեց բարենորոգումների համար: Իր վերադարձին Խրիմյան Հայրիկը՝ հուսախաբ ված, փոխաբերական իմաստով մեկնաբանեց Բեռլինի կոնգրեսի բուն էությունը: «Կոնգրեսը նմանվում էր հարիսայի մի մեծ կաթսայի, ուր պատվիրակությունները դնում էին իրենց գդալները, ում գդա լը երկաթից էր, նրան հաջողվում էր հանել իր բաժինը: Դժբախտաբար, մեր գդալը թղթից էր և չկարողացանք հարիսա հանել», - ասաց նա:

Եզրափակեցի իմ մտքերը, դիմելով Վեհափառին. «Ես գոհ եմ՝ տեսնելով, որ այսօր, այժմյան Հայաստանում, երկաթե գդալներով ենք հարիսա ուտում»: Մշակույթի փոխնախարարն ինձ պատասխանեց. «Այո, պարոն Սարաֆյան, երկաթե շերեփով խառնում ենք, սակայն դեռ չենք կարողանում երկաթե գդալով ուտել»:

Դա շատ հաճելի խոսակցություն էր, որ մեզ հիշեցրեց հայրենասիրական այն քաղաքականության մասին, որը վարում էին մեր պատրիարքները: Օգտվեցի առիթից՝ շնոր հավորելու Վեհափառին, որովհետև նա, նույնպես գտ նվելով իշխող պայմաններում, յուրացրել էր կառավարության հետ զրուցելու ոճի նրբամտությունները: Նա կատարել էր կարևոր գործեր՝ վերանորոգելով Սուրբ Աթոռը, ճեմարանը և պաշտամունքի տար-

բեր վայրեր, հաճախակի էր դարձրել իր առնչությունները աշխարհով մեկ ցրված հայ եկեղեցիների հետ՝ իր գործերի համար արժանանալով «Շինարար Կաթողիկոս» անվան:

Վազգեն Ա-ն առաջին անգամ այցելել էր Հարավային Ամերիկա 1960 թվականին: Լավ էր ճանաչում Արգենտինայի հայ համայնքի կազմակերպական աշխատանքներին բերած իմ նպաստը: Ինձ պատիվ վիճակվեց արժանանալ Սուրբ Գրիգոր Լուսավորչի Առաջին Աստիճանի Ասպետի Շքանշանին՝ Բուենոս Այրեսում իր հրաժեշտի երեկույթին: Մայր Հայ բենիքում իմ գտնվելու ընթացքում բնարեհաճություն ունեցավ ինձ բազմիցս հրավիրել ճաշի, խնդրեց, որ մնամ նախատեսվածից մի քանի օր ավելի և դիմեց երկարացնելու՝ այնտեղ մնալու իմ ժամկետը, որպեսզի կարողանամ ներկա լինել Սուրբ Գրիգորի գահին իր աթոռակալության 20-րդ տարեդարձի տոնակա տարությանը: Այսպիսով, առիթ ունեցա ներկա լինել և ունկնդրել հանդիսավոր սուրբ պատարագը՝ մատուցված Վեհափառի կողմից, խոստովանել և հաղորդություն ընդունել այս պատմական տաճարում՝ Հայաստանի քրիստոնեական կենտրոնում:

Կրոնական արարողությունից հետո մասնակցեցի մեծարանքի միջոցառմանը, որը կատարվեց Վեհափառի դահի լիճում, ուր հավաքվել էին հատուկ հրավիրյալներ՝ Կոնս տանդնուպոլսի և Երուսաղեմի պատրիարքները, Մայր Հայրե նիքի և արտասահմանի բոլոր թեմերի հոգևոր բարձրաստիճան եկեղեցականները: Նրանք Վեհափառին ներկայացրեցին իրենց շնորհավորանքներն ու բարեմաղթանքները: Վազգեն Ա-ն հուզված՝ օրհնեց ներկաներին և շնորհակալություն հայտնեց Ամենակալ Աստծուն՝ իր կաթողիկոսության 20-րդ տարե դարձի և իր հոտին օգտակար լինելու երջանկության համար: Եզրա փակեց՝ ընդգծելով իր կարևորագույն մի նպատակը՝ իր ազ գակիցներին Ս. եկեղեցու և Հայրենիքի շուրջ միավորվելու գաղա փարը:

Հայաստանում ծավալած այլ աշխատանքներ

Հայաստան ժամանելու հաջորդ օրը Սփյուռքահայության հետ մշակութային կապի կոմիտեի կողմից հրավիրվեցի մասնակցելու նախագահող կազմի մի խորհրդակցությանը: Հյուրանոցից միասին գնացինք կոմիտե, որը գտնվում էր մի հին շենքում, որտեղ 1918 թվականին նստաշրջան էր հրա վիրվել Հայաստանի Հանրապետության առաջին խորհրդարանը: Հետաքրքրական էր, որ այդ պատմական վայրում հաս տատված էր այս կոմիտեն, որ ջանում էր մշակույթի միջոցով օգնել Սփյուռքին՝ պահելու համար իր արմատները, ուղարկելով առատ գրականություն, գրքերով և հանդեսներով և հատկապես մշակութային ու գեղարվեստական առաքելություններով:

Ընդունելությունը շատ ջերմ էր: Նախ խոսեց նախագահ պարոն Վարդգես Համազասպյանը՝ մաղթելով մեզ բարի գալուստ, հետո բանաստեղծուհի Սիլվա Կապուտիկյանը, բա նաստեղծ Վահագն Դավթյանը և փոխնախագահ Անդրանիկ Մարտիրոսյանը: Ինձ բազմաթիվ հարցեր տվեցին Արգեն տինայի համայնքի մասին և պատրաստակամություն հայտնեցին օգնել այն ամենով, ինչի կարիքն առանձնապես զգում էինք:

Որպես գիտակ և մեր համայնքի հանրային կյանքին մոտ կանգնած անձ, նրանց հարցրեցի ինձ տագնապող մի քանի խնդիրների մասին: Նրանք էլ իմ կարծիքը հարցրեցին համայնքի ներքին որոշ հարցերի վերաբերյալ, որոնց պա տասխանեցի ամենայն անկեղծությամբ: Ասացի. «Կարող եմ խոսել անկեղծորեն, քանի որ չեմ պատկանում և ոչ մի կուսակ ցության: Իմ կուսակցությունն է և կլինի մեր մշակույթը, մեր եկե ղեցին և մեր դպրոցները»: Իբրև պատասխան, Սիլվա Կապուտիկյանը հուզված վեր կացավ, գրկախառնվեց ինձ հետ՝ ասելով. «Շնորհավորում եմ, շարունակեք այդպես»:

Սա է եղել իմ իդեալը, անբաժան գաղափարը հենց սկզբից և այդպես էլ շարունակում եմ մինչև այսօր: Այսպես են ինձ ճանաչում մեր միջավայրում և իմ անցած ուղու մասին գիտեն իմ գործելակերպը և հոգևոր, մտավոր ու նյութական միջոցներով օգտակար լինելու իմ հնարավորությունը, որ միշտ

գործի եմ դրել՝ մեր բոլոր հայրենակիցների միջև ներդաշ նակություն, համաձայնություն և միասնականություն պահպանելու համար:

Մայր Հայրենիքում տարիներ ի վեր ավանդույթ էր դարձել՝ մեր քաղաքներն ու գյուղերը անվանակոչել հայկական այն բնակավայրերի անուններով, որոնք հայաթափվեցին կամ ամայացան Թուրքիայի իրագործած ցեղասպանության հետևանքով: Այս քաղաքների վերապրողները աշխարհով մեկ սփռված լինելով՝ իրենց տվայտող հոգիներում հպանում էին հայրենի կորսված քաղաքների հիշողությունը և ձգտում վառ պահել այն: Հայրենակցական միությունների միջոցով նրանք ներկայացնում էին իրենց խնդրանքները Հայաստանի Հանրա պետության կառավարությանը: Այսպես, դեռևս 1930-ական թվականներին և հետո, Մայր Հայրենիքում հայտնվեցին Նոր Մալաթիա, Նոր Սեբաստիա, Նոր Հաճըն և այլ անուններով բնա կավայրեր: Կոմիտեի հետ զրույցի ժամանակ, որպես եդեսիացի, առիթից օգտվեցի՝ ասելով, որ «Եկել է պահը՝ Նոր Եդեսիա անունով անվանել Հայաստանի մի բնակավայր կամ գյուղ, թեկուզ և մի գյուղակ: Վստահ եմ, որ վաղն այն կարող է դառնալ մի քաղաք: Այսպես, տարագիր զավակները սերտ կդարձնեն իրենց կապերը Մայր Հայրենիքի հետ և այնտեղ ամրքիչ ուխտագնացություն անելու զորեղ մղումն ե ր կունենան»: Այդ իմաստով նրանց ներկայացրեցի Բեյրութի Եդեսիայի հայրենակ ցական միության նամակը, ինչպես և Միացյալ Նահանգների, Ուրուգվայի, Բրազիլիայի և Արգենտինայի ուրիշ մաս նաճյուղերի նմանատիպ բուռն ցանկությունը:

Հայաստանի եդեսիացիները ինձ տեղեկացրել էին, որ արդեն դիմել են այդ խնդրանքներով, սակայն պատասխան դեռ չկար: Սկզբում պարոն Համազասպյանն ինձ ասաց, որ հավանականություն չկա այս անունը տալ մի ամբողջ բնակավայրի և առաջարկեց՝ թերևս, անվանենք մի փողոց կամ պողոտա: Վեր կացա և ասացի. «Ոչ պարոնայք, շնորհակալություն: Ես հերոսական Եդեսիայի անունը մի պողոտայի կամ մի փողոցի համարժեք չեմ համարում»: Եվ սկսեցի պատմել Եդեսիայի հայերի անցած ուղին սկսած հնագույն ժամանակներից,

Եդեսիայի՝ որպես մշակույթի կենտրոնի մասին: Խոսք վերցրեց բանաստեղծուհի Կապուտիկյանն ասելով, որ իրենք գիտեն Եդեսիան, «Գիտենք Ներսես Շնորհալու «Ողբ Եդեսիոյ» հայտնի պոեմը և այդ քաղաքի պատմությունը»: Նրան պատասխանեցի. «Հարգելի տիկին, արդեն ավարտվեցին ողբերը: Այժմ եկեք կառուցենք Նոր Եդեսիա Հայաստանում և ամեն տարի հավաքվենք տոնելու: Ողբի փոխարեն անենք գովքը Եդեսիայի»: Վերջապես, բոլորն ասացին «տեսնենք» և ոչ մի ուրիշ բան չպատասխանեցին:

Որքանով որ ճանաչում էի ազդեցիկ որոշ պաշտոն նյաններ, հաջորդ օրը գնացի տեսնելու պետպլանի փոխնախագահ, նախարար Միքայել Ալահվերդյանին, որը կարևոր դեր ուներ քաղաքային նոր կենտրոնների կառուցման հարցում: Ինձ սիրալիր ընդունեց իր աշխատասենյակում և հյուրասիրեց կոն յակով ու սուրճով: Նա հիշեց իր Արգենտինա կատարած այցե լությունը և շնորհակալություն հայտնեց տիկնոջս՝ համեղ հարիսայի համար, որ ճաշակել էր իմ տանը: Պատմեց, որ վերադարձին ասել էր իր տիկնոջը, որ Արգենտինայում իր կերած հարիսան ավելի համեղ էր նրա պատրաստածից:

Այս ջերմ զրույցից հետո նրա հետ խոսեցի Նոր Եդեսիայի գործով և խնդրեցի նրա միջամտությունը մեր խնդրանքին ընթացք տալու համար: Նրան պատմեցի կոմիտեի հետ իմ հանդիպման անորոշ արդյունքների մասին և նա պատաս խանեց. «Ձեզ կօգնեմ այդ մտադրությունն իրականացնելու համար, ինչ արել եմ նմանատիպ ուրիշ գործերում»:

Ես գնացի նաև տեսնելու տիկին Բերսաբե Գրիգոր յանին, որին ճանաչում էի վաղուց: Նա ինձ բազմիցս հրավիրել էր Հայաստան, երբ ԱՕԿՍ-ի նախագահն էր: Նրան բացատրեցի, որ այս անգամ հատուկ առիթ կար նրա հետ հանդիպելու: Տեղեկացրեցի, որ փորձում եմ ձեռք բերել պաշտոնական թույ - լատրություն՝ Նոր Եդեսիա անունով մի բնակավայրի կամ գյուղակի հիմնադրման համար: Նա ինձ պատասխանեց. «Հանգիստ եղեք, այս երեկո հանդիպելու եմ մի քանի ղե կավարների հետ, որոնց պիտի ներկայացնեմ ձեր խնդրանքը»: Նույն խնդրանքով դիմեցի Վեհափառին, որպեսզի նա նույնպես միջ-

Հայաստանի Հանրապետության քարտեզը:

նորդի կառավարության առջև՝ Նոր Եդեսիա ա նունը քարտեզի վրա հիշատակելու համար: Կաթողիկոսը նմա նապես խոստացավ:

Այս նախապատրաստական քայլերից հետո հավաքեցի Երևանի Եդեսիայի հայրենակցական միության ղեկավարներին, որոնք խնդրանքը ներկայացրել էին կառավարությանը և դեռ պատասխան չէին ստացել: Նրանց տեղեկացրեցի այն ջանքերի մասին, որ գործադրել էի այդ ուղղությամբ. հա վանություն տվեցին: Նրանց խորհուրդ տվեցի շարունակել գործը և դիմել այն մարդկանց, որոնք խոստացել էին օգնել: Արդեն հող էի նախապատրաստել նրանց առաքելությունն իրա կանացնելու համար:

Մեկ տարի անց, ինձ մեծ բավականություն պատճառող մի նամակ ստացա կոմիտեից, որով ինձ տեղյակ էր պահվում, որ կառավարությունը որոշել է Նոր Եդեսիա անունը տալ վերջերս հիմնված մի գյուղակի՝ Երևանից մոտ 50 կմ հեռա վորության վրա գտնվող Արագածոտնի մարզի Աշտարակի շրջանում: Այդ տեղը ես առիթ ունեցա ճանաչել և ի մոտո գնահատել Հայաստան կատարած իմ երկրորդ ճանապարհորդության ժամանակ:

Մեր տրամադրության տակ կար պաշտոնական մի մեքենա՝ իր վարորդով և ուղեկցորդով: Մեր ծանոթ Արամ Դեյրմենջյանը համարյա ամեն օր գալիս էր մեզ տան ելու պատմական հետաքրքրություն ներկայացնող և զբոսաշրջային վայրերը՝ ծանոթացնելու համար Մայր Հայրենիքի հրաշա լիքներին: Գառնիի հեթանոսական տաճար, Գեղարդի վանքային համալիր և Զվարթնոցի տաճարի ավերակներ այցելելուց հետո մեծ ցանկություն ունեի գնալ Սևանա լիճ՝ տեսնելու Գեղամա լեռնաշղթան և ինչու չէ, համտեսել այդ լճի ավանդական իշխան ձուկը: Արամն ինձ խնդրեց, որ համբերեմ, քանի որ մի անակնկալ էր նախատեսվում:

Այցելեցինք մեծ նկարիչ Մարտիրոս Սարյանի տունթանգարան, որտեղ մեզ հյուրընկալեց արվեստագետի որդի կոմպոզիտոր Ղազարոս Սարյանը, որն Արգենտինա էր այցելել երգիչների և կոմպոզիտորների մի խմբի հետ: Նա մեզ ուղեկ-

ցեց թանգարանում՝ տալով անհրաժեշտ բացատրություններ: Երբ դուրս եկանք թանգարանից և քայլում էինք Աբովյան փողոցով, հանդիպեցինք Հայաստանի կոմպոզիտորների միության նախագահ և հանրապետության Գերագույն խորհրդի պատգամավոր մաեստրո Էդվարդ Միրզոյանին, որին նույն պես ծանոթացել էինք Արգենտինայում: Մենք ջերմեռանդորեն ողջագուրվեցինք և նա ինձ խնդրեց, որ պատրաստ լինեմ հաջորդ օրը կազմակերպվելիք մի հատուկ էքսկուրսիայի համար: Արամն ինձ խոստովանեց, որ դա էր այն գաղտնիքը, որ ինքը պահել էր:

Հաջորդ օրը վաղ առավոտյան մեր հետևից հյուրանոց եկավ կոմպոզիտոր Միրզոյանը՝ իր շքեղ մեքենայով և վարորդով: Մյուս մեքենայում էր պարոն Անդրանիկ Մարտիրոսյանն այլ հրավիրյալների հետ՝ Ռոբերտ Գյուլբենկյանը՝ տիկնոջ հետ, գրող Վահրամ Մավյանը: Գլխավոր մայրուղիներով մեկնելու փոխարեն գնացինք գյուղերի ներքին ճամփաներով: Անցանք Հրազդան գետը, քանի որ ցանկանում էին մեզ ցույց տալ յուրահատուկ վայրեր, ինչպես Բջնիի եկեղեցին, շատ հին մի կառույց, որ վերջերս էր վերանորոգվել 80 տարեկան մի ամրակազմ քահանայի ջանքերով: Նա պատարագ էր մատուցում այդ եկեղեցում, հավաքելով հին Բջնի գյուղի ողջ ծխական համայնքը: Մենք հասել էինք մի քանի րոպե առաջ: Քահանան շատ գոհ մնաց և սկսեց խոսել իր կատարած աշխատանքների մասին, մեջբերելով ակնարկելով, որ իր ուժը չի պատում շատ կարևոր, պակաս մնացած գործեր ևս անելու համար, ինչպիսին է, մասնավորապես, հնագույն եկեղեցին նորոգելու իր բաղձանքը: Նրան ասացի, որ փոքր ինչ սպասի, որով հետև մյուս մեքենայով ուր որ է, գալու է նշանավոր հիմնադրամ ներկայացնող մի անձ, որը տնօրինում է հայկական հաստատություններին օգնող մասնաճյուղը:

Առաջարկեցի խոսել այդ անձնավորության հետ, քանի որ համոզված էի, որ նրա խնդրանքը արձագանք պիտի կգտներ: Բարեբախտաբար ճանապարհորդության մեր ընկերները շուտով եկան: Զրուցեցինք պարոն Ռոբերտ Գյուլբեն կյանի հետ, որը խոստացավ զբաղվել Բջնիի եկեղեցու խնդրով:

Մեզ շատ դուր եկավ, թե որքան մաքուր էին պահվում եկեղեցին, հնաոճ գորգերը: Մաեստրո Միրզոյանը Մավյանի խնդրանքով (որի հայրը հոգևորական էր եղել) քահանային խնդրեց երգել մի հոգևոր մեղեդի (շարական): Վերջինս հագավ փարաջան, գնաց դեպի բեմը և շատ հաճելի ձայնով սկսեց երգել հայկական եկեղեցու հայտնի սաղմոսներից մեկը: Բեմի վրա կար մի հին, խոշոր տառերով երկաթագիր Ավետարան: Երբ բոլորը դուրս եկան, ես մոտեցա և աննկատելիորեն համբուրեցի Սուրբ Գիրքը՝ ցանկանալով հաղորդակցվել մեր նախնիների հոգիներին:

Մենք մնաս բարով ասացինք հոգևորականին և Բջնի գյուղին, որի բնակիչները դաշտային եռուն աշխատանքների մեջ էին: Սլանում էինք գլխավոր մայրուղով, որը մեզ տանում էր Սևանա լիճ: Հասնելուն պես, մաեստրո Միրզոյանը խնդրեց մի քանի րոպե կանգ առնել և ուղղվեց դեպի հյուրանոց: Նրան խնդրեցի, որ գոնե ինձ թողնի՝ գնամ, դիպչեմ ջրին ու կա րոդանամ ինքս ինձ ասել, որ եղա Սևանում: Եվ մինչ հյուրանոցում նա կլուծեր հարցերը, արագ գնացի դեպի ջուրը: Այնուհետև, ուղղվեցինք դեպի Դիլիջան: Ողջ շրջակայքը լեռներ էին: Կար սոճիներով ծածկված մի անտառ, որը առանձնահատուկ ոճով տնկել էր մաեստրո Միրզոյանը: Այդ մասում կառուցված էին առանձնատներ՝ կոմպոզիտորների հանգստի և ստեղծագործական գործունեության համար: Այցելեցինք դրանցից մի քանիսը, որ հիանալի խնամված էին:

Այնտեղից բարձրացանք մի ընդարձակ շենք, որն ուներ մի մեծ ճաշարան, հրուշակեղենի խանութ, լրացուցիչ բա ժիններ, որտեղ նախաճաշում և ճաշում էին իրենց արձա կուրդներին այդ արտոնյալ գոտում անցկացնող կոմպոզիտորները:

Մաեստրոն մեզ նաև բար տարավ, որտեղ անհոգ զվարճացանք՝ երկար ժամեր զրուցելով և վայելելով բնության գեղեցկությունները: Մի դաշնամուր կար, որով մաեստրոն մեզ մի փոքրիկ համերգ տվեց: Սկսեց «Կումպարսիտա» տանգոյով, որը բերել էր Արգենտինայից և դեռ մտապահում էր: Երբ հափշտակված ունկնդրում էինք, նա մեզ հրավիրեց պարելու Ռիո դե Լա Պլատայի այդ դասական երգի մեղեդու հնչյուն ների

Սարաֆյանների նստավայրում հայ արվեստագետներին մատուցած ընդունելության ժամանակ, Գևորգը մտերմիկ ըմպում է Հայաստանի կոմպոզիտորների միության նախագահ հանրահայտ կոմպոզիտոր Էդուարդ Միրզոյանի հետ: Խորքում՝ հռչակավոր սոպրանո Լուսինե Զաքարյանը (1973 թ.):

տակ՝ Հայաստանի բնության դրախտավայրի այդ գողտրիկ անկյունում:

Նախաճաշից հետո մեզ տարան բարձրաբերձ սարերը՝ ցույց տալու Հաղպատի վանքը և եկեղեցին, որոնք գտնվում էին վերակառուցման աշխատանքների եռուն շրջանում: Հուշարձանները նայելուց առաջ մաեստրոն մեզ մի անակնկալ մատուցեց: Խնդրեց, որ փակ աչքերով հետևենք իրեն: Մի քանի քայլ կատարեցինք առաջ: Որքան մեծ եղավ մեր հիացմունքը, երբ աչքերս բացելուն պես տեսանք մեր առջև հայտնված մի հիասքանչ տեսարան՝ մի գեղեցիկ հովիտ, շրջապատված բարձր գագաթներով: Պարոն Միրզոյանը պատմեց, որ օտարերկրյա ներխուժումների ժամանակ այդ կատարներին վառվում էին մեծ խարույկներ՝ բնակչությանը ահազան գելով սպառնացող վտանգի մասին՝ ծուխ արձակելով, ինչպես ա նում էին Ամերիկայի բնիկները: Մեծապես տպավորված այս հոյակապ տեսարանից, շարունակեցինք մեր ուղին դեպի պատմական վանքը: Այնտեղ տպավորիչ աշխատանքներ էին կատարվում: Գովաբանեցինք ճարտարապետին և ողջ խմբին՝ իրենց ձեռնարկած վերակառուցման աշխատանքների համար: Երեկոն մոտենում էր և մեր հյուրընկալ բարեկամները որոշեցին, որ վերադառնալու ժամն է: Սարից իջանք մայրուղի դուրս գալու համար, սակայն երբ հասանք Սևանա լիճ՝ պարոն Միրզոյանը հրահանգ տվեց երկու վարորդներին կանգն եցնել մեքենաները, և բոլորս բարձրացանք ռեստորան՝ ճաշելու, որը նա նախապես պատվիրել էր առավոտյան: Ասացինք սակայն, որ գոհ ենք ամեն ինչի համար, որ արդեն կերել և խմել ենք օրվա ընթացքում և բացի դրանից, ուր որ է՝ գիշերը վրա է հասնելու: Այդ երեկո պետք է տեղի ունենար հայ մեծ դրամատուրգ Ալ. Շիրվանզադեի «Քառս» վեպի հիման վրա նկարահանված համանուն ֆիլմի պրեմիերան «Ռոսիա» կինոթատրոնում: Միր զոյանը պետք է ներկա լիներ պրեմիերային, քանի որ ինքն էր գրել կինոնկարի երաժշտությունը: Սակայն նա անդրդվելի էր, մեզ այլ բան չէր մնում, եթե ոչ բարձրանալ հյուրանոցի ռես տորան: Դա մի հատուկ սրահ էր, որտեղ մեզ սպասում էին երեք սեղանապետներ: Նրանք մեզ հյուրասիրեցին Սևանի հռչա կա-

վոր իշխան ձկով, որը լճի ամենահարգի ձուկն է: Մեր խմբի մեջ էին պարոն Ռոբերտ Գյուլբենկյանը և իր տիկինը, գրող Վահրամ Մավյանն ու կոմիտեի փոխնախագահ Անդրանիկ Մարտիրոսյանը: Վարորդները մասնակից եղան մեր սեղանին, բարեբախտաբար, այստեղ սովորույթն այնպիսին է, որ մեքենա վարողները չեն խմում: Իրար հաջորդեցին ճառերն ու կեն նացները, որոնց վերջը, թվում է, չէր երևում: Ս տեպ նայում էի ժամացույցին: Ափսոս կլիներ, որ մեր մեղքով մաեստրոն չկա բողանար կատարել իր պարտականությունը: Վարորդին խնդրեցի մեքենան պատրաստել: Ոտքի ելա և վեր կացրի Միր զոյանին: Արդեն գիշեր էր: Մեծ արագությամբ երկու մեքենաները դուրս եկան մայրուղի և բռնեցին Երևանի ուղղությունը: Կանգ առանք ուղիղ կինոթատրոնի մոտ և Միրզոյանը մեզ ստիպեց իր հետ միասին ներս մտնել: Իջանք, մտանք դահլիճ, որն արդեն լեփ-լեցուն էր: Մարդիկ սպասում էին: Դերասանները բեմ էին բարձրացել բեմադրիչի, նկարահանող օպերատորի հետ՝ հանդիսատեսին ներկայանալու համար: Մեր ընկերը շտապ բարձրացավ բեմ և սկսեց խոսել ամենայն հանդարտությամբ, կարծես ոչինչ չէր ըմպել. «Պարոնայք, - ասաց նա, - կներեք իմ ուշանալու համար, սակայն պետք է նկատի ունենալ, որ զբաղված էի մի կարևոր պատվիրակությամբ, որ եկել է Սփյուռքից»: Այդ պահին մեզ համար լրացուցիչ բազկաթոռներ էին դնում պարտերի կենտրոնում: Լուսարձակները ուղղվեցին մեզ վրա՝ հանդիսատեսին ցույց տալու համար, թե ովքեր են հրա վիրյալները: Միրզոյանից հետո խոսեցին բեմադրիչ Վարդան Աճեմյանը և մի քանի առաջատար դերասաններ: Ցա նկանում եմ անդրադառնալ այդ կինոֆիլմին, քանի որ դրա պրեմիերան մեզ հաճելի անակնկալ մատուցեց: Ցուցադրման ժամանակ, երբ երիտասարդ գլխավոր դերակատարը դուրս էր գալիս կառքով զբոսնելու, լսվեց «Կումպարսիտա» տանգոյի մեղեդին: Մենք շատ հուզվեցինք: Բուենոս Այրեսից այդքան հեռու այդ տանգոն այնքան տարածված ու սիրված էր, որ Միրզոյանը Արգենտինայից վերադառնալիս, ներմուծել էր «Քաոս»-ի ե ռաժշտական ձևավորման մեջ:

Պրեմիերան ավարտվեց: Մենք ծանոթացանք հայ մշա-

Մայր Աթոռ Ս. Էջմիածնի դիվանապետ արքեպիսկոպոս Ներսես Պոզապալյանը Մարաֆյանների տանը՝ Գևորգի հրատարակած գրքերին ծանոթանալիս (1985 թ.):

Հայաստան, Բյուրականի աստղադիտարանի տնօրեն պրոֆեսոր Խաչիկյանը մի էքսկուրսիայի ժամանակ Դելտայում. նրան ուղեկցում է Գևորգ Մարաֆյանը (1991 թ.):

կույթի խոշոր գործիչների հետ, որպիսիք էին հայտնի ռեժիսոր Վարդան Աճեմյանը, հռչակավոր քանդակագործ, արդեն տարեց՝ Երվանդ Քոչարը, շատ դերասաններ ու դերասանուհիներ, որոնց հետ սիրալիր զրույց ունեցանք:

Հաջորդ երեկոներին ըմբոշխնեցինք հայրենի կինոյի և թատրոնի հայտնի գործերի վայելքը: Շատ տպավորիչ էր հայր Կոմիտասի կյանքին նվիրված բալետը, որ հորինել էր նշա նավոր կոմպոզիտոր Էդգար Հովհաննիսյանը: Մենք, հիրավի, տեսանք և ունկնդրեցինք արտակարգ մի բան. մեծ բեմի երկու կողմերում բազմաձայն երգչախմբի հիմնական կազմը՝ բաղկացած ավելի քան 80 մարդուց, ներքևում տեղ էր զբաղեցրել նույնքան հարուստ նվագախումբը: Բեմում իրենց արվեստն էին ցուցադրում պարի լավագույն կատարողները, որոնք ներկայացրեցին հայ երաժշտության գագաթ՝ հայր Կոմիտասի կյանքը՝ սկզբից մինչև իր ողբերգական վախճանը: Շատ տպավորվեցինք նաև մի գործով, որը ներկայացրեցին Սունդուկյանի անվան պետական թատրոնի դերասանները՝ ռեալիստական պատկերներով և բեմի ձևավորման ժամանակակից արվեստով: Խոսքը վերաբերում էր մի իրական դեպքի՝ Երկրորդ համաշխարհային պատերազմի ժամանակներից: Այն, թվում է, ավելի կինեմատոգրաֆիական, քան թատերական ներ կայացում էր:

Մեկ այլ երեկո հատուկ հրավերով ներկա գտնվեցինք Ալ. Սպենդիարյանի հռչակավոր «Ալմաստ» օպերայի ներկայացմանը, որի լիբրետոն գրված էր ըստ Հովհաննես Թումանյանի «Թմբկաբերդի առումը» պոեմի: Այս ստեղծագործությունը ներկայացվեց բարձր արվեստով. իր գեղարվեստական մակարդակով այն չէր զիջում Արևմուտքի մեծ օպերաներին:

Գլխավոր դերում հանդես էր գալիս հայտնի բաս Հենրիկ Ալավերդյանը, որին անկեղծորեն ողջունեցինք և շնորհավորեցինք: Նա եղել էր Արգենտինայում և այցելել մեր տուն: Երբ իմ տիկնոջ հետ իջնում էինք դերակատարների հարդասենյակները, նա մեզ նկատեց հեռվից և շտապեց ընդառաջ, տակավին գլխավոր դերակատարի իր կոստյումով: Ձեռքին կար մի ծաղկեփունջ, որ նվիրել էին բեմում. այն սիրալիր



Բյուրականի (Հայաստան) հռչակավոր աստղադիտարանը, որ գլխավորում է աստղաֆիզիկոս ակադեմիկոս Վիկտոր Համբարձումյանը:

հանձնեց իմ տիկնոջն՝ ասելով. «Սա այն փոխհատուցումն է, որ ես ստացա այս երեկո և սիրով հանձնում եմ ձեզ»: Անմիջական զրույցի բռնվեցինք՝ նրան շնորհավորելով իր փայլուն դե ռակատարման համար:

Ինչպես միշտ, լինելով մշակութային կապերի կոմիտեի հրավիրյալները, տիկնոջս և պարոն Դեյրմենջյանի հետ ներկա գտնվեցինք մեծ դրամատուրգ Հակոբ Պարոնյանի «Պաղ տասար ախպար» դասական կատագերգության ներկայացմանը:

Ներկայացումը սկսելուց առաջ ծանոթացանք Էլմա Պարսամյանին՝ հռչակավոր աստղաֆիզիկոս Վիկտոր Համբարձումյանի հետ աշխատող հետազոտողին (ներկայումս ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ), որն Արգենտինա էր այցելել: Նրան խնդրեցի, որ ինձ տանի Բյուրականի աստղադիտարան՝ մեծ գիտնականի հետ ծանոթանալու համար:

Նա խոստացավ այդ հանդիպումը կազմակերպել հաջորդ օրը և ասաց, որ իմ հետևից կգա հյուրանոց: Այդ օրը կիրակի էր: Վեհափառն ուղարկել էր իր ավտոմեքենան Սուրբ Էջմիածին պատարագին մեզ տանելու համար:

Օգտվելով մեր տրամադրության տակ եղած այդ ավտոմեքենայից, նախ մեկնեցինք Բյուրական: Ժամանեցինք այն պահին, երբ պրոֆեսոր Համբարձումյանը դասա խոսություն էր կարդում աշխարհի տարբեր կողմերից եկած գիտնականների համար: Ավարտից հետո մտանք նրա աշխատասենյակը: Քարտուղարուհին ինձ ներկայացրեց հանրահռչակ գիտնականին ու Հայաստանի գիտությունների ակադեմիայի նախագահին: Մենք ջերմորեն ողջագուրվեցինք և ես համբուրեցի նրա ճակատը: Շնորհակալություն հայտնեցի իր բոլոր գործերի համար, որոնք պատիվ էին բերում հայ ժողովրդին: Նրան նվիրեցի իմ գրքերից մեկը և արտահայտեցի իմ սրտագին մաղթանքները իր ծննդյան տարեդարձի կապակցությամբ: Նա պետք է շարունակեր իր դասախոսությունը, ուստի հանձնարարեց ինստիտուտի փոխտնօրենին՝ մեզ ուղեկցել: Վերջինիս հետ շրջեցինք աստղադիտարանում, երկար կանգնեցինք աստղադիտակի մոտ, որի գործողությունների մասին նա մեզ հետաքրքիր բացատրություններ տվեց:

Հանդիպման ավարտից հետո մենք ուղևորվեցինք Սուրբ Էջմիածնի Մայր տաճարը:

Մաեստրո Վանուշ Խանամիրյանի հրավերով ներկա գտնվեցինք իր ղեկավարած պարի պետական անսամբլի պրեմիերային: Այն ժամանակ, երբ մեզ նստեցրել էին պարտերի առաջին շարքերից մեկում, Վեհափառը տեսել էր մեզ վերևից և. մի եպիսկոպոսի միջոցով մեզ հրավիրեց պաշտոնական օթյակ, որտեղ նստած էին Կոնստանդնուպոլսի Հայոց պատրիարքը և Վրաստանի հայրապետական պատվիրակը: Այսպիսի պատկառելի ընկերակցությամբ ականատես եղանք ժողովրդական պարերի՝ մեծ վարպետությամբ կատարվող մի հոյակապ ներկայացման, որը մեզ հիացրեց և թողեց անմոռանալի հիշողություններ:

Անսահման բավականություն ստացանք՝ նաև ներկա գտնվելով Ա. Տիգրանյանի «Անուշ» օպերայի և կոմպոզիտոր Արամ Խաչատրյանի «Դիմակահանդես» բալետի ներկայացումներին, որոնք լրացրեցին այն հարուստ տպավորությունները, որ ստացանք այն երջանիկ օրերին Մայր Հայրենիքում:

Մոտեցավ մեկնելու ժամը: Մեզ առանձնահատուկ կերպով ճանապարհելու էին եկել մշակութային կապի կոմիտեի աշխատակիցները, նրա փոխնախագահ Անդրանիկ Մարտիրոսյանը, մեր բարեկամ Էդվարդ Միրզոյանը և պարոն Արամ Դեյրմենջյանը և նրա տիկինը, որոնք մեզ հետ մնացին մինչև թռիչքի պահը: Ինքնաթիռն ուղղություն վերցրեց դեպի մեր երկրորդ հայրենիքը՝ Արգենտինա:

Իմ մասնակցությունը Հայաստանի գրողների միության 9-րդ համագումարին

Մեծ եղավ իմ զարմանքը, երբ 1986 թվականի առաջին օրերին ստացա Սփյուռքի հետ մշակութային կապի կոմիտեի կողմից մի նամակ, որում նրա նախագահ Կառլեն Դալլաքյանն ինձ տեղեկացնում էր, որ Հայաստանի գրողների միության նախագահ Վարդգես Պետրոսյանի և իր կոմիտեի խնդրանքով

ինձ հատուկ հրավիրում են մասնակցելու Հայաստանի գրող ներ-
ի միության 9-րդ համագումարին որպես Արգենտինայի հայ
համայնքի ներկայացուցիչ:

Համագումարը տեղի էր ունենալու մայիսին: Ընտա նե-
կան, առնտրական և համայնքային գործերի բերումով ես շատ
էի զբաղված, սակայն հրավերի բնույթը որքան կարևոր էր,
այնքան պատվավոր ու պարտավորեցնող:

Արեցի ամեն ինչ՝ մեկնելուն պատրաստվելու համար և
մուտքի արտոնագիր խնդրեցի նաև իմ տիկնոջ համար:

Բուենոս Այրեսից մեկնեցինք ուղիղ Մոսկվա: Հիշեցի, որ
մի ընկեր ունեմ այդ մայրաքաղաքում՝ Ալբերտ Գասպարյանը,
գրող և լրագրող, որ Արգենտինայում եղել էր 1978 թվականի
ֆուտբոլի աշխարհի առաջնության խաղերի ժամանակ: Նա
ինձ ասել էր, որ եթե ինձ երբևէ վիճակվի լինել Մոսկվայում,
ապա անպայման տեղեկացնեմ իրեն, որպեսզի ինքն էլ կա ող-
ղանա ինձ հյուրընկալել այնպես, ինչպես ես նրան՝ Բուենոս
Այրեսում: Կոպենհագենում մեր ժամանակավոր կանգառից
հեռաձայնեցի նրան և տեղեկացրեցի իմ գալստյան մասին:
Երբ իջանք օդակայան, տեսա պարոն Գասպարյանին, որը
մեզ էր սպասում դռան մոտ: Բացի նրանից, մեզ դիմավորելու
էր եկել Մոսկվայում Հայաստանի ներկայացուցչության մի աշ-
խատակից՝ մեզ ուղեկցելու այն օդակայանը, որտեղից թռիչք -
ներ էին կատարվում դեպի Երևան:

Մեր օդանավը պետք է մեկներ ժամը 19-ին: Երբ ժա մա-
նեցինք, մեր ինքնաթիռն արդեն թռել էր, որովհետև տեղյակ
չէինք եղել, որ փոխվել է ճաշից հետո նշանակված չվա ցուցա-
կը, որ վերաբերում էր Երևանի «Զվարթնոց» օդակայանին:
Մենք երկար ժամանակ պետք է սպասեինք, համարյա ողջ
երեկո, մինչև օդանավը կվերադառնար նոր թռիչք կատարելու
համար: Իմ հարգելի ընկերը մեզ միայնակ չթողեց: Մեզ հետ
մնաց և մեզ հրավիրեց ռեստորան՝ ընթրելու: Բարեկամություն
հաստատեցինք նաև տարբեր երկրներից եկած այլ ուղևորների
հետ, որոնք թռչելու էին մեզ հետ՝ մասնակցելու գրողների նույն
համագումարին: Հայերի մի մեծ խումբ էր հավաքվել օդա -
կայանում: Վերջապես եկավ մեկնելու ժամը: Գիշեր էր. ժա-

մանեցինք Երևան, երբ համարյա լույսը բացվում էր: Ինք նաթիռից նշմարեցինք հայկական մեծ մայրաքաղաքը, որը հուրհրում էր ինչպես մի մեծ հրդեհ՝ ողողված բոլոր գույների լույսերով: Հիրավի, քաղաքի լույսի սյուները մխրճվում էին երկինք, կարծես թե ժայթքող հրաբուխ լիներ: Մեր դիմացը՝ թանձրը մթության մեջ էր Թուրքիայի կողմից պարտադրված սահմանը, Արևմտյան Հայաստանի մասը:

Մեր մայրաքաղաքի այս հիասքանչ տեսարանի առաջ ինքնաբերաբար իմ շուրթերից ծնվեց Հովհաննես Շիրազի «Լույսերի ծով Երևան» երգը: Օդակայանում մեզ սպասում էին մշակութային կապի կոմիտեի և գրողների միության ներկա յացուցիչները, որոնք մեզ շատ սիրալիր դիմավորեցին: Նոր էինք սլանում մայրաքաղաք տանող ճանապարհով, երբ մեզ ուղեկցողները մի քանի րոպեով կանգնեցնել տվեցին ավտոմե քենան: Մեր հապաղումը, սակայն, լիուլի փոխհատուցվեց, քանի որ այն պահն էր, երբ կարելի էր դիտել հոյակապ Արարատն իր ողջ վեհությամբ: Իսկ մնացած ժամերին, երբ օրն արդեն բացված է լինում, մշուշապատվում է: Արարատը մեզ հաղորդակից էր դարձնում մեր նախնիների հոգիներին, այդ լեռն է, որ խորհրդանշում է հայությունը: Այս լեռան վրա է, ըստ Աստ վածաշնչի, իջել Նոյան Տապանը՝ համաշխարհային ջրհեղեղից հետո, որին հետևել է մի նոր քաղաքակրթության սկիզբը:

Մենք տեղավորվեցինք «Արմենիա» հյուրանոցի նոր մասնաշենքում՝ լիակատար հարմարավետությամբ մի կացարանում: Արժանավայել ձևով կարող էինք ընդունել այցե լուներին: Այսպիսի կացարանը, իրոք, շատ անհրաժեշտ էր՝ հյուրընկալելու ինձ այցելած անձանց, գրողների, կառավ արության պաշտոնյաների և մտավորականների:

Ժամանեցինք մայիսի 19-ին: Հաջորդ օրն սկսվում էր Հայաստանի գրողների միության 9-րդ համագումարի առաջին նիստը: Իմ շնորհակալությունը հայտնեցի Սփյուռքի հետ մշակութային կապի կոմիտեին և նրա նախագահ Կարլեն Դալ լաքյանին, ինչպես նաև Հայաստանի գրողների միության նա խագահ Վարդգես Պետրոսյանին, որոնք հնարավոր դարձրին իմ մասնակցությունն այս կարևոր համագումարին:

Ակաեավոր գրող Մարո Մարգարյանը, Գևորգ Սարաֆյանի հետ զրուցելիս. Հայաստանի գրողների միության IX համագումարում, Երևան, 1986 թ.:

Գևորգ Սարաֆյանն իր տանը հայ անվանի դերասան և ռեժիսոր Սոս Սարգսյանի հետ՝ նրա տարեդարձի օրը (հոկտեմբեր, 1985 թ.):

Քննարկումները տեղի ունեցան շատ ժամանակակից հոյակերտ մի շինությունում, որտեղ հավաքվել էին ավելի քան հազար մարդ՝ գրողներ, բանաստեղծներ, կոմպոզիտորներ և հայ մշակույթի այլ բնագավառների ներկայացուցիչներ: Ներկա էին պատվիրակություններ՝ եղբայրական հանրապետությունների և Սփյուռքի համայնքներից: Ինձ տեղավորեցին պաշտոնական օթյակում, մի հատուկ տեղ, ուր գտնվում էին առաջին քարտուղար Կարեն Դեմիրճյանը, տարբեր նախարարներ և բարձրաստիճան պաշտոնական անձինք, ինչպես նաև Գրողների միության նախագահ Վարդգես Պետրոսյանը: Պաշտոնապես նա բացեց նիստը՝ բարի գալուստ մաղթելով բոլոր պատգամավորներին: Նրան հետևեցին համագումարի մասնակիցները, որոնք խոսեցին այն դերի մասին, որ կա տարում էին գրողները որպես ժողովրդի բանագնացներ՝ նրա հոգևոր ու բարոյական դաստիարակության, լուսավորության և այժմեականության շատ կարևոր այլ հարցերի ուղղությամբ:

Իմ ուշադրությունը գրավեց խոսքի ազատությունը, այն թե ինչպես էին խոսում ճառախոսները, առանց սահմանափակումների, երբ խոսքը վերաբերում էր կառավարության գործերին: Գովեստների հետ մեկտեղ կային նաև գրական, բարքերին և ընդհանրապես, հասարակական կյանքին վերաբերող քննադատություններ, ցույց էին տրվում որոշ սխալներ, որոնք դիպչում էին բնակչության շահերին: Կարևոր էր տեսնել և լսել, թե ինչպես էին գրողները վերցնում իրենց վրա ժողովրդի շահերի պաշտպանությունը, որն ինձ այնքան զարմացրեց, որ դիմեցի ինձ մոտ նստած հանրաճանաչ բանաստեղծուհի Սիլվա Կապուտիկյանին, - «Այս ի՞նչ է տեղի ունենում, ի՞նչ փոփոխություն է սա, ինչպե՞ս է, որ այսքան ազատություն ունեք»: «Պերեստրոյկայի ժամանակաշրջան է», - պատասխանեց նա:

Նիստերը շարունակվեցին երեք օր, ինչպես առավոտյան, այնպես էլ կեսօրից հետո, մեկ ժամ ընդմիջումով, որի ընթացքում հավաքվում էինք մի մեծ սեղանի շուրջ՝ Հայաստանի հողի և ջրերի բարիքներից օգտվելու: Ամեն կարգի ձկներ, հոչակավոր իշխան ձուկը Սևանա լճից, տարբեր տեսակի խավիարներ և հայկական խոհանոցի ավանդական ուտեստ-

ներ: Այնտեղ էինք ճաշում նաև հատուկ հրավիրյալներս, որ ընդգրկվել էինք նախագահական օթյակում, բարե կամանում էինք ընկերական անկաշկանդ միջավայրում՝ զրու ցելով այժմեականության տարբեր թեմաների շուրջ: Այդ ջերմ սե ղանին անձնապես ճանաչեցի բազմաթիվ գրողների և գրական նագետների, հայտնի մարդկանց, որոնց անուններն ինձ ծանոթ էին իրենց գործերի միջոցով: Բարեկամական զրույցներ ունե ցա Սերո Խանզադյանի, Հրաչյա Հովհաննիսյանի, Գևորգ Էմի նի, Լևոն Հախվերդյանի, Արամայիս Սահակյանի, Լևոն Մկրտչյանի և Մայր Հայրենիքի այլ նշանավոր գրողների հետ: Բացի դրանից, համագումարին, ինչպես ասացի, ներկա էին բազմաթիվ կոմպոզիտորներ, դերասաններ և առհասարակ, մշակույթի մարդիկ, որոնց ճանաչել էի Բուենոս Այրես իրենց այցելությունների ժամանակից և որոնց հետ մեր բարեկամությունը թարմացրեցինք այս շատ պատեհ առիթով: Գրողների միության 9-րդ համագումարը շատ արգասավոր եղավ: Երրորդ օրը կեսօրից հետո նիստ գումարեցին միայն Հայաստանի գրողները, որ պետք է կատարեին վարչական կազմա կերպչական փոփոխություններ: Ընտրությունը եղավ համարյա միաձայն և ինչպես նախկինում Հայաստանի գրողների միության վարչության նախագահ վերընտրվեց Վարդգես Պետրոսյանը:

Մի կարևոր բան իմ ուշադրությունը գրավեց: Այն էր, որ կառավարության բարձրաստիճան ներկայացուցիչները, կուսակցության առաջին քարտուղարի հետ մեկտեղ, մաս նակցեցին համագումարին, համբերությամբ լսեցին բոլոր ելույթ ունեցողներին, ներառյալ նրանց, ովքեր քննադատեցին կառա վարությանը: Չեղավ ոչ մի դժգոհություն, չընդհատեցին ոչ մեկին: Բավականությամբ նկատեցի, որ ինչպես համա գումարում, այնպես էլ Երևանի փողոցներում թևածում էր ծավալվող ազատության թարմ շունչը: Մարդիկ ավելի լավ էին հագնվա ծ, խանութները լիքն էին ապրանքներով, երևում էր, որ ժողո վուրդն ունի նյութական հնարավորություններ և գնողունակ է: Դա ինձ շատ ուրախացրեց:

Նրանք, ովքեր այցելել են Հայաստան, գիտեն, որ Երևանի փողոցներն ու պողոտաները զարդարված են ծառերով

և ծաղիկներով: Երևանը մաքուր քաղաք է, մեծ շենքերով: Իմ առաջին այցելությունից անցել էր 12 տարի: Ուշադրությունս գրավեց այն տեսանելի զարգացումը, որը ձեռք էր բերել Մայր Հայրենիքը ոչ միայն մշակութային, այլև շինարարական տեսակետից: Ձեռք էր բերվել այն ամենը, որին կարող էր ձգտել եվրոպական առաջադիմական որևէ հասարակություն: Առաջխաղացումը շատ ակնհայտ էր, բնակչության մեջ երևում էր ազգային զարթոնք: Արդեն ուրվագծվում էր այն ճանապարհը, որը մեզ տանելու էր դեպի 1988 թվականը, դեպի Ղարաբաղի Ազատագրական շարժում և, այնուհետև, վարչակարգի 70 տարիներից հետո՝ Անկախության նոր հռչակում:

Սփյուռքի գրողներն ու մտավորականության ներկայացուցիչները հրավիրվել էին մի հավաքույթի՝ Հայաստանի գրողների միության տանը: Հավաքվել էր գրողների, քանդակագործների, երաժիշտների և դերասանների, մշակույթի այլ բնագավառների մի ընտրանի, որը զբաղեցրել էր դահլիճը: Վարդգես Պետրոսյանը պատգամավորներին հրավիրեց խոսելու: Ինձ հրավիրեցին խոսելու Արգենտինայի հայկական հանրության մասին. բայց մեզ չէին տեղեկացրել և ես չէի նախապատրաստվել: Աստված ինձ օգնեց և մուսաները ինձ ոգի ներշնչեցին այդ պահին: Խոսեցի դրվատելով առաջին հերթին այն պատկառազդու աշխատանքները, որոնց շնորհիվ Երևանը վերածվել էր ժամանակակից քաղաքի՝ իր մեկ միլիոնից ավելի բնակչությամբ. «Սա իսկական հրաշք է՝ ձեռք բերված ձեր սեփական կամքով և ուժով, որովհետև դուք դրան ե ք հասել մեծագույն զոհաբերությամբ՝ Հայրենիք կառուցելու համար, պայքարելով՝ եղունգներով և ատամներով, որ հիացմունք է պատճառում: Սփյուռքի ողջ հայությունը խորապես շնորհակալ է այն մեծ գործի համար, որ դուք եք արել»: Եվ շարունակեցի. «Մենք ևս չենք նստել ձեռքներս ծալած: Երբ մեր հայրենիքի դռները փակ էին երկաթյա վարագույրի ետևում, ցեղասպանության վերապրողները ցրիվ եկան ողջ աշխարհով մեկ: Յուրաքանչյուր երկրում՝ Ֆրանսիայում, ԱՄՆ-ում, Լիբանանում, Արգենտինայում և այլուր, ուր մենք հաստատվեցինք, պայքարեցինք արի աբար, ոտքի կանգնելու համար պայքարեցինք եռանդով,

ազնվորեն, Հայրենիքը մեր սրտերում և մեզ հաջողվեց կա ռուցել եկեղեցիներ, ստեղծել ուսումնական հաստատություններ, երիտասարդական, մարզական, և հատկապես մշակութային ու բարեսիրական ընկերություններ:

Ցեղասպանության պատճառած վերքերը նախ ջանացինք սպիացնել ազատության և համերաշխության մթնոլորտում, որ ստեղծեցին արգենտինական պետությունը և ժողովուրդը: Կարողացանք ի հայտ բերել հայ ժողովրդի արժեքները՝ մշակույթի, այլևայլ հրատարակությունների ու գրքերի միջոցով, օտարներից շատերին ծանոթացրեցինք հայ ժողովրդի պատմությանն ու մշակույթին, այդ թվում և այն մարդկանց, որոնք հայերին շփոթում էին Արևելքի այլ ազգերի հետ:

Մեծ բարեբախտություն էր մեզ համար, մշակութային կապերի հաստատումը Մայր Հայրենիքի հետ. միասին կամրացնենք այդ կապերը, կդառնանք մի համախումբ ազգ, մինչև որ մի երջանիկ օր մեր Հայրենիքը կդարձնենք այնքան հզոր և այնքան զարգացած, որ նա կարողանա իր պատմական սահմանների շրջանակներում բացել իր դռները և ընդունել ի սփյուռս աշխարհի ցրված իր որդիներին»:

Լսարանը ոգևորվել էր և խոսքս հաճախ ընդհատվում էր ծափահարություններով: Մի պահ նրանց հարցրեցի, թե հե տաքրքրություն ունեն, արդյոք, իսպաներեն լեզվի նկատմամբ և Սերվանտեսի լեզվով արտասանեցի իմ «Հայաստանն իր բանաստեղծների միջով» գրքում Եղիշե Չարենցի «Ես իմ անուշ Հայաստանի» բանաստեղծությունը: Ասացի. «Դուք բոլորդ հիշում եք այս բանաստեղծությունը և կարող եք հետևել»: Այնուհետև, արտասանեցի իմ «Մայր Հայաստան » բանաստեղծությունը, - որն հոտնկայս օվացիա առաջացրեց: Շատերը, և ավելի շատ՝ անծանոթ մարդիկ, եկան ինձ անձամբ շնոր հավորելու:

Այցելություն Նոր Եդեսիա

Իմ մտահոգություններից մեկն էր՝ ծանոթանալ Եդեսիայի հայրենակցական միության ներկայացուցիչ պարոն Ժոզեֆ Ավետիսյանին: Նա ինձ պետք է ուղեկցեր Նոր Եդեսիա, որն արդեն մի գյուղ էր Արագածոտն մարզում: Անձրևոտ օր էր: Բայց այդ պայմաններում իմ համերկրացու հետ գնացինք ծանոթանալու այդ բնակավայրին, որը 1975 թ. պաշտոնապես «Նոր Եդեսիա» էր վերանվանվել: Գյուղն իր տրա մադրության տակ ուներ դպրոց, գրադարան և բուժարան: Գնացինք դպրոց, որտեղ իր աշխատասենյակում մեզ ընդունեց գյուղապետ պարոն Շահազիզյանը: Այցելեցինք Եդեսիայի 1915 թ. հերոսամարտի զոհվածների հիշատակին կառուցվելիք հուշարձանի համար հատկացված բլուրը:

Հետս նվերներ էի տարել Նոր Եդեսիայի դպրոցի աշակերտների համար: Երկար զրուցեցի Պարոն Շահազիզյանի հետ՝ երբեմնի Եդեսիայի պատմության, նրա համբավի, մեր մշակույթի մեջ նրա ունեցած դերի մասին, հույս հայտնելով, որ Նոր Եդեսիան նույնպես կդառնա մի առաջադեմ քաղաք՝ Մայր Հայրենիքում: Պետք է նշեմ, որ բացի մեր զրուցակցից, դպրոցի տնորենուհին և մի քանի ուսուցիչներ եկան մեզ ողջունելու, թեև արձակուրդների շրջան էր, մեզ որոշ տեղեկություններ տվե ցին բնակավայրում տարվող աշխատանքների մասին: Հետո մեզ հյուրասիրեցին թարմ լավաշով և պանրով: Զարմանալի բան. ուրիշ տեղեր էլ փորձել էի, սակայն ոչ մի անգամ այնքան համեղ և ընտիր չէր թվացել, ինչպես այս համտեսը Նոր Եդեսիայում: Չգիտեմ, կարծես թե ինչ որ հեռավոր մի հիշողություն էր ձգվում-հասնում հին Եդեսիայից իրեն զգացնել տալով հեռավոր այս բնակավայրում, այս լավաշի միջոցով:

Այցելություն Սուրբ Աբոռ և Սարդարապատ

Իմ առաջնահերթ պարտականություններից մեկը եղավ այցելել Մայր Աբոռ Սուրբ Էջմիածին՝ համբուրելու Ամենայն

Հայոց Կաթողիկոս Վազգեն Ա-ի աջը:

Հայաստանում իմ գտնվելու ժամանակ կաթողիկոսը երեք անգամ ինձ հրավիրեց ճաշելու իր հետ: Մեր հետևից հյուրանոց էր ուղարկում իր անձնական վայրորդին:

Մայիսի 21-ը, երբ ամբողջ երկիրը նշում է իբրև՝ Սար դարապատի հաղթանակի օր, կիրակի էր: Վազգեն Ա-ի կոնդակով Հայաստանի և Սփյուռքի բոլոր եկեղեցիներում այդ օրը մատուցվում է հատուկ հանդիսավոր պատարագ և տեղի է ունենում հոգեհանգստի արարողություն ճակատամարտում ընկած հերոսների հիշատակին: Սարդարապատում, Ղարաքիլիսայում, ինչպես և Բաշ Ապարանում ձեռք բերված հաղթանակի շնորհիվ էր, որ 1918 թվականի մայիսի 28-ին ստեղծվեց Հայաստանի առաջին Ազատ ու Անկախ Հանրապետությանը:

Մայր եկեղեցում սուրբ պատարագի ժամանակ ներս դուրս խնդրեցի Վեհափառից՝ այդ օրն իր հետ ճաշի չնստելու համար, որովհետև հատուկ հրավեր ունեի պրոֆեսոր Լավրենտի Բարսեղյանից՝ այցելելու Սարդարապատի թանգարանային համալիր: Այնուհետև, հաղորդվելով և ստանալով Վեհափառի օրհնությունը, մեկնեցինք Սարդարապատ՝ մեզ տրամադրած նրա ավտոմեքենայով:

Այնտեղ մեզ սպասում էր մեր բարեկամ Լավրենտին, որի ուղեկցությամբ եղանք հսկայական թանգարանի բաժին ներում՝ ծանոթանալով բազմաթիվ ցուցանմուշների, որ պարու նակում էր թանգարանը՝ նրա խանդավառ ղեկավարությամբ: Համալիրին կից ընդարձակ տարածքում հավաքվել էր ավելի քան 300.000 մարդ, Սարդարապատի հերոսների սերունդներ, տոնականորեն տրամադրված ժողովուրդ, ինչպես նաև երկրի ուրիշ շրջաններից՝ Վրաստանից և Սփյուռքից եկած զանազան պատվիրակություններ:

Կազմակերպել էին ժողովրդական ճոխ հանդեսներ՝ երգչախմբերի, նվագախմբերի և պարային խմբերի մաս նակցությամբ, վերջիններս՝ իրենց ազգագրական բնորոշ տարազներով: Ժողովուրդը ողջ օրը պարեց ավանդական գործիքների հնչյունների տակ, բացօթյա, այդ նույն վայրում, ուր ծավալվել էր պատմական հերոսամարտը:

Մեր բարեկամ Բարսեղյանը մեզ հրավիրեց ճաշելու մի մեծ ընտանիքի անդամների մոտ. նրանցից ոմանք պատմության հուշարձանների վերականգման կոմիտեի իր աշխատակիցներից էին, որոնց հայրերն ու հորեղբայրները մասնակցել էին այս հիշարժան կռվին, մի մասը հերոսաբար զոհվել էր, իսկ մյուսները՝ դեռ կենդանի էին և այստեղ: Մեզ պատմեցին պատմական ճակատամարտի մանրամասների մասին:

Ճաշի ժամանակ մեզ մոտեցան երգչախմբեր և ավանդական պարի համույթներ, որոնք հրավիրված լինելով հատկապես պրոֆեսոր Լավրենտիի կողմից, մեր առջև հանդես եկան երգ ու պարով: Այդ խմբերից մեկը կատարում էր Վանի շրջանի ավանդական երգերից և ես ծայնակցեցի այն մեղե դիներին, որոնք տակավին մնացել էին իմ հիշողության մեջ: Այս կերպ մենք ավարտեցինք հանդիսությունը՝ երգելով և պարելով Մայր Հայրենիքի ժողովրդի հետ:

Պրոֆեսոր Լավրենտի Բարսեղյանին հայտնեցի իմ խորին շնորհակալությունը՝ մեր ժամանակակից պատմության այսքան կարևոր հաղթանակի տոնակատարություններին մեզ մասնակից դարձնելու համար: Սպասվում էին մեր հանդեպ նրա հոգածության նոր դրսևորումներ: Հաջորդ օրն իր ավտոմեքենայով մեր կանանց հետ մեկ նեցինք մի քանի պատմական վայրեր: Նախ, գնացինք Գառնիի հեթանոսական տաճար, որ կառուցել է Տրդատ թագավորը մեր թվարկության առաջին դարում: Գառնիի վերակազմության նախագիծը հեղինակել և վերականգնման աշխատանքները ղեկավարել է ճարտարապետ Ալ. Սահինյանը: Այդ գործին իր նպաստն է բերել նաև մեր բարեկամը: Աշխատանքները տևեցին վեց տարի և տաճարը վեր խոյացավ ինչպես նախօրի նակը: Պատմում են, որ տաճարի կողքին եղել է թագավորական ամառային պալատ, որից հազիվ մնացել են մի քանի հատվածներ: Պահպանվել են բաղնիքի գեղեցիկ խճանկարներն ու մակագրությունները:

Այնտեղից նա մեզ տարավ Գեղարդ՝ վիմափոր ճարտարապետական վանքային մի համալիր: Ներքևում գտնվում է հնագույն Մայր տաճարը՝ զանազան աղոթարաններով, շրջակայքում՝ քարանձավներ: Վերին մասը գաղտնի մի կապ ուներ

մյուս հատվածների հետ. այն արվել էր, որպեսզի օտարերկրյա ներխուժումների ժամանակ հնարավոր լիներ թաքցնել եկեղեցու գանձերը:

Եկեղեցին կոչվում է Գեղարդ, այն նիզակի անունով, որով հռոմեական մի զինվոր վիրավորեց Հիսուս Քրիստոսին: Այդ մասունքը այժմ պահպանվում է Սուրբ Էջմիածնի թանգարանում:

Գեղարդից հետո ուղևորվեցինք Օշական պատմական գյուղը, որի հնագույն եկեղեցում ամփոփված է հայ գրերի ստեղծող Սուրբ Մեսրոպ Մաշտոցի աճյունը: Եկեղեցու ներսում, իջնելով մի քանի աստիճաններ, հասնում եք ներք նահարկ, որտեղ գտնվում է Մեսրոպ Մաշտոցի գերեզմանը՝ մարմարե տապանաքարով, որի վրա քանդակված են իր հայտնաբերած 36 տառերը: Խոնարհվեցինք և համբուրեցինք այդ սուրբ կուսակրոնի գերեզմանը: Ինքնաբերաբար, մրմնջացի մեր տառերի անունները:

Պրոֆեսոր Լավրենտի Բարսեղյանը մեզ ուղեկցեց նաև հաջորդ բոլոր օրերին: Առավոտներն ինձ զան գահարում էր և հարցնում. «Պարոն Սարաֆյան, ի՞նչ ես անում, ի՞նչ ծրագրեր ունես այսօր»: Իր հոգատարության համար շնոր հակալ լինելով, բացատրում էի, որ շատ ուրիշ պայմանավոր վածություններ ունեմ այն մարդկանց հետ, որոնց պատվել էի Բուենոս Այրեսում: Նրանց մեջ էր մեծ դերասան և ռեժիսոր Սոս Սարգսյանը, որն ինձ հրավիրեց ընթրիքի՝ իր տանը: Հի շարժան մի երեկո շատ հաճելի միջավայրում անցկացրինք Սուրբ Էջմիածնի եկեղեցու երգչախմբի մեներգչուհի Լուսինե Զաքարյանի հետ: Ներկա էին նաև ասմունքի վարպետ և հաղորդավարուհի Վերա Հակոբյանը, նրանց ամուսինները: Վերան մեզ հոգեկան հուզում և գոհունակություն պատճառեց՝ արտասանելով Պարույր Սևակի «Անլռելի Զանգակատունը», իսկ Լուսինե Զաքարյանը մեջընդմեջ կատարեց հայր Կոմիտասի երգերն այնքան արտահայտիչ, որ կարծես մեծ երգահանի կյանքն էր թրթռում այս պոեմի մեջ: Ի նշան շնոր հակալության, արտասանեցի նշանավոր բանաստեղծ Դանիել Վարուժանի ստեղծագործություններից մեկը: Նրանց մնաս բարով ասացինք՝

գնալու էինք Հայաստանի օպերային մեծահամբավ երգչուհի Գոհար Գասպարյանի մեծարման հա մերգին, որին հատկապես հրավիրված էինք: Հավաքույթը կազմակերպել էին իր աշակերտները, բեմական արվեստի մարդիկ և Օպերայի տնօրինությունը: Ուշացել էինք և շտապում էինք: Դահլիճը լեփ-լեցուն էր: Տիկնոջս ասացի, որ տեղ չենք գտնելու նստելու համար: Այդ պահին մեր կողքով անցնում էր նույնպես շտապող մի կին. «Ահ, այդ դու՞ք եք պարոն Սարաֆյան, ես լավ եմ հիշում ձեր ելույթը գրողների համագումարում»: «Այո», - պատասխանեցի նրան. «Հետևեք ինձ, եկեք ինձ հետ», - պատասխանեց նա և մեզ տարավ դահլիճ, խորքի մի դռնով: Ներս մտանք և մեզ տեղավորեցին առաջին շարքում՝ հատուկ հրա վիրյալների հետ: Այսպես, բախտ ունեցանք հոբելյարի մոտ լինել, որին շնորհավորեցինք հոյակապ կատարումների հա մար:

Այլ կարևոր այցելություններ

Մշակույթի նախարարի տեղակալ տիկին Սիլվա Մեքինյանը, որին ճանաչում էինք Արգենտինա կատարած իր երկու այցելություններից, որոնց ժամանակ գլխավորում էր արվեստի աշխատողների պատվիրակությունները, իր տանը մեզ հյուրասիրեց մտերմիկ ընթրիքով, որին հրավիրված էր նաև մեր բա ռեկամ Էդվարդ Միրզոյանը: Տիկինը մեզ ներկայացրեց իր ընտանիքին: Նրա ամուսինը, որ Հայաստանի «Հրազդան» ՀԷԿ կասկադի տնօրենն էր և ինժեներ, մեզ խնդրեց պատրաստ լի նել՝ հաջորդ օրը առավոտվանից ամբողջ օրն իր հետ անց կացնելու համար: Նա մեզ տարավ Խոր Վիրապի սրբավայրը, Թուրքիայի հետ սահմանից ոչ հեռու, որտեղով հոսում է Արաքս գետը: Եկեղեցու բլուրից նկատվում են սահմանամերձ բոլոր կառույցները: Այդ օրը տեղի էր ունենում Սուրբ Գրիգոր Լուսավորչի տոնը. սուրբն այս Վիրապն էր նետվել 300 թ. վերջին ի պատիժ իր քրիստոնեական հավատի, Տրդատ Գ-ի հրամանով և ազատվել 301 թ., նույն թագավորին այլա կերպությունից ազատելու համար. այնուհետև, Տրդատն ընդունել էր քրիստո-

նեությունը՝ այն հռչակելով Հայաստանի պետական կրոն:

Այսպես, մինչև այժմ, երբ ասում ենք, թե որևէ մեկը հայ է, ապա, ինքնին հասկանում ենք, որ նա քրիստոնյա է: Չկան հայեր, որ պատկանեն ուրիշ կրոնի. բոլորս քրիստոնյաներ ենք և մեծամասնությամբ դավանում ենք հայ առաքելական եկեղեցուն:

Առիթ ունեցանք տեսնելու, թե ինչպես Հայաստանի, Վրաստանի և Ադրբեջանի տարբեր վայրերից եկած բնակիչները, հարյուրներով հավաքված, լցվել էին եկեղեցի և դրսևորում էին իրենց կրոնական ջերմեռանդությունը: Հավատով զորացած՝ առաքեցինք մեր աղոթքները առ Բարձյալը: Կանգ նած էինք դիվանապետ Ներսես արքեպիսկոպոս Պոզա պալյանի կողքին՝ մեզ մասնակից զգալով ծխականների օծման արարողությանը:

Այդ օրվա մեր ծրագիրն ավարտվեց գեղագիտական մեծ հաճույքով: Հիացած դիտեցինք Զվարթնոցի պատմական տաճարի, 7-րդ դարի ճարտարապետական իսկական մի գոհարի ավերակները: Ինժեները մեզ մանրամասն, քար առ քար բացատրեց հարթաքանդակների նշանակությունը, որ ներկայացնում էին խաղողի ողկույզները, միջնադարյան խորհրդանշական այլ պատկերները:

Վերադարձանք մեր սիրելի հյուրընկալների տուն, որտեղ նախարարի տեղակալ Մեքինյանը մեզ յուրաքանչյուրիս նվիրեց հրավիրատոմսեր՝ ներկա գտնվելու թատերական և մշակութային բոլոր ներկայացումներին, որոնք տեղի էին ունենալու Երևանում:

Այս սիրալիրության շնորհիվ ներկա գտնվեցինք Հայաստանի ազգային սիմֆոնիկ նվագախմբի համերգին, որն այս անգամ ղեկավարում էր մեր բարեկամ մաեստրո Հակոբ Ոսկանյանը: Ծրագիրը նվիրված էր ժամանակակից երեք մեծ կոմպոզիտորների՝ Ալեքսանդր Հարությունյանի, Էդգար Հովհաննիսյանի և Էդվարդ Միրզոյանի ստեղծագործություն ներին: Ալ. Հարությունյանի՝ ֆլեյտայի և նվագախմբի համար գրված սիմֆոնիային որպես հրավիրյալ հանդես եկավ մի հայտնի վրացի մենակատար, որը մեզ հաճույք պատճառեց

Մեծ կոստոպիտոներ. Ցախիկ ազգ. սանտուր Էդգար Հովհաննիսյանը և մանտուր Ալեքսանդր Հարությունյանը, ըմպելով և երգելով Գեորգ Սարաֆյանի հետ նավի վրա, Տիգրեյի ջրերում (10 հուլիսի, 1973 թ.):

կատարողական իր հուզիչ արվեստով: Հովհաննիսյանի և Միրզոյանի այլ կոմպոզիցիաները՝ գրված հայկական ժողովրդական թեմաներով, մեզ ծանոթ էին և արդեն մտել էին դասական երգացանկի մեջ:

Ծրագրի ավարտին գնացինք հարդասենյակներ՝ շնորհավորելու դերասաններին, հատկապես դիրիժոր Ոսկան յանին. նա պնդեց, որ գնանք իրենց տուն՝ ընթրելու: Այստեղ մեզ ընդունեցին նրա տիկինը և որդին: Մինչ մենք պատրաստվում էինք սեղան նստել, մեր ուշադրությունը գրավեց մի սրբիչ, Արգենտինայի դրոշով, երկնագույն և սպիտակ գույներով և ֆուտբոլի աշխարհի առաջնության խորհրդանիշը, որոնք բերվել էին մեր երկրից որպես հիշատակ: Մենք շատ գոհ մնացինք և հաճելի երեկո անցկացրինք՝ զրուցելով Հայաստանում նրա մշակութային գործունեության և Արգենտինայից մնացած հաճելի հիշողությունների մասին:

Տիկին Նորա Հակոբյանը, որին այցելեցինք իր աշխատավայր, մեզ հրավիրեց մի գողտրիկ մենահամերգի , որը տեղի ունեցավ Կոմիտասի անվան համերգասրահում: Այնտեղ Ռոբերտ Ամիրխանյանի ղեկավարությամբ ելույթ ունեցավ մի նվագախումբ՝ դաշնակահարուհի Սվետլանա Նավասարդյանի հիանալի մենակատարությամբ, ինչպես նաև Կոմիտասի անվան լարային քառյակը, որը Բուենոս Այրեսի Կոլոն թատրոնում հանդիսատեսին գերել էր իր երաժշտությամբ:

Չէի ցանկանա չափազանցնել, սակայն բոլոր հրա վերները բավարարելու համար հարկ կլիներ օրը երեք կամ չորս հանդիպման գնալ: Մի երեկո ընթրեցինք Հայաստանի ռադիոյի արտասահմանի հայության համար տրվող հաղորդումների խմբագրության տնօրեն Շահե Տատուրյանի և Սփյուռքի այլ պատվիրակների հետ միասին, որոնց հետ մասնակցել էինք գրողների համագումարին: Մեկ այլ հաճելի երեկո անց կացրեցինք Ալեքսանդր Հարությունյանի և իր ընտանիքի հետ: Մեծ կոմպոզիտորը և կոմպոզիտորների միության քարտուղարն ինձ նվիրեց իր ստեղծագործությունների ընտիր ձայնագրություններից:

Մեր մեծ բարեկամ, կոմպոզիտոր Էդվարդ Միրզոյանը

հերթի էր սպասում՝ մեզ Դիլիջան տանելու համար. մի հո յակապ վայր սարերում, բնական գեղեցկությամբ, որի մասին արդեն խոսել եմ իմ առաջին ճանապարհորդությանն անդրա դառնալիս: Մի կարևոր պատճառ կար այնտեղ վերստին գնալու համար: Անցկացվում էր Խորհրդային Միության բոլոր հանրապետությունների կոմպոզիտորների համագումարը: Եկել էին նաև արտասահմանյան պատվիրակություններ, որոնց հաճույքով զբաղեցնում էր Հայաստանի կոմպոզիտորների միության նախագահ Էդ. Միրզոյանը: Ժամանածների մեջ, ի դեպ, կային և իմ հին ծանոթներից:

Մաեստրոն մեզ ասաց, որ այդ օրը մի անակնկալ է սպասվում: Մեզ տարավ իր անձնական մեքենայով՝ ծանոթացնելու Դիլիջանի անտառներին: Չորս կողմը հսկայական ծառեր էին, սոճիներ: Մենք մտանք մի գեղեցիկ հովիտ, որտեղով հոսում էր գետակը: Այս հովվերգական բնապատկերի վրա, մի բացատում, մեզ էին սպասում իր ուղարկած մարդիկ, որոնք արդեն պատրաստում էին ավանդական «շիշ քյաբաբը», մոտավորապես կրեոլական խորովածի նման մի բան: Այս դաշտային նախաճաշը, որ մեր պատվին Մայր Հայրենիքի բնության գրկում կազմակերպել էր Միրզոյանը, շատ ավելի նախընտրելի էր շքեղ ռեստորաններից: Մեծ ախորժակով վայե լեցինք ուտեստը և զրուցեցինք երիտասարդների հետ, որոնք երաժիշտ ուսանողներ էին, մաեստրոյի աշակերտները: Իմ ուշադրությունը գրավեց շամփուրների մոտ կանգնած մի երի տասարդ: Մտքովս անցավ, որ նա քուրդ կլինի: Ես սովորել էի նրանց լեզուն՝ իմ մանկության՝ ցեղասպանության տարիներին, այն ժամանակ, երբ խույս տալով անապատից, շրջում էինք քուրդ երեխաների հետ:

Եդեսիայի մի եզրից սկսվում էր հնագույն Քուրդիստանը: Ես մոտեցա նրան և հարցրեցի՝ արդյոք քուրդ է. նա որոշ երկչոտությամբ իրեն չհասկացող ձևացրեց, սակայն հետո, երբ սկսեցի խոսել քրդերեն՝ աշխուժացավ և բավական զրուցեցինք: Ինձ ասաց, որ քրդերը Հայաստանում օգտվում են բոլոր արտոնություններից: Հիշեցի, որ գրողների 9-րդ համագումարում, (որն ավարտվել էր մեկ շաբաթ առաջ), լսեցինք մի պատ գամա-

վորի զեկուցում, որն անսխալ խոսում էր հայերեն և հանրա պետության քրդական համայնքի գրողների նախագահն էր: Նա իր պաթետիկ ճառում շնորհակալություն էր հայտնում հատ կապես Հայաստանի ղեկավարներին և ժողովրդին, որոնք միակն էին աշխարհում, որ քրդերին ազատություն են տվել՝ դա վանել իրենց պաշտամունքը, գրել իրենց լեզվով, հրատարակել օրաթերթեր և կազմել խելամիտ ծրագրեր ու զարգացնել իրենց մշակույթը սեփական լեզվով:

Ընկերական անկաշկանդ մթնոլորտում, հագեցած ու բարձր տրամադրությամբ, Միրզոյանի առաջարկով գնացինք՝ տեսնելու այնպիսի վայրեր, ուր դեռ չէինք եղել:

Մեր նախորդ ճանապարհորդության ժամանակ նրա հետ գնացել էինք Հաղպատի վանք: Այս անգամ ասաց, որ մեզ տանելու էր ավելի հեռու: Սարերով երկար պտույտներ տալուց հետո հասանք մի հովիտ: Մի բլրի վրա կար Զաքարյանների իշխանական տան կողմից շատ լավ կառուցված երեք մա տուռից բաղկացած մի համալիր: Այդ համալիրի դիմաց, մյուս բլրի վրա, նկատեցինք մի ուրիշ վանք՝ Նոր Գետիկի վանքը կամ Գոշավանքը, որը հիմնադրել է միջնադարի հայտնի իրա վաբան և առակագիր, հոգևորական Մխիթար Գոշը: Հեռավոր ժամանակներում (XII դար) նա ստեղծել էր հռոմեական իրա վունքին բաղդատելի՝ եզակի մի իրավագիտական կոթող՝ «Դատաստանագիրքը», այս վանքում հիմնել համալսարան: Խ որ տպավորություններով վերադարձանք Դիլիջանի կոմպոզիտորների տուն, որտեղ որպես նախագահ, Միրզոյանը պետք է սպասեր պատվիրակություններին և փակման խոսք ասեր: Այդ պատճառով, հանձնարարեց իր վարորդին՝ մեզ հյուրանոց տանել, քանի որ ողջ գիշերն ինքն անցկացնելու էր իր հյուրերի հետ: Ոլորապտույտ, եզերապատ ճանապարհներով վե րադարձանք Սևանա լիճ և բարեհաջող, արդեն մութն ընկած, հասանք Երևան:

Բանաստեղծուհի Սիլվա Կապուտիկյանը մի երեկո մեզ հյուրընկալեց իր տանը, որտեղ հրավիրվել էին նաև գրողների համագումարին մասնակցած սփյուռքահայեր: Ներկա էր Սփյուռքի հետ մշակութային կապի կոմիտեի նախկին նախա-

գահ Վարդգես Համազասպյանը, շատ հարգելի մի մտա վորական, որին արդեն ճանաչում էինք Հայաստան կատարած մեր առաջին ճանփորդությունից և որին, հետո, առիթ ունեցանք հրավիրել մեր տուն՝ Արգենտինա, իր ուղևորության պատեհությամբ: Տանտիրուհին բացի բանաստեղծուհի լինելուց, քաղաքական դեմք էր, և հայության համար մաքառող մեծ անձնա վորություն: Մի ապրիլի 24-ի ժամանակ, գտնվելով ուրիշ ազգությունների ներկայացուցիչների կողքին, ասել էր. «Մենք՝ հայերս, այսօր հիշում ենք Թուրքիայի իրագործած ցեղա սպանության սահմռկեցուցիչ փաստը: Սպասում ենք, որ դուք նույնպես, որպես եղբայրներ, հասկնաք մեր վիշտը, որ միասին փորձենք ամոքել»: Հայրենասիրական ոգին թրթռում է նրա գրական ողջ գործունեության մեջ:

Մեր սեղանակիցն էր տանտիրուհու որդին՝ Արան, ծընված հայտնի բանաստեղծ Հովհաննես Շիրազի հետ Սիլ վայի ամուսնությունից: Արան, որը ժամանակակից նշանավոր քանդակագործներից է, ստեղծել էր զանազան կոթողներ՝ պատ մական թեմաներով, որոնք տեղադրվել էին քաղաքի աչքի ընկնող վայրերում: Մեծահամբավ արվեստագետին բերել էի քանդակագործական զանազան աշխատանքներ՝ մարմարից և փայտից տաշված, որ ներկայացնում էին արգենտինյան «գաու չո»-ների (բնիկներ) պատկերաքանդակները: Դրանք շատ դուր եկան նրան:

Անկրկնելի երեկո անցկացրինք. իրար էին հաջորդում երգերը, արտասանությունն ու կենացները: Կարծիքներ փոխանակեցինք գրական թեմաների և Մայր Հայրենիքի հետ մշակութային կապերն ուժեղացնելու շուրջ:

Մշակութային կապի կոմիտեի հրավերով այցելեցինք մի հաստատություն, որտեղ ուսուցանում էին հայերեն հնագույն լեզուն՝ գրաբար, ինչպես և արևմտահայերեն: Այստեղ մասնագետներ էին պատրաստում հայերենի այս երկու տարատեսակների փոխներթափանցում ստեղծելու նպատակով: Դա հնարավորություն կտար ավելի խորը ուսուցանել արևմտահայ և Սփյուռքի գրողներին, բանաստեղծներին, հին ու նոր պատմաբաններին: Մեր խումբը կազմված էր սփյուռքահայ պատ վի-

բակներից, որոնք ժամանելով Կիպրոսից, Իրանից, Միացյալ Նահանգներից, Ֆրանսիայից, Արգենտինայից և այլ երկրներից, մասնակցել էին համագումարին: Հաստատության մեծ դահլիճում բոլոր սովորողները հավաքվեցին և մեզ մեծ գոհունակություն պատճառեցին, երբ ներկայացրեցին տեսարաններ մեծ երգիծաբան Հակոբ Պարոնյանի «Մեծապատիվ մուրացկաններ»-ից և «Քաղաքավարության վնասներ»-ից: Դեռ ավելին, վարպետորեն գրաբար արտասանեցին զանազան կտորներ դասականների ստեղծագործություններից՝ Գրիգոր Նարեկացի, Ներսես Շնորհալի և արևմտահայ հեղինակների բանաստեղծություններից: Ոգևորված աշակերտների ցուցաբերած եռանդով, արևմտահայերենով և գրաբարով, նրանց փայլուն կատարումով՝ ասացի. «Ի պատիվ ձեր գովելի ջանքերի, ձեզ պիտի արտասանեմ նահատակ բանաստեղծ Դանիել Վարուժանի «Հանճարդ հայկյան» բանաստեղծությունը՝ նվիրված Նավասարդի ավանդական տոնակատարություններին»: Ավարտելով՝ նրանց մաղթեցի հավատարիմ մնալ այս հայրենասիրական գաղափարին և շարունակել սերտել մեր գրական հանճարների ստեղծագործությունները:

Իրականում, մեծ տարբերություններ չկան այժմյան գործածական հայոց լեզվի արևելյան և արևմտյան ճյուղերի միջև, որոնք երկուսն էլ հենվում են գրաբարի (այժմ պահ պանվում է կրոնական գործառույթների ասպարեզում) լեզվական մի հայտնի շերտի վրա: Զույգ գրական լեզուների տարբերությունը զգալի է, մանավանդ, թեքման (հոլովում, խոնարհում) քերականական ձևերի մեջ:

Արևելահայերենը ավելի պարզ է, ավելի հեշտ ընկալվող: Մյուս կողմից, արևմտահայերենը ավելի խորն է՝ հագեցած ածականներով և գրաբարից վերցրած բառերով: Նախորդ վարչակարգի ընթացքում արևելահայերենը լքեց դասական ուղղագրությունը, տեղի տվեց դժվարությունների. սփյուռք ահայ աշակերտները դժվարանում են կարդալ այն գրքերը, որոնք հրատարակվում են Հայաստանում: Հուսով ենք, որ այս սխալը կուղղվի: Այժմ ունենք ազատ ու անկախ պետություն և կառավարություն, որը, կարծում եմ, կվերադառնա դասակա-

ուղղագրությանը՝ հեշտացնելու սփյուռքահայերի մշակութային փոխանակումները Մայր Հայրենիքի հետ:

Այդ օրը, երբ եկանք հաստատություն, հորդ անձրև էր գալիս: Բարեբախտաբար, դուրս գալիս եղանակն արդեն հանդարտվում էր: Ողջ խմբով վերադարձանք հյուրանոց և այդ երեկո բոլորս միասին ընթրեցինք: Մոտենում էր վերադարձի օրը, սակայն հաջորդ օրը հատկապես ինձ համար շատ կարևոր մի այցելություն պետք է կատարեի:

«Գևորգ Սարաֆյանի արխիվը» գրականության և արվեստի թանգարանում

Պարոն Անդրանիկ Մարտիրոսյանը՝ Սփյուռքի հետ մշակույթի կապի կոմիտեի փոխնախագահը, ասաց, որ հարկավոր է անպայման այցելել Եղիշե Չարենցի անվան գրականության և արվեստի թանգարան: Գնացինք իմ տիկնոջ հետ: Մուտքի մոտ մեզ սպասում էր պրոֆեսոր Սուրեն Նադրյանը՝ հայկական սփյուռքի բաժնի վարիչը: Աշխատասենյակում ինձ ներկայացրեց իր գործընկերներին: Նրանցից մեկը Քնա ռիկն էր, մեծ լեզվաբան Հրաչյա Աճառյանի դուստրը, որի հայրն ինձ շատ էր հիացնում: Կարդացել էի նրա գրեթե բոլոր աշխատությունները, լավ ծանոթ էի իր կենսագրությանը, որ այդ ժամանակ լույս էր տեսել: Երբ այդ մասին խոսեցի, ինձ ասաց, որ ինքն էր հեղինակը, և ես իրեն շնորհավորեցի: Ինձ շատ հուզիչ անակնկալ էր սպասում: Պրոֆեսոր Նադրյանն ինձ պաշտոնապես տեղեկացրեց, որ թանգարանի գլխավոր տնօրինությունը, հաշվի առնելով ազգապահպանությանը, հայ առաքելական եկեղեցու արժեքներին իմ մատուցած ծառայությունները, իմ բնօրինակ և թարգմանական գեղարվեստական գործերը, նաև հրատարակած և անվճար բաժանած պատմական երկերի շարքը՝ որպես ներդրում հայ մշակույթի տարածման գործում, ինչպես նաև Արգենտինայի հայկական համայնքի կազմակերպական ու կրթական գործերում իրականացրած ակնառու դերի համար, թանգարանում մի հատուկ տեղ է հատկացրել

ՀՍՍՀ ԿՈՒԼՏՈՒՐԱՅԻ ՄԻՆԻՍՏՐՈՒԹՅՈՒՆ

ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԵՎ ԱՐՎԵՍՏԻ
ՊԵՏԱԿԱՆ ԹԱՆԳԱՐԱՆ
375010 Երևան—10, Սպանդարյան փող. 1

STATE MUSEUM OF LITERATURE
AND ART
375010 Yerevan, 10, Spandarian str 1.

Հեռ. 56—16—61
Tel.

«25» ապրիլի 1980 թ.
№ 01/31

Հարգելի պրոֆ. Գեորգ Նալբանդյան

Բուենոս-Այրես

Սիրելի բարեկամ,

[illegible] որին [illegible] Մեսրոպ Մեսրոպյանի միջոցով [illegible] ,, [illegible] ինչին բարմնջեն,, [illegible] ինչ՞ էի ուզում [illegible] մաշինի մեջ,,Ն՞ոյ:

[illegible] եմ,որ [illegible] գրական-գրականագիտական աշխատանքը՝ իսպանալեզու [illegible] հայացնել հայ [illegible] օրվանները: Ձեր գործը հոգեոր-մշակութային [illegible] կարևոր հանգերմ, զգայնի-քաղաքական նշանակություն ունի, քանի որ [illegible] է հայ ժողովրդի բարեկամական կապերի զարգացմանն ու ամրապնդմանը այլ ազգերի հետ: Մեծ աշխատանք եք կատարում, սիրելի բարեկամ, լինելով Ձեր գործունեությամբ հիացողներից մեկը, ի սրտե հաջողություններ եմ մաղթում հետագա աշխատանքներում:

Քանի որ արդեն ընդունված մեկ է, Ձեր հաջորդ գրքի հրատարակության գործը, պիտի խնդրենք որ գրեիք նաև Ձեր դեղաստանի ու անձամբ Ձեր կենսագրությունը և հաջորդ գրքի հետ ուղարկեիք, որպեսզի բավականին հարուստ նյութ ունենանք՝ մամուլին հանձնելու:

Լավագույն ցանկություններով՝

Սուրեն Նաղդյան

Գրականության և արվեստի պետական թանգարանի 3580 հավաքածուի

Սիրելի գործընկեր

Արվեստի և գրականության պետական թանգարանի սիրելի գործընկեր պրոֆեսոր Սուրեն Նաղդյանի նամակը (Երևան, 25 ապրիլի, 1980 թ.):

Գևորգ Սարաֆյանի գրական արխիվին:

Պրոֆեսոր Նաղդյանի հետ միասին այցելեցինք թանգարանի զանազան բաժիններ և հատկապես մեծ դահլիճը, որտեղ կենտրոնացված էին հայկական Պառնասի նշանավոր դեմքերը: Արևմտյան Հայաստանի և Սփյուռքի նշանավոր հին ու նոր գրողների մեջ ես հասցրեցի կարդալ 1915 թվականի ցեղասպանությանը զոհ գնացած Դանիել Վարուժանի, Գրիգոր Զոհրապի և Սիամանթոյի անմահ անունները: Հուզմունքի մեծ պահեր ապրեցի. ինձ համար մեծ պատիվ էր, որ իմ արխիվը կպահվի այս մեծանուն մարդկանց հիշատակի հետ մեկտեղ: Իմ ուրախությունն անսահման էր, թվում էր, ձեռքերով երկինքն էի բռնել, որովհետև դա նշանակում էր անմահանալ: Ինձ խնդրեցին, որ թանգարան ուղարկեմ այն բոլոր գրքերը, որոնք երբևէ հրատարակել եմ, աշխարհի բոլոր կողմերից ստացած նամակների բնագրերը և մեծ մարդկանց հետ ունեցած իմ լուսանկարների բնօրինակները:

Վերադարձիս, իմ որոշ զեկուցումների և համառոտ կենսագրության հետ մեկտեղ, ընտրեցի ինչպես հայ, այնպես էլ արգենտինյան և լատինամերիկյան նշանավոր անձանց ու կազմակերպությունների հետ ունեցած նամակագրության մի մասը, որոնց մեջ ինձ շնորհակալություն էին հայտնում գրքերիս համար: Ուղարկեցի նաև այլ նյութեր: Վերջերս այդ կարևոր հաստատությունից՝ Հայաստանի գրականության և արվեստի թանգարանից ստացա մի նամակ և մի դիպլոմ 1997 թվականի տարեթվով, որոնցում ինձ տեղեկացնում են, որ արդեն բավական պատշաճ թվով նյութեր են հավաքված Գևորգ Սարաֆյանի արխիվում:

Ինձ շատ զորացած էի զգում՝ տեսնելով, թե ինչպես է Մայր Հայրենիքն արժևորում իր որդիներից մեկի ջանքերը՝ այնտեղ, հեռավոր Արգենտինայում:

Հայաստանի բնությունից հիանալուց և հայկական հանրահայտ հյուրասիրությունից ու հայրենիքի վերա հաստատված հազարամյա մշակույթի վկան լինելուց հետո, եկել էր Բուենոս Այրես վերադառնալու ժամը: Անհատապես կամ հեռախոսով մնաս բարով ասեցինք մեր ընկերներին և բոլորին, որ

մեզ այդքան ջերմորեն ընդունել էին: Սփյուռքի հետ մշա կութային կապի կոմիտեի և գրողների միության ներկա յացուցիչները մեզ ուղեկցեցին մինչև «Զվարթնոց» միջազգային օդակայան:

Բավարարված և գոհ վերադարձա՝ տեսնելով իմ հայ ընակիցների նշանակալի առաջընթացը: Նրանց մեջ, ում հետ զրուցեցի, տեսա ազատության և հայրենասիրության խոր զգացում, որն արտահայտվեց Ղարաբաղի ազատության համար մղվող պայքարում և մարմնավորվեց 1991 թվականի սեպ տեմբերի 21-ին Ազատ ու Անկախ Հայաստանի նոր Հանրա պետության հռչակմամբ:

Ռոսան և Գեորգը Ծիծեռնակաբերդում, ցեղասպանության նահատակների հուշակոթողի առջև, Երևան:

Հայ Ցնծալու գյուղ [illegible] Համբարձումյան Արագածոտն մարզում:

Գևորգ Սարաֆյանը Նորին Ս. Օծութիւն Վարդապետին Ա-ին է հանձնում իր թարգմանած և հրատարակած Օրմանյանի «Հայաստանեայց եկեղեցին» գիրքը:

Վերադարձա հոգեպես նորոգված և մտավորապես հարստացած, հաստատ որոշումով, ավելի մեծ ճիգերով շա ռունակելու այն լուսավոր ճանապարհը, որ նախագծել էի և որպես կյանքիս ուղեցույց, սրտանց փոխանցում եմ իբրև անգին ժառանգ իմ որդիներին և թոռներին:

Նոր Եդեսիայի Սուրբ Աստվածածին եկեղեցին

Որպես իմ գործունեության պսակ և Հայաստանում քրիստոնեության պետական կրոն հռչակման 1700-ամյակի տոնակատարության առիթով, ցանկացա թողնել մի շոշափելի վկայություն նաև Մայր Հայրենիքում:

Ի հիշողություն և մեծարումն հին Եդեսիայի Սուրբ Աստվածածին տաճարի, որտեղ կնքվել եմ (այսօր ավերված՝ ցեղասպանության հետևանքով), ցանկացա մեծ զոհողությամբ կառուցել համանուն մի նոր եկեղեցի՝ Ազատ ու Անկախ Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի Աշտարակի շրջանի Նոր Եդեսիա գյուղում:

Իմ ցանկությունն արժանացավ Ամենայն Հայոց Կաթողիկոս և Ծայրագույն Պատրիարք Նորին Սուրբ Օծություն Գարեգին Ա-ի հավանությանը, որը 1997 թվականի դեկտեմբերի 27-ի թվակիր նամակով արտահայտեց իր հավանությունը այս նախաձեռնության համար և ինձ հղեց իր օրհնանքները:



Ճայրագույն Պատրիարք և Ամենայն Հայոց Կաթողիկոս Նորին Սուրբ Օծություն Վազգեն Ա (1908-1994 թթ.)

ԾԱՅՐԱԳՈՅՆ ՊԱՏՐԻԱՐՔ
ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

PATRIARCHE SUPREME
CATHOLICOS DE TOUS LES ARMENIENS

382 22 Յուլիս 1994

ՄԵԾԱՊԱՏԻՎ
ՏԻՐ ԳԵՈՐԳ ՍԱՐԱՖԵԱՆԻՆ
ՊՈՒԷՆՈՍ ԱՅՐԷՍ

Մեծ գոհունակութեամբ ստացանք և կարդացինք 6 Յուլիս 1994 թ. Ձեր նամակը, որով կը յայտնէք թէ մեր եկեղեցիի մեծանուն հոգևորական և Կ. Պոլսի նախկին անուանի Պատրիարք Մաղաքիա Արքեպիսկոպոս Օրմանեանի արժէքաւոր գիրքը՝ "Հայոց եկեղեցի"-ն թարգմանած էք սպանիերէնի, Հայաստանեայց Առաքելական Ս. եկեղեցիի հիմնադրման և Քրիստոնէութիւնը Հայաստանի մէջ իբրև պետական կրօն հռչակման 1700-ամեակին առթիւ:

Մեծապէս կը գնահատենք Ձեր եկեղեցանուէր ու օգտաշատ այս աշխատանքը, որովհետև ամբողջ սպանախօս աշխարհը, Եւրոպայէն մինչև Հարաւային Ամերիկա, մօտէն պիտի ծանօթանայ և վաւերական տեղեկութիւն պիտի ստանայ մեր բազմադարեան Սուրբ Եկեղեցիի մասին, այն էլ 1700-ամեակի այս հանդիսաւոր ժամանակաշրջանին:

Յարգելի Գրն. Սարաֆեան, Մենք Ձեզ սրտանց կը յիշենք Արժանթինէն և քաջատեղեակ ենք, որ Դուք ուրիշ բազում արժէքաւոր գիրքեր ունիք նաև սպանիերէնի թարգմանած, որով երկար տարիներու Ձեր տքնաջան աշխատանքով իրաւամբ արժանացած էք ո՛չ միայն Արժանթինահայութեան, ա՛յլ նաև ամբողջ հայութեան, ի՛ Հայաստան և ի՛ սփիւռս աշխարհի, գնահատանքին և երախտագիտութեան:

Այս առթիւ Մայր Աթոռ Ս. Էջմիածնէն Ձեզի կը յղենք Հայրապետական Մեր օրհնութիւնն անձամբ Ձեզ և Ձեր բոլոր հարազատներուն, մաղթելով քաջառողջութիւն, խաղաղ և երկար տարիներ՝ ընտանեկան երջանկութեամբ:

"Ողջ լերուք զօրացեալ Սուրբ Հոգւով և յաւէտ օրհնեալ ի Տեառնէ և ի Մեծէ": Ամէն:

Վազգէն Ա
Կաթողիկոս Ամենայն Հայոց

ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

Հայկական Բարեգործական Ընդհանուր Միության Կենտրոնական վարչական ժողովի նախագահ. Տիկին Լուիզ Սիմոն Մանուկյանը հանձնում է Գևորգ Մարաֆյանին ՊԱՏՎՈ ԱՆԴԱՄ-ի վկայականը: Աջ մասում՝ դոկ. Պերճ Մեղրակյան, կենտրոնական վարչական ժողովի փոխնախագահ (2 դեկտեմբերի, 2000 թ.):

Las obras traducidas y publicadas por JORGE SARAFIAN

1. HISTORIA DE LA LITERATURA ARMENIIA. Profesor Hrant Torossian, 1959 (Del francés).
2. ARMENIA Y LA CAUSA ARMENIA. Profesor Hrant Torossian, 1965 (Del francés).
3. ARMENIA A TRAVES DE SUS POETAS. 1983. (Antología) Selección y traducción del armenio.
4. ARMENIA Y LA CAUSA ARMENIA. (Segunda edición) Con los agregados "Armenia Hoy" 1980" y "Ecos del 50º y 60º aniversario". 1985.
5. ARMENIA A TRÀVES DE SU PROSA. 1988 (Antología) Selección y traducción del armenio.
6. ARMENIA A TRAVES DE SUS CANTARES. 1991 (Antología) Selección y traducción del armenio.
7. LA IGLESIA ARMENIA. Monseñor Maghakia Ormanian, 1994. Traducción de las ediciones frances (1910) y armenia (1911).
8. ARMENIA REPUBLICA LIBRE E INDEPENDIENTE. ARMENIA Y LA CAUSA ARMENIA. (Tercera edición) Recopilación y traducción.1995.
9. DEL EUFRATES AL RIO DE LA PLATA. (Autobiografía de Jorge Sarafian). 1998.
10. ARMENIA A TRAVÉS DE SUS LEYENDAS, FÁBULAS Y CUENTOS. 2000
11. DEL EUFRATES AL RIO DE LA PLATA. (Autobiografía de Jorge Sarafian, traducida al armenio) 2001.

Todas estas obras fueron traducidas y distribuidas sin cargo como una adhesión más a la difusión de la milenaria Cultura Armenia.

ԳԵՎՈՐԳ (ԽՈՐԽԵ) ՍԱՐԱՖՅԱՆԻ
իսպաներեն թարգմանած և հրատարակած գրքերը

1. ՀԱՅ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ, Հրանտ Թորոսյան, 1959 թ., (թարգմանած ֆրանսերենից)
2. ՀԱՅԱՍՏԱՆ ԵՎ ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՐՑԸ, Հրանտ Թորոսյան, 1965 թ., (թարգմանած ֆրանսերենից)
3. ՀԱՅԱՍՏԱՆՆ ԻՐ ԲԱՆԱՍՏԵՂԾՆԵՐԻ ՄԻՋՈՎ, (ծաղկաքաղ), 1983 թ.
4. ՀԱՅԱՍՏԱՆԸ ԵՎ ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՐՑԸ (երկրորդ տպագրություն, «Հայաստանն այսօր 1980» և «50 և 60 ամյակի արձագանքները» հավելվածներով). 1985 թ.
5. ՀԱՅԱՍՏԱՆՆ ԻՐ ԱՐՁԱԿԻ ՄԻՋՈՎ, (ծաղկաքաղ), 1988 թ.
6. ՀԱՅԱՍՏԱՆՆ ԻՐ ԵՐԳԵՐԻ ՄԻՋՈՎ, (ծաղկաքաղ), 1991 թ.
7. ՀԱՅԱՍՏԱՆԵԱՅՑ ԵԿԵՂԵՑԻՆ, Մաղաքիա արք. Օրմանյան, 1994 թ.
8. ՀԱՅԱՍՏԱՆ, ԱԶԱՏ ԵՎ ԱՆԿԱԽ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ. ՀԱՅԱՍՏԱՆԸ ԵՎ ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՐՑԸ (երրորդ տպագրություն), 1995 թ.
9. ԵՓՐԱՏԻՑ ՄԻՆՉԵՎ ՌԻՈ ԴԵ ԼԱ ՊԼԱՏԱ (ինքնակենսագրություն Գ. Սարաֆյանի), 1998 թ.
10. ՀԱՅԱՍՏԱՆՆ ԻՐ ԼԵԳԵՆԴՆԵՐԻ, ԱՌԱԿՆԵՐԻ ԵՎ ՀԵՔԻԱԹՆԵՐԻ ՄԻՋՈՎ 2000 թ.
11. ԵՓՐԱՏԻՑ ՌԻՈ ԴԵ ԼԱ ՊԼԱՏԱ, (հայերեն թարգմանություն), 2001 թ.

Այս բոլոր գրքերը անվճար բաշխվեցին ի փառս դարավոր հայ մշակույթի տարածման

Գևորգ Սարաֆյան

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Խմբագրի կողմից.....3
Նախաբան.....5
Իմ մանկությունը.....7
Իմ սկզբնական կրթությունը.....10
Երբ սկսվեց Առաջին համաշխարհային պատերազմը.....11
Եղեսիայի հերոսական դիմադրությունը.....13
Պատերազմի ավարտը և անգլիական զինագրավումը.....19
Ֆրանսիան լքում է Կիլիկիան..... 21
Ճանապարհ դեպի ազատություն..... 23
Կյանքը Հալեպում.....30
Դեպի Արգենտինա.....39
Ամերիկայի երկրներում.....44
Աշխատանքի որոնումներ.....46
Առևտրական և բրդի ճարտարարվեստի ոլորտում.....51
Օնսեի մեծածախ առևտրականների միության նախագահ....58
Համայնքային կյանքը.....58
Ինչպես կազմեցի իմ ընտանիքը.....63
Հայ մշակութային հանձնախմբի ստեղծումը.....68
«Հայկական մշակութային ժամ» ռադիոհաղորդումը.....75
Իմ թատերական և հասարակական գործունեությունը.....82
Իմ անցումը Հոմենընդմենով.....93
Հայ առաքելական եկեղեցին Հարավային Ամերիկայում.....95
Համաձայն Արգենտինայի պետական կրթական ծրագրի
կազմակերպեցինք մեր համայնքի դպրոցները.....102
Համայնքի միասնականությունը.....113
Ցեղասպանության 50-ամյակի նշանավորումը.....115
Հոկտեմբեր. հայկական մշակույթի ամիս.....127
Լատինական Ամերիկայի Հայ Դատի
կենտրոնական հանձնախումբը.....130
Մշակութային հարաբերությունները
Մայր Հայրենիքի հետ.....132
Բարձրաստիճան այցելություն.....166

Հայ եկեղեցու գլխավոր պետի հովվապետական
այցելությունը.....177
Երուսաղեմի հայկական պատրիարքարանը.....191
Նորին Սուրբ Օծություն Գարեգին Ա-ի այցելությունը.....199
Հայ մշակույթի ժողովրդականացման աշխատանքները.....200
Ինչպես ծնվեց իմ առաջին գիրքը.....202
Իմ առաջին ճանապարհորդությունը Մայր Հայրենիք.....211
Հայաստանում ծավալած այլ աշխատանքներ.....221
Իմ մասնակցությունը Հայաստանի գրողների
միության 9-րդ համագումարին.....235
Այցելություն Նոր Եդեսիա.....243
Այցելություն Սուրբ Աթոռ և Սարդարապատ.....243
Այլ կարևոր այցելություններ.....247
«Գևորգ Սարաֆյանի արխիվը»
գրականության և արվեստի թանգարանում.....255
Նոր Եդեսիայի Սուրբ Աստվածածին եկեղեցին.....261

Академия наук Армянской ССР
Фундаментальная библиотека

Հեղինակի հետ կարելի է կապ հաստատել հետևյալ հասցեով՝
Jorge Sarafian. Av. de los Incas 3444, 1426 Buenos-Aires, Argentina.

Գրքի կազմի առաջին էջում՝
Գեորգ Սարաֆյանի դիմանկարը, գործ՝ նկարիչ Մանուկ Ղազյանի:

Կազմի չորրորդ էջում՝
– Նոր Եդեսիայի Սուրբ Աստվածածին եկեղեցին:
– Գեորգ և Ռոսա Սարաֆյանները, նրանց հարազատները գերաշնորհ episkoposներ Գարեգին Ներսիսյանի, Շահե Աճեմյանի և Գրիգորիս Բունիաթյանի հետ Նոր Եդեսիայի Սուրբ Աստվածածին եկեղեցում, 1999թ. սեպտեմբերի 5-ին, առաջին սուրբ պատարագից հետո:

ԵՓՐԱՏԻՅ ՌԻՈ ԴԵ ԼԱ ՊԼԱՏԱ
ԻՆՔՆԱԿԵՆՍԱԳՐՈՒԹՅՈՒՆ
ԳԵՎՈՐԳ ՍԱՐԱՖՅԱՆԻ

Ստորագրված է տպագրության 27.03. 2002թ.:
Չափսը՝ 60 X 84 $^{1}/_{16}$: Թուղթ № 1, օֆսեթ տպագրություն: 17 տպ. մամուլ:
Հրատ. պատվեր № 077: Գինը պայմանագրային:

ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատարակչության տպարան,
Երևան, Մարշալ Բաղրամյան պող. 24:

ԳԱԱ Հիմնարար Գիտ. Գրադ.
FL0065982

А-11
87008

Նոր Եդեսիայի Հարավարևելյան Եկեղեցին
օծուած Սեպտեմբեր 5- 1999 Հայաստան
Բարձրագոյն Մեծար՝ Աջակցութեամբ Ուրֆայի
Ցեղ և Տիվան

ԳԷՈՐԳ Ա. ՌՈՍԱ ՍԱՐԱՖԵՄՆԵՐՈՒ